Էմինը նոր Հայաստանի կերպարն ուզում է ազատագրված տեսնել ողբից ու եղերերգությունից. «Գրողի ու քննադատի տաղանդն ու հմտությունը հենց այն է, որ նա կարողանա տեսնել ու ցույց տալ «ազգային» ու «հայկականը» մեր այսօրվա՝ կյանքում, մեր այսօրվա փողկապավոր և Հեմինգուեյի վեպերը կարդացած հայ երիտասարդի մեջ, մի բան, որ անհամեմատ ավելի դժվար է, ուստի և՛ ավելի շնորհակալ...» [1, էջ 641]:

Այս և այլ առիթներով Էմինն ըստ էության տալիս է ընդհանրապես պոեզիայի և մասնավորաբար իր ստեղծագործության հայրենասիրական էությունը բացահայտելու չափորոշիչները: Բայց տեսական-գեղագիտական դատողությունը մի բան է, բուն գեղարվեստը՝ մեկ այլ:

Ուստի այժմ հողվածի ընձեռած ծավալի սահմաններում ըստ էության հայացք նետենք Էմինի հայրենասիրական քնարերգությանը, որպեսզի ավելի հստակ ու տեսանելի երևան զարգացման ներքին կապերը:

Էմինի հենց առաջին ժողովածուում՝ «Նախաշավիղ» (1940), ուրվագծվում է հայրենիքի թեման՝ մեկ որպես անդրադարձ Խ. Աբովյանին, Հ. Թումանյանին, Ավ. Իսահակյանին, մերթ՝ գեղատեսիլ Սևանի գովերգ, իսկ հաջորդ՝ «Խաղաղության ծխամորճը» ժողովածուում (1942), բնականաբար, արդեն պատերազմի թեման է գերիշխում.

*... Նրանք ուզում են մարել արև ըղ,  
Հայրենի՛ երկիր, սրբագա՛ն անուն,  
Ընդունիր որդուդ՝ «Մնաս բարևը»՝  
Պոետ Էմինը զինվոր է դառնում (1941, հունիսի 22) [3, էջ 34]:*

Ու հետո արդեն՝ «Նորք»-ում (1946), ավելի է ծավալվում ու խորանում պատերազմի թեման: Սակայն էականն այն է, որ այստեղ ժողովածուն բացվում է «Ես հայ եմ» ենթաբաժնով, ուր իրար են հաջորդում «Հայ ժողովրդին», «Նաիրի», «Կոմիտասին», «Տերյանի մահը», «Արուս Ոսկանյանի դագաղի առաջ», «Երգ կռունկի մասին», «Գազել Երևանին», «Երգ-երգոց» և այլ լավագույն էջեր, ուր հստակորեն ուրվագծվում էր այն լայնահուն պողոտան, որով պետք է հետո ամբողջանար Էմինի կերտած հայրենիքի գեղար-

վեստական կերպարը: Արդեն ակնհայտորեն ընդգծվում էր բարձրացող բանաստեղծական տաղանդը:

1930-ականներին ԽՍՀՄ վիթխարի տարածքում սկսվեց մասսայական բռնադատումների շրջան՝ իր ավերածություններով և մշակութային եղեռնով, որը սակայն պատերազմի տարիներին զգալիորեն մեղմացավ: Եվ պատահական չէր, որ հենց այդ տարիներին էլ հայ գեղարվեստական միտքը ի հայտ բերեց բազում հրաշալի գործեր: Սակայն, դժբախտաբար, պատերազմի հաղթական ավարտից՝ 1946թ.-ից հետո, կրկին ծայր առան գաղափարական-քաղաքական կաշկանդումներն ու բռնությունները:

ԽՄԿԿ Կենտկոմն ընդունեց մի քանի որոշում, որոնցով սահմանափակվեց գեղարվեստական զարգացման ընթացքը: Այդ որոշումներից առաջինն ընդունվեց 1946թ. օգոստոսի 14-ին՝ ««Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին»:

Իսկ ՀԿ(բ)Կ Կենտկոմն ընդունեց «Հայաստանի կուսակցական կազմակերպություններում գաղափարական աշխատանքը ուժեղացնելու մասին» (30.XII.1947) որոշումը:

Այդ տխրահռչակ որոշումների լույսի տակ քննադատական տարափի թիրախ դարձավ Էմինի «Նորք» ժողովածուն: Նրա հասցեին սուր մեղադրանքներ հնչեցրին Արշալույս Բաբայանը՝ «Գաղափարագուրկ լիրիկայի և գրական մեծամտության մասին» [4], Աղավնին՝ «Ընդդեմ քաղքենիության և գաղափարական խեղաթյուրումների գրականության մեջ» [5] և ուրիշներ: Այդ հողվածների վերնագրերն արդեն խոսում են բովանդակության և ուղղվածության մասին:

Ինչպես ՀամԿ(բ)Պ օգոստոսի 14-ի որոշումները, այնպես և այս քննարկումները դարձ էին դեպի 1930-ականների քաղաքական անվստահության ու մեղադրանքների մթնոլորտը: Այս անգամ քաղաքական հալածանքներն ու բռնությունները թափ առան 1949 թվականին:

Քննադատական այս տարափն՝ ուղղված էմինի դեմ, ըստ էության շինծու էր: Երիտասարդ բանաստեղծը որոնումների մեջ էր, ցանկանում էր գտնել իր ճանապարհը, ինչը և եղավ նրա հաջորդ քայլը՝ «Նոր ճանապարհ» (1950) վերնագրով:

«Նոր ճանապարհ» ժողովածուի համար Էմինը արժանացավ Ստալինյան մրցանակի: Համամիութենական գրական ասպարեզում սա մեծ հաջողություն էր. մեկը մյուսի ետևից երկու բանաստեղծ՝ Կապուտիկյանը և Էմինը, արժանանում են ԽՍՀՄ-ի պետ վիթխարի երկրի գրական բարձր մրցանակի:

Բայց այդ մրցանակը հեշտ չէր տրվում և պետք է բավարարեր որոշակի պահանջների: Իսկ պահանջները պարզ էին՝ անհրաժեշտ էր բարձր պահել խորհրդային գաղափարախոսությունը, այսինքն՝ իրականացնել «Ես այնպես եմ ելնում իմ տնից՝ // Կարծես թե մտնում եմ իմ տունը...» («Իմ գործը») կարգախոսը: Եվ Էմինն այդ ոգով գրեց «Կարմիր Հրապարակում», «Խա-

դադության կոչի ստորագրումը», «Ես ձեզ եմ դիմում, աշխարհի՛ մարդիկ», «Մարդկության գարունը» և համանման այլ բանաստեղծություններ:

Հայրենասիրական քնարերգության քաղաքացիական բարձր դիրքորոշմամբ Էմինը գրում է նաև արվեստի, գեղագիտության մասին, թե ինչպիսին պետք է լինի ժամանակակից գրականությունը: Այդպիսի ծրագրային առաջադրություններ են պարունակում «Ձեզ», «Հնամուլ բարեկամիս», «Էսթետը», «Հայրենասերը» և այլ գործեր: Էմինի ասածը պարզ է՝ ո՛չ թե զոհ գնալ անցյալին, այլ անցյալը նորոգել ապրելով:

Այս շրջանի հայրենապատումի մեջ կարելի է առանձնացնել ևս մի քանի ստեղծագործություն՝ «Բալլադ ձկնորսի մասին», «Խոսի՛ր, Հայաստան», «Զրույց Մասիսի հետ և Մասիսի մասին», «Հայաստանին», «Հայաստանի գարունը» և այլ գործեր, որոնք գալիս էին ամբողջացնելու Էմինյան հայրենասիրական կառույցը:

\* \* \*

Էմինը հայտնաբերեց «Նոր ճանապարհ», բայց դարձյալ դիմեց փորձարարության, ինչի արդյունքը «Որոնումներ» (1955) ժողովածուն է: Նոր ճանապարհից հետո էլ ի՞նչ որոնումների մասին է խոսքը. ա՛յն որոնումների, որոնք պոեզիան հեռու են պահում քարացածությունից, մեկ անգամ գրածը հաջորդաբար կրկնելու վտանգից: Այդ իսկ պատճառով՝ որոնումներ, որովհետև «Դիմադրում է դեռ տողը համառ»: Բանաստեղծը վերստին աշխարհի լայնքերի մեջ է, Կրեմլի զանգերի ձայների ներքո, որ կեսգիշերին նրան է հասցնում ռադիոն: Այդ զանգերը նրան զգաստացնում են, և նա՝

*Իսկ է՞ս...*

*Տողերը համառ ՚ւմ են դեռ,*

*Ես արժանի չեմ ննջել Հիմնի տակ,*

*Քանզի իմ գործը դեռ չե՛մ ավարտել... :*

Սկսվում է խորհրդային հայրենասիրության և քաղաքացիական դիրքորոշման մի նոր երգասացություն, որի հաջորդ ձայնը հնչում է այսպես՝ «Ես սիրում եմ բոլոր լեզուները»: Թափ է առնում ժողովրդասիրության մի բազմաձայն խմբերգ: Բանաստեղծը պատրաստ է այս քայլին, ամեն մի լեզու մի ժողովուրդ է, միայն թե այդ համերգի մեջ հնչի նաև իր մայրենի լեզուն:

Այսպես նա ձգտում է մի համընդհանուր լեզվի, որի մեջ ամեն մի լեզու իր շողքն ու փայլն ունենա: Ըստ Էմինի քաղաքացիական պատրանքի՝ դա պետք է լինի հեղափոխության լեզուն...

Առաջին սիրտ պես հնչում է Երևանի երգը («Երևանին»), շողշողում է Սևանի կապույտը («Սևանա լճին»), մանկության հոտերն ու համերը հայրենիքի մեկ ա յլ զգացում են առաջացնում («Փշատի հոտ է գալիս գյուղից...»), «Մանկության աչքերով»), դեռ միտում է պատերազմից չդարձածներին

սպասողների հույսը («Մոլորված երազը», «Անհետ կորածը», «Մեր տան մոտ կքած փշատենու պես...»): Այսպես պատկեր առ պատկեր նա ուրվագծում է հայրենիքի կերպարը:

Գրքում գետեղված է «Դանթեական ավեր» պոեմը՝ Չարենցի «Դանթեական առասպել»-ից բնաբանով: Չմոռանանք, որ այս տարիներին Հովհաննես Շիրազը գրում էր «Հայոց դանթեականը» պոեմը: Այսքան Դանթե, որ նույնն է, թե այսքան դժոխք. ազգային ողբերգությունը հարություն էր տվել դժոխքի պարունակները տեսած մեծ իտալացու կերպարին:

Դանթեն՝ Դանթե, բայց Էմինը ո՛չ թե հայոց ողբերգությունն է պատկերում, այլ Հայրենական պատերազմը, թեև կան էական գուգահեռներ նաև հայոց ցեղասպանության հետ կապված:

\*\*\*

Ինչպես ասվեց, Էմինի հայրենասիրական քնարերգությունը, որ սկիզբ էր առնում 1940-ականներից, ժամանակի հետ ավելի հայկականացավ: Հաղթահարվեց կոմունիստական, սոցիալիստական պարտադիր շեշտադրումը և իր տողերը՝ «Ես այնպես եմ ելնում իմ տնից //Կարծես թե մտնում եմ իմ տունը», այլ երանգ ստացան, որովհետև ընդհանուր տանը, որ ԽՍՀՄ-ն էր, յուրաքանչյուրը սկսեց իրեն ավելի հարմարավետ զգալ իր տարածքում, որն իր հայրենիքն էր: 1950-ականների առաջին կեսի ինտերնացիոնալ խանդավառությունը թեև չվերացավ, բայց անհամեմատ մեղմվեց: Այս տեսակետից Էմինի նոր գրքերը իր և իր իսկ հայրենեցության զարգացման նոր փուլ են:

Քանի որ այդ շրջանի ստեղծագործությունները ամփոփված են 1968թ. հրատարակված «Այս տարիքում» ժողովածուի մեջ, ուստի մենք կանդրահառնանք հենց այդ ժողովածուում ամփոփված՝ «Ես հայ եմ»<sup>1</sup> հայրենասիրական բանաստեղծությունների շարքին:

1950-ականների կեսերին գաղափարական տեսակետից այնքան էլ դյուրին չէր լինի շարքը վերնագրել «Ես հայ եմ»: Բայց 1950-ականների վերջերից՝ առավել ևս 1960-ականներին, դա ոչ միայն կարելի էր, այլև առանց ազգային յուրահատկության գրական ճանապարհի ընկնելն արդեն իսկ դժվար էր:

Էմինն ասում է՝ «Ես հայ եմ», չի ասում՝ «Ես խորհրդային քաղաքացի եմ», որովհետև նա այլևս պարտավորված չէր իր խոսքը վերածելու կուսակցական ճառի կամ գաղափարական կարգախոսի:

Շարքը բացվում է «Խոսի՛ր, Հայաստան» բանաստեղծությամբ. «Խոսի՛ր»-ը հատկապես բացականչությամբ, որովհետև վերջապես բացվել էր Հայաստանի, որ նույնն է թե՛ հայ բանաստեղծի լեզուն:

Իսկ ի՞նչ պիտի խոսեր Հայաստանը: Պիտի նախ և առաջ խոսեր և պատ-

<sup>1</sup> Այս վերնագրով շարքը սկիզբ է առնում դեռ «Նորք» (1946) գրքից. Այստեղ, սակայն, նույնանուն շարքն հարստացել է նոր գործերով՝ ստանալով ամբողջական տեսք և բոլորովին նոր որակ:

մեր իր պատմությունը և այդ խոսքը հայ ժողովրդի ու իր անունից վստահեր բանաստեղծ որդուն: Հիշողության սկիզբը հասնում է մինչև դարերի խորքը. մինչև Կարմիր բլուր, որտեղ թաղված կարասների մեջ ցորեն են հայտնաբերել: Այսինքն՝ Հայաստանը քաղաքակրթության բնօրրան է, և Հայաստանում պետք է զգույշ խոսել, որովհետև նախնիների արյամբ ու հիշողությամբ է ներծծված հողը, ուր անգամ գրագետ է ամեն մի քար, որովհետև վրան տառ ու գիր, նախշ ու զարդաքանդակ կա: Ցորենի հետ մեկտեղ պեղել գտել են նաև պղնձե նիզակ, որովհետև սկզբից նեթ հայը ոչ միայն արարել է, այլև ստիպված է եղել պաշտպանել իր արարչագործությունը: Դրանով է միայն նա «Հասել Հարության այս առավոտին»: Անգամ արդեն խոսք է լինում կորցրածը ետ վերադարձնելու մասին.

*Բայց այդ ցորենի հատիկը ամեն՝ ցա՛նք է մի հսկա,  
Ամեն հայ՝ ամուր սեղմած զսպանա՛կ.  
Եվ այս,  
Մեզ հասած մի բուռ ժողովու՛րդն  
Ու սե՛րմը վկա,-  
Իր կորցրածը նա ետ կստանա... [6, էջ 10]*

Ժամանակի չափման միավոր են դառնում Նոյը, Խալդը, ինչը նշանակում է խորանալ դեպի հայ ժողովրդի ընդերքը, խոսել սեպագրերից, ցիրուցան եղած մատյաններից, մորմոքից, եղեռնից, որոնք էլ հենց պարտավորեցնում են «Զգույշ խոսել Հայաստանում», որովհետև սար ու ձորի մեջ ամեն ինչ արձագանք է տալիս՝ և՛ բարի խոսքը, և՛ չար խոսքը: Եթե խոսքը բարի է, լեռները խոնարհ նժույզներ կդառնան, իսկ եթե չար է, հրաբուխներ կժայթքեն: Հայաստանում նաև պետք է զգույշ քայլել, որովհետև նեղ են լեռնային ճանապարհները՝ «Երկու հոգու տեղ չեն անում: //Թե դեմ-դիմաց ելնեն հանկարծ» ուստի՝

*Թե բարեկամ ես ու ընկեր,  
Ա՛նց կկենաք իրար գրկած,  
Թե դավով ես այստեղ ընկել,  
Կզլորվես ժայռերից ցած.  
Ո՛վ եղավ քո գալու վկան,  
Գնալըդ ո՞վ է իմանում... [6, էջ 14]*

Հայաստանում անհրաժեշտ է նաև զգույշ գործել, քանի որ «Մենք գահ ու թագ չե՛նք ունեցել, // Եվ արքա է ամեն մի հայ», ամեն մի հայ «Մի Հայաստան» է, որ վտանգի պահին միաբանվում է և պաշտպան է կանգնում ժայռերին թառած այն բերդին, «Որ Հայրենի ք ենք անվանում...»:

Յուրաքանչյուր հայ ստեղծագործող իր հոգու պարտքն է համարել բնորոշելու-բնութագրելու Հայաստանը: «Նաիրի» բանաստեղծության մեջ Էմինի

համար հայոց երկիրը նման է խաղողի տունկի՝ «Նաիրին խաղողի ո՛րթ է հնագույն»: Համո Մահյանի պոեզիայում Նաիրին դառնում է մասուրի թուփ, Մարո Մարգարյանի համար այն փշատի ծառ է...

Էմինի գուգահեռ խորհրդանշանը, անշուշտ, մոտ է հայ ժողովրդի և՛ բնավորությանը, և՛ պատմությանը: «Արմատը խրած հողում ժայռեղեն» խաղողի որթը ոչ բարձր է եղել բարդու նման և ոչ չինարի պես փարթամ: Եթե այդպիսին լիներ, հազարավոր մրրիկներին չէր դիմանա: Ինչքան տրորվել, ինչքան ճղակոտոր եղել՝ խաղողի թուփը նորից աճել է, որ նույնն է, թե ժողովուրդը դիմացել է ամենայն փորձության:

Սա հենց այն ճանապարհն է, ինչը տանում է դեպի ազգային հատկանիշների խորացում. մի տեսակետ, որ 1930-ականներին առաջ քաշեցին Չարենցը, Բակունցը, Մահարին և որի արտահայտությունը եղավ Մկրտիչ Արմենի ստորագրությամբ լույս տեսած «Չարենցի և հարակից խնդիրների մասին» հոդվածը, որ ծանր քննադատության ենթարկվեց ժամանակակիցների կողմից, իսկ այդ խմբին ներկայացվեց «նացիոնալիզմի» մեղադրանք: [7, էջ 10]

Ազգային խորհրդանշան է նաև հայոց այբուբենը: Էմինը գրում է «Մեր այբուբենը» բանաստեղծությունը՝ յուրաքանչյուր տողն սկսելով հայոց այբուբենի հերթական տառով: Այսպես Ներսես Շնորհալին էր հյուսել իր «Առավոտ լուսո» շարականը, որն ուներ եռատող տներ և յուրաքանչյուր տուն գրված էր հայոց այբուբենի հերթական տառով: Միջնադարում գրության այդ ձևը կոչվում է ծայրակապ, որ ներկայումս նույն ակրոստիքոսն է:

Այսպես Էմինն աննկատ հարություն է տալիս ազգային ավանդույթի հայրենասիրական ուղղվածությանը, որ մի կողմից Եղիշե Չարենցն է, մյուս կողմից՝ Ներսես Շնորհալին:

Էմինը գիտե ոչ միայն բանաստեղծություն գրելու արվեստը, այլև բանաստեղծության ստեղծել-կառուցելու արհեստը: Նրա ներշնչանքն անպայման ունի առարկայական հիմք, որ նշված անձնանունները, տեղանունները և իրողություններն են: Այդ առարկայական հիմքով ստեղծվում է ներշնչանքի պարզևած առաջին պատկերը, ռիթմավորված առաջին տողը, որից հետո ստեղծագործական վարպետությունն անում է իր գործը՝ առաջին պատկերը բացվում է, ծավալվում, բանաստեղծն ասում է իր ասելիքը և խոսքը հասցնում բարեհաջող ավարտի:

«Ինչքան հա՛յ, այնքան Հայաստան» («Գեղարդի վանքը») վերստին հայտարարում է բանաստեղծը՝ դա պայմանավորելով եղեռնի ողբերգությամբ: Ազգային ճակատագրի յուրահատկությամբ է պայմանավորվում ազգային արվեստը, ըստ որի՝

*Նուրբ կոթող չէ՛ ս գտնի այս հողում,  
Դարերին նուրբը չէ՛ ը դիմանա.-  
Չլինե՛ր Գեղարդը ժայռերում,  
Կավերվեր ու փռճի՛ կդառնար.*

*Եղածն էլ դրսից չի շողշողում՝  
Կտեսնե՞ր ոտիսը աններող... [6, էջ 26]*

Էմինը ճիշտ դիտարկում է անում. քաղաքական անապահովության մատնված ժողովուրդը ստիպված է եղել թաքցնել իր արվեստի արժեքները, որպեսզի թշնամին դրանք չթալանի, նաև այնպես կառուցել իր տաճարները, որպեսզի հնարավոր չլինի դրանք քանդել ու ավերել: Այս տեսակետից Գեղարդի վիմափոր վանքը իրոք որ բնորոշ օրինակ է:

Մեկ անգամ չէ, որ Էմինն անդրադառնում է հայ ժողովրդի պատմական ճակատագրի մի այնպիսի աղետալի կողմի, որպիսին պանդխտությունն է: Պանդուխտը հայ միջնադարյան պանդխտության հայրենների, անտունիների նման այսօր ևս իր երգն ունի: Աշխարհի ճանապարհներով անցել են նրա քայլերը: Բայց ահա նրանց ականջին է հասնում հայրենիքի կանչը: Պատկերային համակարգի մեջ պանդուխտ հայի հոգեբանական շրջադարձն է դեպի իր նոր ու նորոգ հայրենիքը: Պատկերի հոգեբանական միջուկը կռունկն է, որ կապում է պանդուխտին ու նրա հայրենիքը: Հայոց երգի հնագույն խորհրդանշանը նորոգվում է ըստ պատմական նոր իրականության պահանջների: Կռունկն այս դեպքում դառնում է հայ ժողովրդի պատմական բախտի վկան: Գեղարվեստական պատկերի խորհրդանշաններ են այրված շեների մոխիրը, արցունքը, մահը, ավերը, ավարը, լքված բույնը, Արարատի սեզ կատարը և Խորհրդային Հայաստանը՝ որպես նորոգ տուն: Բանաստեղծի նպատակն է դարերով շարունակվող հեռացումին, վտարանդիությանը հակադրել դարձն ու վերադարձը՝ «Բարո վ դառնաս...»:

Ահա գաղափարական այս անցումով էլ պայմանավորվում են «Հայրենադարձի երգեր» շարքի չորս բանաստեղծությունները՝ «Պանդուխտի տունը», «Հայրենաձաղիկը», «Առաջին քայլերը», «Հեքիաթ»:

Հայտնի է, որ 1946թ.-ից սկսած հայրենադարձությունը զանգվածային բնույթ կրեց: Եկան պարսկահայերը, արաբական աշխարհի հայերը, նաև ֆրանսիահայեր, հունահայեր, եգիպտահայեր... : Ժողովուրդն իր հայրենիքում համախմբվելու փորձ էր անում, ինչը վայելում էր և՛ պետական աջակցություն, և՛ գաղափարական սատարում: Գաղափարականի դրսևորումներն արտահայտվում էին ոչ միայն ճառերով, այլև արվեստի միջոցներով. նկարահանվեցին ֆիլմեր, գրվեցին երգեր, ահա այս ընթացքում էր, որ ստեղծվեցին նաև գեղարվեստական երկեր: Չմոռանանք, որ վերադարձող հայության մեջ քիչ չէին նաև գրողները, ովքեր իրենց մասնակցությունը բերեցին այդ թեմայի գեղարվեստական մշակման գործին (Աբիգ Ավագյան, Հովհաննես Ղուկասյան, Գեղամ Սևան, Կարպիս Մուրեկյան, Պերճ Զեյթունցյան, Արամ Արման, Աբրահամ Ալիքյան և ուրիշներ):

Էմինը ճիշտ որսաց հոգեբանական պահը, քանի դեռ հայրենիք վերադառնալը մեծ երազանք էր, հուզմունք էր ու արցունք, որովհետև քիչ ավելի ուշ արդեն պիտի լսվեին հիասթափության տրտունջներ և հայրենադար-

ձութան պես պատմական մեծ, հիշարժան իրադարձությունը պիտի ստվերոտվեր, իսկ ավելի ուշ վերադարձածները վերստին պիտի բռնեին արտագաղթի ուղին:

Ահա հոգեբանական այդ ճիշտ պահի զգացողությամբ Էմինի նշված շարքի բանաստեղծությունները հյուսում են իրականության գեղեցիկ հեքիաթը. տարեցները ուրախությունից լալիս են, երիտասարդները երջանիկ ապրումների մեջ են:

Այսպես Էմինն ամփոփում է հայոց մեծ դարձի, որ հայրենադարձությունն է, իր գրական-գեղարվեստական, նաև պատմական-հրապարակագրական անդրադարձը: Վերջին երկու արտահայտություններն ավելացնում ենք, որովհետև գեղարվեստի փաստը պատմական իրողություն է, իսկ այդ գեղարվեստը հագեցած է հրապարակագրական տարրերով, ինչն էլ ձևավորել է Էմինի այս բանաստեղծությունների ինչպես լեզվական, այնպես էլ ոճական նկարագիրը:

Հայրենիքը մարմնավորվում է նաև մանկության հուշերով («Աշտարակ գյուղում», «Մանկության աչքերով»), մանկության տպավորություններով, որ կյանքում ուղեկցում են բանաստեղծին և հեռավոր ճանապարհների վրա հանկարծ իրենց նմանակը գտնում: Նույնը կարելի է ասել նաև «Երգեր, գրված Լոռու լեռներում» բանաստեղծությունների փնջի մասին, որտեղ արդեն այլ մանկություն է և այդ մանկությունից ծնված այլ տպավորություններ, որոնք դարձել են «Անուշ» ու «Հառաչանք», «Մարո» ու «Լոռեցի Մաքո»: Ահա այստեղից էլ դարձյալ սրամիտ անդրադարձը. «Երբ Թումանյանը աշխարհում չկար // Մի թե Լոռին ու լեռներն այս կային...»: Էմինի հայրենասիրական տարերքը ըստ էության դրվագային է, ինչն էլ հնարավորություն է տալիս մտքով մե՛կ խորոնալու պատմության մեջ, մե՛կ հայացք ուղղել իրականությանը: Այսպես նա և՛ Արա գեղեցիկի ու Շամիրամի հետ է («Երկու հատված չգրված պոեմից», «Շամիրամի նամակը Արային», «Շամիրամի ողբը Արայի դիակի վրա»), և՛ Աստաֆյան փողոցով անցնող անողների («Անձրևն Աստաֆյանում»):

Էմինին գրական հոչակ բերեց «Մասունցիների պարը» բանաստեղծությունը (1957), ինչը մի յուրովի հայոց պատմություն է<sup>2</sup>:

Այս ծավալուն բանաստեղծությամբ հեղինակին հաջողվել է դրվագաբար ներկայացնել իր ժողովրդի ոչ հեռու անցյալի արյունոտ էջերը, երբ նա կորցրեց տուն, ունեցվածք, հարուստ ու շեն հայրենիք: Բայց կարողացավ պահել իր ոգին, վերընձյուղվելու կամքը և պատմական հայրենիքի մի փոքր հատվածում՝ Խորհրդային Հայաստանում, հիմնել նոր օջախ, հնչեցնել իր երգը՝ դրանով խորհրդանշելով հառնելու, իր կորցրածը ետ բերելու կամք ու կարողություն՝

<sup>2</sup> Այս բանաստեղծության համակողմանի վերլուծությամբ տե՛ս մեր համապատասխան հոդվածը ՀՌՀ Լրաբեր ամսագրի 2015թ. 1-ին համարում:

*Պարե՛ց Սասունն, ու ողջ աշխարհը հիացավ,  
 Պարե՛ց Սասունն, ու ողջ աշխարհը հասկացավ,  
 Որ պար չէ սա, այլ մի երկրի քաջ պատմություն,  
 Ուր պարտությունն անգամ ունի հպարտություն,  
 Եվ չի հաղթի ոչինչ այն հին ժողովրդին,  
 Որ այս ջանքն ՚վ  
 Ու այս կամքն ՚վ  
 Պարե՛լ գիտի... [6, էջ 107]*

Էմինին հաջողվել է սասունցիների պարի մեջ և պարի միջոցով ներկայացնել հայի հոգեբանությունն ու ազգային վերածննդի փիլիսոփայությունը:

«Սասունցիների պարը» անմիջապես տարածվեց, սիրվեց հայրենիքում, թարգմանվեց աշխարհի բազում լեզուներով և դարձավ հայ գրականության գեղարվեստական լուրջ փաստ ու արժեք:

Խորիմաստ են և բարձր արվեստով հագեցած այս շարքի բազում այլ գործեր՝ «Երգ-երգոցը», Աբովյանին, Կոմիտասին, Մարտիրոս Սարյանին նվիրված բանաստեղծությունները:

Սույն գրքում Էմինն ունի նաև բանաստեղծությունների շարք՝ «Բանաստեղծի բախտը»: Ի՞նչ է բանաստեղծի բախտը, եթե ոչ հայրենիքի և ժողովրդի բախտ: Նրան ծանոթ ու հայտնի էր բանաստեղծի բախտի ուղեցույցը.

*Երգը գենքի պես զգու՛յշ գործածիր,  
 Երբ խա՛ռն է դարը.  
 Նույն արճիճի՛ց են ձուլում, իմացի՛ր,  
 Գնդա՛ կն ու... տա՛ որ:*

Էմինի համար հայրենասիրություն էր մասնագիտական պատվախնդրությունը, ժամանակի հետ նորոգվելու և դարի առաջընթացից ետ չմնալու ջանքը: Սրանք ճակատային հայրենասիրություն չեն, այլ հայրենիքը ներքուստ ճիշտ կառուցելու առաջնային խնդիրներ, ուստի պետք է հաղթահարել «Բարևագրի» պես հնացած պոեզիան, քանի որ ժամանակն այլ պահանջներ է առաջադրում, ըստ որի «Հեռագրի՛ նման պիտի երգը գրվի, // Նրա նման դիպուկ, կարճ ու ազդու...» («Ձեզ»):

Այս գրքի հետ կապված առանձնացնենք ևս մի բնութագրական կողմ. գրքում զետեղված «Այն, ինչ ես պիտի գրեի» թարգմանական բանաստեղծությունների բաժնում Էմինը զետեղել է Հայաստանին նվիրված Ռուսաստանի բանաստեղծների շատ նշանակալից ստեղծագործություններ, ինչպես, օրինակ, գործեր Օսիպ Մանդելշտամի «Հայաստան» շարքից, Եվգենի Եվտուշենկոյի «Օ՛, ոչ, նա չէ ռուս եղբայրը հայի», Վերա Զվյագինցևայի «Զվարթնոց», Ռասուլ Համզատովի «Ես նայում եմ Մասիս սարին» բանաստեղծու-

թյունները:

«Մինչև այսօր» գրքի կապակցությամբ Էմինի պոեզիան, հայրենասիրական քնարերգությունը, արվեստը բարձր է գնահատում Գուրգեն Մահարին և նրան հռչակում «տերյան-չարենցյան տրադիցիաների շարունակողներից»: [6, էջ 26]

Էմինյան հայրենասիրությունը բարձր է գնահատված նաև խորհրդային գրականության հանրահայտ դեմքերից մեկի՝ Եվգենի Եվտուշենկոյի կողմից. «Իր բազմաթիվ արտասահմանյան կամ համամարդկային թեմաներով գրված բանաստեղծություններում, որոնք որոշակի աշխարհագրական սահմաններ չունեն, Էմինը մի՛շտ և ամենուրե՛ք իր հարազատ ժողովրդի բանաստեղծն է, որը համաշխարհային խճանկարի մեջ դնում է իր ազգային, անկրկնելի, արյունով ու արցունքով ներծծված քարե՛րը» [3, էջ 11]:

1970-ին հրատարակվեց Էմինի «Քսաներորդ դար» վերնագրով բանաստեղծությունների ժողովածուն, որի մի զգալի մասը հայրենասիրական գործեր են՝ «Մենք», «Միամանյոյի աղոթքը», «Կանգնել ու անթարթ», «Մարդարապատ» և այլ գործեր՝ «Ա՛խ, այս Մասիսը» վերնագրված ենթաբաժնում:

20-րդ դար և Մասիսի մորմոք, չլուծված ազգային հարցեր: Ի՞նչ է ասում Էմինը իր հայրենապատումի մեջ, ուր հարաբերվում են ազգայինն ու համամարդկայինը:

Հատկապես կարևոր է ազգայինի ու համամարդկայինի այս համադրությունը, որը կարող է ներդաշնակ լինել, կարող է նաև վերածվել բախումի: Եվ ինչո՞ւ հատկապես «Ա՛խ, այս Մասիսը»: Որովհետև նա սրտեր է հուզում, «երբ ինքը ... քար է», ժողովրդի համախմբման խորհրդանիշ է, «երբ ինքն՝ այստեղ չէ...», միաբանության հույս է, «երբ որ ... կիսված է»:

*Որ մե՛ծ սիրո պես,  
Ոչ հեռանու՛մ է,  
Ոչ էլ գալի՛ս է...  
Ա՛խ, այս Մասի՛սը: [9, էջ 11]:*

Գ.Էմինը, ինչպես իր սերնդակից շատերը՝ Հ. Շիրազ, Հ. Սահյան, Ս. Կապուտիկյան, Պ. Սևակ, Վ. Դավթյան և ուրիշներ, խորապես՝ և՛ մտքով, և՛ սրտով հայրենիքի հետ էր և հայրենիքի համար կանգնած իր կյանքով ու ստեղծագործությամբ՝ ծառայելով իր ժողովրդին հարազատ որդու խոնարհությամբ ու ազնիվ տքնանքով՝ իր համար ունենալով մի գերագույն նպատակ՝

*Ոչ պարսկակա՛ն, ոչ թուրքակա՛ն,-  
Հայի հայկակա՛նն եմ ուզում,  
Ոչ տարազի՛ր, ոչ գաղթակա՛ն,-  
Հայ ազգը՝ իր տա՛նն եմ ուզում,  
Մեր վաղեմի՛, ազնի՛վ հարցին*

*Արդար դատաստան էմ ուզում,  
Հոգնե՛լ եմ ես «Հայոց հարցի՛ց»,  
«Հայոց... պատասխանն» եմ ուզում:*

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. *Հսին Գ.*, Երկերի ժողովածու, հատոր 3, Երևան, 1985թ.:
2. *Աղաբաբյան Ս.*, «Հայ սովետական գրականությունը վաթսուն տարում», Երևան, 1980թ.:
3. *Հսին Գ.*, Երկերի ժողովածու, հատոր 1, Երևան, 1985թ.:
4. Սովետական Հայաստան, 1946, թիվ 210, 7 սեպտեմբեր:
5. «Ավանգարդ», 1946, թիվ 71, 8 սեպտեմբեր:
6. *Հսին Գ.*, «Այս տարիքում», Երևան, 1968թ.:
7. «Գրական թերթ», 1933թ, թիվ 7, 21 ապրիլի:
8. *Հսին Գ.*, «Երկերի ժողովածու», հատոր 2-րդ, Երևան, 1985թ.:
9. *Մահարի Գ.*, Գրական նամականի, «Գրական թերթ», 1959, թիվ 11:

**ХУДОЖЕСТВЕННЫЙ ОБРАЗ РОДИНЫ В ПОЭЗИИ  
ГЕВОРГА ЭМИНА 1950–1960-х ГОДОВ**

*Р. Аветисян*

**АННОТАЦИЯ**

В статье рассматривается тема Родины в художественном наследии известного советского армянского поэта. В полной мере просматриваются в хронологическом порядке сложные и противоречивые общественно-политические события и на этом фоне высвечиваются сотворенные поэтом ценности, которые, будучи тесно связаны с вековыми традициями армянской литературы, в то же время несли свежие, актуальные мысли и совершенно новые формы их передачи, которые преломлялись в уникальной творческой призме поэта и именно этими качествами и приобрели высокую ценность в армянской поэзии.

**Ключевые слова:** Геворга Эмин, Родина, паломник, Масис, геноцид, художественное наследие, традиция, новшество.

**THE IMAGE OF MOTHERLAND IN THE POETRY OF  
GEVORG EMIN DURING 1950–1960**

*R. Avetisyan*

**SUMMARY**

The article deals with the topic of the motherland in the poetry of a famous Soviet Armenian poet. Here the complicated and controversial social-political events are chronologically viewed upon and the values created by the poet are lit over on this background that, being closely connected with the ancient traditions of Armenian literature, at the same time brought in some new and actual thoughts as well as quite new forms of their comprehension. The forms were redone in the unique creative la-

boratory prism of the poet and it is for them that they got the high value among Armenian poetry.

**Keywords:** Gevorg Emin, motherland, pilgrim, Masis, genocide, literary heritage, tradition, novelty.

ՀԱԳ ՈՒ ԿԱՊ ԵՎ ԱՐԴՈՒԶԱՐԴ ՆՇԱՆԱԿՈՂ ՄԻ ՇԱՐՔ  
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

*Ա Գրիգորյան*

*hello1968@mail.ru*

ԱՄՓՈՓՈՒՄ

Աշխատանքում քննարկվում են մի շարք բարբառային բառեր, որոնք վերաբերում են հազ ու կապին: Դրանց գրական անվանումները **ակնոց, վզնոց, տրեխ, քղանցք** և **օձիք**, հայերենի բարբառներում դրսևորվում են բազմաթիվ բառական և հնչյունական տարբերակներով: Հիշատակենք **ակնոց** հասկացության բարբառային **գյօզուկ** բառանվանումը, որը ժամանակակից թուրքերենի համարժեք հասկացության անվանումն է: Թուրքերեն այս բառը հայերենին է անցել երկու ազգերի սերտ շփումների արդյունքում: Աշխատանքում ընդգրկված բարբառային բառանվանումների մեծ մասն ունի օտար ծագում՝ հիմնականում իրանական (պահլավական), թուրքական: Հիմնաբառեր՝ բարբառ, ակնոց, վզնոց, տրեխ, քղանցք:

Հայերենի բարբառները հարուստ են հազ ու կապ արտահայտող բազմաթիվ բառերով: Աշխատանքում անդրադարձել ենք **ակնոց, վզնոց, տրեխ, քղանցք, օձիք** և **հալլավ** հասկացությունների բարբառային ավանումներին, որոնք տեղ են գտել Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտական տետրերում:

*Ակնոց* բառը ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում բացատրված է՝ **աչքերին դրվող զույգ ապակիներով հարմարանք՝ տեսողությունը բարելավելու կամ կանոնավորելու համար**: Իսկ նրանով կազմված *վարդագույն ակնոցով նայել* դարձվածքը նշանակում է **լավատես լինել, ամեն բան լավ տեսնել** (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, 1969թ., հտ.1, էջ 27): Հր. Աճառյանի Հայերեն արմատական բառարանում **ակնոց** բառը ներկայացված է որպես նորագույն կազմություն՝ **ակն** արմատով, որ նշանակում է **«աչք»**: Աճառյանը այն համարում է բնիկ հայերեն արմատ՝ նշելով հնդեվրոպական նախալեզվում **oki** բառի սեռական **oknos** ձևը, որը նմանահունչ է ռուսերեն **oko, oru**, լատիներեն **oculus**, սանսկրիտ **aksi**, պահլավերեն **as**, թոխաստերեն **acam**, անգլերեն **eye** բառերին: Այնուհետև **ակն** արմատով կազմվել են **ականել «նկատել», յականել «լա նայիլ», զականել «դիտել», ականողիք «աչք», ականատես «աչքով տեսած», ականաւոր «նշանաւոր, երևելի», ականի «ոչ կոյր, աչք ունեցող», միականի, ակնածու «խնամարկող», ակնածութիւուն «պատկառանք», կան նան ակնահաճոյ, ակնակապիճ, ակնարկել, իսկ ակնոց, ակնոցաւոր,**

**ակնոցավաճառ** բառերը հեղինակը համարում է «նոր գրականում կազմուած բառեր» (Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», Երևան, 1973թ., հտ., էջ): Ըստ բարբառագիտական տեսրերի՝ **ակնոց-ը** հայերենի բարբառներում ունի մի շարք անվանումներ, ինչպես օրինակ՝ ազնուօծ Լիճք՝ Մարտունի, աչկի ԼՂԻՄ՝ Նոր Շեն, աչկունք Սասուն՝ Հոսներ, չէշմազ Եղեգնաձոր՝ Խաչիկ, չէշմակ Վրաստան՝ Բոլնիս-Խաչեն, չօշմակ Ագուլիս, զօզլուզ Եղեսիա, զօզլուկ Մոսկան՝ Սասուն, գեզլուղ Սասուն՝ Համշեն, ջօզլուկ Աշտարակ՝ Կարբի, կիզլիկ Գանձա՝ Բոգդանովկա, թասպահ Շամախի՝ Սաղյան և այլն: Կան նաև հնչյունափոխված տարբերակները. **չէշմազ** (Եղեգնաձոր՝ Խաչիկ), **չէշմակ** (Վրաստան՝ Բոլնիս-Խաչեն), **չէշմա** (Ագա): Գյոզլուկ բառն ունի **գյօզլուզ** (Եղեսիա, Էջմիածին՝ Ծաղկալանջ), **ջօզլուկ** (Աշտարակ՝ Կարբի), **զօզլրկ** (Մուշ՝ Բուլանուխ), **կիզլիկ** (Գանձա՝ Բոգդանովկա) տարբերակները: Աչկունքի տարբերակներն են՝ աշկունք Հոսներ՝ Սասուն, աշկունկ Հազգո՝ Սասուն, աճկունկ Իշխանաձոր՝ Սասուն: Ռ. Մարկոսյանը **գյոզլուկ** բառը համարում է թուրքերեն, (Ռ. Մարկոսյան, «Արարատյան բարբառ», Երևան, 1989թ., էջ369), իսկ Ա. Մարգարյանը **չէշմակը** համարում է պարսկերեն բառ (Ալ. Մարգարյան, «Գորիսի բարբառը», Երևան, 198 թ., էջ 532): Բացի նշված տարբերակներից գործածվել են այլ անվանումներ ևս, ինչպես՝ **այնա** (Բյազազ՝ Գուլիգարդ), **հազնոց** (Ախուրյան՝ Գետք), **հազնօծ** (Լենինական՝ Կարնո բարբառ), **թասպահ** (Շամախի՝ Սաղյան), **աչկալ** (Տոսու՝ Սպարկերտի շրջան), **Էնազ** (Ուրգություն՝ Ղարաղաղ), **աչկունք** (Իրցունք՝ Սասուն), **աչկի** (ԼՂ՝ Նոր-Շեն), **աճկի** (Համշեն՝ Սասուն):

Ըստ բարբառագիտական տեսրերի՝ **տրեխ-ը** հայերենի բարբառներում լայնորեն կիրառվող բառ է՝ հնչյունական հետևյալ դրսևորումներով՝ **տըրեխ** (Շամշաղին՝ Վերին Կարմիրաղբյուր, Մարտակերտ՝ Չափար, Գորիս՝ Շինուհայր, Քանաքեռ, Նոյեմբերյան՝ Կոթի), **տըրեխ** (Եղեգնաձոր՝ Խաչիկ, Մարտունի՝ Շամխոր, Շամշաղին՝ Չինչին), **տըրըեխ** (Գորիս՝ Վաղատուր, Խոտ, Քարահունջ, Դաշքեսան՝ Չովդար, Մարտունի՝ Եմիշճան), **տրյեխ** (Թումանյան՝ Շամուտ): **Տրեխ** բառի իմաստը Ս. Գաբամաճյանի «Նոր բառգիրք հայերեն լեզուի» բառարանում բացատրվում է «ոտքի աման, որ միայն ոտքին տակը կը ծածկէ, և որ խրացնելով կը կապուի. չարըզ» (Ս. Գաբամաճեան, «Նոր բառգիրք հայերեն լեզուի», Կ.Պոլիս. 1910թ., էջ 1308): Ըստ Ս. Մալխասյանցի՝ **տրեխը** «փափուկ՝ կիսամշակ կաշուց ոտքի ազանելիք է՝ առանց կրունկների և երեսը բաց, չարըխ»: Իսկ Հր. Աճառյանը այս բառի մասին ասում է, որ այն « հնչում է ինչպես արաբական **tirag**-ը, որը կօշիկի կաշի է, արաբական փապուճի վրա գամված կաշվի թերթերից յուրաքանչյուրը»: Այնուհետև նշում է, որ գնչ. **triak** «կօշիկ» բառը փոխառվել է հայերենից (Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», Երևան, 1979թ., էջ 435): **Տրեխի** բառական տարբերակներից է **չարուխ** ձևը, որը հայերենի բարբառներում դրսևոյվել է հետևյալ հնչյունական փոփոխություններով, ինչպես՝ **չարուխ** (Խուրթա՝ Բինջուկ, Էջմիածին՝ Հովտամեջ), **չարօխ** (Արտաշատ), **չարոխ** (Վան՝ Հնդստան գյուղ), **չայոխ** (Կիլիկիա՝ Հաջըն, Ադանա),

**չարքիս** (Ռոդոսթոն, Բազմաշեն՝ Խարբերդ), **չարուղ** (Եդեսիա): Հայոց լեզվի բարբառային բառարանում այս բառն ունի նույն բացատրությունը, ինչ տրեխը՝ միայն հավելելով, որ այն ոտքին են ամրացնում կաշվե թելերով: Ալ. Մարգարյանը և Ռ.Մարկոսյանը **չարուխը** համարում են թուրքերեն բառ (Ալ. Մարգարյան, Գորիսի բարբառը, Երևան, 1975թ., էջ 532), (Ռ. Մարկոսյան, Արարատյան բարբառ, Երևան, 1989թ., էջ 376):

Հայերենի բարբառներում **վզնոց** հասկացությանը վերաբերող բառերն են՝ **վզնոց** (Խնուս՝ Դուման, Մուշ՝ Բուլանուխ, Գառնի, Մարտակերտ՝ Էզնախոջա, Աբովյան՝ Առինջ և այլն), **գարդանի** (Մասուն՝ Կրիսա), **ճրտնոց** (Շամշադին՝ Վերին Կարմիրաղբյուր), **ճրթանոց** (Մարտակերտ՝ Չաղդրան), **ուլիկներ** (Հոկտեմբերյան՝ Մարգարա), **հուլունք** (Մարտունի՝ Շամխոթ), **զընջիլ** (Հմաշեն՝ Մամսոն), **հուլինկ** (Թալին), **հըլու** (Կալինինո՝ Շահնագար), **գերդանլըղ** (Եդեսիա՝ Կարմունջ), **գառղընի** (Մոտկան՝ Նիգ), **ճրտի ցիփ** (Ջուղա՝ Ախալցխա), **ճրտի զիրթարանք** (Կիրովաբադ): **Վզնոց** բառի իմաստային բացատրությունը, ըստ Սահակ Ամատունու, **ուլունքների, մարգարիտների կամ ոսկու շար է, որ կանայք կախում են վզից** (Սահակ Ամատունի, «Հայոց բառուբան», Վաղարշապատ, 1912թ., էջ 608): Նույն բացատրությունն է տալիս նաև Մեմեոն Գաբամաճյանը՝ այն մեկնաբանելով որպես **վզի գարդ** (Մեմեոն Գաբամաճյան, «Բառգիրք հայերեն լեզուի», Պոլիս, 1910թ., էջ 1258): Հր. Աճառյանն այս բառաշարքից անդրադարձել է միայն **զինջիլ** բառին՝ այն բացատրելով որպես **«շղթայ»** նաև **զինճիլ**: Ըստ նրա՝ բառը թուրքերեն **zenjil «շղթայ»** բառից է ծագել, բայց այն փոխառյալ է պարսկերեն **zenjir, zanjir, zinjir** բառերից (Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», Երևան, 1973թ., հտ. 2, էջ 102): Հատուկ ուշադրության են արժանի բարբառագիտական տեսրերում արձանագրված հետևյալ բառերը, որոնք հայերենի համար ունեն խորթ արտասանություն. **դոլբաղ** (Նախիջևան՝ Տանակերտ), **զերթոն** (Զեյթուն՝ Ֆուռնոս-Ուլնիս), **դրստի** (Շապին Գարահիսար), **քրամիցա** (Ակն), **գարդանբանդ** (Ուրմիա՝ Կարակըզ), **քարուբար** (Վան՝ հազարեն), **պոլմաղ** (Գանձա), **դոռ** (Եդեսիա), **շամշա** (Բուլանուխ՝ Գյաբուլների գյուղ), **շաղդա** (Մեքաստիա՝ Մանջալիկ): Հիշյալ բառերի քննությանը կանդրադառնանք մեր հետագա աշխատանքներում:

Ըստ բարբառագիտական տեսրերի՝ **քղանցք** հասկացության **փեշ** անվանումը գործածել են՝ Եդեսիայում, Մասունում՝ Մոտկանում, Եդեզնաձորում՝ Խաչիկ գյուղում, Արտաշատում, Բոզդանովկայում՝ Գանձայում, Քանաքեռում, Աբովյանում՝ Կաթնաղբյուր գյուղում, Վանում՝ Հազարեն գյուղում, Շահումյանում՝ Շուլավերում, Ապարանում՝ Նիգավանում, Դիադինում և այլ վայրերում: **Փեշ** բառը հայերենի բարբառներում դրսևորվում է հնչյունափոխական մի շարք տարբերակներով, ինչպես՝ **փեշ** (Խոյ՝ Ուրմիա, Աբովյան՝ Առինջ, Փերիա՝ Մանգիրբարան), **փեշ** (Էջմիածին՝ Հովտամեջ, Մուշ՝ Բուլանուխ, Մուրմալու, Ալաշկերտ՝ Մազրա), **փիշ** (Ախալցխա՝ Ջուղա, Թալին՝ Դիան), **փյեշ** (Թումանյան՝ Շամուտ), **փիեշ** (Ախալքալակ՝ Բեժանո),

**փեշկ** (Ասկերան՝ Մեհտիշեն, Մարտակերտ՝ Չափար, Հաթերք), **փըշկը** (Գորիս՝ Վաղատուր), **փեշկը** (Նուխի, Ղարաբաղ՝ Խանաբաղ), **փեշքը** (Գորիս՝ Շինուհայր, Խոտ, Տաթև), գործածվել է նաև հոգնակի ձևով՝ **փեշերք** (Շամխոր՝ Լղարակ), **փեշկերք** (Մարտակերտ՝ Քոլատակ, Տոնաշեն): Ըստ Էդ. Աղայանի և Ռ. Մարկոսյանի՝ **փեշը** պարսկերեն բառ է և նշանակում է **«փեշկ՝ զգեստի քղանցք»** (Է.Աղայան, «Մեղրու բարբառը», Երևան, 1954թ., էջ 539), (Ռ.Մարկոսյան, «Արարատյան բարբառ», Երևան, 1989թ., էջ 378):

Հայերենի մյուս բարբառներում **քղանցք** հասկացությունը դրսևորվել է այլ անվանումներով, ինչպես օրինակ՝ **տուտ** (Աշտարակ՝ Կարբի), **տոտ** (Գորիս՝ Տաթև), **տոտնը** (Վրաստան՝ Բոլնիս-Խաչեն, ԼՂՀ՝ Վաղուհաս), **փոռ** (Մոտկան՝ Նիգ, Վան՝ Շուշանց (այստեղ գործածել են նաև **փելվակի** բառը)), **մինթանա** (Աբովյան՝ Գամրիգ-Կամարիս): Ս. Գաբամաճյանի «Բառգիրք հայերեն լեզուի» բառարանում **քղանցք** բառը բացատրված է՝ «հագուստին վարի կախած ծայրերը. շուրջք. փեշ» (Մեմեոն Գաբամաճյան, «Բառգիրք հայերեն լեզուի», Պոլիս, 1910թ., էջ 1375): Հր. Աճառյանն այս բառը ևս բացատրում է որպես «հագուստի ծայրերը կամ ծոպերը, փեշ»՝ տալով նաև կազմությունը՝ բարդված **քուղ** և **անցք** բառերից: Իսկ քուղը «ոլորած դերձանն է, վուշե թելը, որից ծագել է քղանցք բառը»: Ըստ Աճառյանի՝ այս բառի բուն նշանակությունն է «զգեստի ծայրի այն մասը, ուր խծիպի միջով թելն էր անցնում և կամ ծայրի ծոպաթելերն էին կախված, իբր քուղերի անցք»: Իսկ թե ինչ ծագում ունի **քուղ** բառը, կա մի քանի տեսակետ. մի դեպքում այն կապվում է **կուղ «ոլորք»** բառի հետ, որը հնդեվրոպական նախալեզվի **gu** արմատից է գալիս, մյուս դեպքում համեմատվում է սանսկրիտի **guna «թելի ոլորք, թել»**, այնուհետև՝ գերմաներեն **garn՝ քող «voile»**, հոլանդերեն **garen «թել»** բառերի հետ: Նույնիսկ մի ստուգաբանական բառարանում բառի ծագումը կապվել է **քաղ «այծ»** բառի հետ, որին Աճառյանը հավատ չի ընծայում: (Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», Երևան, 1973թ., հտ.4, էջ 591):

Աճառյանի՝ **օձիք** բառը, որ նշանակում է «զգեստի վերի ծայրը՝ վզի մասը», ծագել է **օձ** արմատից՝ գալարված ձևը նկատի ունենալով (Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», Երևան, 1973թ., հտ.4, էջ 611): **Յախա** բառը ևս լան տարածում է ունեցել հայերենի բարբառներում՝ Եղեսիա, Շամշադին՝ Վերին Կարմիրաղբյուր, Եղեգնաձոր՝ Խաչիկ, Խնուս՝ Դուման, Էջմիածին՝ Հովտամեջ, Աբխազիա՝ Սամսոն, Թալին, Կալինինո՝ Շահնազար, Ազա, Աշտարակ՝ Կարբի, Ախալքալակ՝ Լոմատուրցիա, Կարս՝ Ղզրչախչախ և այլն: Այն դրսևորվել է՝ **յէխա** (Մարտակերտ՝ Չափար, ԼՂՀ՝ ճարտար), **յախօ** (Ջեյթուն՝ Ֆուռնոս-Ուիլնիս, Կիլիկիա՝ Աղանա, Հաջըն) հնչյունափոխական տարբերակներով: **Դօշ** բառը գործածվել է **դօշ** (Մուրմալու) և **դոշ** (Մուրմալու՝ Ալիջան) հնչյունափոխված ձևերով: **Յախա** և **դօշ** բառերը, ըստ Էդ. Աղայանի, փոխառվել են ադրբեջաներենից (Է.Աղայան, «Մեղրու բարբառը», Երևան, 1954թ., էջ 253): Նույն կարծիքն է հայտնում Ռ.Մարկոսյանը՝ **յախա**-ն համարելով թուրքերեն բառ (Ռ.Մարկոսյան, «Արարատյան բար-

բառ», Երևան, 1989թ., էջ 374): Պետք է ավելացնել նաև, որ հայերենի բարբառները հարուստ են այս հասկացության այլ անվանումներով, որոնք են՝ **փողբաստ** (Փիջոնք՝ Խուրթա գավառ), **փողբաղ** (Մասուն՝ Արփի, Մուշ՝ Միրաստ), **փողբաստ** (Մասուն՝ Կրիսու, Մուշ՝ Բուլանուխ), **փողպաստ** (Մանագկերտ՝ Էգնախոջա, Բերկրի՝ Կուրծոթ, Տոսու՝ Սպարկերտ), **փողբաղ** (Մուշ՝ Դուգնուկ, Հացիկ, Թալին՝ Դիան), **փողպաստ** (Խարիդ՝ Խիզան, Մոկու՝ Մամոտանց, Վան՝ Խոշաբ), **վիզ** (Մուրմալու՝ Փանիկ, Աբովյան՝ Կապուտան, Վան՝ Խոշաբ): Ոչ հայկական հնչողություն կա **դաֆկ** (Վան՝ Քարատաշտ) և **փարվալ** (Շատախ՝ Սըվտըկի) բառերում, որոնց առավել հանգամանորեն կանդրադառնանք հետագա աշխատանքներում:

Ընդհանրապես **հալավ** հասկացությունը հայերենի բարբառներում գիտակցվել է որպես 1) **շապիկ**, 2) **հագուստ**, 3) **շոր**, 4) **զգեստ**, որոշ բարբառներում նաև՝ **կանացի ներքնազգեստ** (ԼՂՀ՝ Խրմանջուղ), ինչպես նաև **հարսանյաց զգեստ**, **օժիտ** (Սեբաստիա՝ Զարա), **հարս ու փեսայի զգեստ**, որը օրհնում է տերտերը (Նիկոմեդիա՝ Խասկալ): Բացի հագուստ նշանակությունից այս բառը հայերենի բարբառներում գործածվել է՝ 1) **շերտ** (երտ), 2) **օրհնություն**, **օրհնանք**, **զերեզմանաօրհնություն** իմաստներով (Հայոց լեզվի բարբառային բառարան, հտ. Գ, Երևան, 2004թ., էջ 228): Հայերենի բարբառներում **հալավ** բառը գործածվել է հետևյալ հնչյունափոխված տարբերակներով, այսպես՝ **հալավ** (Համշեն՝ Օրդու, Հադրութ՝ Հին Թաղար, Սեյսուլյան, Շամխոր՝ Լդարակ, Ախալքալաք՝ Կարծախ, Կարս՝ Մավրակ), **հալաֆ** (Ղարս, Արաբկիր, Ռոդոսթո, Ախալքալաք՝ Ալաստան, Կարս՝ Բուրագդարա), **խալավ** (Մուշ՝ Բուլանուխ, Մուշ՝ Փիրան, Վան՝ Կյուսենց, Ալաշկերտ՝ Մագրա, Եղեգնաձոր՝ Վերնաշեն, Շամիրամ՝ Բողեշ, Վան՝ Կյուրծոթ), **ալաֆ** (Վարդենիս), **հըլըֆ** (Թալին՝ Դիան), **հըլավ** (Մասուն՝ Հազոն): Ըստ Հր. Աճառյանի՝ **հալավ** բառը նշանակում է «զգեստ, սարկալագի շապիկ», «շորի կտոր, քուրջ»: Բառը փոխառյալ է ասորերեն **halapu, halabu «ծածկել»** իմաստով բառերից, որոնցից ծագել են **nahlaptu, hitluptu «կերպաս, հագուստ, զգեստ»** նշանակությամբ բառերը: Կա նաև վրացերեն **հալավի** ձևը, որ նշանակում է «փեսացուի կողմից նշանածին ուղարկած նուր» (Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», Երևան, 1973թ., հտ. 3, էջ 10): Անդրադառնալով **շապիկ** բառին՝ պետք է ասել, որ հայերենի բարբառներում այն բավականին տարածում է ունեցել. Կրասնոսելսկ՝ Օրջոնոկիձե, Ղարադաղ՝ Սարդու, Սեյսուլյան, ԼՂՀ՝ Մաղադիս, Մարտակերտ՝ Առաջաձոր, Իջևան՝ Աչաջուր, Կապան՝ Արծվանիկ, Ապարան՝ Տոլորս: Այս բառը նշանակում է «մսի վրայից հագնելու կտաւեայ բարակ հագուստ», «դրսից հագնելու վերարկու, պատմուճան», ինչպես նաև՝ «դպիրների և սարկալագների բարակ վերարկու՝ որ արարողության ժամանակ են կրում»: Բառի ծագումը կապվում է պահլավերեն **sapik** ձևի հետ, որի իմաստն է «նուիրական շապիկ զրադաշտականաց»: Նույն արմատից առաջացել է **sapikih** բառը՝ «նուիրական շապիկը հագնելու արարողությունը» իմաստով: Կա նաև պարսկերեն **sabi** բառը՝ «գիշերային, գիշերա-

զգեստ» իմաստով, որից արաբերենը փոխառել է **sabiy** կամ **sabiya** ձևերը և գործածել «առանց օձիքի արաբական շապիկ, սև արա կամ սև կապերտ» նշանակությամբ: Սրանից է կազմվել **շապկել** բառը՝ «պատել, ծածկել, շրջապատել» նշանակությամբ (Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», Երևան, 1973թ., հտ. 3, էջ 495):

Ավարտելով բառերի քննությունը՝ ակնհայտ է դառնում, որ հայերենի բարբառները հարուստ են այս կամ այն հասկացությունն արտահայտող բառանվանումներով: Այսպես, 1) **ակնոց** հասկացությունը արտահայտվում է **չէշմակ, գյօզուկ, աչկի, աչկունք, այնագ** անվանումներով, որոնք էլ իրենց հերթին, ենթարկվելով բարբառին բնորոշ հնչյունափոխությանը, դրսևորում են բազում տարբերակներ: 2) **Տրեխ**-ը երկու բառական տարբերակ է դրսևորում՝ **տրեխ և չարուխ**: 3) **Վզնոց**-ը արտահայտվում է **վզնոց, գարդանի, ճըսնոց, հուլունք, զընջիլ** անվանումներով և բազում հնչյունափոխական դրսևորումներով: 4) **Քղանցք**-ն ունի **փեշ, տուտ, փօռ**, 5) **օձիք**-ը՝ **յախա, դօշ, փօղպատ, վիզ, դաֆկա և փարվալ** անվանումները: 6) **Հալավ**-ը լայն ընդգրկումով հասկացություն է՝ ներառելով ն՝ **շապիկը, ն՝ շորը, ն՝ զգեստը, ն՝ հագուստը**: Ավելի շատ գործածական են **շապիկը** և **հալավը**, որոնց հնչյունափոխական բազում տարբերակները հետաքրքիր բառաշարք են ներկայացնում:

Ելնելով վերլուծությունից՝ կարելի է եզրակացնել, որ հիշյալ բարբառային անվանումներից շատերը օտար ծագման են, փոխառված են այլ լեզուներից, բայց մեզ հարազատ են այնքանով, որ փոխանցվել են մեր պապերի կենդանի խոսք ու զրույցի միջոցով: Դրանք մեր լեզվի հարստությունն են և անբաժանելի մասն են կազմում, մինևույն ժամանակ անգնահատելի են, քանի որ լեզվի և ժողովրդի պատմություն են կերտել:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Աճառյան Հր.*, Հայերեն արմատական բառարան, Եր., 1973:
2. *Արուլյան Խ.*, Երկեր, Եր., 1984:
3. *Գարամաճեան Ս.*, Նոր բառգիրք հայերեն լեզուի, Կ.Պոլիս. 1910:
4. *Մայիսյանց Ս.*, Հայերեն բացատրական բառարան, Եր., 2010:
5. *Աղայան Է.* Մեղրու բարբառը, Եր., 1954:
6. *Մարկոսյան Ռ.*, Արարատյան բարբառ, Եր., 1989:
7. *Ջահուկյան Գ.*, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987:
8. *Ավետիքեան* Գաբրիել, Սիրմելեան Խաչատուր, Ավգերեան Մկրտիչ, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1837:
9. Հայոց լեզվի բարբառային բառարան, Եր., 2007:
10. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Եր., 1980:
11. *Ամատունի Ս.*, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912:
12. *Մարգարյան Ալ.*, Գորիսի բարբառը, Եր., 1975:
13. *Ջահուկյան Գ.*, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1989:
14. *Մուրադյան Հ.*, Կաթավաբերդի բարբառը, Եր., 1967:

**РЯД ПОНЯТИЙ, ОБОЗНАЧАЮЩИХ ОДЕЖДУ И АКСЕССУАРЫ,  
В ДИАЛЕКТАХ АРМЯНСКОГО**

*А. Григорян*

**АННОТАЦИЯ**

В работе исследуются некоторые диалектные слова, которые входят в тематическую группу “одежда”. Литературные названия этих понятий *очки, ожерелье, лапоть, подол и воротник* в армянских диалектах проявляются многими лексическими и звуковыми вариантами. Отметим диалектное название понятия *очки-гѣзлук*, которое является названием соответствующего понятия в современном турецком языке. Это турецкое слово перешло в армянский язык в результате тесного общения двух наций. Большинство включенных в работу диалектных названий имеют иноязычное происхождение, в основном персидское и турецкое.

**Ключевые слова:** диалект, очки, ожерелье, лапоть, подол.

**A NUMBER OF CONCEPTS DENOTING CLOTHES AND ACCESOIRES  
IN ARMENIAN DIALECTS**

*A. Grigoryan*

**SUMMARY**

Some dialect words that relate to the topic of clothes are observed in the paper. The names of these words in the litererary Armenian language (glasses, necklace, bast shoe, hem and collar) are presented in many lexical and phonetic ways in Armenian dialects. For example, the dialect form of the word «glasses» in Armenian is «geslak» which is the corresponding word in modern Turkish. This Turkish word was borrowed by the Armenian language as a result of close contact of the two nations. Most of the dialect words included in the work have a foreign origin, mainly Persian and Turkish.

**Keywords:** dialect, glasses, necklace, bast shoe, hem.

## ԷՊԻԿԱՎԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Ա. Եղիազարյան*

*azatyeghiazaryan@yahoo.com*

### ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության են առնվում էպիկական հուշարձանների ժանրային առանձնահատկությունների խնդիրները: Այս խնդիրը էպոսագիտության մեջ գրեթե ուսումնասիրված չէ: Հեղինակը ելնում է այն իրողությունից, որ տարբեր ժողովուրդների էպիկական հուշարձանների հսկայական բազմազանությունը հնարավոր չէ ընդգրկել որևէ սահմանումով: Դա ցույց է տրվում հայկական, ռոմանական, սլավոնական էպոսների օրինակով: Անշուշտ կան ընդհանուր հատկանիշներ՝ էպոսների բանավոր ծագումը և հերոսական բովանդակությունը: Բայց այս վերջիններն էլ հանդես են գալիս երբեմն չափազանց տարբեր ձևերով: Այս բոլոր տարբերությունները, ի վերջո, գալիս են էպոսների ազգային առանձնահատկություններից, կարելի է ասել՝ դրանց դրսևորման ձևերից են: Իսկ սա նշանակում է, որ էպիկական հուշարձանների ազգային և ժանրային հատկանիշները սերտորեն կապված են, և էպոսների ժանրային առանձնահատկությունները հասկանալու համար պետք է քննել նրանց ազգային առանձնահատկությունները:

**Հիմնաբառեր**՝ ժողովրդական էպոս, ժանր, հայկական էպոս, սլավոնական էպոս, ռոմանական էպոսներ, սլավոնական էպոսներ:

*Էպոսը* գրականագիտության ամենաանորոշ եզրերից մեկն է: Կարելի է հիշել նրա օգտագործման առնվազն երեք մակարդակ՝ էպոսը իբրև գրական սեռ, որի մեջ մտնում են բոլոր պատմողական ժանրերը՝ առակից մինչև էպոպեա, էպոսը իբրև որևէ ժողովրդի բանահյուսական էպիկական ստեղծագործությունների ամբողջություն, վերջապես էպոսը իբրև բանահյուսական ժանրի անվանում: Այս վերջին երկուսի սահմանները առհասարակ անորոշ են: Օրինակ, իսպանական էպոս ասելով հասկանում են նաև՝ *Միդի երգը* պոեմը, որը իսպանական էպիկական հուշարձանների մեջ ամենահայտնին է, և՛ էպիկական մնացած հուշարձանները, այսինքն նաև՝ *Միդի երգը*, և՛ բազմաթիվ ռոմանսները, որոնք հայտնի են *Ռոմանսերո* ընդհանուր անվամբ:

Իհարկե, փորձել մի ընդհանուր սահմանում տալ հազարամյակների ընթացքում ժողովուրդների ստեղծած հարյուրավոր էպիկական ստեղծագործություններին անհնար է և անիմաստ: Բայց փորձել հասկանալ էպիկական հուշարձանների ժանրային առանձնահատկությունները, դրանց փոփո-

խությունները ժամանակի և տարածության մեջ /երկրից երկիր/ շատ հետաքրքրական և գիտական իմաստով իսկապես օգտակար գործ է: Ի վերջո, այսօր միայն երկու հատկանիշ կարելի է նշել, որոնք հատուկ են բոլոր էպոսներին՝ բանավոր ծագումը և հերոսական բովանդակությունը: Ընդ որում, նույն այդ բանավոր ծագումը և հերոսական բովանդակությունը դարձյալ շատ տարբեր են և հակասական տարբեր ազգային մշակույթներում: Ներքևում այս տեսանկյունից ես համառոտ քննության եմ ենթարկում հայկական և մի քանի այլ էպիկական հուշարձաններ՝ փորձելով հասկանալ նրանց ժանրային ընդհանրությունները և տարբերությունները<sup>1</sup>:

Ամենահեղինակավոր հայ էպոսագետը՝ Մանուկ Աբեղյանը, խոսում է հայկական առնվազն չորս էպոսների մասին՝ հեթանոսական, *Պարսից պատերազմ*, *Տարոնի պատերազմ* և *Մասունցի Դավիթ* [1, 97]: Այստեղ անվստահություն է առաջանում արդեն թվի պատճառով. տարբեր ժամանակներում ստեղծված չորս էպոս մի ժողովրդի բանահյուսության մեջ համոզիչ չէ: Բայց ավելի էական են այն մեծ տարբերությունները, որոնք ի հայտ են գալիս Աբեղյանի թված էպոսները համեմատելիս: Հեթանոսական էպոսը ստեղծվել է նախաքրիստոնեական շրջանում, և Խորենացին այդ սյուժեները գրի է առել իբրև բանահյուսական գործեր, որոնցում նաև պատմական ճշմարտություն կա: *Պարսից պատերազմը* Աբեղյանը ինքն է հավաքել /և անվանել/ պատմագրական աղբյուրներից՝ գերազանցապես Փավստոս Բուզանդից, որի մեջ ոչ մի ակնարկություն չկա դրանց բանահյուսական ծագման մասին: *Տարոնի պատերազմը* շարադրված է Հովհան Մամիկոնյանի *Տարոնի պատմության* մեջ, որտեղ դարձյալ ոչ մի խոսք չկա այդ սյուժեների բանահյուսական լինելու մասին: *Մասնա ծոերը*, որի ձևավորումը կապվում է IX-XI հետագա դարերի հետ, մեզ է հասել բանավոր վիճակում: Արդեն այս թվարկումը ի ցույց է դնում էական տարբերություններ հայկական էպիկական հուշարձանների միջև: Ավելի մանրամասն քննարկումը հաստատում է այդ տարբերությունները:

Հեթանոսական սյուժեները վերաբերում են հեթանոսական դիցարանի հերոսներին՝ Վահագն, Հայկ և Բել, Արա Գեղեցիկ, հայոց հին կիսաառասպելական թագավորներին՝ Արտաշես, Արտավազդ և ուրիշներ: Մրանց ստեղծման ժամանակ հայկական տառերի և ուրեմն գրականության ստեղծումը դեռ շատ հեռու էր, և դրանք մի քանի հարյուրամյակ պահպանվել և V դար

<sup>1</sup> Հայկական էպոսագիտության մեջ, ինչքան ինձ հայտնի է, էպոսի ժանրային առանձնահատկությունների խնդրին առաջին անգամ անդրադարձել է Գր. Ա. Գրիգորյանը «էպոսի ժանրային հատկանիշները» գրքում [4]: Գրքում կան հետաքրքրական դիտողություններ, բայց ամբողջությամբ այսօր այն ինձ հնացած է թվում մանավանդ այն պատճառով, որ հայկական էպոսը քննելիս նա առաջին հերթին ելնում է ոչ թե բուն նյութից, այլ գեղագիտական կանխակալ պատկերացումներից /որոնք կապվում են մարքսիստական գեղագիտության հետ/:

են հասել միայն բանավոր ճանապարհով, ինչպես *Մասունցի Դավիթը*: Անկասկած, դրանք, հարյուրամյակների ընթացքում հեռանալով իրենց իրական հիմքերից և ապրելով միայն ժողովրդի հիշողության մեջ, վերածվել էին իսկական էպիկական պատումների: Կարելի է ենթադրել, որ քրիստոնեության ընդունումից հետո դրանք դատապարտված էին մոռացման՝ հեթանոսական ամեն ինչ դուրս էր մղվում ժողովրդի հիշողությունից. Մովսես Խորենացու խելքը նրան հուշեց այդ սյուժեների մեծ արժեքը, և մի քանիսը փրկվեցին մոռացումից նրա շնորհիվ:

Ինչ վերաբերում է Փավստոսի գրի առած պատումներին, ինչպիսիք են Արշակի, Վասակ և Մուշեղ Մամիկոնյանների մասին պատմող սյուժեները, այստեղ խնդիրը ավելի բարդ է: Դրանք վերաբերում էին իրական պատմական հերոսների, որոնց ժամանակակիցն է եղել Փավստոսը /կամ մեկ ուրիշը, որը գրի է առել այդ պատմությունները/: Արդյո՞ք այդ պատմությունը գրվել է IV դարում հունարեն և V դարում թարգմանվել հայերեն, թե՞ գրվել է հինգերորդ դարում հայերեն: Այսինքն, դեպքերի անմիջական ժամանակակիցն է եղել, թե դեպքերը գրի է առել դրանցից մի քանի տասնամյակ հետո: Այս հարցը կարելի է ձևակերպել և այսպես՝ Փավստոսը կամ այլ հեղինակ իր գրի առած պատումներին վերաբերվում էր իբրև էպիկական սյուժեների՝, թե՛ իր ժամանակակիցների կամ անմիջական նախորդների իրական գործերի: Անկասկած, այս վերջինը, եթե անգամ V դարի առաջին տասնամյակներում գրի են առնվել IV դարի վերջի իրադարձությունները: Դրանք չէին ամբողջացել և այդպես էլ չամբողջացան իբրև միասնական էպիկական ստեղծագործություն, թեև Աբեղյանը ուզում է ապացուցել, որ այդ սյուժեները նույնիսկ ավելի միասնական էին, քան *Մասունցի Դավթի* չորս ճյուղերը: Ասվածը որևէ չափով կասկածի տակ չի դնում Փավստոսի սյուժեների հսկայական արժեքը և դրանց կապը բանահյուսական և առասպելական ավելի խոր շերտերի հետ: Բոլոր այդ սյուժեները իսկապես բանահյուսական ծագում ունեն. դա ակնհայտ է /թեև նորից պետք է շեշտել, որ իրական կամ պայմանական Փավստոսի համար այդ ամենը իրականություն էր/: Օրինակ, Արշակ արքայի և պարսից Շապուհի գրույցը Շապուհի պալատում, որտեղ Արշակը հայկական հողի վրա խիզախ է և ըմբոստ, պարսկական հողի վրա՝ խոնարհ և մեղմ: Անշուշտ, այս սյուժեն արմատներով հասնում է մինչև խոր հնադար՝ արձագանքելով հին հույների Անթեոսի սյուժեին: Բայց դա վերագրված է հայոց միանգամայն պատմական Արշակ թագավորին, որը թագավորել է IV դարի երկրորդ կեսին, և սա արդեն էականորեն տարբեր է Մասնա ծոերի, Աքիլլեսի կամ Իլյա Մուրոմեցի պատմություններից: Էպոսագիտության խնդիրը այստեղ, իմ կարծիքով, մեկն է՝ հստակորեն տեսնել այդ պատումների ժանրային տարբերությունները հեթանոսական պատումներից և *Մասունցի Դավթից*:

Ուրիշ հարցականի առջև ենք կանգնում *Տարոնի պատերազմը* ուսումնասիրելիս, որը պահպանվել է Հովհան Մամիկոնյանի *Տարոնի պատմու-*

թյուն էրկասիրության մեջ: Գլխավոր հերոսը Գայլ Վահանն է Մամիկոնյանների տոհմից, որը նույնպես պայքարում է պարսիկների դեմ: Դարձյալ իրական-պատմական անձնավորություն է, որին վերագրված գործերում ոչ մի առասպելական բան չկա. միանգամայն իրական հերոսի իրական գործեր: Այս երկի առնչությամբ պետք է ուշադրություն դարձնել երկու խնդրի: Ի՞նչ չափով է Գայլ Վահանը պատմական գործիչ և ի՞նչ չափով է էպիկական հերոս: Ղ. Այվազյանը «Տարոնի պատմությանը» նվիրված իր գրքում ապացուցում է, որ Տարոնի պատերազմի դեպքերը իրական են, և խոսում է միայն դրա որոշ էպիկական երանգների մասին [3, 298]: Չմտնելով Այվազյանի դրոյթների քննության մեջ՝ ես ուշագրավ եմ համարում նրա եզրահանգումը: Այո, բանահյուսական շերտ այդ գործում կա, բայց ամբողջության մեջ այն իրական պատմություն է: Ուրեմն, մեծ վերապահումով պիտի վերաբերել այդ հուշարձանը էպիկական համարելուն կամ գիտակցել, որ դրա էպիկականությունը շատ տարբեր է այլ հուշարձանների էպիկականությունից: Տարոնի պատերազմի գլխավոր հերոսի հերոսականությունը ևս շատ տարբեր է հայկական մյուս հուշարձանների գործող անձանց հերոսականությունից, տարբերություն, որն անմիջականորեն կապված է հերոսների բարոյական սկզբունքների համակարգի հետ: Վեցերորդ դարի հերոսը իր թշնամիների հետ վարվում է ավելի վատ, ավելի նեղ, քան անգամ անտիկ էպոսի հերոսները, որոնք բարոյականության հարցերում իրենց շատ ավելի ազատ էին զգում, քան միջնադարյան հերոսները: Մարդկանց ճաշի է հրավիրում, հետո դաժանորեն պատուհասում է: Այս դաժանությունն էլ կարևոր է: Հրամայում է կտրել իր հակառակորդի լյարդը և դնել նրա բերանը: Այսպիսի բարոյականություն չկա արդեն V դարի հայ պատմագիրների գրի առած գրույցներում և իրական պատմական գործիչներին վերագրված արարքներում: Նույն Փավստոսի մատյանում Մուշեղ Մամիկոնյանը, դաժանորեն պատժելով /տիկ հանելով/ պարսից Շապուհ արքայի պարտված զորականներին, նրա կանանցը անվնաս ուղարկում է Շապուհին, և այս մեծահոգությունից հիացած Շապուհը Մուշեղի պատկերը քանդակել է տալիս իր գավաթի վրա /Մուշեղ Մամիկոնյանի արարքը գնահատելու համար պետք հիշել, որ դրանից առաջ Շապուհը տիկ էր հանել Մուշեղի հորը՝ սպարապետ Վասակ Մամիկոնյանի հորը և անպատվել հայոց Փառանձեմ թագուհու դին/: Չմոռանանք նաև, որ Վարդան Մամիկոնյանին հայ նախարարները, ըստ Եղիշեի, մեծ դժվարությամբ են կարողանում համոզել, որ նա առերես ուրացություն ընդունի, այսինքն՝ թշնամուն խաբի: Իսկ Գայլ Վահանը ոչ մի բանի առջև կանգ չի առնում իր վրեժը լուծելու համար: Վստահորեն կարելի է ասել, որ Գայլ Վահանի կերպարը շեղվում է հայկական էպիկական մտածողության մեջ արդեն որոշակիացող բարոյական սկզբունքներից: Հնարավոր է ենթադրել, որ *Տարոնի պատերազմում* Գայլ Վահանի կերպարը, նրա նենգությունը, ուխտադրությունը իրական նախատիպի բնավորության գծերի արտացոլումն են, գծեր, որոնք տարբերվում էին

Վարդան Մամիկոնյանի, Վասակ և Մուշեղ Մամիկոնյանների և, իհարկե, Էպիկական Դավթի բնավորության գծերից: Այսինքն, այստեղ էլ հերոսը, հնարավոր է, շատ ավելի ուղղակի կապ ունի պատմական անձի հետ, քան հեթանոսական էպոսում կամ Սասնա տան պատմության մեջ<sup>2</sup>:

Աբեղյանի առաջարկած շարքում վերջին տեղը բռնում է *Սասունցի Դավիթը* IX–XI դարերում ստեղծված էպիկական հուշարձանը: Այս հուշարձանը քիչ ընդհանուր բաներ ունի նախորդ երկուսի հետ: Նախ՝ նկարագրված իրադարձությունները: Սրանք բոլորը խմբավորվում են հակաարաբական պայքար էպիկական պատկերների շուրջ, որոնք էպոսի գլխավոր երրորդ ճյուղի բովանդակությունն են կազմում: Այս ճյուղի դեպքերը իրենց պատմական նախահիմքն ունեն արաբների տիրապետության շրջանի՝ VII–IX դարերի իրադարձությունների մեջ: Բայց միայն նախահիմքերը: Հայ էպոսագետներից շատերը փնտրել են իրական պատմական գործիչների երրորդ ճյուղի հերոսների մեջ, Դավիթին, Քեռի Թորոսին նույնացրել ժամանակի պատմական դեմքերի հետ, բայց այդ բոլորը խիստ անհամոզիչ են /ինչպես ժամանակին այդ մասին խոսել է Հովհաննես Թումանյանը/: Անկախ անուններից՝ էպոսի հերոսները այս դեպքում, ժամանակակից գրականագիտության տերմինով ասած, գեղարվեստական կերպարներ են: Դրանց նախատիպերի որոնումները գուցե և իմաստ ունեն, բայց դա արդեն կապ չունի էպոսի ժանրային առանձնահատկությունների հետ: Հայկական էպոսը այս կամ այն պատմական գործչի փառաբանումը չէ, այլ ժողովրդի կյանքի և մաքառումների գեղարվեստական պատկերը: Ընդ որում, հայկական էպոսի նախատիպերը փնտրում են գերազանցապես կապված Դավթի և նրա ճյուղի մյուս կերպարների հետ, և դա հասկանալի է. ամենից ավելի հենց այդ ճյուղն է արձագանքում միջնադարի պատմական իրողություններին: Բայց *Սասունցի Դավիթը* բավական տարբեր էպիկական շերտեր է իր մեջ առել: Առաջին, երկրորդ և չորրորդ ճյուղերը իրական-պատմական իրադարձությունների շատ թե քիչ տեսանելի հետքեր չեն պարունակում: Առասպելական նյութը այս ճյուղերում ավելի կարևոր է: Հատկապես էպոսի առաջին ճյուղի սյուժեները շատ հետաքրքրական փաստեր են տալիս մեր խորհրդածությունների համար: Ովքե՞ր են Սանասարն ու Բաղդասարը: Առավելագույնը, որ մենք կարող ենք պարզել, այն է, որ երկու եղբայրների սյուժեն կա արդեն Հին Կտակարանում և դեռ դրանից էլ առաջ՝ հրեական բանահյուսության մեջ /առհասարակ, ինչպես հայտնի է, երկվորյակների սյուժեն շատ տարածված է համաշխարհային առասպելաբանության մեջ/:

<sup>2</sup> Այս խնդիրը ևս քննվել է Ղ. Այվազյանի մենագրության մեջ, և Գայլ Վահանի ու մյուսների բարոյականությանը նրա տված գնահատականները մոտ են իմ տված գնահատականներին /թեև այդ քննությունը նա կատարում է այլ դիրքերից՝ իբրև հայ ազնվականության ընկալումներում ժամանակով պայմանավորված ընկալումների փոփոխության արտացոլում/ [3, 298, 303, 307]:

Բայց այս իրողությունը մեզ շատ բան չի տալու հայկական էպոսը հասկանալու համար: Կամ բացասական հերոսների կերպարները: Ո՞վ կփորձի այսօր ասել, թե ով է Մսրա Մելիքը: Կամ Բաղդադի խալիֆը: Այս բոլորը նշանակում են, որ *Մասունցի Դավիթը* ձևավորվել է ամենատարբեր ժամանակներում և պայմաններում ստեղծված նյութերից, որոնք էպոսն ստեղծողների գեղարվեստական երևակայության մեջ միավորվել են իբրև պատմություն Մասնա տան, նրա հերոսների կյանքի և արարքների մասին: Այսինքն, այստեղ մենք ունենք գեղարվեստական ընդհանրացման մի այնպիսի մակարդակ, որն իսկապես բացառում է էպոսի դեպքերը պատմական կոնկրետ իրադարձությունների հետ նույնացնելը կամ կապելը: Մյուս կողմից, այդ մակարդակը ապահովում է էպոսի իրական ներքին միասնությունը, որը նախ և առաջ գեղարվեստական միասնություն է և կարիք չունի պատմական իրադարձությունների կամ իրական ընտանեկան կապերի օգնությանը /Աբեղյանը այս վերջիններն է ասպարեզ բերում *Պարսից պատերազմի* միասնությունը ապացուցելու համար/:

Այս իրողությունները ներկայացնելուց հետո կարելի է հարց տալ՝ ի՞նչ ընդհանրություններ կան Աբեղյանի թված չորս երկերի միջև նրանք բոլորը էպոս համարելու և նույն շարքի մեջ դնելու համար: Ընդհանրություններից գլխավորն այն է, որ դրանք բոլորը բանահյուսական ծագում ունեն կամ բանահյուսության հետքեր են կրում և պատմում են այս կամ այն մարդու՝ իրական կամ էպիկական հերոսի քաջագործությունների մասին: Բայց սրանցից այն կողմ էպիկական հուշարձանները իրարից շատ տարբեր են, կարելի է ասել՝ սկզբունքորեն տարբեր են: Առաջին տարբերությունը, որի մասին արդեն խոսվեց, իրականության արտացոլման ձևն է կամ գեղարվեստական իրականությունը: *Պարսից պատերազմում* և *Տարոնի պատերազմում* խոսքը գնում է իրական պատմական անձերի գործերի մասին: Դրանք երբեմն առասպելական-էպիկական բնույթ ունեն, բայց սերտորեն կապված են իրական-պատմական հանգամանքների հետ: Այսինքն, մարդկանց երևակայության մեջ ինչ-ինչ արարքներ, որոնք հերոսական կամ էպիկական բնույթ ունեն, վերագրվում են Արշակ թագավորին, Վասակ և Մուշեղ Մամիկոնյաններին, Գայլ Վահանին և ուրիշներին: Բայց այս բոլոր սյուժեները մնում են առանձին պատմական գրույցների մակարդակին, միասնական ստեղծագործություն չեն դառնում: Աբեղյանը հատուկ խոսում է *Պարսից պատերազմի* միասնության մասին՝ այդ միասնությունը անգամ ավելի բարձր դասելով *Մասնա ծռերի* միասնությունից: Աբեղյանի տրամաբանությունն այստեղ միանգամայն անհամոզիչ է: *Մասնա ծռերում* միասնության հիմքը ո՛չ պատմական դեպքերն են, ինչպես *Պարսից պատերազմում* /հակապարսկական պայքար/, ո՛չ էլ նույն ընտանիքի տարբեր սերունդների հաջորդականությունը: Այս վերջինը Մասնա էպոսի սյուժեի արտաքին կողմն է միայն: *Մասնա ծռերում* կա գեղարվեստական այն բարձր միասնությունը, որը այդ ճյուղերը դարձնում է ամբողջական բանահյուսական ստեղ-

ծագործություն: Այդ միասնության հիմքը էպոսի ներքին տրամաբանությունն է, այսինքն՝ Մասնա ընտանիքի ծագման, զարգացման և կործանման պատմությունը /կրկնեմ նորից՝ ոչ սերունդների պարզ հաջորդականությունը [5, 181 նն/:

Ահա թե ինչու *Պարսից պատերազմի* և *Տարոնի պատերազմի* դեպքում հերոսների նախատիպերի որոնումների կարիքը չկա. դրանք ակնհայտ են, դրանք համապատասխան պատմական դարաշրջանի համանուն պատմական գործիչներն են, իսկ *Մասնա ծների* դեպքում արդեն գրեթե մեկուկես դար շարունակվող որոնումները արդյունք չեն տալիս, ում ասես չեն հիշում իբրև հնարավոր նախատիպ, բայց այդ բոլոր նույնացումները մնում են խորապես անհամոզիչ: Այս դատողությունները թույլ են տալիս եզրակացնել, որ Աբեղյանը շրջանցել է իր քննարկած հուշարձանների ժանրային տարբերությունները: Դրանցից ամենակարևորը գեղարվեստական ընդհանրացման մակարդակն է և ձևը: *Մասնա ծների* կարևորագույն հատկանիշներից մեկը գեղարվեստական ընդհանրացման բարձր մակարդակն է, որը նրան կտրում է կոնկրետ պատմական իրադարձություններից և բարձրացնում մինչև ժողովրդի ամբողջ պատմության կամ այդ պատմության կոնկրետ շրջանի էպիկական գեղարվեստական արտացոլման մակարդակը: Այս իմաստով հեթանոսական էպիկական սյուժեները և *Մասունցի Դավիթը* էականորեն տարբեր են *Պարսից պատերազմից* և *Տարոնի պատերազմից*:

Այսպիսով, հայկական էպիկական մտածողության բարձրագույն դրսևորման՝ *Մասունցի Դավիթ* էպոսի մեջ մենք տեսնում ենք ժանրային այնպիսի առանձնահատկություններ, որոնք այդ էպոսը տարբերում են նախորդ երկու հուշարձաններից՝ ոչ միայն բանավոր ծագումը, այլև բանավոր ավանդումը սերնդեսերունդ մոտ հազար տարվա ընթացքում, էպիկական ընդհանրացման բարձր մակարդակը և հերոսականության ասպետական բնույթը: Բայց ահա միջնադարյան եվրոպական էպոսներում այդ նույն հատկանիշները բոլորովին, կարելի է ասել՝ սկզբունքորեն տարբեր կերպ են դրսևորվում:

\*\*\*

Այս տեսակետից քննարկենք ռոմանական երկու հոչակավոր պոեմների՝ ֆրանսիական *Ռոլանդի երգի* և իսպանական *Միդի երգի* մի քանի առանձնահատկություններ: Սրանք ավանդաբար կողք կողքի են դրվում իբրև իրար շատ մոտ ստեղծագործություններ: Եվ իսկապես, շատ կողմերով դրանք իրար մոտ են: Նախ՝ ժամանակը և միջավայրը: *Ռոլանդի երգի* առաջին պահպանված գրառումը վերաբերում է XII դարի կեսերին, *Միդի երգի* միակ գրառումը կատարվել է XIV դարում: Երկու դարերի տարբերությունը պիտի որ մեծ դեր չխաղար միջնադարում: Երկու պոեմներն էլ պատկերում են ազնվականական միջնադարը, վասալների և միապետի հարաբերությունները իրար կից ֆեոդալական միապետություններում: Նույնիսկ հերոսների իրար դիմելու ձևը՝ պարտադիր հոգնակի թվով, մոտեցնում է այս

հուշարձանները: Բայց խորքում այս պոեմները շատ կարևոր, կարելի է ասել՝ սկզբունքային տարբերություններ ունեն *Մասունցի Դավթի* և միմյանց հետ, որոնք ուղղակիորեն առնչվում են ժանրային առանձնահատկությունների խնդրին:

Նախ բանավոր սկզբի և բանավոր ավանդման խնդիրը: *Մասունցի Դավթի* դեպքում այս հարցում տարակարծություններ չկան՝ ստեղծվել և ավանդվել է բանավոր: Եվրոպական էպոսները, ինչպես վկայում են հետազոտողները, հայտնաբերվել են հենց գրավոր տեքստերի շնորհիվ, որոնք ստեղծվել են *X /Ռուլանդի երգը/* և *XII /Միդի երգը/* դարերում: Հետազոտողների մի մասը մանավանդ XIX դարում գտնում էր, որ սրանք տաղանդավոր անհատների ստեղծագործություններ են, որոնց անունները մոռացվել են: Հետո՝ XX դարի ընթացքում, հաղթեց այն տեսակետը, որ դրանք ոչ թե առանձին անհատների, այլ կոլեկտիվ ստեղծագործություններ են, թեև կոլեկտիվի ըմբռնումը երբեմն շատ տարբեր է: Այսպես թե այնպես, հետազոտողները գործ են ունեցել և ունեն գրավոր ավանդված տեքստերի հետ, և դա իր կնիքն է դրել հուշարձանների ամբողջ կառույցի վրա: Երկու տեքստերի հիմքում էլ ընկած են իրական դեպքեր, իսկ մանավանդ իսպանական էպոսում գլխավոր հերոսի և մյուս հերոսների մեծ մասի նախատիպերը միանգամայն ճանաչելի են /տե՛ս, օրինակ, իսպանացի գրականագետ Մենենդես Պիդալի աշխատությունները/:

Բայց մի կարևորագույն խնդրում իսպանական և ֆրանսիական էպոսները իրարից խիստ տարբեր են: *Ռուլանդի երգում* գլխավոր հերոսին առաջնորդում են ասպետական պատվի ըմբռնումները: Նա մի բույե անգամ չի տատանվում մահվան և ասպետական պատվի կողմնադիր խախտման միջև ընտրություն կատարելիս և նախընտրում է մահը: Նրա բոլոր գործողությունները պայմանավորված են ասպետական պատվի ըմբռնմամբ: Դրա թելադրանքով է նա հրաժարվում փչել իր կախարդական փողը՝ Օլիֆանտը, և օգնության կանչել Կարլ արքային: Դրանով իսկ նա իրեն դատապարտում է մահվան: Բացի այս, շատ կարևոր է Ռուլանդի և խորթ հոր՝ Գանելոնի հակադրությունը պոեմում: Գանելոնը ասպետական բարոյականության ժխտումն է, նա է նենգորեն կազմակերպում Ռուլանդի կործանումը: Այս իմաստով Ռուլանդը իսկապես մոռումենտալ էպիկական կերպար է:

Ինչո՞վ է առաջնորդվում Միդը իր գործողություններում: Ալֆոնս արքան նրան շնորհագրկել է, և Միդը՝ իբրև հավատարիմ վասալ, ուզում է հաշտվել նրա հետ: Բայց ինչպե՞ս: Նա ուղղակիորեն կաշառում է միապետին՝ ամեն արշավանքից հետո նրան արժեքավոր նվերներ ուղարկելով: Բայց առաջին հերթին ինքն է հարստանում: Այս իրողությունը նրան բացասական հերոս չի դարձնում, առավել ևս, արդեն ձևավորվող բուրժուական հարաբերություններում հարստանալու ձգտումը չպետք է որ բացասական երանգներ ունենար: Մանավանդ Միդը իր զինակիցների հանդեպ բավական առատաձեռն է: Բայց Միդը արդեն շատ հեռու էր Ռուլանդից, պատվի նրա էպիկական

ըմբռնումներից: Պոեմի սկզբից մինչև վերջ նա հաշվում է, խաբում է, խորամանկում է՝ փող գտնելու, հարստանալու համար: Հենց սկզբում նա խաբում է հրեա վաշխառուին: Նրան իբրև գրավ տալիս է երկու արկղ՝ լցված ավագով և պինդ փակված, դրա դիմաց փող է վերցնում իր զինակիցներին վարձատրելու համար: Այնուհետև նա թալանում է այս կամ այն քաղաքը, մավրերին, քրիստոնյաներին՝ հարստություն կուտակելու համար: Եվ բավականաչափ գանձ կուտակելուց հետո ձեռնարկում է զայրացած միապետի հետ հաշտվելու գործը՝ միանգամայն հաշվենկատորեն նրան ուղարկելով ընտիր նժույզներ: Նա գիտի, որ արքան էլ թուլություն ունի ոսկու հանդեպ: Իհարկե, միջնադարյան ասպետը մնում է միջնադարյան ասպետ: Նա՝ իր ձևով, հավատարիմ է իր սյուզերենին, առանց նրա գիտության որևէ քաղաք չի գրավում, և նրա նվերները Ալֆոնս թագավորին իր տեսակի հավատարմության ապացույց են արքային: Եվ հրեա վաշխառուներին է նա վերադարձնում վերցված գումարը, նույնիսկ հետո ներողություն խնդրում նրանցից: Բայց ավարտական այս արարքները չեն վարագուրում ընթացքում Միդի գործողությունների ոչ-ասպետական լինելը:

Կարծում եմ, հիմա դժվար չէ տեսնել Միդի և Ռոլանդի միջև եղած տարբերությունը: Առաջինը գիտի հարստության արժեքը և հարստությունը գործի դնելու ձևերը: Նա շատ գործնական մարդ է, և պատվի նրա ըմբռնումները անչափելիորեն հեռու են Ռոլանդի պատկերացումներից: Նա երբեք չէր հայտնվի այն իրավիճակում, երբ Ռոլանդը նախընտրում է զոհվելը արքայից օգնություն խնդրելուց: Նրա գործնական մտածողության համար Ռոլանդի արարքը անիմաստ է: Այնինչ Ռոլանդը ապրում է միայն ու միայն իր անունն ու պատիվը պահպանելու համար, նրա հարաբերությունները սյուզերենի հետ պայմանավորված են միայն ու միայն ֆեոդալական աստիճանասանդուղքում սյուզերենի և իր գրաված տեղերով: Հետաքրքրական է, որ ֆրանսիական մյուս պոեմը՝ *Նիմյան սայլը*, իր ձևով արձագանքում է ոչ թե *Ռոլանդի երգին*, այլ *Միդի երգին*: Ազնվական Գիլյոմը, որը Լյուդովիկոսին դարձրել էր թագավոր, հիմա վիրավորված է նրանից, որ իրեն հողեր չի տալիս: Գնում է թագավորի մոտ, երկար-բարակ սակարկում է, բայց թագավորի առաջարկություններից ոչ մեկը չի ընդունում: Արդեն այս սակարկությունը շատ տարբեր է *Ռոլանդի երգի* և *Սասունցի Դավթի* սկզբունքներից: Գիլյոմը իր հավատարմությունը սյուզերենին չափում է նրանից ստացած պարգևի չափով՝ բնավ չնեղվելով իր չքավորության մասին խոսելուց: Բայց ավելի բնորոշ է Նիմ քաղաքի գրավումը, որը հար և նման է Տրոյայի գրավմանը Ողիսևսի խորամանկության շնորհիվ: Քաղաքը գրավելը դժվար է, ուստի Գիլյոմը որոշում է մեծ տակառների մեջ նստեցնել իր զինվորներին և քաղաք մտնել իբրև զինու վաճառական: Հետո զինվորները դուրս են գալիս տակառներից և գրավում քաղաքը, որը դառնում է Գիլյոմի սեփականությունը: Այս ամենը շատ է հիշեցնում Միդի վարվելակերպը: Կարծում եմ՝ այստեղ էլ մենք գործ ունենք նոր հաստատվող բուրժուական

բարոյականության հետ, որի իմաստը հարստանալն է: Գիյոմը մի կողմից ընդգծում է իր հավատարմությունը թագավորին, մյուս կողմից հիշեցնում է իր ծառայությունները և վարձ է պահանջում: Իսկ ողիսւսայան հնարանքը նրան բոլորովին չի շփոթեցնում: Կարևորը հաղթանակն է և հարուստ քաղաքի տեր դառնալը: Այս հանգամանքները մտածել են տալիս այն մասին, որ ասպետական բարոյականությունը բավական արագ ընթանում էր դեպի բուրժուական բարոյականությունը, հասարակությունը պատրաստ էր դրան, և այս երգերը հաճույքով էին լսվում:

Այս դատողությունները ելնում են մի քանի էպոսների առանձնահատկություններից, էպոսներ, որտեղ ասպետական բարոյականությունը խիստ տարբեր է, ինչպես տեսանք, *Միդի երգի* բարոյական պատկերացումներից: Բայց, ինչպես և պետք էր սպասել, եվրոպական, մանավանդ իսպանական գրականագիտության մեջ ընկալումները շատ տարբեր են իմ ընկալումներից: Նկատի ունեմ քսաներորդ դարի իսպանական գրականագետ Ռամոն Մենենդես Պիդալի աշխատությունները: Նրա համար Միդը բարձր բարոյականության օրինակ է. «Միդի մեջ արտահայտված են նրան իր հերոսը դարձրած ժողովրդի ամենաազնվական գծերը՝ սեր ընտանիքի հանդեպ, որը նրան ոգևորում է կատարել ամենաբարձր և գեղեցիկ քաջագործությունները, անհողորդող հավատարմությունը, որը միաժամանակ մեծահոգի է, բայց իր արժանապատվության գիտակցությամբ, մեծահոգություն նույնիսկ թագավորի հանդեպ [որը իր նկատմամբ շատ անարդար էր եղել], զգացումների ուժը և դրանց արտահայտման զսպվածությունը: Խորապես ազգային է պոեմի դեմոկրատական ոգին, որը մարմնավորված է այդ բարի վասալի մեջ, որը չունի բարի սենյոր» [6, 264]: Այսպիսի գնահատականներ սփռված են Մենենդես Պիդալի շատ աշխատությունների էջերում: Խնդիրը այստեղ հեղինակի հայրենասիրական ոգևորությունը չէ միայն /որն, իհարկե, ժամանակ առ ժամանակ հստակ զգացվում է նրա ուսումնասիրություններում/: Խնդիրն ավելի բարդ է: Հումանիտար միտքը անխուսափելիորեն սուբյեկտիվ է, և դա նրա արժանիքները չի պակասեցնում: Իսպանացի գրականագետը կարող էր այսպիսի՝ երբեմն պատանեկան ոգևորությամբ խոսել իր ժողովրդի գլխավոր էպիկական հերոսի մասին, նրա ընկալումը անխուսափելիորեն պետք է տարբերվեր ուրիշների, ասենք, հայ մարդու և հայ գրականագետի պատկերացումներից: Դրանք ձևավորվել էին ուրիշ միջավայրում, ուրիշ էպիկական հուշարձանների ազդեցության տակ: Միդի այսպիսի ընկալումը պետք է գնահատել իբրև այդ պոեմի իրական առանձնահատկությունների արտահայտություններից մեկը: Բայց, մյուս կողմից, Միդի և Ռոլանդի տարբերությունները իմ առաջարկած տեսանկյունից իսկապես էական են: Ուրիշ խնդիր է, որ Միդի կերպարը կարող է թվալ շատ մարդկային ու սիրելի Ռոլանդի չափազանցված ասպետականության համեմատությամբ: Ուեմն, նորից առաջ է գալիս էպիկական հուշարձանների ազգային բնույթի հարցը: Այն, ինչ իսպանացիների հարևան ֆրանսիացիների մեջ կարող էր ընկալվել

իբրև ոչ-ասպետական արարք /ի միջի այլոց, Մենենդես Պիդալը Ռոլանդին և Սիդին համեմատելիս շատ հաճախ, իր համար էլ երևի աննկատելի, Սիդին ավելի բարձր է դնում, քան Ռոլանդին/, իսպանացիների համար էպիկական հերոսականության արտահայտություն էր, և պետք է շատ լավ պատկերացնել իսպանական միջնադարյան իրականությունը Սիդի իսկական արժեքը հասկանալու համար: Գիտական հայացքը թելադրում է, որ Սիդին պետք է ընկալել իբրև ազգային էպիկական չափանիշների դրսևորումներից մեկը: Մյուս կողմից, չպետք է աչքաթող անել, որ Մենենդես Պիդալը Սիդին գնահատելիս դարձյալ ելնում է բարոյական բարձր պատկերացումներից, որոնք արդեն միջնադարում տիրապետում էին Եվրոպայում: Մենենդես Պիդալը մի ուրիշ տեղ արձանագրում է. «Ասպետի ազնվությունը միջնադարում բարձր էր դասվում մնացած բոլոր առաքինություններից» [6, 226]: Այս իրողությունը, մի կողմից, շատ համահունչ է Ռոլանդի և Դավթի սկզբունքներին: Բայց, մյուս կողմից, ինչպես տեսանք, այդ պատկերացումների կոնկրետ բովանդակությունը էպոսներում տարբեր է: Սա էպոսի ազգային բնույթի հետաքրքրական արտահայտություններից մեկն է:

Այստեղ, թերևս, անհրաժեշտ է հպանցիկ մի դիտողություն անել: Էպոսագիտական հետազոտություններում էպիկական հերոսների գործողությունների բարոյական հիմքերին գրեթե ուշադրություն չի դարձվում: Մինչդեռ, ինչպես ընթերցողը կարող է տեսնել իմ համառոտ վերլուծությունից /իմ գրքում այս վերլուծությունը շատ ավելի մանրամասն է/, դա սկզբունքային կարևորություն ունի էպոսի ժանրային, ազգային, տիպաբանական առանձնահատկությունները գնահատելու համար:

Այս նույն խնդրի շարունակությունն է էպոսների հերոսականության բնույթի հարցը: Առանց հերոսականության դժվար է որևէ էպիկական հուշարձան պատկերացնել: Բայց չի կարելի չտեսնել, որ հերոսականության պատկերացումները տարբեր ժողովուրդների մեջ, պատմական տարբեր դարաշրջաններում տարբեր են: Հերոսականությունը անտիկ էպոսում կապված է գլխավորապես հերոսի անպարտելիության և ճակատագրին անվախորեն ընդառաջ գնալու հետ: Այդ հերոսականությունը բարոյական սահմանափակումներ չի ճանաչում: Ինչպես անտիկ էպոսում, նույնպես և հնադարյան զանազան էպոսներում հերոսները գործում են՝ հենվելով գերբնական ուժերի, աստվածների և նրանց հակառակորդների օգնությամբ ու դրդումով: Սեսիլ Բուրբան հերոսականությունը կապում էր միայն հերոսի անձնական արժանիքների հետ [3, 91–92]: Այս տեսակետը ունի իր տրամաբանությունը: Բայց էպոսների նյութը այնքան բազմազան է, որ հերոսականության ըմբռնումը պետք է ընդլայնել՝ դրա մեջ տեսնելով այնպիսի գործեր, որոնք ազդում են հերոսների, երկրի, ժողովրդի կյանքի և ճակատագրի վրա՝ լինեն դրանք զուտ անձնական քաջության արդյունք, թե աստվածների, կախարդների ու մոզերի օգնության արդյունք: Առհասարակ այստեղ էլ և՛ ժամանակը, և՛ ազգային պատկերացումները շատ կարևոր են:

Դա մենք արդեն տեսանք իսպանական և ֆրանսիական էպոսների համեմատության ընթացքում: Էպոսների ժանրային, ազգային և տիպաբանական առանձնահատկությունները քննելիս այս իրողությունը չի կարող շրջանցվել:

\*\*\*

Հայկական և ռոմանական էպոսների համեմատությունը ծնում է ուրիշ հարցեր ևս, որոնք կապված են էպոսի ժանրային առանձնահատկությունների, տիպաբանության և ազգային ինքնատիպության հետ: Ռոմանական էպոսներում գերբնական-առասպելական տարրը գրեթե բացակայում է: Այս հատկանիշը շատ ընդգծված է հատկապես *Միդի երգի* մեջ. այստեղ պատումը գրեթե ռեալիստական է այսօրվա իմաստով, էպիկական չափերը և հերոսների էպիկական ուժը այստեղ անիմաստ են: Միդը քաջ մարդ է, բայց դա առօրեական քաջություն է: *Ռոլանդի երգում* ևս առասպելական մանրամասները շատ չեն /եղածն էլ, իհարկե, քրիստոնեական գունավորումով՝ Ռոլանդի խնդրանքով Աստված երկարացնում է օրը ճակատամարտը ավարտելու համար/: Իսկ ահա *Սասունցի Դավթի* մեջ առասպելական տարրի նշանակությունը շատ մեծ է: Հայ էպոսագիտության մեջ այս խնդրի մասին շատ է խոսվել: Բայց այս տարբերությունը մի անգամ ևս մատնացույց է անում այն հսկայական տարբերությունները, որ կան այս էպոսների միջև, տարբերություններ, որոնք ուղղակի կապվում են ժանրի խնդրի հետ: Առասպելը միանգամայն տարբեր տեղ է գրավում տարբեր էպիկական հուշարձաններում: Ռոմանական էպոսները ստեղծվել են երկու ռոմանական ժողովուրդների կողմից, որոնց դիցաբանական անցյալը այդքան խորը չէ, իսկ դիցաբանությունը և առասպելաբանությունը՝ այդքան հարուստ: Համենայն դեպս, դատելով նրանց էպիկական հուշարձաններից և դրանց քննությունից, այդպես է: Իսկ հայկական էպոսը ստեղծվել է առասպելաբանական և դիցաբանական հսկայական պաշար ունեցող ժողովրդի կողմից, որի հիշողության մեջ առասպելական և դիցաբանական հերոսներն ու նրանց գործերը շատ երկար են պահպանվել նրա միջնադարյան էպոսում վերարթնանալու համար: Ռոմանական էպոսները ոչ միայն կոչվում են մի հերոսի անունով, այլև իրապես այդ հերոսների կյանքի և գործերի պատմությունն են: Հայկական էպոսը ևս ժողովրդի հիշողության մեջ պահպանվել է երրորդ ճյուղի հերոսի անունով, բայց այն չորս սերունդների պատմություն է, և այդ չորս սերունդները իրենց հետ էպոս են բերել առասպելական-դիցաբանական անցյալի հարստագույն նյութը:

Այդ նյութը իբրև մեկ էպոս ձևավորվել է միջնադարում՝ բյուրեղանալով հակաարաբական պայքարի խորհրդանիշ դարձած Դավթի կերպարի շուրջ, և դրա շնորհիվ միջնադարյան գույնը հայկական էպոսում շատ ուժեղ է, ինչն էլ ինձ հիմք է տվել *Սասունցի Դավթի* միջնադարյան էպոս համարելու: Իմ այդ բնութագիրը առարկություններ հարուցեց իմ որոշ գործընկերների կողմից: Այդ առարկությունների տրամաբանությունն այսպիսին էր. միջնա-

դարյան էպոսներ են ռումանական և այլ եվրոպական էպոսներ, որոնք դեռ միջնադարում գրի են առնվել: Այս առարկությունները ինձ համար ընդունելի չէին /ես այդ մասին արդեն գրել եմ/ [5, 286–288]: Բայց դրանք մտածելու տեղիք տալիս են: Ինձ համար և՛ հայկական էպոսը, և՛ ռումանական էպոսները միջնադարյան են /այս դրույթն է ընկած իմ գրքի հիմքում/: Բայց որ նրանց միջև էական տարբերություններ կան և առաջին հերթին՝ դիցաբանական-առասպելական նյութի օգտագործման տեսակետից, սա իրողություն է, որը իմաստավորում է պահանջում և նորից դնում էպոսների տիպաբանության խնդիրը:

\*\*\*

Ասվածից պարզ է, որ տարբեր ժողովուրդների և տարբեր ժամանակների էպիկական հուշարձանները այնքան բազմազան են և իրարից տարբեր, որ որևէ ժանրային սահմանում չի կարող դրանք ընդգրկել: Բայց նաև ակնհայտ է, որ կան դրանք իրար կապող հատկանիշներ, այլապես անխմաստ կլինեին խոսել համաշխարհային էպիկական ժառանգության մասին: Ահա թե ինչու հետազոտողի առաջ երկու խնդիր է կանգնում՝ նախ, փորձել հասկանալ, որոնք են այդ ընդհանուր հատկանիշները, և երկրորդ՝ ինչպես են դրանք հանդես գալիս տարբեր հուշարձաններում: Բազմազանությունն անքան մեծ է, որ թվում է, թե գործ ունենք իրար հետ ոչ մի ընդհանրություն չունեցող տեքստերի հետ: Վերևում կատարված համառոտ վերլուծությունները արդեն դրա ապացույցն են:

Այդ ընդհանուր հատկանիշներից ամենակարևորը թերևս այն է, որ էպոսները ստեղծվում են իբրև բանավոր էպիկական ստեղծագործություններ ժողովրդական միջավայրում: Բայց այս կետում ևս բարդություններ և հակասական պատկերացումներ կան: Նախ, այսպես կոչված գրավոր էպոսների մասին: Վերգիլիոսի *Էնեականը* կամ Արսեն Բագրատունու *Հայկ Դյուցազունը* կարծես դուրս են էպոսի ժանրային սահմաններից: Դրանք միայն հարևանցիորեն հիշվում են էպոսագիտական հետազոտություններում: Բայց, մյուս կողմից, այս երկու գործերն էլ կապված են բանավոր էպիկական ստեղծագործությունների հետ. *Էնեականը* անտիկ էպոսի յուրատեսակ շարունակությունն է, իսկ *Հայկ Դյուցազունը* հայկական հեթանոսական էպոսի դրվագներից մեկի վերարտադրությունն է: Սակայն Վերգիլիոսն էլ, Արսեն Բագրատունին էլ էպոսների բանավոր հիմքերի հանդեպ առանձին հետաքրքրություն չեն ցուցաբերում: Վերգիլիոսին ոգևորում են հումերոսյան պոեմները, իսկ Արսեն Բագրատունին ցանկանում է ազգային դյուցազներգություն ստեղծել Հումերոսի պոեմների օրինակով և դիմում է Մովսես Խորենացու մատյանին, այսինքն՝ մշակում է ոչ թե բանավոր էպիկական պոեմն, այլ գրով ավանդվածը, գրով սրբագործվածը:

Ինչ վերաբերում է *Ռոլանդի երգին*, *Միդի երգին*, հումերոսյան պոեմներին կամ *Գիզամեշին* և բոլոր այն էպիկական պոեմներին, որոնք մեզ հասել են գրավոր վիճակում, դրանց բանավոր հիմքերը ակնհայտ են և

գիտական քննությամբ պարզված: Բայց այս կետում էլ հուշարձանները իրարից շատ տարբեր են: Մենենդես Պիդալը, որը *Միդի երգը* համարում է համազգային ստեղծագործություն, շեշտը դարձյալ դնում է առանձին երգիչների դերի վրա մոտավորապես այս սխեմայով՝ սկզբում հորինել է մի երգիչ, հետո, երբ պայմանները փոխվել են, մի ուրիշը վերամշակել է իրեն հասածը, հինը մոռացվել է, և այսպես շարունակ: Անհայտ երգիչը /խուզվարը/, որի հորինածը հասել է մեզ, այդ շղթայի օղակներից մեկն է: Իրողությունն այն է, որ երկու ռոմանական պոեմներն էլ նոր ժամանակներ են հասել մեկական գրավոր տարբերակով /այլ տարբերակների հատվածներ ևս հասել են մեզ/: Բայց ահա *Մասունցի Դավիթը* պահպանվել է բանավոր՝ այն էլ ավելի քան հարյուր տարբերակներով /պատումներով/, որոնց ամբողջականությունը և ընդգրկումը տարբեր է: Մի քանի տարբերակներով են մեզ հասել և ռուսական բիլինաներն ու սերբական վիպերգերը: Այս դեպքերում էպիկական երկերի ստեղծման մեջ անհատների դերի խնդիրը այլ տեսք է ստանում: Անհատները՝ գոնե *Մասունցի Դավթում*, հանդես են գալիս ավելի շատ իբրև ավանդականի փոխանցողներ, քան թե ժառանգածը *գիտակցաբար* վերամշակողներ: Այդ մասին ես մանրամասն խոսել եմ իմ՝ արդեն հիշված գրքում: Ուրեմն, էպիկական հուշարձանների բանավոր ծագման դրույթը ևս տարբեր ազգային մշակույթներում տարբեր արտահայտություններ է ստանում: Այստեղ էլ գործ ունենք էպիկական հուշարձանների ազգային բնույթի արտահայտությունների հետ, որոնք մանրամասն հետազոտություն են պահանջում:

Այնուհետև՝ էպոսի և պատմության հարաբերության խնդիրը: Տարբեր էպոսների քննությունից պարզ է դառնում, որ նրանց հիմքում ընկած են կարևոր պատմական իրադարձություններ /օրինակ՝ Տրոյական պատերազմը անտիկ էպոսում/: Բայց ակնհայտ է նաև, որ էպոսները չեն կարող լինել պատմական դեպքերի պարզ արտացոլումներ: Վերևում ես արդեն համառոտ խոսեցի հայկական էպոսի պատմական հիմքերի մասին: Դրան ուզում եմ ավելացնել մի քանի տեղեկություն եվրոպական էպոսների մասին, որոնք կարծես թե ավելի ուղղակի կապ ունեն պատմական իրադարձությունների և գործիչների հետ: Վերցնենք նույն Միդի երգը: Հետազոտողները հատկապես շեշտում են Միդի պատմականությունը: Նույն Մենենդես Պիդալը, որը չի ժխտում գեղարվեստական հնարանքի դերը այդ պոեմում, մանրակրկիտ քննությամբ ցույց է տալիս պոեմի հերոսների նախատիպերը /թեև գրում է, որ երկրորդական հերոսների նախատիպերը հնարավոր չէ ցույց տալ/, այն պատմական իրադարձությունները, որոնք արտացոլված են էպոսում: Ռոլանդի երգում նկարագրվածը ավելի հեռու է պատմական դեպքերից: Սերբական վիպերգերի, ռուսական բիլինաների և այլ հուշարձանների ծանոթագրություններում մանրամասն նշվում են այն իրական հերոսները, որոնց անունները մնացել են էպոսներում՝ Մարկո Կրավիչը, Վլադիմիր Արև-իշխանը և ուրիշներ: Բայց ծանոթագրողները ստիպված են

ավելացնել, որ այս անուններով հերոսները միայն հեռավոր առնչություններ ունեն նույնանուն պատմական դեմքերի հետ, դրանք արմատականորեն վերախմաստավորվել են, հեռացել պատմական նախատիպերից: Պատումներում հայտնվել են բազմաթիվ հերոսներ, որոնք պատմական ոչ մի նախատիպ չունեն, գեղարվեստական հնարանք են, ինչպես բոլոր էպիկական հուշարձանները իրենց ամբողջության մեջ: Այսինքն, էպոսները գեղարվեստական ընդհանրացման արդյունք են՝ հեռացած հնարավոր պատմական նախատիպերից և իրադարձություններից: Առանց այդպիսի ընդհանրացման կարող են լինել պատմական գրույցներ՝ կապված իրական անձանց և դեպքերի հետ: Այդ ընդհանրացման շնորհիվ է, որ էպոսները դառնում են տվյալ ժողովրդի կյանքի շատ ավելի խորը և էական արտացոլում, տալիս են հավերժական կամ հավերժականին մոտ ընդհանրացումներ: Բայց, ինչպես տեսանք, այս կետում էլ տարբեր էպիկական հուշարձանները իրարից շատ տարբեր են. մի դեպքում, ինչպես իսպանական էպոսում, խոսում են գլխավոր հերոսի և մյուսների միանգամայն իրական նախատիպերի մասին, մի այլ դեպքում դրանք ցույց տալ հնարավոր չէ, այսինքն՝ էպիկական ընդհանրացման և պատմական իրականության հարաբերությունները տարբեր ազգային էպոսներում միանգամայն տարբեր են:

\*\*\*

Եվրոպական և սլավոնական էպոսները առաջադրում են մեկ ուրիշ խնդիր՝ մի քանի, երբեմն բավական մեծ թվով էպիկական տեքստերի առկայությունը մեկ ժողովրդի էպիկական ժառանգության մեջ: Այս տեքստերը երբեմն իրարից շատ տարբեր են և՛ ծավալով, և՛ բովանդակությամբ, երբեմն բավական նման են: Այս իրողությունը մեզանից պահանջում է փորձել հասկանալ դրանցից ամեն մեկի տեղը տվյալ ժողովրդի բանահյուսության մեջ, դրանց տարբերություններն ու նմանությունները: Հայկական էպոսի առնչությամբ արդեն ասվեց, որ Մ. Աբեղյանը խոսում է չորս էպիկական հուշարձանների մասին: Ինչպես ասվեց, ֆրանսիական էպիկական ժառանգությունը կազմված է Ռոլանդի երգից և ևս իննսուն երգերից՝ *Լյուդովիկոսի թագադրությունը*, *Նիմյան սայլը* և այլն: Սրանք բոլորը միջնադարում գրի են առնվել *Ռոլանդի երգի* պես և հասել են նոր ժամանակները: *Միդի երգի* առնչությամբ ևս հիշվեց հանրահայտ փաստը՝ *Ռոմանսերո* ժողովածուի առկայությունը իսպանացիների էպիկական ժառանգության մեջ: Ռոմանսերոն խոսվում է Միդի և այլ էպիկական հերոսների գործերի մասին: Այսինքն, այս մշակույթներում մենք գործ ունենք էպիկական համակարգի հետ, որն ընդգրկում է բազմաթիվ հուշարձաններ: Ամենից շատ հենց այս դեպքում է զգացվում *էպոս* եզրի անորոշությունը: Էպոս ենք անվանում և՛, ասենք, *Միդի երգը*, և՛ *Ռոմանսերոն*, և՛ *Ռոլանդի երգը*, և՛ մյուս էպիկական պոեմները: Բայց եթե այս բոլոր երկերը մենք էպոս ենք համարում, ապա պետք է հստակորեն տեսնենք նրանց առանձնահատկությունները հենց

ժանրի տեսանկյունից: *Ռոլանդի երգն* ու *Լյուդովիկոսի թագադրությունը* կամ *Նիմյան սայլը* նույն էպիկական համակարգի մասերն են, բայց իրարից շատ տարբեր են հերոսների տիպով, կոնֆլիկտի բնույթով և այլ հատկանիշներով: Ռոմանական էպոսների ժանրային առանձնահատկությունները պետք է գնահատել այս փաստի հաշվառմամբ:

Էպիկական համակարգի խնդիրը առաջ է գալիս և հարավսլավոնական երգերի և ռուսական բիլինաների առնչությամբ: Իրար հետ կապված էպիկական երգերը մեկ ամբողջական էպոս չեն դարձել, ինչպես, ասենք, *Մանասը*: Բայց նրանք իսկապես համակարգեր են, որոնք ներառում են իրար հետ երբեմն բավական սերտորեն կապված, դարձյալ բավական մեծ թվով հուշարձաններ: Կարելի է խոսել ռոմանական համակարգերի և սլավոնական համակարգերի տարբերությունների մասին: Հարավսլավոնական համակարգում երգերը խմբավորվում են առանձին հերոսների /օրինակ՝ Մարկո Կրալնիչ/ և իրադարձությունների /օրինակ՝ կոսովյան շարք/ շուրջ: Ռոմանական համակարգերում երգերն ավելի ինքնուրույն են, բայց կապը դարձյալ անուրանալի է:

Շատ կարևոր է ուշադրություն դարձնել ռոմանական համակարգերի մի բնորոշ գծի վրա: Համակարգերի կենտրոնում կանգնած է մեկ հուշարձան, ֆրանսիականում՝ *Ռոլանդի երգը*, իսպանականում՝ *Միդի երգը*: Սրանք երկուսն էլ՝ իբրև խոսքարվեստի ստեղծագործություններ, շատ ավելի կատարյալ են, քան թե համակարգերի մյուս գործերը: Ահա թե ինչու ֆրանսիական էպոս ասելիս հասկանում ենք առաջին հերթին *Ռոլանդի երգը*, իսկ իսպանական էպոս ասելիս՝ *Միդի երգը*: Հենց այս երկու երգերն են ամենից լավ արտահայտում այդ ժողովուրդների էպիկական մտածողության բնույթը: Սլավոնական համակարգերում նկատելի տարբերություններ գլխավոր երգերի միջև կարծես թե չկան: Բոլոր երգերը իրավահավասար են, բոլոր երգերը գրեթե հավասարապես հայտնի են ընթերցողներին /դրանց գոյության դասական շրջանում՝ ունկնդիրներին/:

Այս կետում պետք է ուշադրություն դարձնել մի խնդրի, որը, ինչքան ես տեղյակ եմ, էպոսագիտության մեջ չի ուսումնասիրված: Հատկապես եվրոպական և սլավոնական երգերի առնչությամբ այս խնդիրը մեծ կարևորություն է ձեռք բերում: Խոսքը էպիկական պատումի հնչերանգի /տոնայնության/ մասին է: Կարելի է երբևէ լսած չլինել հարավ-սլավոնական էպիկական երգերը, բայց արդեն դրանց տեքստը հուշում է, որ դրանց հնչերանգը քնարական-երգային է, և այս իրողությունն արդեն, այսինքն՝ միասնական տոնայնությունը, ապահովում է դրանց միասնությունը: Արոշակի հչերանգ՝ ասպետական-հանդիսավոր, առանձնացնում է ռոմանական էպոսները: Իսկ ահա հայկական էպոսը այնպես, ինչպես հասել է մեզ, այսպես ասած մաքուր-էպիկական է, և քնարականությունը կամ հանդիսավորությունը բնորոշ են միայն դրա արոշակի հատվածներին: Հնչերանգը շատ կարևոր է էպիկական հուշարձանների առանձնահատկությունները, ազգային էպիկական

համակարգերի միասնությունը հասկանալու համար:

Կարելի է եզրակացնել, որ տարբեր ժողովուրդների էպիկական ժառանգությունը տարբեր կառուցվածք ունի. մի դեպքում տիրապետող մեկ ստեղծագործություն է /հնարավոր տարբերակներով/, ինչպես *Սաունցի Դավիթը*, *Մանասը*, *Գիլգամեշը* և այլ ազգային էպոսներ: Մյուս դեպքում գործ ունենք էպիկական հուշարձանների համակարգերի հետ, ինչպես ֆրանսիական, իսպանական, սլավոնական և այլ ժողովուրդների էպիկական երգերը, և այս իրողությունն էլ պետք է հաշվի առնել էպիկական հուշարձանների ազգային առանձնահատկությունները քննելիս:

\*\*\*

Ներկա հոդվածում առաջարկվեց մի քննություն, որը ո՛չ ամբողջական կարող է համարվել, ո՛չ էլ վերջնական: Իմ նպատակը ուրիշ էր. ելնելով հայկական էպոսի քննությունից՝ փորձել հասկանալ, ի վերջո, որո՞նք են էպոսի ժանրային առանձնահատկությունները, ինչպե՞ս են դրանք դրսևորվում տարբեր ազգային մշակույթներում: Նման քննության ոլորտ պետք է ներառվեն այլ ժողովուրդների էպոսներ, որն անկասկած կճշգրտի մեր մոտեցումները: Բայց ակնհայտ է, որ էպոսների ժանրային առանձնահատկությունների խնդիրը էպոսագիտության կարևոր խնդիրներից մեկն է, և առանց այդ առանձնահատկությունների ուշադիր քննության ցանկացած էպիկական հուշարձանի գիտական քննությունը պակասավոր կլինի: Մանավանդ որ տարբեր ժողովուրդների կողմից ստեղծված էպիկական հուշարձանների ժանրային առանձնահատկությունները ուղղակիորեն կապված են դրանց ազգային միջավայրի հետ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Մրեղյան Մ.* Հայոց հին գրականության պատմություն, Երկեր, հ. Ա, ՀԳԱ հրատ., Եր., 1966:
2. *Айвазян Л. К.* История Тарона и армянская литература V–VII вв., Ер., 2008.
3. *Bowra C.* Heroic Poetry by C. M. Bowra, London, Macmillan and Co. LTD, 1952.
4. *Գրիգորյան Գր.* Էպոսի ժանրային հատկանիշները, Եր., «Լույս» հրատ., 1985:
5. *Եղիազարյան Ա.* Մասնա ծոեր էպոսի պոետիկան, Եր., 2013:
6. *Пуцаль Р.М.* Избранные произведения, М., Изд-во иностранной лит., 1961.
7. Պատմա-բանասիրական հանդես, 2012, թիվ 1:

#### О ЖАНРОВЫХ И НАЦИОНАЛЬНЫХ ОСОБЕННОСТЯХ ЭПИЧЕСКИХ ПАМЯТНИКОВ

*А. Егиазарян*

#### АННОТАЦИЯ

В статье рассматривается проблема жанра эпических памятников, которая почти не изучена в эпосоведении. С одной стороны, мы го-

ворим о народных эпосах как об определенном жанре, но более пристальный взгляд обнаруживает, что между разными памятниками, называемыми эпосами, есть существенные различия. Эпические памятники разных народов слишком разнообразны, чтобы подвести их под одно определение. Это показывается в статье на примере армянских, романских, славянских эпических памятников. Даже немногочисленные общности между разными памятниками – устное происхождение и героическое содержание – в разных национальных памятниках проявляются очень разнообразно. Все это приводит к необходимости изучения национальных особенностей эпических памятников. Жанровые и национальные особенности эпосов тесно взаимосвязаны.

**Ключевые слова:** народный эпос, армянский эпос, славянский эпос, романские эпосы, славянские эпосы.

## ABOUT THE GENRE AND THE NATIONAL CHARACTERISTICS OF EPIC MONUMENTS

*A. Yeghiazaryan*

### SUMMARY

In this paper the problem of genre of epic monuments is discussed. This problem scarcely has been studied. On the one hand, we speak about the folk epics as a genre, but on the other, we see that there are a very few general features in the texts which we call epics. Epic monuments of different nations are too diverse to bring them under one common definition. It is demonstrated by the analyse of some national epics, e. g. Armenian, Romanic, Slavi. Of course there are some generalities, as the oral origin and heroic content of them. But these features also appear too differently in the folk epics. So it brings us to the nessesarity of studying the national peculiarities of epics. The genre and national peculiarities of epics are closely linked.

**Keywords:** national epic, Armenian epic, Slav epic, Roman epics, Slav epics.

## ՊԱՏՄԱԿԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԷԼԻՖ ՇԱՖԱՔԻ ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ «ՍՏԱՄԲՈՒԼԻ ԲԻՃԸ» ՎԵՊՈՒՄ

### *Ն. Բսկանդարյան*

«Դեպի ճշմարտություն տանում է սիրտը, այլ ոչ թե խելքը:  
Թող որ սի՛րտդ նախաձեռնող լինի: Ո՛չ խելքը»:

Էլիֆ Շաֆաք: Այս անունը հայ հասարակությանը և ի մասնավորի հայ ընթերցողին ճանաչելի եղավ «Ստամբուլի բիճը» (2006թ.) վեպի թարգմանությունից հետո (2012թ.): Էլիֆ Շաֆաքը պատկանում է ազատամիտ այն թուրք մտավորականների տեսակին, ովքեր անկարող եղան անտրտունջ լինել սեփական խիղճը կրծող ցավի դեմ: Նա երիտասարդ թուրք արձակագիր է, ծնվել է Ստրասբուրգում (Ֆրանսիա, 1971թ. ), ծնողների ամուսնալուծությունից հետո մոր հետ վերադարձել է Անկարա: Գրում է անգլերեն և թուրքերեն, հրապարակվում է եվրոպական մամուլում: «Ինչպես ճամփորդում եմ երկրների միջով, այնպես էլ ճամփորդում եմ լեզուների միջով և կախված ասելիքից՝ ընտրում եմ, թե որ լեզվով գրեմ», – ասում է Շաֆաքը (1): Հավանաբար թուրքերենով չէր կարելի ասել այն, ինչը վաղուց հուզում էր երևակայությունը, և նա ընտրեց անգլերենը՝ դիմելով համայն մարդկությանը: Ներկայումս Շաֆաքը հանրաճանաչ գրող է Թուրքիայում, բազմաթիվ մրցանակների դափնեկիր, թեև նրա գրողական առաջընթացը անխոչընդոտ չի եղել:

Շաֆաքի «Ստամբուլի բիճը» վեպը դարձավ աղմկահարույց ու քննարկելի վեպ, քանի որ թուրքական կառավարությունը հետապնդում էր ցեղասպանության վերաբերյալ ցանկացած հայտարարություն, իսկ վեպում հիշատակվում է նաև հայերի ցեղասպանությունը: Քաջ հայտնի է, որ *ցեղասպանություն* բառը թուրքերի հոգեբանական բարդույթն է: Հենց այդ բառի համար Էլիֆ Շաֆաքը երկու անգամ մեղադրվել է Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով՝ թուրքական ինքնությունը վիրավորելու համար, սակայն դատարանը նրան արդարացրել է՝ ապացույցների անբավարարության պատճառով. Շաֆաքը հիմնավորեց, որ իրեն դատում են երևակայական, հորինված պատմության համար: Գիրքը դատապարտվեց, արգելվեց դրա հրապարակումը, գրողը ենթարկվեց բազում քննադատությունների, սակայն այս ամենը միայն նպաստեց գրքի հանրաճանաչությանը: Այն տպագրվեց բազմաթիվ լեզուներով, հասանելի ու հետաքրքիր դարձավ հասարակության լայն շերտերին: Վեպը գրվել է անգլերեն, այնուհետև հեղինակն այն թարգմանել է թուրքերեն:

Վեպն իր առանցքում շատ հետաքրքիր թեմա է պարփակում. ստամբուլյան մի ընտանիքի բարդ հարաբերությունների ներկայացումով լուսաբանվում են պոստմոդեռնիստական գրականությանը բնորոշ հարցեր:

Ուշագրավ է, որ ժամանակին երկու ժողովուրդների դարավոր համա-

կեցությունը պատմության տեսանկյունից կարևորելով՝ հեղինակը որպես վեպի բնաբան է ընտրել հետևյալ տողերը. «Ժուկով ժամանակով Աստծու էակաները ցորենի չափ շատ են լինում: Շատ խոսելը մեղք է լինում: Մի թուրքական և մի հայկական հեքիաթի նախաբան...» (2): Վեպը սկսվում է հերոսուհու՝ ազատամիտ և ըմբոստ Զելիհայի առօրյայի նկարագրությամբ: «Սկիզբը միանշանակ հիշեցնում է Օրհան Փամուկին ու ձյունը, որ անընդհատ գալիս է Կարսում, ձյունը, որ ոչ մի դեպքում չի դադարում հերոսի՝ Կայի ճակատագրում: Էլիֆ Շաֆաքի վեպում նույն կերպ գալիս է, բայց իբրև անձրև, – նկատում է Անահիտ Ադամյանը, – Փամուկի «Ձյունը» և Էլիֆ Շաֆաքի «Ստամբուլի բիճը» նույն պատմությունն են պատմում՝ ժամանակակից Թուրքիայի ու թուրքի: Երկուսի մեկնակետն էլ սերն է՝ ցավի հետ այնքան միախառնված, որ դժվար է տարբերակել: Սառն է Օրհան Փամուկը՝ կշռադատող, ողջախոհ ու համարյա անտարբեր, նա ճամփեզրին կանգնած պատմում է ճանապարհով անցնողների մասին: Շաֆաքը պայթուցիկ է, նա երբևէ ճամփեզրին չի կարող լինել, նա ինքը ճանապարհն է: Եթե Փամուկը գերադասում է «պայթեցնել» ընթերցողին, ապա Շաֆաքը ինքն է «պայթում»: Փամուկի վեպում հայը բացակա հերոս է, բայց հերոս է ավելի, քան նրա բոլոր ներկա ու գործող հերոսները: Նա գրում է հայերի բացակայության մասին այնքան պարզ ու արտահայտիչ, որ բացակա հայերը գործող անձ են դառնում ներկա թուրքերի կյանքում: Շաֆաքն «ուղղում է այդ սխալը». նրա վեպում հայերը գործող անձինք են: Էլիֆ Շաֆաքը իր սերնդի վեպն է գրել՝ նոր սերնդի մտածողության ու նոր սերնդի գործողության, սերունդ, որ չէր լինի, եթե չգար Օրհան Փամուկի «Ձյունը» (3):

Հեշտ չէ թուրք գրողի համար սեփական երկրի կողմից դավաճանի պիտակ ստանալ ուրիշի ցավի մասին «բաց» խոսելու պատճառով: «Երբ գրում էի վեպը, գլոբալ քաղաքական խնդիրներ չէի լուծում: Հենց հակառակը, ես ուսումնասիրել եմ հայ ու թուրք կանանց ամենօրյա կյանքի պարզ մանրուքները, դրանք շատ նման են իրար... Ստամբուլը մեծ գունավոր մատրյոշկայի է նման: Բացում ես այն և մեջը գտնում մեկ ուրիշ տիկնիկ: Այն հայելիների աշխարհ է, ոչինչ այդքան հանգիստ չէ, որքան թվում է: Այն կլիշեներ չի սիրում», – ասել է Էլիֆ Շաֆաքը: Հետաքրքիր մտահղացմամբ նա բոլոր կանանց խնդիրներն ի մի է բերում՝ անվանելով դրանք «ստամբուլցի կանանց ուղեցույցի զգացմունքների կանոններ».

1. Ստամբուլցի կանանց ուղեցույցի զգացմունքների ոսկե կանոնը. «Եթե փողոցում հետևիցդ են ընկել, ուշադրություն մի՛ դարձրու, մի՛ պատասխանիր, գրույցի մի՛ բռնվիր, որովհետև ոչ միայն հետապնդողին հայհոյող կինը, այլև ուշադրություն դարձնող կինն այդ մարդուն միայն ավելի է ոգևորում»:

2. Ստամբուլցի կանանց ուղեցույցի զգացմունքների արծաթե կանոնը. «Եթե փողոցում քեզ հետևում են, մի՛ նյարդայնացիր, խուճապի մի՛ մատնվիր, որովհետև հետապնդումից նյարդայնացող և չափից շատ ուշադրություն դարձնող կինը միայն իր գործն է բարդացնում»:

3. Ստամբուլցի կանանց ուղեցույցի զգացմունքների բրոնզե կանոնը. «Եթե փողոցում քեզ հետևել են, ամենալավը շուտափույթ մոռանալն է, չհիշելը, որովհետև միջադեպը միայն նյարդեր է քայքայելու» (2. էջ 10):

Շաֆաքի ստեղծագործություններում տեսնում ես թուրք հասարակության, թուրք մարդու իրական խնդիրները: Հենց այդ խնդիրներն արծարծելիս նա մատնանշում է, որ այստեղ էլ երկու ժողովուրդների միջև զուգահեռները շատ են:

Բացի Թուրքիան խորհրդանշող Մուստաֆայից, վեպի մյուս գլխավոր հերոսները կանայք են: Գրողի կարծիքով ժառանգության պահպանման գործում կանայք ամենամեծ դերն ունեն: Հերոսուհիներ են, որ պայքարում են տղամարդու և կնոջ իրավահավասարության համար, խորհում են ավանդականի ու ժամանակակցի հակասությունների, ընտանիքում տղամարդու դերի մասին: Վեպում տեսնում ես մի կողմում ֆեմինիզմով տառապող կանանց կտրուկ ազատամտություն և իրենցն ապացուցելու անհաղթահարելի ցանկություն, թուրք կանայք, որոնք դեմ են իրենց երկրի նահապետական բարքերին, ընտանեկան կարծրացած ավանդույթներին, որոնք սիրում են տատու անել, կարճ փեշ հագնել, «Կաֆե Կունդերայում» բանավիճել, մյուս կողմում՝ կանայք, որոնք այդ ավանդույթների կրողն ու պահպանողն են: Խոհանոցային նմանություն-նոյնությունն առավել աչքի զարնող է. ժամանակակից հայի և թուրքի համար ավանդական համարվող կերակրացանկը բավականին նման է մեկը մյուսին: Ժամանակակից հայի և ժամանակակից թուրքի վեպի երկու երիտասարդ հերոսուհիների մտերմությունն ու միմյանց բացահայտումը հուսադրող է: Մարդիկ պատրաստ են միմյանց ձեռք մեկնելու, ընդունում են այն, ինչը փաստարկված է: Թուրք հերոսուհին՝ 19-ամյա Ասյան, չի կարողանում հասկանալ, թե ինչու պետք է ինքը ներողություն խնդրի մի բանի համար, որի հետ բացարձակ ոչ մի կապ չունի: Բայց դրա պատասխանն էլ կա, Շաֆաքի հայ հերոսները ասում են. «Ձեր պետությունը ժխտում է պատմությունը: Եվ այդ պետությունն էլ դուք եք ստեղծում, նշանակում է՝ մեղսակից եք» (2. էջ 290–291):

Հիշարժան է, որ հայ Արմանուշը ընթրիքի սեղանի շուրջ Ասյայի այն հարցին, թե ճի՞շտ է, որ **System of a down**-ը ասում է թուրքերին, փորձում է ներկայացնել հայերի ատելության պատճառը, իսկ թուրք կանայք, հետաքրքրությամբ լսելով, ցավակցելով, հայերի դեմ իրագործված դաժանություններից վրդովվելով հանդերձ, չեն էլ պատկերացնում, թե այդ վայրագություններն իրականացնողների ու իրենց միջև թեկուզ հեռավոր ինչ-որ կապ գոյություն ունի: Ու դա պատահական չէ: Շաֆաքը բարձրացնում է մի ցավոտ խնդիր, այն է՝ հիշողության կորուստը. «Ահա մի տարբերություն ևս: Դու հեշտությամբ կարողանում ես ասել՝ եկեք նորից սկսենք: Մենք չենք կարողանում: Դաժանությունը անցյալի հետ կապ չունի, իսկ ճնշվածությունը կարող է միայն անցյալից կախված լինել: Դրա համար էլ դու ասում ես՝ եկե՛ք մոռանանք, իսկ մենք՝ եկե՛ք հիշենք» (2. էջ 288–289):

Վեպի մասին խոսելով՝ հարցազրույցներից մեկում Շաֆաքն ասել է, որ Թուրքիան տառապում է հիշողության կորստով. «Ուզում եմ, որ թուրքերը կարողանան հիշել, իսկ հայերը՝ մոռանալ»: Այս միտքը անընդհատ արձագանքում է վեպի էջերում, տարբեր առիթներով, տարբեր կերպարների խոսքաշարում նորից ու նորից կրկնվում է այն հետևությունը, թե «հայերն ու թուրքերը ապրում են տարբեր ժամանակային գոտիներում: Հայերի համար ժամանակը մի շրջան է. անցյալի՝ ներկայում նորից ծնվելու, ներկայի՝ ապագա ծնելու մի շրջան, իսկ թուրքերի համար ժամանակը շատ տեղերում բաժանված է, կտրտված գծի է նման, անցյալը մի կոնկրետ տեղում ավարտվում է, այժմ գրոյից է սկսվել: Թուրքերի անցյալի ու ներկայի միջև մասնատվածությունից բացի այլ բան չկա» (2. էջ 258): Պատահական չէ, որ 19-ամյա թրքուհի Ասյան, հանդիպելով Արմանուշին, զարմանում է իրեն հասակակից աղջկա գլխում մեծահասակի հուշերի առատությունից: Մինչդեռ հայերի համար դա անցյալ չէ, ներկա է: Երկար ձգվող, երբեք չթուլացող հոգևոր ու ֆիզիկական, շոշափելի ցավ: Արմանուշ Չաքմաքչյանը երբորդ սերնդի ներկայացուցիչն է, որի մեջ վառ է հիշողությունը իր նախնիների հետ ամուր կապի շնորհիվ. «... Հետո կամաց-կամաց հասկացավ, որ սպասում էր ներողության, բայց դա չէր նշանակում, որ նրանք մեղքն ընդունում էին: Թուրքերն են, որ այս ամենն արել են հայերի նկատմամբ 1915 թվականին: Ինքը հայ է, նրանք էլ, եթե թուրք են, արդյոք չպե տք է ներողություն խնդրեն: Սակայն կարծես ոչ ոք չէր ուզում իր վրա վերցնել պատասխանատվությունը: Խնդիրն այն չէր, որ ցավը չէին կիսում, ընդհակառակը՝ կիսում էին: Խնդիրն այն էր, որ իրենց ու անցյալում մեղք գործածների միջև ոչ մի կապ չկար: Շատ տարիներ անց, երբ Արմանուշը հիշի այս պահը, կհամոզվի, որ խնդիրը «ժամանակային հասկացության տարբերությունն» է: Ինքը՝ որպես հայ աղջիկ, հավատում էր, որ իր սերնդից առաջ ապրած սերունդների պապերի հոգիներն իր մեջ են ապրում: Մինչդեռ շարքային թուրքի և իր ծագման միջև տևականության նման զգացում չկար» (2. էջ 156):

Հեղինակի համոզմամբ «ոչինչ այնքան չի մտերմացնում մարդկանց, որքան ընդհանուր թշնամին»: Օրինակ, մի անգամ «Անուշի ծառ»-ի քննարկման նյութ դարձավ ենիչերիների հարցը: «Նրանք, ովքեր հավատում են Օսմանյան կառավարության արդարությանը, չգիտեն ենիչերիների պարարոքը: Ենիչերիները քրիստոնյաների երեխաներն էին, ովքեր սեփական ժողովրդին արհամարհելու և անցյալը մոռանալու գնով հավանական հասարակական աստիճանների գագաթին հասնելու նպատակով կրոնափոխվել էին Օսմանյան պետության կողմից» (2. էջ 132): Քաջություն է հարկավոր նման հայտարարություն անելու համար, այն էլ թուրք կին գրողին:

Իր հարցազրույցներից մեկում Էլիֆ Շաֆաքն ասել է, թե գրականության մեջ կողմնակալություն չպետք է լինի, սա մի տարածք է, ուր մուտք գործելու համար անցագիր կամ անձնագիր պետք չէ: Իրական գրականությունը ջնջում է քաղաքական ու պատմական սահմանները: Իրական գրականու-

թյան կենտրոնում հենց իրական մարդն է: Գրականությունը արժեք ունի, եթե անկեղծ է: Շաֆաքի անկեղծությունը հուզում է, զարմացնում է հային այդպես լավ ճանաչելու կարողությամբ: Նրա վեպում հումորային մի թեստ կա՝ «Արդյոք բավականաչափ հա՛յ եք» վերնագրով: Հարցերն ընտրված են այնպիսի անվրեպ ճշտությամբ, որ ականա մտածում ես՝ գրողը հայ է կամ գոնե հրաշալի գիտի հայերին բնորոշ հատկանիշները: Օրինակ՝ հարցերի թվում այսպիսիք կան «Մինչև 6–7 տարեկանը արդյոք հայերեն այբուբեն ն էիք ստանում ծննդյան տոներին», «Ձեր տանը, ավտոտնակում կամ գրասենյակում Արարատի առնվազն մեկ նկար կա՞», «Դուդուկի ձայնը լսելիս ամբողջ մարմնով սարսռո՞ւմ եք», «Ձեր արծվաքիթը վիրահատե՞լ եք կամ պատրաստվո՞ւմ եք վիրահատել», «Պատահո՞ւմ է, որ ձեր բարեկամներին ուտելիք պարտադրելիս «կուշտ եմ» բառը չեք ընդունում»:

Սոցցանցերում հայ օգտատերերը հետաքրքիր կեղծանուններով են հանդես գալիս՝ Լեդի Սիրամարգ, Հակադավուրմա, իսկ տատիկի տունը գտնելուն իր արմատները պարզելու հույսով Մտամբուլ եկած Արմանուշը՝ Մադամ Վտարված Հոգի՝ ի պատիվ Զապել Եսայանի, որը «1915թ. Օսմանյան կառավարության արքայազն Սաքընջայի հայ մտավորականների ցուցակում միակ կին գրողն էր» (2. էջ 134): «Անուշի ծառ»-ում հայերի ու թուրքերի միջև խոսակցության թեմաները «մինչ այժմ անցել էին թե՛ վիրավորանքների ու նյարդային մենախոսությունների տեսքով: Մակայն այս անգամ կար բովանդակության ու արտահայտության կոնկրետ տարբերություն. առաջին անգամ թուրքի հետ զրույց էին անում: «Ասե՛ք տեսնեմ, այսօր, մեր օրերի շարքային թուրքից ի՞նչ եք սպասում, Աստծո սիրուն... Ձեր ցավը, ձեր վիշտը սփռվելու համար ի՞նչ կարող եմ անել»: «Պետությունդ կարող է ներեղություն խնդրել, – ասաց Դժբախտ տանտիկինը»: Մպասումը առավել քան հստակ է: Միննույն ժամանակ հերթական քննարկման ընթացքում ամենակտրուկ արտահայտություններ անող պարոն Բադրասարյանը, թվում է, հայի համար զարմանալի հետևություն է անում. «Սփյուռքի հայերի մեջ կան մարդիկ, ովքեր ընդհանրապես չեն ուզում, որ թուրքերն ընդունեն ցեղասպանությունը: Որովհետև եթե թուրքերն ընդունեն, կնշանակի, որ մեր ոտքի տակից գորգը քաշում են, վերացնում են մեզ միավորող ամենաուժեղ, գուցե և միակ կապը: Ճիշտ այնպես, ինչպես թուրքերն ունեն իրենց կատարած անիրավությունը ժխտելու սովորություն, այնպես էլ հայերը, կառչելով ոճրագործությունների հիշողություններից, իրենց ճնշված ինքնությունից հաճույք ստանալու սովորություն ունեն: Եթե նայենք, երկու կողմն էլ պետք է փոխվեն: Երեկու կողմն էլ ունեն կաղապարված դոգմաներ, որոնցից անհպաղ պետք է հրաժարվեն» (2. էջ 289):

Հեղինակի նպատակն ակնհայտ է, նա ուզում է լսելի լինել, նա ուզում է, որ երկուստեք մարդիկ կարողանան հնար գտնել մեկը մեկի ցավը լսելու և հասկանալու:

Ամերիկյան TED հեռուստաընկերության կազմակերպած հանդիպումնե-

րից մեկի ժամանակ Շաֆաքը, խոսելով քաղաքականության և վիպագրության մասին, շատ հետաքրքիր համեմատություն է անում շրջանի՝ որպես երկրաչափական մարմնի ու նրա՝ մարդու վրա ունեցած ազդեցության մասին: Նրա տատը կրթություն չստացած, ավանդապաշտ, նախապաշարումներով պարուրված մի ծեր կին էր, որի մոտ հաճախ էին գալիս մարդիկ. նա կարողանում էր հմայությամբ բուժել: Բհարկե, աղոթքի ուժը տեղ ուներ այդ հմայությունների մեջ, սակայն, օրինակ, գորտնուկների բուժման համար նա դրանք շրջափակում էր թանաքով, բացատրելով, որ պետք է զգուշանալ շրջանի ուժից, այդպես գորտնուկն ինքն իրեն ուտելով կոչնչանա: Շաֆաքը պատմում է, որ տատից մի ուսանելի դաս է առել. եթե ուզում ես ոչնչացնել ինչ-որ բան՝ գորտնուկ, վնասվածք, մարդու հոգի, կարևոր չէ, այն հարկավոր է շրջափակել բարձր պատերով, և դա ինքն իրեն կչորանա: Այդպես էլ մենք, ապրում ենք հասարակական տարբերել խավերում, դասերում, այդ դասերին հատուկ հայացքներով ու եթե չունենանք կապ մեզանից տարբեր մտածողություն ունեցող մարդկանց հետ, կչորանանք ինքներս մեզ շրջապատած նախապաշարումներից: Այստեղ օգնության է գալիս պատմելու արվեստը: Երբ խոսում են քաղաքական գործիչները, նրանք միմյանց չեն լսում, բայց երբ գրողը վեպի միջոցով հարց է բարձրացնում, մարդիկ կարող են, ու անտարբերության, թշնամանքի պատը ճաք է տալիս: Բհարկե, գրականությունը չի կարող վերացնել մարդկանց շրջափակման մեջ պահող բոլոր պատնեշները, բայց նա կարող է անցքեր բաց անել այդ պատերի մեջ՝ խարխլելով դրանց ամրությունը: Ու դուք կարող եք դիտել պատնեշի այն կողմում ապրող մարդկանց, նրանց բարքերը, սովորույթները, ու երբեմն հնարավոր է ձեզ դուր գա այն, ինչ տեսնում եք: Հնարավոր է տեսնեք, որ ընդհանրությունները շատ ավելի են, քան միմյանց բաժանող տարբերությունները, որոնք շատ դեպքերում արհեստածին են (4):

Սարոյանական անհուն սիրո շունչն է զգացվում անգլիագիր այս թրքուհու խոսքում. «Կարող ես ճանաչել Աստծուն բոլորի և ամեն ինչի միջոցով, ամբողջ տիեզերքում: Քանի որ Աստված չի սահմանափակվում եկեղեցիներում, մզկիթներում, սինագոգում: Բայց եթե ուզում եք իմանալ, թե որտեղ է նրա բնակավայրը, փնտրելու մեկ տարբերակ ունեք՝ նրանց սրտերում, ովքեր անկեղծ սիրել գիտեն: Ուղեղն ու սերը տարբեր խմորներից են հունցված: Ուղեղը կապում է մարդկանց և չի ենթարկվում ոչ մի վտանգի՝ այն ժամանակ, երբ սերը քանդում է բոլոր հանգույցները և դեպի վտանգը նետում բոլորին: Ուղեղը միշտ զգույշ է և խորհուրդ է տալիս. «Զգուշացեք չափազանց մեծ ոգևորությունից» այն ժամանակ, երբ սերն ասում է. «Օ հ, ե կ ու մի՛ վախեցիր»: Միտքը հեշտ չէ կոտրել, միևնույն ժամանակ սերը մեկ ակնթարթում կարող է վերածվել բեկորների: Մակայն գանձերը թաքնված են հենց ավերակներում: Մեկ կոտրված սիրտը թաքցնում է բազում գանձեր: Դեպի ճշմարտություն տանում է սիրտը, այլ ոչ թե խելքը: Թող որ սիրտդ նախաձեռնող լինի: Ո՛չ խելքը: Առերես հանդիպիր քո ինքնագնահատականի

հետ, հառնիր ընդդեմ նրա և ի վերջո հաղթիր նրան: Երբ գտնես քո Ես-ը, կգտնես նաև Աստծուն» (2. էջ 295):

Տարօրինակ մի զուգադիպությամբ վերջերս «Paper Boats of Poetry» կայքը տարածեց Serkan Engin անունով ևս մեկ թուրք գրողի խոստովանությունը «Անասելի ամոթ է թուրք լինելը» վերնագրով: Ներողության խնդրելով իր նախնիների ոճրագործությունների համար՝ նա գրում է. «Որպես թուրք ժողովրդի զավակ, ես ճանաչում եմ հայոց ցեղասպանությունը և ներողություն եմ խնդրում մորս կողմից նախնիներիս կատարած ոճրագործությունների համար: Դա թուրք և քուրդ ժողովուրդների պատմության ամենաամոթալի էջն է: Ողջ մարդկության անունից ես խոնարհվում եմ ձեր զոհերի հիշատակի ու ձեր վշտի առաջ: Այս խոսքերիս համար ինձ կդատապարտեն, կբանտարկեն, անգամ կարող են գնդակահարել փողոցում, սակայն ես այլևս չեմ կարող գոցել խճիս բերանը» (5): Հրանտ Դինքի, Օրհան Փամուկի, Էլիֆ Շաֆաքի ցանած սերմերը ծիլ են տալիս, որոնք, հուսանք, ամրապնդվելով ճեղքեր կբացեն հիշողության ու կարծրատիպերի պատնեշում՝ օգնելով, որ հասարակ մարդիկ դատապարտեն ու արգելեն ցեղասպանություն երևույթը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. <http://www.grakantert.am>
2. Շաֆաք Է. Ստամբուլի բիձը, Եր. 2012թ.
3. Աղաճյան Ա., Այստեղ մտնելուց առաջ պետք է թողնես ասելությունդ, <http://www.grakantert.am/>
4. [http://www.ted.com/talks/elif\\_shafak\\_the\\_politics\\_of\\_fiction?embed=true&language=ru](http://www.ted.com/talks/elif_shafak_the_politics_of_fiction?embed=true&language=ru)
5. [http://www.panarmenian.net/rus/news/176942/?fb\\_action\\_ids=622749717798950&fb\\_action\\_types=og.likes](http://www.panarmenian.net/rus/news/176942/?fb_action_ids=622749717798950&fb_action_types=og.likes)

#### «СТАМБУЛЬСКИЙ ПОДКИДЫШ» ЭЛИФА ШАФАКА

*Н.М. Искандарян*

#### АННОТАЦИЯ

В романе Элифа Шафак «Стамбульский подкидыш» армяне представлены в положительном свете. Из-за этого произведения автор в 2006 году предстала перед судом: она обвинялась в оскорблении турецкой нации в соответствии с 301 статьей. Шафак и сегодня одна из самых читаемых писательниц. Есть люди, которые считают, что затрагивание турецким прозаиком темы Геноцида преследовало цель приобрести скандальный имидж и добиться мирового признания. С другой стороны удивляешься тому, как писательница турецкого происхождения смогла понять народ, которого ее деды не переносили не только на физическом, но и на генетическом уровне. Действительно, нужно иметь мужество, чтобы заявить вслух о внутренних проблемах турецкого общества, а также подчеркнуть, что тема Геноцида армян – это психологический комплекс турка. Роман «Стамбульский подкидыш» написан сочным языком, с тонким юмором, местами – с самоиронией.

**THE BASTARD OF ISTANBUL: ELIF SHAFAK**

*N. Iskandaryan*

**ANNOTATION**

In her second novel written in English, Turkish novelist Shafak tackles Turkish national identity and the Armenian "question" in her signature style. In a novel that overflows with a kitchen sink's worth of zany characters, women are front and center: Asya Kazanci, an angst-ridden 19-year-old Istanbulite is the bastard of the title; her beautiful, rebellious mother, Zeliha (who intended to have an abortion), has raised Asya among three generations of complicated and colorful female relations (including religious clairvoyant Auntie Banu and bar-brawl widow, Auntie Cevriye). The Kazanci men either die young or take a permanent hike like Mustafa, Zeliha's beloved brother who immigrated to America years ago. Mustafa's Armenian-American stepdaughter, Armanoush, who grew up on her family's stories of the 1915 genocide, shows up in Istanbul looking for her roots and for vindication from her new Turkish family. The Kazanci women lament Armanoush's family's suffering, but have no sense of Turkish responsibility for it; Asya's boho cohorts insist there was no genocide at all. As the debate escalates, Mustafa arrives in Istanbul, and a long-hidden secret connecting the histories of the two families is revealed. Shafak was charged with "public denigration of Turkishness" when the novel was published in Turkey (the charges were later dropped). She incorporates a political taboo into an entertaining and insightful ensemble novel, one that posits the universality of family, culture and coincidence.

# ИНОСТРАННЫЙ ЯЗЫК

## ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԻՄԱՍՏՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԻՄՊԱՆԵՐԵՆՈՒՄ

*Ա.Հ. Ազրոյան*

*A\_Azroyan@yahoo.com*

### ԱՍՓՈՓՈՒՄ

Մույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել ժամանակակից հայերենում և իսպաներենում սահմանական եղանակի ժամանակային իմաստներն ու վերհանել երկու լեզուներում առկա ընդհանրական կամ կոնվերգենտ և դիվերգենտ իմաստները:

**Հիմնաբառեր`** եղանակային կարգ, բարդ ժամանակներ, բայա-հիմք, սահմանական եղանակի ժամանակաձևեր:

Յուրաքանչյուր լեզու ունի իր բարդ կառուցվածքը, բազմաթիվ առանձնահատկությունները, որոնք էլ հնարավոր է ուսումնասիրել` կատարելով տիպաբանական զուգադրական քննություն: Տիպաբանական լեզվաբանությունը թույլ է տալիս իրականացնել երկու կամ ավելի լեզուների համեմատական քննություն:

Մույն հոդվածը նվիրված է ժամանակակից հայերենի և իսպաներենի սահմանական եղանակի ժամանակային իմաստների քննությանը:

Ինչպես հայերենում, այնպես էլ իսպաներենում խոսքի մասերի մեջ բայն աչքի է ընկնում իր քերականական կարգերի բազմազանությամբ: Բայը, քերականական ձևափոխությունների ենթարկվելով` խոնարհվելով, կազմում է դիմավոր կամ եղանակավորող ձևեր: Նրանց հատուկ են եղանակի, ժամանակի, դեմքի ու թվի քերականական կարգերը, որոնք էլ ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները:

Հայերենում բայի դիմավոր կամ եղանակային ձևերը միաժամանակ արտահայտում են գործողության կատարման ժամանակը: Սահմանական եղանակի ժամանակաձևերը յոթն են, որոնք էլ ունեն իրենց քերականական իմաստային յուրահատկությունները:

Հայերենում, ըստ արտահայտման ձևի, բայի ժամանակները բաժանվում են երկու խմբի` համադրական կամ պարզ և վերլուծական կամ բաղադրյալ: Համադրական կամ պարզ են կոչվում այն ժամանակները, որոնք կազմվում են բայախիմքով և վերջավորությամբ: Վերլուծական կամ բաղադրյալ են այն ժամանակները, որոնք կազմվում են դերբայներով և օժանդակ բայերով:

Ժամանակակից հայերենում համադրական կամ պարզ ժամանակներն

են սահմանական եղանակի անցյալ կատարյալը, պայմանական, ըղձական և հորդորական, հրամայական եղանակների ձևերը: Ներկայացնենք պարզ ժամանակների օրինակներ՝ գնաց, գնամ, կգնամ, գնա՛ :

Սահմանական եղանակի վերլուծական կամ բաղադրյալ ժամանակների կազմությունն իրականացվում է անկատար, վաղակատար և ապառնի դերբայների միջոցով: Օրինակ՝ գնում էի, գնացել էի, գնալու էի: Բայի վերլուծական կամ բաղադրյալ ձևերը համադրական կամ պարզ ձևերից տարբերվում են ոչ միայն կազմությամբ, այլև իրենց արտահայտած գործողության բնույթով, որն էլ պայմանավորված է վերլուծական կամ բաղադրյալ ժամանակները կազմող դերբայների իմաստով:

Անդրադառնալով բայի եղանակի կարգի արտահայտությանը՝ անհրաժեշտ է նշել, որ վերջինիս գործողություններն անկասկած թե՛ հայերենում և թե՛ իսպաներենում կարող են լինել իրական, ցանկալի, ենթադրական, պայմանական, հարկադրական:

Նախ անդրադառնանք բայի եղանակի քննությանը, որը ցույց է տալիս խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ:

Ժամանակակից հայերենում կա հինգ եղանակ՝ սահմանական, ըղձական, պայմանական կամ ենթադրական, հարկադրական և հրամայական: Խոսելով բայի եղանակի կարգի մասին՝ նշենք, որ բայի հինգ եղանակների մեջ իրենց ուրույն տեղն են զբաղեցնում սահմանական եղանակի ժամանակները ինչպես ձևաբանական, այնպես էլ իրենց արտահայտած քերականական իմաստների առումով. սահմանական եղանակը միակն է, որ ունի և՛ ներկա, և՛ անցյալ, և՛ ապառնի ժամանակներ:

Ի տարբերություն հայերենի՝ իսպաներենում կա չորս եղանակ՝ սահմանական, ըղձական, հրամայական և պայմանական:

Սահմանական եղանակի բայաձևերը ցույց են տալիս ստույգ կամ հաստատապես կատարվող, կատարված, կամ կատարվելիք գործողություն, մի գործողություն, որը խոսողի հայեցակետով կամ ներկայացմամբ համապատասխանում է իրականությանը, օրինակ՝ **գնում եմ-գնում էի, գնացել եմ-գնացել էի, գնալու եմ-գնալու էի**:

Հայերենում բայի ժամանակները երեքն են՝ ներկա, անցյալ, ապառնի: Ներկան այն պահն է, երբ կատարվում է գործողությունը, անցյալը՝ խոսելու պահից առաջ ընկած ժամանակամիջոցը, իսկ ապառնին՝ խոսելուց հետո ընկնող ժամանակամիջոցը:

Մինչև սահմանական եղանակի ուսումնասիրմանն անցնելը ներկայացնենք կախյալ դերբայների քննությունը, քանի որ դրանց շուրջ հայերենագիտության մեջ կան տարաձայնություններ:

Ըստ Ս. Աբրահամյանի՝ դերբայների մի մասը բայի՝ որպես բառային միավորի ձև է, ինչպես՝ գնալ, գնացող: Այս դերբայները կարող են կիրառվել առանձին, քանի որ բառային լիարժեք միավորներ են: Օրինակ՝ Նրանց գնալը հետաձգվեց: [5]

Մակայն որպես դերբայ ճանաչված լեզվական միավորների մի մասը բառաձև չէ և բառային արժեք չունի: Դրանք այն դերբայներն են, որոնք հանդես են գալիս միայն դիմավոր ձևերի կազմության մեջ: Այդ դերբայները հետևյալներն են՝ անկատար, վաղակատար, ժխտական:

Ապառնի դերբայը ինքնուրույն գործածություն չունի, իսկ նրա համանունը անորոշ դերբայի հոլովական ձև է. օրինակ՝ **գրել-ու, կարդալ-ու:**

Անկատար, վաղակատար դերբայներին բայ դարձնողը օժանդակ բայերն են, իսկ ժխտական դերբային՝ օժանդակ բայի ժխտական ձևերը կամ կ եղանակիչը. օրինակ՝ **կարդում եմ, կարդացել եմ, կկարդամ:**

Գոյություն ունի նաև Գ. Ջահուկյանի տեսակետը, ըստ որի հիշյալ կառույցները ոչ թե կախյալ դերբայ գումարած օժանդակ բայ են, այլ՝ հիմք գումարած վերջավորություն, որտեղ անկախ դերբայ կոչվողները հիմքն են, իսկ օժանդակ բայերը՝ վերջավորությունները [1]:

Ի տարբերություն հայերենի՝ իսպաներենում տարբեր են անորոշ դերբայի վերջավորությունները, ինչով էլ պայմանավորված է բայի երեք խանարիումների առկայությունը (**ar, er, ir**), իսկ բայական ժամանակաձևերը կազմվում են բայի անորոշ հիմքին համապատասխան վերջավորություններ ավելացնելով: Միայն սահմանական եղանակի պարզ ապառնի ժամանակի կազմության դեպքում է, որ համապատասխան վերջավորությունն ավելանում է անմիջապես բայի անորոշ դերբային:

Իսպաներենում յուրաքանչյուր դեմք ունի իր դիմային ձևը և թիվը:

Օրինակ՝ **Hablar**, որը նշանակում է խոսել, իսկ **\_o** վերջավորությունը՝ սահմանական եղանակի առաջին խոնարհման բայերի համար նախատեսված ներկա ժամանակի առաջին դեմքի եզակի թվի դիմային վերջավորությունը: **Yo hablo.** – Ես խոսում եմ:

Ժամանակակից հայերենի ներկան ցույց է տալիս խոսելու պահին ստույգ կատարվող գործողություն և կոչվում է բուն ներկա ու ավելի լայնորեն է գործածվում լեզվում:

Օրինակ՝ Ես կարծում եմ՝ ինքդ էլ զգում ես, որ քո այս այցը վերջինը պետք է լինի: Ես քեզ հետ եմ խոսում, իսկ դու չես լսում:

Ինչպես հայերենում, այնպես էլ իսպաներենում սահմանական եղանակի ներկա ժամանակն ունի իր իմաստային նրբերանգները: Ոճային այդ կիրառություններին անդրադարձել են Պ. Պողոսյանը [8] և Մ. Ասատրյանը [2]՝ առանձնացնելով սահմանական եղանակի ներկա ժամանակի իմաստային հետևյալ նրբերանգները.

1. «Մշտական ներկա», որով արտահայտվում են «իրական, բացարձակ ճշմարտություններ, մնայուն ընդհանուր հատկություններ», օրինակ՝ **Երկիրը պտտվում է արեգակի շուրջ:**

2. «Առաձական ներկա», որով արտահայտվում են «ընդհանուր կարծիքներ, առածներ», ճշմարիտ համարվող խոսքեր, օրինակ՝ **Ձեռքը ձեռք է լվանում:**

3. «Պատմական ներկա», որով արտահայտվում են այնպիսի եղելու-

թյուններ, որոնք կատարվել-ավարտվել են անցյալում, օրինակ՝ **Այն օրից, երբ քրիստոնեությունը մուտք է գործում Հայաստան, նկատվում է մի խուլ, ներքին կռիվ թագավորի և հոգևորականության մեջ, որ հաճախ արտահայտվում է դառը, եղերական վախճանով:**

4. «Կրկնության ներկա», որով «արտահայտվում են այնպիսի եղելություններ, որոնք ոչ թե մի անգամ խոսողի ներկայում կամ մի անցյալ ժամանակակետում կատարվում են հարաձիգ», այլ «կատարվում կամ կատարվել» է «խոսողի ներկայում կամ մի անցյալ ժամանակակետում» «իբրև սովորություն, դիրք, օրեցօր, տարեցտարի կրկնվում են անցյալում կամ մի շրջանում, որի մեջ և խոսողի ներկան»: Օրինակ՝ **Նա առավոտները վեր է կենում վաղ, գնում է զբոսնելու ապա, գալիս, նախաճաշում և անմիջապես նստում է իր գործին:**

5. Նկատելի է, որ սահմանական եղանակի ներկա ժամանակը կիրառվում է ոչ միայն ներկայի այլազան իմասներով, այլև երբեմն նաև՝ ապառնի ժամանակի իմաստով, օրինակ՝ **Վաղը մենք մեկնում ենք:**

6. Սահմանական եղանակի ներկա ժամանակը կարող է արտահայտել նաև հրամայական եղանակի երանգ: Օրինակ՝ **Գնում ես, նստում և սովորում ես դասերդ:**

Այժմ ներկայացնենք իսպաներենում առկա սահմանական եղանակի ներկա ժամանակի իմաստային նրբերանգները:

– Ընթացող ներկա (**presente actual**), որն արտահայտում է խոսելու պահին կատարվող գործողություն: Օրինակ՝ **Me duele la cabeza.** Գլուխս ցավում է:

– Սովորաբար կատարվող ներկա (**Presente habitual**): **En verano voy a la playa.** Ամռանը գնում եմ լողափ:

– Արտաժամանակյա ներկա գործողություն, որը կիրառվում է ասացվածքներում (**Presente atemporal**): Օրինակ՝ **A quien madruga Dios le ayuda.** Մեկ վաղ արթնացողն է շահում, մեկ՝ շուտ ամուսնացողը:

– Պատմական ներկա (**presente histórico**), որն արտահայտում է անցյալում կատարված փաստեր: Օրինակ՝ **Cristobal Colón descubre América.** Քրիստափոր Կոլումբոսը բացահայտում է Ամերիկայի Միացյալ Նահանգները:

– Ներկա հրամայական (**presente de mandato**), որն արտահայտում է, հրաման, որը կիրառվում է բանավոր խոսքում: **Ahora cierras el libro.** Հիմա փակում ես դուռը:

– Ապառնի, որն արտահայտվում է ներկա ժամանակով (**presente pro futuro**): Օրինակ՝ **Mañana sin falta voy a tu casa.** Վաղը անպայման գալիս եմ քո տուն:

Ուսումնասիրելով սահմանական եղանակի ներկա ժամանակը՝ կարող ենք առանձնացնել՝ թե՛ հայերենում և թե՛ իսպաներենում կան ներկանների իմաստային նրբերանգների հետևյալ ընդհանրությունները. ուսումնասիրված լեզուներում առկա են պատմական ներկայի, ապառնիի, որն արտահայտվում է ներկա ժամանակով, ներկա հրամայականի, սովորաբար կա-

տարվող կամ կրկնվող ներկայի կիրառումը:

Անցյալ անկատար ժամանակով են արտահայտվում անցյալում որպես կարգ, կանոն, սովորույթ կատարվող գործողությունները կամ էլ կրկնվող գործողությունները:

Օրինակ՝ **Տղաները կուզեկուզ և զգուշությամբ հետևում էին նրան:**

Շատ հազվադեպ անցյալ անկատար ժամանակը կարող է կիրառվել անցյալ ապառնի ժամանակի նշանակությամբ՝ ցույց տալով այնպիսի գործողություն, որը անցյալում պետք է կատարվեր, սակայն չէր կատարվել ինչ-ինչ հանգամանքների բերումով: Օրինակ՝ **Լավ էր ուշ եկար, ես էլ արդեն գնում էի:**

Անցյալ անկատար ժամանակը կազմվում է բայի անորոշ հիմքին համապատասխան վերջավորություններ ավելացնելով:

Օրինակ՝ **hablar** (խոսել) բայի անորոշ հիմքին ավելացվում է սահմանական եղանակի առաջին խոնարհման բայերի համար նախատեսված անկատար անցյալ ժամանակի առաջին դեմքի եզակի թվի դիմային վերջավորությունը: Yo hablaba. Ես խոսում էի:

Իսպաներենում ունենք **պատմական անցյալ**, որն արտահայտվում է անկատար անցյալով:

Օրինակ՝ **Salvador Dalí llevaba bigote**. Սալվադոր Դալլին ուներ բեղեր:

**Կրկնվող անցյալ:** Օրինակ՝ **Después de comer fumaba un puro**. Ուտելուց հետո նա սիգար էր ծխում:

Ավելի քաղաքավարի խոսքում: Օրինակ՝ **¿Qué deseaban las señoras?** Ինչ էին ցանկանում կանայք:

Ի տարբերություն հայերենի՝ իսպաներենում անցյալ անկատար ժամանակը չի կիրառվում անցյալ ապառնի ժամանակի նշանակությամբ, սակայն այս ժամանակաձևի իմաստային նրբերանգի ընդհանրությունն այն է, որ ցույց է տալիս անցյալում կրկնվող գործողություն:

Սահմանական եղանակի ապառնի ժամանակաձևի մասին հայերենում կան իրարամերժ կարծիքներ, որոնք խորհելու տեղիք են տալիս: Նախ փորձենք պարզել, թե ինչ հարաբերակցության մեջ են սահմանական եղանակի ապառնի և ենթադրականի բայաձևերը:

Ըստ Մ. Աբեղյանի՝ ենթադրական եղանակը նաև կարելիության և հնարավորության եղանակ է, որով եղելությունը պատկերացվում է ոչ իբրև իրական, այլ իբրև կարծված, մտածված, հնարավոր [3]:

Մ. Աբրահամյանը **կ** եղանակիչով կազմված բայաձևերը համարել է սահմանական եղանակի ձևեր, որոք արտահայտում են ավելի ստույգ կատարվող գործողություններ, քան վերլուծական ձևերը: Օրինակ՝ Քո հիշատակը կմնա մեր սրտերում, և քո հիշատակը մնալու է մեր սրտերում [7]:

Առաջին նախադասության մեջ **կմնա** ձևը ցույց է տալիս մի գործողություն, որը արտահայտում է անխուսափելի գործողություն, իսկ երկրորդը ցույց է տալիս մտադրություն: Այսպիսով, ըստ Աբրահամյանի, **կ** եղանակիչի միջոցով կազմված բայերը չեն կարող լինել պայմանական եղանակի բայաձևեր:

Ջահուկյանը ենթադրական է համարում **կ** եղանակիչով կազմվող ձևերը, վերջիններս դրվում են ըղձական եղանակի բայաների վրա և արտահայտում են հաստատաբար, որոշակիորեն ենթադրվող գործողություն: Սակայն, ինչպես տեսնում ենք, Ջահուկյանի մոտեցումը հակասական է, քանի որ միևնույն գործողությունը չի կարող լինել հաստատաբար, որոշակիորեն ենթադրվող [1]:

Ջահուկյանը հետագայում արդեն անվերապահորեն պնդում է, որ **կ** եղանակիչով ձևերը սահմանական եղանակի բայաձևեր են [10]:

Սահմանական եղանակի ապառնի ժամանակը ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որը խոսելու վայրկյանից հետո է կատարվում և ներկայի նկատմամբ դեռ նոր կատարվելիք գործողություն է:

Այսքանով հանդերձ՝ **կ** եղանակիչով բայաձևերը նորմատիվ քերականության մեջ շարունակում են համարվել ինքնուրույն՝ պայմանական կան ենթադրական եղանակի ձևեր [2]:

Վերլուծական **կարդալու եմ** և **կ** եղանակիչով **կկարդամ** բայաձևերի համեմատությունից կարելի է ենթադրել, որ **կկարդամ** եղանակիչով բայաձևը կարող է մատնանշել ստույգ կատարվելիք գործողություն, իսկ **կարդալու եմ** վերլուծական ձևը ենթադրում է ինչ-որ պարտադրական գործողություն:

Նշենք, որ կան մի շարք դեպքեր, որտեղ կիրառվում է ենթադրական ապառնին:

ա) Հոգնակի երրորդ դեմքը կիրառվում է խրատական առաձներում: Օրինակ՝ **Երկաթը տաք-տաք կծեճեն:**

բ) Գործածվում է բնության այս կամ այն երևույթը հաստատող առաձներում: Օրինակ՝ **Ձուկը ջրում կմեծանա:**

գ) Գործածվում է տվյալ պայմաններից բխող անխուսափելի հետևանք արտահայտելու համար: Օրինակ՝ **Այս միջավայրում, այսպիսի մենակության մեջ փիլիսոփան էլ կվայրենանա, ո՞ր մնաց քեզ պես կենսաթրթիռ կինը:**

դ) Հարցական նախադասություններում կիրառվում է ժխտական իմաստով: Օրինակ՝ **Միտո՞ղ, իհարկե սիրտ կդիմանա՞ :**

ե) Հայերենում կա նաև անցյալի ապառնի, ինչպես նաև կ եղանակիչով անցյալի ձևեր: Արտահայտում են կատարվելիք գործողություն, որը տեղի չի ունեցել:

Օրինակ՝ **Կգնայի, բայց հիվանդացա:**

Իսպաներենի ապառնի ժամանակաձևը կազմվում է անորոշ դերբային ուղղակի դիմային վերջավորություններ ավելացնելով:

Օրինակ **hablar** անորոշ դերբային ավելացնում ենք սահմանական եղանակի ապառնի ժամանակի I դեմքի եզակի թվի դիմային վերջավորությունը:

**Yo hablaré.** Ես կխոսեմ:

Քննենք սահմանական եղանակի անցյալ ժամանակաձևերը հայերենում և իսպաներենում:

Հայերենն ունի անցյալի վեց ժամանակաձև, որոնք տարբերվում են

իրենց արտահայտման կերպաժամանակային տարբեր իմաստային երանգներով և կիրառման որոշակի առանձնահատկություններով:

Հայերենում վաղակատար և անցյալ կատարյալ ժամանակաձևերի հակադրությունը երևում է ինչպես հարացուցային մակարդակում, այնպես էլ դրան համապատասխանող խոսքային միջավայրում:

Դիտարկենք հետևյալ օրինակները. **գնացել է և գնաց** ձևերի հակադրության մեջ **գնացը** նշանակում է գործողության կատարված, ավարտված լինելը խոսելու պահից անմիջապես առաջ:

Ժամանակակից հայոց լեզվի վաղակատար դերբայը սերում է գրաբարի անցյալ դերբայից գումարած օժանդակ բայի ներկա. գրաբարում այն եղել է **եալ**, այն հնչյունափոխվել է ու վերջինիս ավելացել է **եմ** օժանդակ բայը, և այժմ ունենք **գրել եմ, կարդացել եմ** ձևերը:

Վաղակատար ժամանակը կազմվում է վաղակատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով կամ, ինչպես արդեն նշել ենք, բայի հիմքով և վերջավորությամբ. օրինակ՝ **գրել եմ, գրել ենք**:

Վաղակատար ժամանակի բայաձևերի առանձնահատկությունն, այն է, որ ցույց են տալիս այնպիսի գործողություն, որին խոսողը ականատես չի եղել, այլ պատմում է՝ ուրիշներից լսելով կամ էլ հետևանքից դատելով: Օրինակ՝ **Ձյուն է եկել**:

Վաղակատար ժամանակը իր բուն իմաստից բացի կիրառվում է ներկայի, ապառնիի երանգավորումով: Օրինակ՝ **Ամպերը եկել են սարերը պատել**: Օրինակ՝ **Եթե տեսել եմ, կասեմ**:

Անցյալ վաղակատար ժամանակը ցույց է տալիս մի անցյալ ժամանակի համեմատությամբ արդեն կատարված, ավարտված գործողություն:

Այն շատ է կիրառվում գեղարվեստական գրականության մեջ, երբ նկարագրվում են որոշակի դեպքեր: Օրինակ՝ Աղջիկները փշատերև ծաղիկներից հյուսել էին մանյակներ ու պսակներ:

Իսպաներենում վաղակատար թե՛ անցյալ, թե՛ ներկա ժամանակները կազմվում են **haber [15]** օժանդակ բայով, որը եկել է լատիներենից. նշանակում է ունենալ և անցյալ ժամանակի դերբայով՝ **participio pasado**:

Իսպաներենում դերբայները կազմվում են հետևյալ կերպ՝

ա) Առաջին խոնարհման բայերը կազմվում են անորոշ դերբայի վերջավորությունը (**ar**) հեռացնելով և **\_ado** վերջավորությունն ավելացնելով:

բ) II և III խոնարհման բայերի դեպքում հեռացվում է անորոշ դերբայի վերջավորությունը՝ այսինքն **er**-ը կամ **ir**-ը, և ավելացվում է **\_ido** վերջավորությունը:

գ) Մահմանական եղանակի ներկա վաղակատար ժամանակը կազմվում է ներկա ժամանակում խոնարհված **haber** օժանդակ բայի և դերբայի միջոցով:

Հարկավոր է նշել, որ **participio pasado**-ն ամփոփոխ է մնում իր ձևով, իսկ ինչ վերաբերում է **haber** օժանդակ բային, ապա այն յուրաքանչյուր դեմքի համար ունի իր բայաձևը:

Եզակի	Հոգնակի		
I He	I Hemos	+ participio pasado	= He comprado un libro. Գիրք եմ գնել:
II Has	II Habéis		
III Ha	III Han		

Անցյալ վաղակատար ժամանակը կրկին կազմվում է անկատար անցյալ ժամանակում խոնարհված haber օժանդակ բայի և դերբայի միջոցով:

Եզակի	Հոգնակի		
I Había	I Habíamos	+ participio pasado	= Había comprado un libro Գիրք էի գնել:
II Habías	II Habíais		
III Había	III Habían		

Հետաքրքրականն է այն, որ իսպաներենում վաղակատար ներկան արտահայտում է այնպիսի գործողություն, որը կապ ունի նեկայում կատարված գործողության հետ: Այն ավելի հաճախ կիրառվում է երկխոսություններում: Կիրառվում է հետևյալ ժամանակի պարագանների հետ, որոնք են՝ hoy – այսօր, esta semana – այս շաբաթ, este año – այս տարի, ya – արդեն և այլն, իսկ անցյալ վաղակատար ժամանակն արտահայտում է նախորդող գործողություն:

Հայերենում անցյալ կատարյալ ժամանակը սահմանական եղանակի միակ պարզ ժամանակն է, որը կազմվում է կատարյալի հիմքերով և վերջավորություններով:

Անցյալ կատարյալ ժամանակը ցույց է տալիս սկսված և միանգամից կատարված ու ավարտված գործողություն և ի տարբերություն մյուս անցյալ ժամանակների՝ այն ցույց չի տալիս տևականություն: Անցյալ կատարյալ ժամանակի մյուս առանձնահատկությունն այն է, որ այն կարող է արտահայտել ակնթարթային կարճ ժամանակամիջոցում կատարված, ավարտված գործողություն:

Փորձենք ցույց տալ նաև հայերենի անցյալ կատարյալ ժամանակի երկրորդական կիրառությունը:

– Այն կիրառվում է ներկա ժամանակին խիստ մոտ, անմիջապես հաջորդող գործողություն ցույց տալու համար, որը խոստովանում է կատարված: Օրինակ՝ Դե ես իմ ասելիքը ասի ու գնացի, հիմա դու գիտես:

– Հաճախ անցյալ կատարյալ ժամանակը կիրառվում է ըղձական եղանակի նշանակությամբ: Օրինակ՝ Եթե ստացա քո համաձայնությունը, անմիջապես կմեկնեմ:

Իսպաներենում անցյալ կատարյալ ժամանակը կազմվում է անորոշ դերբային ուղղակի դիմային վերջավորություններ ավելացնելով:

Օրինակ՝ hablar անորոշ դերբային ավելացնում ենք սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի I դեմքի եզակի թվի դիմային վերջավորությունը:

Օրինակ՝ Yo hablé. Ես խոսեցի:

Ուսումնասիրելով սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակը հայերենում և իսպաներենում՝ եկանք այն եզրահանգման, որ թե՛ իսպաներենում, թե՛ հայերենում այն կազմվում է կատարյալի հիմքերով և վերջավորություններով: Եվ ժամանակի իմաստային առումով ցույց է տալիս ավարտված, կատարված գործողություն:

Այսպիսով, ուսումնասիրելով ժամանակակից հայերենի և իսպաներենի սահմանական եղանակի ժամանակային իմաստները, եկանք հետևյալ եզրահանգումների.

– Թե՛ հայերենում և թե՛ իսպաներենում առկա են սահմանական եղանակի ներկա ժամանակի իմաստային նրբերանգների ընդհանրություններ, որոնք են՝ պատմական ներկա, ապառնի, որն արտահայտվում է ներկա ժամանակով, ներկա հրամայական, սովորաբար կատարվող կամ կրկնվող ներկա, իսկ ժամանակի կազմության մեջ կան ակնհայտ տարբերություններ, քանի որ հայերենում այն կազմվում է դերբայ գումարած օժանդակ բայ կամ հիմք գումարած վերջավորություն, իսկ իսպաներենում՝ անորոշ դերբայ գումարած դիմային վերջավորություն:

– Վաղակատար թե՛ ներկա, թե՛ անցյալ ժամանակները հայերենում կազմվում են դերբայ գումարած օժանդակ բայ կամ հիմք գումարած վերջավորություն: Իսպաներենում այն նույնպես կազմվում է haber օժանդակ բայով և դերբայով: Երկու լեզուներում էլ ժամանակային իմաստները նույն են, սակայն հարկավոր է նշել, որ իսպաներենում և հայերենում առկա են վաղակատարի կիրառման առանձնահատկություններ, քանի որ որ հայերենում հնարավոր է ասել. Ես նրան դեռ անցյալ տարի եմ այդ մասին ասել: Իսպաներենում տվյալ նախադասությունը հնարավոր չէ կիրառել վաղակատար ներկայով, քանի որ նախադասության մեջ կիրառված է ժամանակի պարագա, որը ցույց է տալիս անցած գործողություն:

– Հայերենում անցյալ կատարյալը կազմվում է կատարյալի հիմքով և վերջավորությամբ, իսկ իսպաներենում այն կազմվում է անորոշ դերբայի հիմքին ավելացնելով սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի դիմային վերջավորությունը: Անցյալ կատարյալի իմաստային նրբերանգները հայերենում և իսպաներենում տարբերվում են: Հայերենում այն կարող ենք կիրառել ըզձական եղանակի նշանակությամբ, իսկ իսպաներենում անցյալ կատարյալ ժամանակի նման կիրառություն չկա:

– Թե՛ հայերենում և թե՛ իսպաներենում անցյալ անկատար ժամանակը արտահայտվում է անցյալում որպես կարգ, կանոն, սովորույթ կատարվող գործողություն կամ էլ կրկնվող գործողություն, բայց ի տարբերություն հայերենի՝ իսպաներենում անցյալ անկատար ժամանակը չի կիրառվում անցյալ ապառնի ժամանակի նշանակությամբ:

– Հայերենում սահմանական եղանակի ապառնին կազմվում է կ եղանակիչով, իսկ իսպաներենում այն կազմվում է անորոշ դերբայի և սահմանա-

կան եղանակի ապառնի ժամանակի դիմային վերջավորությամբ և, բացի այդ, իսպաներենում առկա է *ir+a+infinitivo* (զնալ անորոշ դերբային գումարած *a* նախդիրը գումարած մեկ այլ անորոշ դերբայ) կառույցը, որը արտահայտում է մոտալուտ, ծրագրված կամ մտադրված ապառնի գործողություն և նշանակում է պատրաստվել որևէ բան անել:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ջահուկյան Գ.Բ.* Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974:
2. *Ասատրյան Մ.* Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Եր., 2002:
3. *Աբեղյան Մ.* Հայոց լեզվի տեսություն, Եր. 1965:
4. *Աղայան Է.Բ.* Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967:
5. *Աբրահամյան Ս.Գ.* Ժամանակակից հայերենի դերբայների և ժամանակների մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 1969:
6. *Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն. Ա. Հ. Ա. Օհանյան,* Ժամանակակից հայոց լեզու Եր., 1974:
7. *Աբրահամյան Ս.Գ.* Արդի հայերենի պայմանական կամ ենթադրական եղանակը, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Տեղեկագիր, Եր., 1953:
8. *Պողոսյան Պ.* Բայի եղանակային ձևերի ոճային կիրառությունները արդի հայերենում, Եր., 1959:
9. *Բարսեղյան Հ.* Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953:
10. *Ջահուկյան Գ.Բ.* Ժամանակակից հայերենի ժամանակները, Հայոց լեզու և գրականությունը դպրոցում, № 3, 1983:
11. *Մարգարյան Ա.* Հայոց լեզվի քերականություն, Ձևաբանություն, Երևանի համալսարանի հրատարակչություն, Եր., 2004:
12. Real Academia Española Colección Nebrija y Bello, Gramática Descriptiva de la lengua española, Madrid, 1999.
13. *Amado Alonso, Pedro Henriquez Ureña,* Gramática Castellana La Habana, 1968.
14. *Menendez Pidal R.* Manual de Gramática Histórica Española, 1962.
15. Real Academia Española, Diccionario de la lengua española, vigésima primera edición, 1992.

**ВЫРАЖЕНИЕ ВРЕМЕННЫХ ЗНАЧЕНИЙ В АРМЯНСКОМ И ИСПАНСКОМ***А.А. Азроян***АННОТАЦИЯ**

Целью данной статьи является исследование временных значений изъявительного наклонения в современном армянском и испанском. В статье рассматриваются выражения конвергентных и дивергентных значений в вышеупомянутых языках.

**Ключевые слова:** категория наклонения, сложные времена, основа глагола, времена изъявительного наклонения.

**THE REFLECTION OF TENSES IN ARMENIAN AND ENGLISH.***A. Azroyan***SUMMARY**

The present paper seeks to study the meaning of the tenses of indicative mood in modern Armenian and Spanish. The paper focuses on convergent and divergent meanings of tenses in respective languages.

**Keywords:** finite forms, complex structures, verb base, tenses of the Indicative Mood.

**ՄԻԶՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԻԶՆԵՍ ՈԼՈՐՏՈՒՄ**

**Մ.Ա. Գրիգորյան**

*grigoryansuzy@yandex.ru 093 54 50 58*

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Ոչ մի հասարակական խումբ չի կարող գոյություն ունենալ և զարգանալ առանց հաղորդակցման: 21-րդ դարում հաջողված հաղորդակցումը անհատների և խմբերի միջև կարևոր է դարձել հատկապես բիզնես աշխարհում և կազմակերպություններում, որտեղ հիմնական նպատակն է հասնել անդամների կողողինացված գործողությունների, որոնց արդյունքում ընդունվում են հաջող գործարքների կատարմանը հանգեցնող որոշումներ: Սույն հոդվածի նպատակն է ծանոթացնել և ներկայացնել արդեն իսկ արված հետազոտությունների արդյունքերն ու հետևությունները որոշ առանցքային մշակութային տարբերությունների վերաբերյալ, ինչպես նաև տալ մի շարք խորհուրդներ, որոնք կօգնեն հաղթահարել միջմշակութային հաղորդակցման ընթացքում առաջացող խնդիրները և հետագայում նպաստավոր պայմաններ կստեղծեն կարիերայում առաջընթաց ունենալու համար: Այսպիսով, բազմամշակութային միջավայրում գտնվելիս հարկ է ուշադրություն դարձնել հաղորդակցման հետևյալ առանձնահատկությունների վրա՝ *ժեստերի տարբերություններ, բառի իմաստային տարբերություններ, նորաբանություններ, միևնույն իրավիճակի և երևույթի տարբեր մեկնաբանություններ, բիզնես աշխարհում և միջազգային կառույցներում առկա մշակութային սովորույթների և ընդունված կանոնների հիմնական տարբերություններ:*

**Հիմնաբառեր՝** միջմշակութային հաղորդակցում, բիզնես աշխարհ, բազմամշակութային միջավայր:

Ներկայումս ամբողջ աշխարհում մարդիկ գրեթե ամեն օր կամա թե ակամա առնչվում են մշակութային բազմազանության հետևանքով ծագող հաղորդակցման խնդիրների հետ՝ լինի դա առօրյա կյանքում, թե՛ աշխատավայրում: Դա է թերևս պատճառը, որ բազմաթիվ գիտնականներ, ինչպիսիք են Էդուարդ Հոլը, Միլթոն Բեննեթը, Ռիչարդ Լյուիսը, Գիլթ Չոֆսթեդը և այլոք, ուսումնասիրել են, իրենց գիտական աշխատություններում ներկայացրել և մեկնաբանել միջմշակութային հաղորդակցման առանձնահատկությունները: Սույն հոդվածի նպատակն է ծանոթացնել և ներկայացնել արդեն իսկ արված հետազոտությունների արդյունքերն ու հետևությունները որոշ առանցքային մշակութային տարբերությունների վերաբերյալ, ինչպես նաև տալ մի շարք խորհուրդներ, որոնք կօգնեն հաղթահարել միջմշակութային հա-

դորդակցման ընթացքում առաջացող խնդիրները և հետագայում նպաստավոր պայմաններ կստեղծեն կարիերայում առաջընթաց ունենալու համար:

Անհերքելի է այն փաստը, որ մեր օրերում Հայաստանում, ինչպես նաև ցանկացած այլ երկրում անհնար է գտնել մեկ կազմակերպություն, որը բաղկացած է միայն մեկ մշակույթ կրող ազգից: Հետևաբար ցանկացած միջազգային հաստատությունում աշխատելիս կամ ուսուցանելիս նախ և առաջ անհրաժեշտ է ձեռք բերել մշակութային գիտելիք և ունենալ մշակութային իրազեկություն: Այսինքն, պետք է ուսումնասիրել տվյալ ազգի մշակույթը, սովորույթները, բարոյական արժեքները, պատմությունը, լեզուն և կրոնը: Այսպիսի գիտելիքի ձեռք բերումը միջմշակութային հաղորդակցման հաջողության գրավականն է: Այսպիսով, բազմամշակութային միջավայրում գտնվելիս հարկ է ուշադրություն դարձնել հաղորդակցման հետևյալ առանձնահատկություններին վրա՝

ա) *Ժեստերի տարբերություններ*. միևնույն ժեստը կարող է ունենալ տարբեր իմաստներ և մեկնաբանություններ տարբեր մշակույթներում: Ականավոր լեզվաբան և գիտնական Գեյլ Քաթոնը իր գիտական հոդվածում ներկայացնում է մի շարք ժեստեր, որոնցից հարկ է զգուշանալ միջմշակութային հաղորդակցման ժամանակ [1]: Ըստ նրա՝ ժեստերը հանդիսանում են միջմշակութային հաղորդակցման ձախողման առաջին իսկ դրդապատճառը: Դրանք կարող են շատ արագ սաբոտաժի ենթարկել նույնիսկ ամենահմուտ բիզնեսմեններին: Ցանկացած մշակույթ կրող մարդիկ՝ ներառյալ տարբեր երկրների քաղաքական լիդերներ և նախագահներ՝ անտեղյակ ժեստերի իմաստային տարբերություններից, բազմիցս մեղադրվել են վիրավորական ժեստեր օգտագործելու պատճառով: Օրինակ, Բրազիլիայում, Գերմանիայում, Ռուսաստանում և շատ այլ երկրներում «OK» նշանը շատ անարգական է համարվում, մինչդեռ ԱՄՆ-ում այն նշանակում է «ամեն ինչ լավ է», սակայն Ճապոնիայում նշանակում է «գումար», իսկ Ֆրանսիայում՝ «գրո»: Շատերը գիտեն, որ «V» նշանը հաղթանակ և խաղաղություն խորհրդանշող ժեստը Ուիլսոն Չերչիլին անհարմար դրության մեջ դրեց Անգլիայում, քանի որ վերջինս անտեղյակ էր, որ տվյալ մշակույթում սույն ժեստը չափազանց վիրավորական մեկնաբանություն ունի: Բթամատը վեր ժեստը գրեթե բոլոր երկրներում նշանակում է լավ արված աշխատանք: Ինչևէ, Ավստրալիայում, Հունաստանում և Միջին Արևմուտքում այն անարգանքի նշան է, իսկ Գերմանիայում և Հունգարիայում այն մատնանշում է մեկ թիվը, մինչդեռ Ճապոնիայում՝ հինգ թիվը: Մեկ այլ օրինակ. Բուլղարիայում զլուխը վեր ու վար անելը նշանակում է «ոչ», մինչդեռ Հայաստանում և մի շարք այլ երկրներում տվյալ ժեստը համաձայնության նշան է [2]:

Այսպիսով, հարկ է միշտ հիշել, որ ժեստերը շատ կարևոր դեր ունեն միջմշակութային հաղորդակցման հաջողված լինելու հարցում, քանի որ այն, ինչ մենք արտաբերում ենք, միևնույն ժամանակ հաստատվում, ժխտվում կամ ծաղրի է ենթարկվում ժեստերի միջոցով:

բ) *Բառի իմաստային տարբերություններ*. Ինչպես ժեստերի դեպքում, բառերի դեպքում նույնպես շատ հաճախ կարելի է հանդիպել միևնույն բառի իմաստային տարբերությունների տարբեր երկրներում: Անգլիացի լեզվաբան Դավիթ Բարթոնը իր գիտական աշխատություններից մեկում ներկայացնում է հաճախ շփոթեցնող, անհարմար և անհասկանալի իրավիճակ առաջացնող անգլերեն բառերի մի շարք, որոնք տարբեր իմաստներ ունեն ամերիկյան և բրիտանական անգլերենում [3]: Նա աշխատանքային այցով ԱՄՆ մեկնելուց հետո եկել է այն եզրակացության, որ միևնույն լեզվով խոսող, սակայն տարբեր մշակույթներ ունեցող մարդիկ շատ հաճախ կարող են միմյանց ճիշտ չհասկանալ միևնույն բառի իմաստային տարբերությունների պատճառով: Բերենք մի քանի օրինակներ Դավիթ Բարթոնի արված ուսումնասիրություննիս: Անգլերեն *exciting* բառն ունի տարբեր լրացուցիչ իմաստներ բրիտանական անգլերենում և ամերիկյան անգլերենում: Եթե ամերիկյան անգլերենում գործադիր մարմինները իրենց խոսքի մեջ պարբերաբար կիրառում են այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են *exciting challenge*, *exciting business plan*, *exciting idea*, ապա բրիտանացի գործարարները *exciting* բառը կիրառում են բացառապես մանկական գործողություններ նկարագրելու համար: Մեկ այլ օրինակ է *smart* բառը, որն ԱՄՆ-ում կիրառվում է խելացի, իմաստուն, բանիմաց իմաստով, մինչդեռ Մեծ Բրիտանիայում *to be smart* նշանակում է գեղեցիկ և կոկիկ հագնված լինել: Եթե ԱՄՆ-ում անգլիացուն առաջարկեք խմել *cider*, նա կզարմանա՝ պարզելով, որ իրեն առաջարկել է ոչ ալկոհոլային խմիչք՝ պատրաստված խնձորի հյութից: *Cider* բառը Մեծ Բրիտանիայում մատնանշում է ալկոհոլային խմիչք: Մեկ այլ օրինակ է *court shoe* բառակապակցությունը, որը բրիտանական անգլերենում նշանակում է կանացի բարձրակրունկ կոշիկ, իսկ ամերիկյան անգլերենում՝ սպորտային կոշիկ: Եթե անգլիացիները որևէ անձնավորության նկարագրեն որպես *homely*, ապա նկատի կունենան, որ տվյալ անհատը շատ է սիրում իր ընտանիքն ու տունը, իսկ ամերիկացիները նկատի կունենան, որ այդ մարդը չափազանց տգեղ է:

գ) *Նորաբանություններ*. հաջողված միջմշակութային հաղորդակցման նախապայմաններից է նաև տվյալ լեզվում առկա նորաբանություններից տեղյակ լինելը: Լեզվաբաններ Ջիլ Ջոնսոնը և Մարիո Ռինվոլուբրին իրենց՝ «Մշակույթը մեր լսարանում» գրքում բերում են անգլերեն բառերի մի շարք օրինակներ, որոնք առաջացել են պատմության ընթացքում մշակութային որոշ փոփոխությունների և իրադրությունների արդյունքում [4]: Օրինակ, *grief tourist* (բառացի թարգ.՝ վշտի զբոսաշրջիկ) արտահայտությունը առաջացել է լեդի Դիանայի մահից հետո՝ 1997 թվականին և նշանակում է մի անձ, որը, չունենալով ոչ մի անիջական կապ տվյալ սպանության կամ մահվան դեպքի հետ, մտովի տեղափոխվում է կամ անձամբ գնում է սպանության վայր: Մեկ այլ օրինակ է *to miswant* բայը (նշանակում է ցանկանալ այն, ինչքեզ չի երջանկացնի), որն առաջին անգամ հանդիպել է մի գիտական հոդվա-

ծում 2000 թվականին և հետագայում լայն կիրառում է ստացել: Անգլիացիները, ինչպես ցանակացած այլ ազգի ներկայացուցիչներ, ժամանակի ընթացում իրենց բառապաշարում ավելացնում են կամ փոխառում նոր բառեր: Իտալերեն *al fresco* (նշանակում է բնության գրկում ճաշել) արտահայտությունը ոչ միայն լայն կիրառություն է գտել անգլերենում, այլև ստեղծվել է նորը, և շատ հաճախ կարելի է լսել, թե ինչպես են աշխատակիցները միմյանց առաջարկում *al desko*, այսինքն՝ նախաճաշել կամ ճաշել հենց իրենց գրասենյակում:

դ) *Միևնույն իրավիճակի և երևույթի տարբեր մեկնաբանություններ*. միևնույն իրադարձությունը կարող է ընկալվել և հետևաբար մեկնաբանվել տարբեր կերպ տարբեր մշակույթներում: Օրինակ, Բրիտանիայում սև կատուն համարվում է հաջողության խորհրդանիշ, իսկ Հայաստանում, Ռուսաստանում և շատ այլ երկրներում՝ անհաջողություն կանխագուշակող նշան: Մեկ այլ օրինակ. եթե եվրոպացին ստիպված լինի կիսել գրասենյակը իր չինացի գործընկերոջ հետ, ապա նա պիտի փորձի հանդուրժողական լինել և թաքցնել իր բացասական վերաբերմունքը սենյակում դրված վիշապաձև արձանների հանդեպ, քանի որ վերջիններս շատ կարևոր դեր ունեն չինացիների կյանքում և, ըստ չինական հավատալիքի, հաջողություն են բերում:

ե) *Բիզնես աշխարհում և միջազգային կառույցներում անկա մշակութային սովորույթների և ընդունված կանոնների հիմնական տարբերությունները*. նախ և առաջ շատ կարևոր է ծանոթ լինել օտարերկյա գործընկերների մշակույթներում ընդունված վարվելակերպի կանոններին և մտածելակերպի, աշխարհայացքի առանձնահատկություններին նրանց հետ գործանական հանդիպման գնալուց առաջ: Հարկ է իմանալ, թե ինչպես են տվյալ ազգի ներկայացուցիչները ողջունում միմյանց, թե արդյոք ձեռքսեղմումը, համբույրը, գլուխ խոնարհելը ողջունելիս ընդունելի են իրենց մշակույթում, թե ինչ կերպ են անցնակացվում ժողովներն ու կոնֆերանսները, ինչ գույնի հագուստ են նախընտրում կրել բիզնես հանդիպման ժամանակ կամ հարցազրույցի գնալիս և այլն: Վերը նշվածը ավելի հստակեցնելու նպատակով սույն հոդվածում կբերվեն մի քանի օրինակներ, որոնք բնորոշ են Մեծ Բրիտանիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի և Չինաստանի մշակույթներին:

Եթե դուք աշխատում եք բրիտանացի մասնագետի ղեկավարության ներքո, ապա պետք է հիշել, որ բրիտանացի մենեջերները շեշտը դնում են իրենց աշխատակիցների պրակտիկ գիտելիքի վրա, իսկ տեսական գիտելիքին շատ ուշադրություն չի հատկացվում, մինչդեռ Ֆրանսիայում նկատվում է հակառակ միտումը. վերջիններիս համար շատ ավելի կարևոր է աշխատակցի մասնագիտական կոչումը և աստիճանը, քան պրակտիկ գիտելիքը և հարուստ փորձը:

Բրիտանացիների հաղորդակցման ոճը առանձնանում է բարձր դիվանագիտական մոտեցմամբ: Նրանք կարծում են, որ անհրաժեշտություն չկա

ասել այն ամենն, ինչ իրենք իրոք կարծում են տվյալ հարցի շուրջ, եթե ասելիքը բացասական բնույթ է կրում: Այս ամենը բնականաբար արտահայտվում է նաև իրենց բառապաշարում, օրինակ, նրանք գրեթե չեն օգտագործում *I disagree* արտահայտությունը՝ վերջինս փոխարինելով նմանատիպ արտահայտություններով՝ *In my opinion, you have made a number of perfect points but...* կամ *Yes, but it would be better...*: [5] Նմանատիպ մոտեցում ունեն նաև չինացիները և ֆրանսիացիները, որոնք ևս գործնական հանդիպումների ժամանակ նախընտրում են լինել հնարավորինս պերճախոս՝ կիրառելով բարդ շարահյուսական նախադասություններ՝ լի հարուստ բառապաշարով: Ֆրանսիացի գործընկերների հետ հանդիպման գնալիս հարկ է հիշել, որ նրանք դառնում են անհանդուրժողական, երբ խոսակցի ֆրանսերենը կոտրատված է, այդ իսկ պատճառով ավելի լավ է դիմել թարգմանչի օգնությանը բիզնես հանդիպան ժամանակ: Բրիտանացիների, ֆրանսիացիների և չինացիների պերճախոս լինելն է թերևս հիմնական պատճառը, որ իրենց բիզնես հանդիպումները, ժողովները և կոնֆերանսները սովորաբար շատ երկար են տևում: Չինացիները մի քանի անգամ կրկնում են ասվածը, որպեսզի վստահ լինեն, որ փոխըմբռնումը ապահովված է:

Միանգամայն հակառակ մոտեցում են ցուցաբերում ամերիկացի գործարարները, որոնք հակված են առերես ասել այն, ինչ կարծում են: Շատ այլ ազգեր բնորոշում են ամերիկյան բիզնես հանդիպումները և որևէ հարց քննարկման պրոցեսը որպես ագրեսիվ, սակայն հենց իրենք՝ ամերիկացիները, դա այլ կերպ են մեկնաբանում. ըստ նրանց նման գործելաոճը շատ ավելի արդյունավետ է, պրակտիկ և ժամանակ խնայող: Նրանց համար ժամանակը ամենաթանկ արժեքներից մեկն է, և իրենք չեն ցանկանում այն վատնել ավելորդ բացատրությունների և պատշաճ բառեր որոնելու վրա, ինչպես անում են, օրինակ, Մեծ Բրիտանիայում և Չինաստանում: Ամերիկացիների էլեկտրոնային նամակները նույնպես տարբերվում են իրենց հակիրճությամբ, որտեղ հաճախ բացակայում է ողջույնի և եզրափակման խոսքը: Սակայն սա ևս չպիտի դիտվի որպես անքաղաքավարության կամ կոպտության նշան, այլ, ինչպես իրենք են ասում, պիտի դիտվի որպես ժամանակ խնայելու արդյունավետ մոտեցում: Տվյալ մշակույթին բնորոշ այս մոտեցման վառ ապացույցն է ամերիկյան հետևյալ ասույթը՝ *Time is money*:

Բրիտանացիները միմյանց հետ հաղորդակցվելիս գործնական միջավայրում նախընտրում են միմյանց դիմել անուններով, քանի որ կարծում են, որ ազգանունով դիմելը չափազանց պաշտոնական է դարձնում իրենց աշխատանքային հարաբերությունները, որն էլ, ըստ բրիտանացիների, խոչընդոտ է հանդիսանում և պատնեշ ստեղծում գործընկերների միջև: Ֆրանսիացիները և չինացիները, ընդհակառակը, նախընտրում են միմյանց դիմել ազգանուններով հատկապես վերադաս մարմինների հետ խոսելիս:

Չինացիների հետ հաղորդակցվելիս անհրաժեշտ է առանձնահատուկ հարգանք ցուցաբերել նրանց պատմության, ավանդույթների, կրոնի և մշա-

կութային այլ արժեքների հանդեպ: Եթե անգլիացին կարող է հաղորժողական լինել իր ազգին ուղղված քննադատության հանդեպ, ապա չինացի գործադիր մարմինը երբեք դա չի ների և չեղյալ կհամարի ցանկացած գործարք: Նաև զարմանալի չպիտի թվա այն, որ չինացիները ողջունելիս հայացքը գետնին են հառում, քանզի աչքերի մեջ նայելը իրենց մշակույթում անհարգալից է համարվում:

Այսպիսով, ամփոփելով ասվածը, ևս մեկ անգամ շեշտենք միջմշակութային հաղորդակցման կարևորությունը 21-րդ դարում: Մույն հոդվածի շրջանակներում սահմանափակվել ենք մշակութային տարբերությունների մի քանի օրինակներով՝ տեղ թողնելով թեմայի հետագա ուսումնասիրությանն ու զարգացմանը: Ուսումնասիրության արդյունքում ակնհայտ դարձավ, որ միջմշակութային հաղորդակցման հաջողված լինելը կախված է մշակութային իրազեկությունից:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. [http://www.huffingtonpost.com/gayle-cotton/cross-cultural-gestures\\_b\\_3437653.html](http://www.huffingtonpost.com/gayle-cotton/cross-cultural-gestures_b_3437653.html)
2. *Roger E. Axtell*, *Gestures: The Do's and Taboos of Body Language Around the World*, Canada, էջ 63, 1998.
3. <http://iteslj.org/Articles/Barton-UK-USwords.html>
4. *Johnson G.; M. Rinvoluceri*, *Culture in our Classrooms*, Delta p., էջ 48, 2010.
5. <http://www.worldbusinessculture.com/BritishBusinessCommunicationStyle.html>

### CHARACTERISTICS OF CROSS-CULTURAL COMMUNICATION IN BUSINESS WORLD

*S. Grigoryan*

#### SUMMARY

The given article deals with the characteristics and issues of intercultural communication in business world. No society or group of people can exist, develop and succeed without communication. In case of cross-cultural communication a number of obstacles come into force between the bearers of different cultures. Thus, nowadays in order to be a successful business person one needs to acquire linguistic as well as cultural competence, i.e. awareness of different connotations of one and the same word, gestures, mentality, accepted norms of behaviour, history, customs and traditions of the target culture. The aim of the article is to study, compare and present cultural differences and then to give some tips on successful intercultural communication.

**Keywords:** cross-cultural communication, business world, multicultural environment.

## ОСОБЕННОСТИ МЕЖКУЛЬТУРНОЙ КОММУНИКАЦИИ В ДЕЛОВОЙ СРЕДЕ

*С.А. Григорян*

### АННОТАЦИЯ

В данной статье рассматриваются особенности и вопросы межкультурной коммуникации в деловом мире. Ни одно общество не может существовать, развиваться и добиваться успеха без коммуникации. В процессе межкультурной коммуникации ряд препятствий вступают между носителями разных культур. В наши дни, для того, чтобы быть успешным бизнесменом, необходимо приобрести лингвистические, а также культурные компетентности, то есть осознание различных коннотаций одного и того же слова, жесты, менталитет, принятые нормы поведения, история, обычаи и традиции данной культуры. Целью статьи является исследовать, представить и сравнить культурные различия и дать советы по успешной межкультурной коммуникации.

**Ключевые слова:** межкультурная коммуникация, деловая среда, многонациональная среда.

**ՏԻԶԻԿԱ ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ CLIL-Ի/ ԼԵԶՎԻ ԵՎ  
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ/  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

*Մ.Ս. Եսայան*

**ԱՍՓՈՓՈՒՄ**

Տվյալ հոդվածը քննարկում է օտար լեզվի դասավանդումը ֆիզիկալայի ֆակուլտետում CLIL-ի շրջանակներում: CLIL-ի շրջանակներում լեզուն և բովանդակությունը ուսումնասիրում են միաժամանակ՝ ինտեգրման մեթոդով: Սա շատ լավ հնարավորություն է ուսանողների համար բարելավել իրենց լեզվի հմտությունները՝ չանտեսելով մասնագիտական առարկայի գիտելիքները: Հաշվի առնելով CLIL-ի բոլոր մոտեցումները՝ լսարանում ուսուցիչը կարող է զարգացնել լեզվական բոլոր չորս հմտությունները:

**Հիմնաբառեր**՝ ինտեգրացված ուսուցում, լեզվի հմտություններ, համատեքստ:

Տվյալ հոդվածը քննարկում է օտար լեզվի դասավանդումը ֆիզիկալայի ֆակուլտետում CLIL-ի շրջանակներում:

Վերջին տարիների ընթացքում շատ եվրոպական երկրներ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում CLIL-ի նկատմամբ: Հայաստանը նույնպես ետ չի մնում նման գործընթացից: Հայաստանում CLIL-ի կիրառումը սկսվել է դեռևս 1960-ականներից [1]: Առաջացել էր նեղ մասնագիտական բնագավառում դասավանդող այնպիսի մասնագետների պահանջ, որոնք կապահովեին մասնագիտական առարկաների և օտար լեզվի միաժամանակյա գիտելիքներ: Սա իհարկե հազվադեպ դեպքերից է, երբ մասնագետը տիրապետում է ն՝ լեզվին, և՛ տվյալ նեղ մասնագիտական առարկային: Ներկայիս արագ զարգացող տնտեսական, քաղաքական պայմաններում մասնագիտական գիտելիքների և այդ բնագավառում օտար լեզվի տիրապետման և հմտանալու միտումը մեծանում է: Հողվածի նպատակն է ուսումնասիրել CLIL-ի հնարավորությունը գիտության առարկաների՝ մասնավորապես ֆիզիկալայի բնագավառում: Մասնագիտական բնագավառում օտար լեզվի իմացությունը մեծ հնարավորություն է տալիս երիտասարդ մասնագետներին շփվելու օտարազգի մասնագետների, գիտնականների հետ և է՛լ ավելի մեծ փորձ և գիտելիքներ ձեռք բերել տվյալ գիտության բնագավառում:

Միջբովանդակային ուսուցումը հնարավորություն է տալիս ուսանողներին արդեն իրենց ծանոթ գիտելիքները տեղափոխել մեկ այլ հարթության վրա՝ օտար լեզվի, որն էլ հենց CLIL-ի օրինակն է վկայում (Darn, 2006) [2]: CLIL-ի շրջանակներում ուսանողները լեզուն և բովանդակությունը ուսումնասիրում են միաժամանակ՝ ինտեգրման մեթոդով:

Որոշ գիտնականներ, ովքեր ուսումնասիրում են լեզուն համատեքստում, պնդում են լեզվի՝ թե՛ գործնական և թե՛ ֆորմալ զանազան կիրառման փաստը, որը կարող է փոխվել ըստ համատեքստի (Halliday, 1985) [3]:

Սա չի նշանակում, որ մի համատեքստում լեզվի ճիշտ կիրառման հմտությունը նույն կերպ կարտացոլվի նաև մեկ այլ համատեքստում (Genese, 1994) [4]: Գիտական ասպարեզը ենթադրում է կոնկրետ բովանդակություն, տերմինաբանություն և բառարան:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել CLIL-ի հնարավորությունը գիտության առարկաների՝ մասնավորապես ֆիզիկայի բնագավառում:

CLIL-ի կիրառման հիմքում ընկած է հետևյալը. «ոչ լեզվական առարկայի ուսուցումը օտար լեզվի օգնությամբ՝ լավացնելով և՛ օտար լեզվի, և՛ տվյալ առարկայի գիտելիքները» (Nikula, 1997: 5) [5]: Սա շատ լավ հնարավորություն է ուսանողների համար բարելավել իրենց լեզվի հմտությունները՝ չանտեսելով մասնագիտական առարկայի գիտելիքները: CLIL-ի շրջանակում լեզուն և բովանդակությունը ուսուցանվում են միասին՝ ինտեգրման եղանակով:

Գիտական որևէ բնագավառում օտար լեզվի դասավանդման գործընթացում պետք է հաշվի առնել CLIL-ի բոլոր մոտեցումները և լսարանում զարգացնել լեզվական բոլոր չորս հմտությունները:

Նախ և առաջ օտար լեզվի ուսուցիչը պետք է քաջատեղյակ լինի դասավանդվող նյութի բովանդակությանը, նույնիսկ եթե այն խիստ մասնագիտական է: Պետք է զինվել մասնագիտական գրականությամբ, բառարաններով, ինչպես նաև ինտերակտիվ նյութերով: Ուսանողին առաջին հերթին ներկայացվում է դասավանդվող նյութի բառապաշարը թե՛ գրավոր, թե՛ բանավոր տեսքով: Տվյալ բառապաշարը յուրացվում է լեզվական մի շարք վարժությունների միջոցով, ինչպիսիք են, օրինակ, նկարագրել առարկան, գուշակել երևույթը և այլն: Նկարագրելու վարժությունները հնարավորություն են տալիս ուսանողին զարգացնել խոսքային հմտությունները՝ օգտագործելով օտար լեզվի իր ակտիվ բառապաշարը: Ֆիզիկայի որոշ երևույթներ կարող են բացատրվել՝ ելնելով զուտ առօրյա կենսափորձից. այսպիսով ընդլայնվում է ակտիվ առօրյա բառապաշարը:

Գրավոր հմտությունները զարգացնելու համար գերադասելի է, որ ուսանողները աշխատեն մեկ ընդհանուր ծրագրի շուրջ՝ ներկայացնելով նախ անհատական աշխատանքներ, ապա համեմատեն այն իրենց դասընկերների հետ: Ծրագրերը կարող են լինել ֆիզիկայի ոլորտից տարբեր հետազոտություններ, օրինակ՝ գրավոր նկարագրել ինչ-որ փորձ, խնդիր լուծել կամ տեղեկություն ներկայացնել գիտական այս կամ այն կարևոր բացահայտման վերաբերյալ:

Ժամանակակից աշխարհում համակարգչից օգտվելու կարողությունը դարձել է կենսակերպի կարևոր նախապայման: Այն լայն հնարավորություն է տալիս մարդկանց լինել տեղեկացված աշխարհում կատարվող վերջին

իրադարձություններից: Գիտնականի կամ գիտությամբ զբաղվող յուրաքանչյուրի համար առավել կարևոր է համակարգչից օգտվելու փաստը: Լսելու հմտությունները զարգացնելու համար հարմար մեթոդ է օգտվել համակարգչի ծառայություններից: Համացանցը ողողված է միլիոնավոր նյութերով, որոնք մեծամասամբ ներկայացված են անգլերեն լեզվով: Սա իհարկե լավ հնարավորություն է լսարանում օգտագործելու տվյալ լսողական վարժությունները, որոնց հաջորդում են հարցեր՝ պարզելու նյութի ընկալման մակարդակը:

Լեզվական չորրորդ հմտության՝ կարդալու զարգացման վերաբերյալ կարելի է երկար չմտորել, քանի որ կարդալու վարժությունները այս բնագավառում լայնորեն կիրառվող և ընդունված մեթոդ են: Ֆիզիկայի վերաբերյալ ժամանակակից գրականությունը մեծամասամբ ներկայացված է անգլերեն լեզվով, որը պահանջում է մշտական ուսումնասիրություն և մանրակրկիտ հետազոտում:

Վերը նշված դասավանդման բոլոր մեթոդները, որոնք զարգացնում են լեզվի բոլոր չորս հմտությունները, նպաստում են ուսանողների՝ լեզվի և առարկայի խաչաձև ուսումնասիրման մոտեցման զարգացմանը: Մենք՝ ուսուցիչներս, հանդիսանում ենք մարզիչ կամ ռեսուրս, այլ ոչ թե գիտելիքի մատուցող: Ուսանողներն իրենք են իրենց ակտիվ մասնակցությամբ ընդունում կամ մերժում մատուցվող նյութը:

Կրթական այսպիսի խառը միջավայրում (երես առ երես, առցանց), բացահայտվում է CLIL-ի արդյունավետությունը: Լեզվի ուսուցումը ինտերակտիվ, դինամիկ գործընթաց է, որում գիտելիքների ձեռքբերումը ավելի արդյունավետ է լինում, եթե ուսանողները ուսումնասիրում են նյութերը և աղբյուրները ճկուն կրթական միջավայրում՝ չսահմանափակվելով կոնկրետ առարկայի շրջանակներով, այլ հետևություններ անել՝ համախմբելով նախկին և նոր ձեռքբերված գիտելիքները: Սա բնորոշվում է որպես ուսուցում և լեզվամտածողություն, որը Լուինդր և Ռուշոֆը (2003: 17) [6] վերագրում են որպես «լեզվի ուսուցման լեզվաբանական հարթություն, որը բաղկացած է մի շարք տարրերից, այդ թվում՝ ուսուցման առաջընթացի արտացոլում, սոցիալ-մշակութային կարողություն և ֆունկցիոնալ-ինաստային կատեգորիաներ»:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Apresyan M.* Is there any CLIL schools in Armenia? In “Windows on CLIL” Content and Language integrated learning in the European Spotlight, Graz, Austria, 2007.
2. *Darn S.* Content and Language Integrated Learning (CLIL). A European Overview (2006), ERIC [Internet document available at <http://eric.ed.gov/#ED490775>. Last access 12.02.2010].
3. *Geenese, F.* Integrating Language and Content: Lessons from Immersion. Educational Practice. Report. 11. National Center for Research on Cultural Diversity and Second Language Learning, Santa Cruz, CA and Washington, DC. (1994).

4. *M. K.* An Introduction to Functional Grammar. (1985) Edward Arnold, London (revised by Christian M.I.M. Matthiessen. (3rd ed.). Hodder Education, London, 2004).
5. *Nikula T., Marsh D.* Terminological Considerations Regarding Content and Language Integrated Learning. University of Jyväskylä Continuing Education Centre, Jyväskylä. (1997).
6. *Lund A., Rüschoff B.* New technologies and language learning: theoretical considerations and practical solutions in information and communication technologies. (2003) In Fitzpatrick T., Lund A., Moro B., Rüschoff B. (eds). Vocationally Oriented Language Learning, Council of Europe Publishing, Graz. (2009).

## ОБУЧЕНИЕ ПРЕДМЕТА (ДИСЦИПЛИНЫ)

### ФИЗИКИ В РАМКАХ CLIL

(обучение на основе интегрирования языка и его содержания)

*М.С. Есаян*

#### АННОТАЦИЯ

Данная статья рассматривает проблему преподавания иностранного языка на факультете физики в рамках CLIL (обучение на основе интегрирования языка и его содержания). В рамках CLIL язык изучается вместе с содержанием данного профессионального предмета. Студент изучает иностранный язык, пренебрегая профессиональными знаниями. Принимая во внимание предложенные методы CLIL, у студентов можно развивать все четыре навыки языка – чтение, письмо, аудирование и говорение.

**Ключевые слова:** интегрированное обучение, языковые навыки, контекст.

## TEACHING PHYSICS

### IN A CLIL/BLENDED LEARNING ENVIRONMENT

(content and language integrated learning)

*M. Yessayan*

#### SUMMARY

The following article discusses the problems of teaching English at the faculty of physics in the CLIL environment. Within a CLIL framework, language and content are studied together, in an integrated way. This means that students are able to learn a foreign language without neglecting professional knowledge. Taking into consideration the approaches proposed by CLIL the teacher is able to develop all four skills of the language, i.e. reading, writing, speaking and listening skills.

**Keywords:** integrated learning, language skills, content.

## ՀԱՅԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ<sup>1</sup> ԱՐԴԻ ԹՈՒՐՔԵՐԵՆՈՒՄ (ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ)

### I. Թովմասյան

*lilittovm@gmail.com*

#### ԱՍՓՈՓՈՒՄ

Մեր հիմնական նպատակն է բառային փոխառությունների [1] ճանապարհով պարզել հայկական մշակույթի հնարավոր ազդեցությունը թուրքական մշակույթի որոշ բնագավառների վրա՝ հնարավորինս ճշտելով թուրքերենում ներկայումս գոյություն ունեցող հայերեն փոխառությունների քանակը:

**Հիմնաբառեր**՝ Հրաչյա Աճառյան, թուրքերեն փոխառություններ, հայերեն փոխառություններ, թուրքագիտություն, հայագիտություն:

Օտարալեզու և հայրենական մասնագիտական գրականության մեջ շատ է արձարծվել և հետազոտվել հայերենում թուրքերենից փոխառյալ բառերի, քերականական մի շարք կաղապարների, ոճական արտահայտչամիջոցների, առհասարակ հայերենի վրա թուրքերենի ազդեցության մասին:

Հայ լեզվաբանության մեջ առաջին կարևոր ուսումնասիրությունը՝ վերնագրված Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա և թուրքերեն բառերը հայերենի մեջ», 1902թ. լույս է ընծայել Հրաչյա Աճառյանը: Նրան է պատկանում նաև թուրքերենում հայերենից փոխառյալ բառերի հավաքման և հետազոտման առաջին քայլը: Աճառյանը պնդում է նաև, որ փոխատու լեզուն կարող է մեծ օգուտներ տալ այն բառերին, որ «ուրիշները իրմ է փոխ առած են» [2]: Կարելի է համարձակորեն եզրակացնել, որ փոխառյալ բառերի ուսումնասիրությամբ հնարավորություն է ստեղծվում ոչ միայն լուծելու հնչյունաբանական և այլ բնույթի որոշ խնդիրներ, այլ նաև գաղափար կազմելու փոխատու ժողովրդի մակարդակի և նրա՝ փոխատու ժողովրդի վրա քաղաքական, մտավոր կամ տնտեսական ազդեցության մասին: Արժի հիշատակել, որ Հ. Աճառյանը կոչ է արել բանահավաքներին հավաքել և հրատարակել հայկական գավառներում թուրք և թուրքախոս ժողովուրդների կողմից գործածվող հայերեն բառերը [3]: Նրա կոչին արձագանքել են մի քանի բանահավաքներ՝ «Բյուրակն», «Յուշարձան», «Հայաստան», «Ծաղիկ», «Արևելք» և այլ՝ պարբերականներում հրապարակելով մի քանի

<sup>1</sup>Նեղ իմաստով փոխառություն տերմինով կոչում ենք պատմական որոշ ժամանակաշրջանում օտար տիրակալների լեզվից տիրվողների լեզվին անցած բառերը: Այդ կարգի բառերն արդյունք են այն ասիմիլյատորական քաղաքականության, որ վարում են օտար բռնակալները նվաճված ժողովուրդների նկատմամբ:

հարյուր բառեր [4]: Ն. Աճառյանը, ցուցակագրված բառերից առանձնացնելով հայերենից իսկապես փոխառյալ բառերը, դրանք տեղավորել է «Հայերեն արմատական բառարանում» [5]: Բառարանում հանգամանալից ստուգաբանված բառերը, որոնք ընդամենը մի մասն են թուրքական փոխառությունների, վերաբերում են Հայաստանի և Փոքր Ասիայի տարբեր խոսվածքներում և ենթախոսվածքներում օգտագործված բանավոր փոխառություններին:

Հայտնի է, որ թուրք որոշ պատմաբաններ և լեզվաբաններ, հակասելով գիտնականի բարեխղճությանն ու անկողմնակալությանը, տասնամյակներ շարունակ խեղաթյուրել են փաստական ճշմարտությունները՝ մոլեռանդորեն և թշնամաբար ուրանալով հայկական մշակույթի որևէ ազդեցություն թուրքականի վրա: Մինչդեռ հայ մշակույթը ակնհայտ կնիք է թողել թուրքական մշակույթի որոշ բնագավառների վրա: Օգտագործելով պատահական նմանությունները որոշ հեղինակներ սխալմամբ փորձում են ապացուցել, որ իբր, օրինակ, *երգ պար, գուսան, վարսակ* և այլ զտարյուն հայերեն բառեր [6] փոխ են առնված թուրքերեն *յըր, բար, օզան, վարսաղ* բառերից. նրանց պատճառաբանությունը ոչ այնքան թյուր է, որքան՝ վիրավորական. ստացվում է, որ հայերը մշակութային տեսանկյունից ավելի ցածր մակարդակի վրա են եղել [7]:

Մեր խորին համոզմամբ խոսք անգամ չի կարող լինել ոչ միայն մշակութային ցածր մակարդակի, այլև նույնիսկ մակարդակների համեմատության մասին, քանի որ այն ժամանակներում, երբ թուրքական վաչկատուն ցեղերը դեռևս անասնապահներ ու որսորդներ էին՝ տարածված Ասիայի տափաստաններում, մեր նախապապերը վերոնշյալ բառերը և դրանց հետ միասին այլ բառեր ևս օգտագործում էին ոսկեղենիկ գրականության և ծաղկող պատմագրության գրավոր մատյաններում [8]:

Փոխառությունների խնդրին այս տեսանկյունից անդրադառնալիս թուրք որոշ պատմաբաններ և լեզվաբաններ անտեսում են նաև այն պարզ իրողությունը, ըստ որի, ինչպես ռուս թուրքագետ Դ.Ե. Երեմևն է գրում, «փոխառյալ բառերը վերլուծելիս հարկավոր է հաշվի առնել բառերի բավականին մեծ ֆոնդը, որոնք արտացոլում են կուլտուրական ազդեցությունների պատմությունը» [9]: Տեղական բնակչության հետ խառնվելու պրոցեսում քոչվոր թուրքերն անցնում էին նստակեցության՝ տեղացի բնակիչներից յուրացնելով երկրագործության և նստակյաց կյանքի փորձը: Կարելի է ասել, որ մշակութային և և տնտեսական ձուլման գործընթացում հաղթող էին դուրս գալիս տեղացի բնակիչները, որոնք վաչկատուն անասնապահների համեմատությամբ ունեին ավելի բարձր մշակույթ, տնտեսության հարուստ փորձ և զարգացած հմտություններ [10]:

«Փոքր Ասիայի թուրքերը, – շարունակում է թուրքագետ Դ.Ե. Երեմևը, – նույնպես չունեին միասնական լեզու: Ամեն մի առանձին շրջանում կամ մարզում, ուր բնակություն էր հաստատում այս կամ այն ցեղի մեծ մասը, ստեղծվում էր տեղային բարբառ: Դրա հիմքում էին ցեղի բարբառն ու տեղական լեզուն: Լեզվական հիմքերը բազմազան էին. արևմուտքում գերակշռում

էր հունականը, արևելքում կարող էին լինել հայերենը, վրացերենը, արաբերենը, ասորերենը և այլն» [11]:

Հիշատակության է արժանի այն հայտնի փաստը, որ դեռևս տասնհինգերորդ դարում թուրքերենով գրի առնված գրքերում տեղ են գտել հայերեն բառեր՝ *սուր, վեղար, թագավոր, ազնավոր* և այլ բառեր: Պետք է ասել, որ ուշ միջնադարում հայերեն բառերի յուրացումը թուրքերի կողմից հետևանք էր դրացիական հարաբերությունների, ընկերային-տնտեսական պայմանների, բնամթերային ապրանքների փոխանակության, առևտրական շփումների, վերջապես ու անխուսափելիորեն՝ օսմանյան կայսրության ձուլման քաղաքականության հետևանքով իսլամացած ու թուրքացած այն տասնյակ հազարավոր հայերի գոյության, ովքեր, անշուշտ, միանգամից չէ, որ մոռացության մատնեցին իրենց մայրենի լեզուն և ավանդույթները: Թուրքացած հայերը պահպանում էին ոչ միայն քրիստոնեական կրոնին հասուկ բառապաշարը, որի համապատասխանը չկար թուրքերենում, այլ նաև օգտագործում էին կուլտուր-կենցաղային բնույթի այնպիսի բառեր, որոնցից արագորեն բաժանվելն այնքան էլ դյուրին չէր: Քննելով միայն Անկարայի թուրքախոս հայերի բարբառը՝ կհանդիպենք շատ հայերեն բառեր, օրինակ՝ *ավանակ, փանջար, հերք, մուսուր* և այլն, որոնց մի մասը հնչյունափոխվել է՝ ենթարկվելով տեղի թուրքական բարբառի ազդեցությանը: Ժամանակի ընթացքում այդ բառերը յուրացվում էին թուրքերի կողմից. ընդարձակվում էին նրանց օգտագործման տարածքները, և դրանք անխոս մտնում էին ընդհանուր լեզվի բառային ֆոնդի մեջ:

Հետագայում հայերենից փոխառյալ բառերի՝ մի նահանգից մյուսը տարածվելուն նպաստել են նաև տասնիններորդ դարի առաջին քառորդից սկսած ռուս-թուրքական պատերազմների հետևանքով հայաշատ Կարս-Էրզրում նահանգներից դեպի Սեֆաստիա և մինչև Եվրոկիա կատարված ներքին գաղթերը:

Հաշվի պետք է առնել նաև այն հանգամանքը, որ թուրքական փոքր խմբերը, ապրելով հոծ հայություն ունեցող բնակավայրերում, ամենօրյա սերտ հարաբերության շնորհիվ սովորում էին հայերեն և շատ հայերեն բառեր էին օգտագործում իրենց խոսակցական լեզվում:

Պոլսահայ բանաստեղծ և իմբպիթ Խաչիկ Ամիրյանը գրում է, որ Պեզազյան վարժարանում աշակերտած տարիներին լսել է իր վարժապետ Վարդան քին. Դարբինյանից, որ հարևան թուրք գյուղացիները գնում էին Պարտիզակի հայկական թաղամասերը ու, «տասը փարայի *սամիթ*, տասը փարայի *սամիթ*» գոռալով, վաճառում էին իրենց բանջարանոցներից քաղած թարմ սամիթը [12]:

Ժամանակակից թուրքական գրականությունից և մասամբ թուրքական արդի բառարաններից դուրս գրած հայերենից փոխառյալ բանավոր և գրական փոխառությունների քանակը բավականին մեծ է: Գուցե զարմանալի թվա, որ Թուրքիայում նույնիսկ վերջին կես դարի ընթացքում աճում են

հայերենից կատարված գրական փոխառությունները: Հարց է ծագում՝ ինչու՞: Ինչպիսի՞ ընդհանրացումների կարելի է հանգել հայերենից թուրքերեն փոխառյալ բառերի այժմյան քանակի վերաբերյալ:

Ն. Աճառյանը նշում է, որ տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր բնակավայրերում հայերենում թուրքերենից բանավոր փոխառությունների քանակը հասել է 1000–1400-ի [13], սակայն տասնիններորդ դարի կեսերից հետո հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցող ազգային-մշակութային փոփոխություններին զուգահեռ բոլոր այդ բառերը մերժվել են հատկապես արևմտահայ գրական լեզվում. արևմտահայերենում այժմ օգտագործվում է միայն քսան բառ: Իսկ դրա փոխարեն գրական թուրքերենում վերջին տարիներին շատացել է հայերենից փոխառյալ բառերի քանակը: Դրան նպաստել է «հարազատ թուրքերենի» շարժումը, որն սկսվել է երեսնական թվականներից, և որի հիմնական նպատակն է արաբապարսկական փոխառությունները թուրքերենից արտաքսել: Մաքրամոլության շարժումը կառավարական վերնախավային շրջանակների վերահսկողության հովանու ներքո շարունակվում է բուռն թափով՝ հակառակ ժամանակավոր նահանջների: Երբ կառավարության ղեկի մոտ դեր ստանձնողները պահպանողական մտայնությամբ էին առաջնորդվում, նորամույժ բառերի որոշ քանակություն արտաքսվում էր ռադիոհեռուստատեսության և դասագրքերի բառապաշարից, իսկ հակառակ գործընթացն էր ուժեղանում, երբ ղեկին էին հայտնվում առաջադիմականները: Լեզուն պարզապես քաղաքական քարոզչաբանության և քվեներ որսալու գործիք էր դարձել կուսակցությունների միջև:

Թուրք լեզվաբան Էմին Էոզդեմիրին գրում է. «Մեր լեզուն հարստանում է կարևոր մի նախաձեռնության շնորհիվ և վերագտնում է իր լեզվական հարազատ արժեքները: Սկսած տասներեքերորդ դարից՝ ուսումնասիրվել են 227 երկ: Ժողովրդական խոսվածքներից քաղված այդ բառերը, ներառվելով բառարանների մեջ, ներկայացվում են նրանց, ովքեր սիրում են թուրքերենը և ցանկանում են օգտվել այդ բառային գանձարանից» [14]: Համանման միտք է արտահայտում քերականագետ-լեզվաբան Քեմալ Դեմիրայը «Տեղական խոսվածքներում, – գրում է նա, – կան այնպիսի բառեր, որոնք օգտագործվում են երկրի մի որևէ շրջանում, մեկուսացված են խոսված վայրերում և դեռևս չեն օգտագործվում ժողովրդական լայն շրջանակներում: Այդ բառերը հավաքվում և ներկայացվում են նրանց, ովքեր ցանկանում են դրանք օգտագործել: Եթե բառն ընդունելություն է գտնում, լեզվի բառապաշարը հարստանում է» [15]:

Տարբեր հեղինակների կողմից որոշ գավառական բառերի հաճախակի օգտագործումը պարտադրում է բառարանների հրատարակիչներին, որ նոր հրատարակությունների ժամանակ ավելացնեն բառաքանակը: Այսպիսի մտահոգություններով էին տոգորված նաև «Ընդարձակված թուրքերեն բառարանի» հեղինակները: 1983թ. հրատարակված այդ բացատրական բառարանի [16] առաջաբանում գրված է. «Ներմուծվել են այնպիսի բառեր, որոնք

յուրահատուկ են ժողովրդական խոսվածքներին»: Նկատելի է, որ բազմաթիվ հեղինակներ հակվում են դեպի բարբառները և դրանց առավելագույն կարևորություն են ընծայում: Նույնիսկ հրատարակված են առանձին բառարաններ, որոնք նվիրված են գավառական բառերի իմաստային պարզաբանմանը: Պակաս և թերի կլինեն, եթե այդ և նման բառերը չներմուծվեին նշված բառարանում:

Այսպիսով, Անատոլիայի տարբեր շրջաններից և տեղական խոսվածքներից քաղված այդ բառերը, որոնք նախ ամփոփվում են գավառական բառարաններում, ապա տեղ են գրավում առավել զանգվածային տպաքանակով լույս տեսնող բառարանների մեջ, հետզհետե մտնում են ընդհանուր լեզվի բառաֆոնդի մեջ և օգտագործվում են և՛ խոսակցական, և՛ գրավոր լեզվում: Դրանցից են, օրինակ, հայերենից փոխառյալ *քիրվե/քավոր, հեղիք/հատիկ, հերք/հերկ, քյոմյուշ/գոմեշ, մերեք/մարագ, նահրր/նախիր* և այլ բառեր [17]:

Ուրեմն՝ նորաբանությունների մի մասը, եթե մի կողմից ստեղծվում և հորինվում է թուրքերենի ներքին հնարավորություններով, ապա մյուս կարևոր մասը ներմուծվում է Միջին Ասիայի թուրքախոս ժողովուրդների լեզուներից, մասնավորապես Արևելյան Անատոլիայի՝ նախկինում հայաշատ շրջանների խոսվածքներից: Եվ հենց այդ շրջանների խոսվածքներում է, որ որոշակի տեղ են գրավում հայերենից փոխառյալ բառեր, որոնցից են *էվելիք/ավելուկ, հոփ/խոփ, մարան/մառան, քերան/գերան* և այլն<sup>2</sup>:

Ի վերջո, հանրագումարի բերելով Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի», Թուրքիայում հրատարակված օսմաներեն-հայերեն և հայերեն-օսմաներեն, օսմաներեն-թուրքերեն, թուրքերեն գավառական և բացատրական, նախկին ԽՍՀՄ-ում հրատարակված ռուսերեն-թուրքերեն և թուրքերեն-ռուսերեն, Միջին Ասիայի թուրքացեղ ժողովուրդների լեզուների, Հայաստանում լույս տեսած աղբյուրներեն-հայերեն, հայերեն-աղբյուրներեն, Ստեփ. Մալխասյանցի, Մխիթարյան հայրերի լույս ընծայած «Նոր Հայկազյան» և թուրքերենին առնչվող այլ՝ շուրջ երեսուն բառարանների տրամադրած ստուգաբանական տեղեկությունները, կարելի է համարել, որ տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր վայրերում թուրքերեն օգտագործել են շուրջ 385 բառ. դրանք երկրագործական և դրանց հարակից բառեր են<sup>3</sup>, կենդանիների, միջատների անվանումներ են և անասնապահական բառեր<sup>4</sup>,

<sup>2</sup> Ավելին ասենք. թուրքերեն բանավոր խոսքը լսելուց հետո կարելի է համոզված պնդել, որ որոշ բառեր, օրինակ՝ *չամիչ/չեմիչ, փունջ/փունչ* և այլ բառեր մինչ այժմ էլ օգտագործվում են Անտիոքի շրջանի թուրքերի կողմից:

<sup>3</sup> Օրինակ՝ ակոս/ագոս, մաճկալ/մաչքալ, մշակ/մուշակ, գոմ/քոմ, կորնգան/քորունգա և այլն:

<sup>4</sup> Օրինակ՝ բաղ/բաղիկ, գոմեշ/քյոմյուշ, թրթուր, քուռակ/քուրաք, փեթակ/փեթեք և այլն:

բույսերի, մրգերի, բանջարեղենի անվանումներ<sup>5</sup>, շինարարության և կացարանի վերաբերյալ բառեր<sup>6</sup>, արհեստների և գործիքների վերաբերյալ բառեր, կենցաղային և տնային տնտեսության իրերի վերաբերյալ բառեր<sup>7</sup>, սննդեղենի, ճաշատեսակների անվանումներ<sup>8</sup>, պարատեսակների, երգերի անվանումներ<sup>9</sup>, պատմական և կրոնական բնույթի բառեր<sup>10</sup>, տարաբնույթ բառեր<sup>11</sup>, մի քանի դարձվածային ձևեր և բառաբարդումներ<sup>12</sup>, վերջապես գրական փոխառություններ<sup>13</sup>:

<sup>5</sup> Օրինակ՝ աշարա/աշորա, բագուկ/փեզիք, բանջար/փանջար, թնք/թեվեք, ճակնդեղ/յուքյունդոր, սալոր/սալոր և այլն:

<sup>6</sup> Օրինակ՝ առաստաղ/արասթաք, բակ/փեզ, գերան/քերան, դարակ/թերեք, պատ/բաթ, վարպետ/բարբեթ և այլն:

<sup>7</sup> Օրինակ՝ կեռ/գեր, մուրճ/մուրջ, թաթիկ/թեթիք (նշանակում է՝ հրազենի բլթակ) և այլն:

<sup>8</sup> Օրինակ՝ աղուն/աղոն, ապուր/աբուր, բաղարջ/փագաջ, բորանի/բորանի, գաթա/քեթե, լավաշ/լավաշ, չիր/չիր և այլն:

<sup>9</sup> Օրինակ՝ վարդավառի պար/վարդիվոր բար, պար/բար, գաթայի պար/քեթե բար, աղջիկ պար/ահչք բար և այլն:

<sup>10</sup> Օրինակ՝ գուսան/քուսան, եպիսկոպոս/եփիսքոփոս, թագավոր/թեքֆուր, ժակոչ/ժանգոչ, լուսարար/լուսարար, խաչ/հաչ, նախարար/նահարար, սկայորդի/սիգայորթ, քավոր/քիրվե, վարդավառ/վարդիվոր և այլն:

<sup>11</sup> Օրինակ՝ աղջիկ/ահչք, անարատ/անարաթ, անիծած/անիզագ, անուշ/անոշ, կուզիկ/գուզիք, կոպիտ/քուբաթ, մորուք/մորուք, պոչ/փյոչ, փոթորիկ/փեթիրիք, շիլ/շիլ, շալակ/շեվեք և այլն:

<sup>12</sup> Օրինակ՝ անդրրա քալաս/անտեր մնաս, ջերմաք ջուր (նշանակում է՝ օդի)/ճերմակ ջուր, մեկա ասվագ/մեղա Աստված և այլն:

<sup>13</sup> Օրինակ՝ անուշ/անոշ, ապուր/աբուր, առաստաղ/արասթաք, ավանակ/ավանաք, գումեշ/քյումուշ, գութան/քութան, եղբայր/ահբար, թագավոր/թեքֆուր, թեվ/թեվ, կարաս/քերես, հակառակորդ/հագարագորթ, փնթի/փինթի և այլն:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987թ., էջ 624–625:  
«Բիւրակն» ամսագիր, թիվ 1, Կ. Պոլիս, 1902 թ., էջ 225–295:
2. Աճառյան Հ., Հայերենից փոխառյալ բառեր և կոչ մը գավառացի բանահավաքներուն, «Բիւրակն», 1898 թ.:
3. «Բիւրակն» (թիվ 39, 1898 թ., էջ 387, 626–627, 1899 թ., էջ 116 և 314), «Յուշարձան» (թիվ 41, 1911 թ., էջ 328 և 330), «Հայաստան» (թիվ 40, 1917 թ., էջ 90):
4. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, 4 հատոր, Եր., 1971–1979թթ.:
5. Մահմութ Ը. Գազիմիսի, Էրմենիջեղե Թուրանի Մես Ունսուրլար (թուրքերենով), Ստամբուլ, 1945 թ., էջ 2604:
6. Տե՛ս նույն տեղում, էջ 268:
7. Ջահուկյան Գ.Բ. Հայասայի լեզվի հին անատոլիական ծագման վարկածը, Պատմաբանասիրական հանդես, Եր., 1976 թ., թիվ 1:
8. Երեմեև Դ.Ե. Թուրքերի ծագումը, թրգմ.՝ Հ.Հ. Մարտիրոսյան, Եր., 1986, էջ 301:
9. Տե՛ս նույն տեղում:
10. Տե՛ս նույն տեղում, էջ 160:
11. Ամիրյան Խ, Հայերենից փոխառյալ բառեր ժամանակակից թուրքերենում, Եր., 1996 թ., էջ 8:
12. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս 2–րդ, Եր., 1951 թ.:
13. Էոզդեմիր Էմին, Թուրքերենի լեզվաբանություն (թուրքերենով), Ստամբուլ, 1975 թ., էջ 85:
14. Դեմիրայ Բ. Թուրքերենի քերականություն (թուրքերենով), Ստամբուլ, 1982 թ., էջ 139:
15. Ամիրյան Խ, Հայերենից փոխառյալ բառեր ժամանակակից թուրքերենում, Եր., 1996 թ., էջ 15:
16. Տե՛ս նույն տեղում:

## ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ

### Հ.Ա. Ղազարյան

#### ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է աշխատատեղի հայտարարությունների վերլուծությանը գերմաներենում և հայերենում: Հոդվածի նպատակն է նկարագրել այս տեքստի տեսակի գործառնությունները և առանձնահատկությունները, ցույց տալ հաղորդակցական և գործաբանական ներուժը: Մեր նպատակին հասնելու համար հիմնվում ենք Քլաուս Բրինքերի առաջարկած տեքստի տեսակի վերլուծության հասկացության վրա:

**Հիմնաբառեր`** աշխատատեղի հայտարարություն, տեքստի տեսակ, տեքստակազմական առանձնահատկություններ, գործաբանական հայեցակարգ, տեքստի գործառնություն, տեքստի ամբողջականություն, գործատուների պահանջներ աշխատանք փնտրողներին:

Սույն հոդվածի հիմք են հանդիսացել Ազգ, Հայաստանի Հանրապետություն, Հայոց Աշխարհ, Առավոտ, Գոլոս Արմենիի, ինչպես նաև Ֆրանկֆուրտեր Ալլգեմայնե Ցայթունգ թերթերում տեղ գտած աշխատատեղի հայտարարությունների հետազոտությունները:

Ուսումնասիրվող նյութը որպես տեքստի տեսակ բնութագրելու համար կնշենք այս տեքստի տեսակի գործառնությունները և կվերծանենք տեքստակազմական առանձնահատկությունները հայերենում և գերմաներենում:

Գերմանական լեզվաբանության մեծ մեծ տարածում գտած *Textsorte* եզրույթի համար հայկական լեզվաբանության մեջ ճշգրիտ թարգմանություն չկա: Որպես տարբերակներ նշվում են *տեքստի տիպ (тип текста)*, *տեքստի ժանր (жанр текста)* կամ *տեքստի տեսակ (вид текста, речевой жанр, жанровая форма, жанровая разновидность)*<sup>1</sup> Հոդվածում աշխատատեղի հայտարարությունների համար կկիրառենք տեքստի տեսակ եզրույթը:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների արագ զարգացմանը զուգընթաց նոր հնարավորություններ են ստեղծվում աշխատանք փնտրողների համար, ինչպես նաև նոր պահանջներ են ներկայացվում ձեռնարկությունների կողմից աշխատանք փնտրողներին: Ձեռնարկությունների արտահայտած պահանջները սերտ կապ ունեն աշխատաշուկայում տիրող իրավիճակից: Լեզվական միջոցների օգնությամբ նրանք «հայտնում են» մեզ մեր իրականության մասին, այն ժամանակի մասին, որում ապրում ենք և տալիս են մեզ այդ ժամանակի նկարագիրը` փոխանցելով տվյալ հասարա-

<sup>1</sup> Համ. Բախտին 1979, Պոպով/Տրեգուրովիչ 1983:

կույթյան արժեքները և նորմերը: Իսկ նոր պահանջները ազդում են հայտարարությունների թե՛ տեքստի և թե՛ կառուցվածքի վրա և նոր արժեք ու իմաստ են հաղորդում բառերին ու կատարում նոր գործառույթ:

Տեքստը՝ որպես կառուցվածք, և նրանում առկա լեզվական միավորները ուսումնասիրվում են գործաբանական համատեքստի, հաղորդակցության մասնակիցների, նրանց դերերի տեսանկյուններից:

Տեքստի գործառույթը կարևոր չափանիշ է տեքստի տեսակը որպես այդպիսին բնորոշելու համար: Ըստ Գրոսսեյի՝ տեքստի գործառույթը «լեզվական միջոցներով արտահայտված, հասցեատիրոջն ուղղված հրահանգավորում է...» (Brinker 2000, 127)<sup>2</sup>: Ըստ գերմանացի լեզվաբան Քլաուս Բրինքերի՝ տեքստի տեսակ եզրույթը, որն ընկած է սույն ուսումնասիրության հիմքում, պետք է ընկալվի ընդհանուր առմամբ, որպես լեզվական հաղորդակցության ամբողջական մի նմուշ, որն առաջացել է լեզվական միջավայրի ներսում հաղորդակցվելու կարիքից, պատմա-հասարակական զարգացման ընթացքում: Գիտնականը բնորոշում է տեքստի տեսակ եզրույթը որպես «լեզվական գործողությունների նմուշ, որը դիտվում է որպես համատեքստային գործառական-հաղորդակցական համադրություն՝ կառուցվածքային հատկանիշներով օժտված» (Brinker 1997: 124).

Հիմք ընդունելով Քլաուս Բրինքերի առաջարկված տեքստի տեսակի վերլուծության մեթոդը՝ կփորձենք ներկայացնել այս մոդելը աշխատատեղի հայտարարությունների օրինակի վրա:

### **ա. Տեքստի գործառույթի նկարագրություն**

Թափուր տեղի հայտարարությունների լեզվական առանձնահատկություններից է նպատակային լսարանի վրա ազդելը: Ուսումնասիրվող հայտարարություններում **պերսուազիվ** հաղորդակցության, ինչպես ցանկացած այլ հաղորդակցության դերակատարները հասցեագրողն ու հասցեատերն են, համապատասխանաբար՝ ձեռնարկությունն ու աշխատանք փնտրողը: Աշխատատեղի հայտարարությունները պերսուազիվ տեքստերի շարքին դասելը պայմանավորված է նրանով, որ մի կողմից գործատուների թվարկված պահանջները և հիմնավորումները, իսկ մյուս կողմից՝ աշխատանք փնտրողների սպասումները կարող են դիտվել որպես պերսուազիվ գործառույթ, քանի որ այսպիսով գործատուն ազդում է հայտարարության միջոցով աշխատողի վրա՝ մղելով նրան դիմել թափուր տեղին:

Հաղորդակցական նպատակը այս հայտարարություններում իրագործվում է արդեն իսկ նախապես հայտնի տեղեկատվության մեջ՝ համապատասխան պահանջներով դիմել ընթերցողին և գտնել իրագեկ մասնագետ: Լինելով թափուր տեղին համապատասխան հավակնորդ՝ աշխատանք փնտրողը դիմում է տվյալ ձեռնարկությանը: Այսպիսով, իրականացվում է հաղորդակցական գործառույթ:

<sup>2</sup> Թարգմանությունները արված են հոդվածագրի կողմից:

Ելնելով այս պնդումից՝ կարելի է նշել, որ այս հայտարարությունները կատարում են **հաղորդակցական** գործառույթ:

Նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը առկա թափուր աշխատանքի, պահանջների ու սպասելիքների մասին՝ աշխատատեղի հայտարարությունները կատարում են նաև **տեղեկատվական** գործառույթ: Ըստ Գալպերինի՝ տեքստի հիմնական հատկանիշներից է տեղեկատվական բնույթը:<sup>3</sup>

Թափուր տեղի համար հայտարարությունները կատարում են նաև **ապպելատիվ (կոչական)** գործառույթ: Աշխատատեղի հայտարարություններում կոչ է արվում դիմել առաջարկված թափուր տեղի համար: Տեքստ կազմողը ցանկանում է, որ հասցեատերը մի նոր տեսակետ որդեգրի կամ էլ համապատասխան կերպ վարվի ստեղծված իրավիճակում, այսինքն՝ ազդում է ընթերցողի պահվածքի կամ կարծիքի վրա: Նշենք, որ այստեղ առկա է անմիջական գրույց հասցեատիրոջ հետ: «Ich suche das Gespräch mit der langfristig orientierten Top-Managementpersönlichkeit mit Studium der Betriebswirtschaft oder Wirtschaftsingenieurwesen» կոչական գործառույթը իրագործվում է հայտարարություններում առկա հարցական՝ «Haben wir Ihr Interesse geweckt?», և հրամայական՝ «...dann senden Sie uns Ihre vollständigen Bewerbungsunterlagen » նախադասությունների միջոցով:

Այսպիսով՝ աշխատատեղի հայտարարությունը՝ որպես տեքստի տեսակ պատկանում է պերսուազիվ, հաղորդակցական, տեղեկատվական և ապպելատիվ տեքստի տեսակ խմբին:

#### **բ. Հաղորդակցական ձևի և գործունեության ոլորտի նկարագրություն:**

Այս տեքստի տեսակը իր հաղորդակցական ձևի կիրառությունն է գտնում տարբեր լրատվական միջոցներում՝ և՛ թերթերում, և՛ համացանցում, և՛ հեռուստատեսությամբ վազող տողով, և թե՛՝ ռադիոյի միջոցով:

Նկարի և գրավոր տեքստի առկայությունը աշխատատեղի հայտարարություններում ընկալվում է որպես հաղորդակցական ձև: Հայտարարությունը՝ որպես տեքստի տեսակ և որպես խոսույթ հասարակական ոլորտում, կապում է հաղորդակցության մասնակիցներին, թեև նրանք գտնվում են տարածական և ժամանակային հեռավորության վրա:

#### **գ. Թեմատիկ նկարագրությունների սահմանափակում:**

Աշխատատեղի հայտարարության ընդհանուր թեման աշխատանքի առաջարկն ու թափուր տեղի մասին հայտնելն է, իսկ հասցեատերը ձեռնարկության պահանջներին համապատասխանող մասնագետն է: Չնայած այն բանին, որ ձեռնարկությունների համար լայն հնարավորություն է ստեղծվում բարձրաձայնել իրենց կազմակերպության մասին, բայց և այնպես հիմնական թեման թափուր աշխատանքի առկայությունն է: Այսինքն, հիմնական թեման աշխատանքն է:

<sup>3</sup> Гальперин, И.П.: 2006, 26–32.

**դ. Հայտարարություններում առկա թեմաների նկարագրությունները և նրանց զարգացման ձևը:**

Հայտարարության տեքստի տեսակին առանձնահատուկ է պերսուազիվ գործոնի օգնությամբ ենթաթեմաների զարգացումը: Համոզելու գործոնը չի ազդում անմիջականորեն, այլ՝ լեզվական միջոցներով, հետաքրքրություն առաջացնելով կամ էլ առկա վիզուալ (նկարի առկայություն) գործոնով:

Ըստ տեքստի կառուցվածքի՝ ուսումնասիրված հայտարարությունները առանձնանում են կառուցվածքային սահմանափակությամբ, իսկ տեղեկատվությունը ունի ճշգրիտ հերթականություն:

Կատարելով համեմատական վերլուծություն՝ ակնհայտ է դառնում, որ թափուր տեղի համար հայկական աշխատատեղի հայտարարությունը բաղկացած է երեք հիմնական բովանդակային մասերից՝ աշխատատեղի հակիրճ նկարագրությունից, պարտականություններից, պահանջվող մասնագիտական որակավորումներից:

Գերմանական հայտարարություններն ունեն թեև նույնպես 3 բովանդակային մաս, սակայն նրանք էականորեն տարբերվում են հայկական հայտարարություններից: Ի տարբերություն հայկական հայտարարությունների՝ գերմանականներում տրվում է ձեռնարկության ընդարձակ նկարագիրը, իսկ մասնագիտական որակավորումները ներառում են նաև անձի գործնական հմտությունները: Մի շարք մասնագիտությունների համար կարևոր են ոչ այնքան մասնագիտական ունակություններն ու որակավորումները, որքան անձի գործնական հմտությունները:

Համեմատական վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ գերմանական հայտարարություններում առավելություն է տրվում է անձնական հատկանիշներին և գործնական հմտություններին, այսպիսով գերմանական հայտարարությունները անձնակենտրոն են: Ի տարբերություն վերը նշվածի՝ հայկական հայտարարություններում կարևորվում են անձի մասնագիտական որակները, այսինքն՝ դրանք միտված են թափուր տեղին:

**ե. Տեքստի տեսակի լեզվական և ոչ լեզվական միջոցների առանձնահատկությունների նկարագրությունը:**

Նկարի և տեքստի համադրությունը աշխատատեղի հայտարարություններում վերագրվում է տեքստակազմական առանձնահատկություններին, որն, ի դեպ, առկա է գերմանական հայտարարություններում՝ ի տարբերություն հայկական հայտարարությունների:

Հայկական հայտարարությունների շարահյուսական առանձնահատկություններն են կարճ նախադասությունները:

Ուսումնասիրված հայտարարությունները առանձնանում են տեքստի կառուցվածքային սահմանափակությամբ: Չնայած այս տեքստի տեսակին բնորոշ սահմանափակ բառապաշարին և լակոնիկ շարադրանքին՝ գերմանական աշխատատեղի հայտարարությունները փորձում են գրավել աշխատանք փնտրողներին լեզվական միջոցներով՝ դիմելով այսպես կոչված լեզ-

վական ռազմավարությանը. դա երկար նախադասություններն են և բարդ բառերը, օրինակ՝ *Ambiguitätstoleranz, Teamfähigkeit, Belastbarkeit, ergebnisorientiertes Handeln*: Գտնում ենք բառեր, որոնք կարող են դասվել արժեքային հատկանիշներ արտահայտող բառերի շարքին, օրինակ՝ *Toleranz*՝ հանդուրժողականություն, *Ambiguitätstoleranz*՝ մշակույթով պայնավորված հակասությունների հաղթահարում, (այսինքն՝ ինքնուրույն գալ մի խնդրի լուծմանը), *vorbildliche Werte*՝ օրինակ հանդիսացող արժեքներ, *Überzeugungskraft*՝ համոզելու կարողություն: Հայկական հայտարարություններում առկա են ինչպես բարդ բառերը, այնպես էլ բառակապակցությունները, օրինակ՝ թիմում աշխատելու կարողություն, լարված պայմաններում աշխատելու ունակություն:

Ուսումնասիրված հայտարարություններում այդ ռազմավարությունը իրականացվում է ինչպես իմաստային, այնպես էլ կառուցվածքային մակարդակում:

Ամփոփելով՝ նշենք, որ տեքստը հաղորդակցություն է, ունի հասցեատեր և հասցեագրող, և առկա է այն նպատակը, որը կապում է իրենց: Ուստի այս տեքստի տեսակը բնորոշվում է իմաստային միասնականությամբ, ամբողջականությամբ և կապակցվածությամբ: Աշխատատեղի հայտարարության հիմնական նպատակն է իրագրելել ընթերցողներին թափուր տեղի առկայության մասին և մղել ընթերցողներին արձագանքման:

Ընկալելով տեքստի բովանդակությունը՝ հասցեատերը մտնում է գործաբանական հարաբերությունների մեջ, քանի որ տեքստի բովանդակությունը ազդեցություն է գործում կարդացողի վրա, մղում գործողությունների, ինչպես նաև կատարելագործվելու և զարգացնելու մասնագիտական կարողությունները:

Տեքստի գործաբանական ներուժը օգտագործելու նպատակով հայտարարություն կազմողը ընտրում է այնպիսի լեզվական միավորներ, որոնք ունեն համապատասխան նշանակություն և կառուցում է խոսքը այնպես, որպեսզի արտահայտի իմաստային ամբողջություն և կապակցվածություն՝ կարդացողի վրա ազդելու համար: Պետք է նշել, որ տեքստի գործաբանությունը որոշվում է հայտարարության ձևով և գաղափարով: Այդ իսկ պատճառով, եթե խախտված է գաղափարը և ձևը, այն չի կարող համապատասխանել կազմողի հաղորդակցական նպատակին:

Ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ աշխատատեղի հայտարարությունը տեքստի հատուկ տեսակ է, որտեղ արտահայտված են հասարակության արժեքները, նորմերը և տարբեր հասարակական խմբերի հետաքրքրությունները:

Ուսումնասիրելով մեծ քանակությամբ աշխատատեղի հայտարարություններ՝ կարելի է ենթադրել, որ համեմատաբար փոքր ծավալով այս տեքստի տեսակը իրականացնում է իր գործաբանական ներուժը՝ շնորհիվ իմաստային և կառուցվածքային ամբողջականության և կապակցվածության,

կիրառելով տարբեր լեզվական միջոցների բառային և շարահյուսական մակարդակներում:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Adamzik, Kirsten 1991: Forschungsstrategien im Bereiche der Textsortenlinguistik. In: ZfG N.F. 1, 99–109.
2. Busse, Dietrich 1992: Textinterpretation. Sprachtheoretische Grundlagen der explikativen Semantik. Westdeutscher Verlag. Opladen.
3. Brinker, Klaus 1983: Textfunktionen. Ansätze zu ihrer Beschreibung. In ZGL 11, 127–148.
4. Brinker, Klaus 2000: Linguistische Textanalyse. Berlin.
5. Brinker, Klaus 1992: Linguistische Textanalyse. Erich Schmidt Berlin.
6. Gansel, Christina; Frank, Jürgens 2007: Textlinguistik und Textgrammatik. Vandenhoeck&Ruprecht.
7. Grosse, Ernst Ulrich 1976: Text und Kommunikation. Eine linguistische Einführung in die Funktion der Texte. Stuttgart.
8. Hall, Anja 2002: „Multimedia/Internet/E-Business-neue Erwerbstätigkeiten in Stellenanzeigen“. In: Berufsbildung in Wissenschaft und Praxis 31: 37–42.
9. Handlos, Andrea 1995: Stellenanzeigen im Wertewandel. Wie Unternehmen um Mitarbeiter werben. Kommunikation & Gesellschaft in Theorie und Praxis, Verlag Reinhard Fischer, München.
10. Sandig, Barbara. 1972: Zur Differenzierung gebrauchssprachlicher Textsorten im Deutschen / Textsorten. Differenzierungskriterien aus linguistischer Sicht. Frankfurt (Main).
11. Novak, Popovic 1976: Die Sprache der Stellenanzeigen in kommunikativer, persuasiver und sozialer Sicht. Hamburg.
12. М.М. Бахтин. Проблема речевых жанров. Эстетика словесного творчества. М., 1979.
12. И.П. Гальперин. Текст как объект лингвистического исследования. М., 2006.
13. <http://www.faz.net/aktuell/>
14. <http://www.armstat.am/ru/?nid=16>
15. <http://www.hhpress.am/>
16. [http://tanger.am/vacancy\\_list.php?lang=arm](http://tanger.am/vacancy_list.php?lang=arm)

#### АНАЛИЗ ОБЪЯВЛЕНИЙ О ПРИЕМЕ НА РАБОТУ НА МАТЕРИАЛЕ АРМЯНСКОГО И НЕМЕЦКОГО ЯЗЫКОВ

*А.А. Казарян*

#### АННОТАЦИЯ

Настоящая статья посвящена исследованию объявлений о приеме на работу (на материале армянского и немецкого языков) как особого типа текстов, обладающего основными функциями и признаками текста. Целью данной статьи является определение специфики объявлений о приеме на работу как особый текстовый жанр и рассмотрение коммуникативного и прагматического аспекта текста объявлений. Для достижения поставленной цели мы опираемся на концепцию Клауса Бринкера.

**Ключевые слова:** объявление о найме на работу, тип текста, структурные особенности, прагматический аспект, функции текста, завершенность текста, требования работодателей к соискателям.

**JOB VACANCY ANNOUNCEMENTS: BASED ON  
THE ANALYSIS OF ARMENIAN AND GERMAN**

*H. Ghazaryan*

**SUMMARY**

The article is dedicated to the research on job vacancy announcements (based on the analysis of Armenian and German) as a specific text type which has the main functions and properties of a text. The aim of the article is to define the peculiarities of job vacancy announcements as a special text genre and their communicative and pragmatic aspects. To reach this goal we consider the concept by Klaus Brinker as a basis.

**Keywords:** job vacancy announcements, text genre, structural properties, pragmatic aspect, text functions, text comprehensibility, employee expectations from employers.

## ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԿԱՑԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՄԿՈՒՐՍՈՒՄ

### ԼԿ. Մակունց

lmakunts@gmail.com


#### ԱՍՓՈՓՈՒՄ

Հասկացական կաղապարները թելադրում են դիսկուրսի կառուցման կանոնները, որոշում այն բառային պաշարը, որը պետք է կիրառվի տվյալ տեքստում, սահմանում բացասական և դրական երանգավորում ունեցող ածականների և բայերի խումբը, ժխտական և հաստատական նախադասությունների համամասնությունը և այլն: Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշակի հասկացական կաղապարներ լայն կիրառություն ունեն մի մշակությունում, սակայն պակաս ընդունելի են մեկ այլում, որը ենթադրում է, որ դրանց կիրառությունն ու ընտրությունն ունի նաև որոշակի մշակության շրջանակներում:

**Հիմնաբառեր`** հասկացական կաղապարներ, ճշմարտություն, դիսկուրս վերլուծություն, հասկացույթ:

Ճանաչողական տիրություն հասկացույթն իր մեջ ներառում է իրական աշխարհի որոշակի առարկայի, երևույթի վերաբերյալ բոլոր իմացությունները, նրա բնույթը, հատկանիշները, գործառնությունները: Գիտելիքները, որոնք ամրագրված են հասկացույթով, մատնացույց են անում որոշակի իրավիճակ կամ իրադարձություն, որում լավագույնս արտացոլվում է հասկացական տեղեկատվությունը: Հասկացույթը գիտելիք է, որը համակարգված է հասկացական կաղապարի մեջ (1):

Հիմնվելով Չ. Ֆիլմորի, Մ. Մինսկու և Ջ. Լաքոֆֆի հասկացական կաղապարների տեսության վրա (2, 3, 4)՝ փորձել ենք առանձնացնել «ճշմարտություն» հասկացույթի վերաբերյալ հասկացական կաղապարների շարք (գծանկար 1):



Գծանկար 1. «Ճշմարտություն» հասկացույթի հասկացական կաղապարներ

Ճշմարտության այս հասկացական կադապարներից յուրաքանչյուրն իրացվում և գործում է որոշակի ոլորտներում, մասնավորապես՝ կրոնական (Ճշմարտություն-Աստված), հոգևոր (Ճշմարտություն-ներդանակություն, Ճշմարտություն-ընտանիք), իրավական, (Ճշմարտություն-կարգ), բարոյական (Ճշմարտություն-արդարություն, Ճշմարտություն-ազնվություն, Ճշմարտություն-ազատություն), պետական (Ճշմարտություն-պետություն, Ճշմարտություն-շահ, Ճշմարտություն-հայրենիք), ներկայացուցչական (Ճշմարտություն-երդում):

Քաղաքական դիսկուրսում Ճշմարտությունն ապացուցելու համար կամ Ճշմարտացի երևալու համար հաճախ հղում է կատարվում վերը նշված ոլորտներին: Ինչպես գիտենք, արևմտյան քաղաքական մշակույթում՝ հատկապես բրիտանական, պետությանը ծառայելը համարվում է ծառայություն Ճշմարտությանը: Հասարակությունը հերոս ու նվիրյալ է համարում այն անձանց, որոնք Ճշմարտախոս են ու ազնիվ: Եթե անգամ նրանց վարած քաղաքականությունը մարդկանց կարծիքով սխալ է, այդ քաղաքական գործիչներին ներվում է գրեթե ամեն ինչ: Եթե մտաբերենք Մեծ Բրիտանիայի վարչապետ Մարգարետ Թետչերի օրինակը, ապա կհիշենք, որ շատերը նրա պաշտոնավարման տարիներին խիստ քննադատում էին Թետչերին: Երկրում առկա էր բավականին լուրջ տնտեսական ճգնաժամ, որը պարբերաբար դժգոհության մեծ ալիք էր բարձրացնում: Մակայն անկախ ամեն ինչից՝ նրան վստահում էին պետություն, որովհետև իր ելույթներում ուղղախոս էր և ազնիվ, վարվում էր ճիշտ այնպես, ինչպես խոսում էր:

“...No policy which puts at risk the defeat of inflation – however great its short-term attraction – can be right. Our policy for the defeat of inflation is, in fact, traditional. It existed long before Sterling M3 embellished the Bank of England Quarterly Bulletin, or “monetarism” became a convenient term of political invective.

But some people talk as if control of the money supply was a revolutionary policy. Yet it was an essential condition for the recovery of much of continental Europe. Those countries knew what was required for economic stability. Previously, they had lived through rampant inflation; they knew that it led to suitcase money, massive unemployment and the breakdown of society itself. They determined never to go that way again. Today, after many years of monetary self-discipline, they have stable, prosperous economies better able than ours to withstand the buffeting of world recession. So at international conferences to discuss economic affairs many of my fellow Heads of Government find our policies not strange, unusual or revolutionary, but normal, sound and honest. And that is what they are...”(5)

Ինչպես վերը նշված հատվածում կարող ենք նկատել Մ. Թետչերի խոսքից, նա առանց ավելորդ դիվանագիտության խոսում է տնտեսական ճգնաժամի, համատարած գործազրկության, արժույթի արժեզրկման և այլ մարտահրավերների մասին, հնչեցնում, որ դրանց դիմակայելու մոտեցումներն ավանդական են, և իրենք ոչ մի նոր բան չեն հորինել խնդիրներին լուծում

տալու համար: Մ. Թետչերը նշում է, որ տնտեսությունը լուրջ հիմքերի վրա դնելը գրկանքներ է պահանջում, ինչպես դա եղել է շատ այլ եվրոպական երկրներում, սակայն որի արդյունքում վերջիններիս հաջողվել է ունենալ կայուն և ամուր տնտեսություն: Ահա նման խոսքն է, որ, որքան էլ խիստ հնչի, որքան էլ սատր ջնջող լինի, մարդկանց մոտ վստահություն է ներշնչում, քանի որ ճշմարտությունը տվյալ պարագայում ընկալվում է դիսկուրսի հեղինակի անկեղծության և ազնվության պրիզմայի միջով: Իսկ Թետչերն այն քաղաքական գործիչն էր, որն իր երկար տարիների պաշտոնավարման ընթացքում մշտապես եղել էր իր խոսքին հավատարիմ և չէր կեղծել, եթե անգամ քաղաքական դիվիդենդներ ստանալու համար այդ պահին ավելի մեղմ դիսկուրս էր պահանջվում: Նշված հասկացական կաղապարի առանցքային բառերից է համարվում *policy*՝ քաղաքականություն (կամ քաղաքական ռազմավարություն) բառը: Վերը բերված օրինակի փոքրիկ հատվածում անգամ կնկատենք այս բառի բազմակի կիրառություն:

Ճշմարտությունը կարող է պայմանավորված լինել նաև շահով՝ անձնական կամ պետական: Քաղաքական դիսկուրսում այն, ինչ պահանջում է պետական շահը, ճշմարիտ է: Փորձենք ճշմարտություն-պետություն հասկացական կաղապարը դիտարկել հետևյալ օրինակի հիման վրա՝ մեջ բերելով Թ. Բլեյերի ելույթից մի հատված.

“... in another part of our globe there is shadow and darkness, where not all the world is free, where many millions suffer under brutal dictatorship, where a third of our planet lives in a poverty beyond anything even the poorest in our societies can imagine, and where a fanatical strain of religious extremism has arisen, that is a mutation of the true and peaceful faith of Islam.

And because in the combination of these afflictions a new and deadly virus has emerged. The virus is terrorism ...” (6).

Մեծ Բրիտանիայի պետական շահը տվյալ պարագայում ենթադրում էր աջակցել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը: Թ. Բլեյերն, իր խոսքում նկարագրելով մուսուլմանական երկրները, օգտագործում է բավականին մեծ թվով բացասական երանգ ունեցող բառեր՝ *shadow, darkness, suffer, brutal dictatorship, poverty, fanatical strain, religious extremism, deadly virus, terrorism*, որոնց միջոցով ընդգծում է իրավիճակի ծայրահեղ վտանգավոր լինելը և մղում լսողին ճշմարտությունը փնտրել բոլորովին հակառակ բևեռում: Դիսկուրսում *the poorest* ածականը գերադրական աստիճանով կիրառելը, *brutal, dictatorship* բառերը սաստկացնում են իրավիճակի լրջությունը: Բայերն օգտագործվում են կա՛մ ներկա անորոշ, կա՛մ ներկա վաղակատար ժամանակաձևերով. վերջինիս միջոցով դիսկուրսի հեղինակը ցույց է տալիս արդեն առկա աղետալի իրավիճակը: Մինչդեռ ներկա անորոշ ժամանակաձևի կիրառմամբ զգայական մակարդակում փորձում է հաղորդել, որ ողբերգական արդյունքը մոտ է:

Կան որոշ հասկացական կաղապարներ, որոնք կարող են այլ հասկացական կաղապարների երանգներ պարունակել իրենց մեջ: Մեր կողմից

առանձնացվածների շարքում այդպիսիներից է ճշմարտություն-ազատություն հասկացական կաղապարը, որն իր մեջ կրում է նաև արդարությանը միտված ենթաստեքստ:

“Just as the terrorist seeks to divide humanity in hate, so we have to unify it around an idea and that that idea is liberty... We must find the strength to fight for this idea; and the compassion to make it universal... Abraham Lincoln said: those that deny freedom to others, deserve it not for themselves... It is a sense of justice that makes moral the love of liberty” (7).

Ճշմարտության ամենամեծ չափանիշներից մեկը համարվում է Աստված, ընդ որում՝ ոչ թե որևէ կրոնի, այլ Աստված՝ որպես հավաքական, հոգևոր, համամարդկային ճշմարտություն: Աստծո անվան շոշափումը շատ հաճախ հանդիպում ենք հատկապես ամերիկյան քաղաքական դիսկուրսում: Այն սովորաբար ուղեկցվում է «հավատ» կամ «հավատք» բառերով: Քաղաքական դիսկուրսում ճշմարտություն-Աստված հասկացական կաղապարը մասնավորապես կիրառելի է նախագահների երդմնակալության արարողության և համապետական այլ ուղերձների ժամանակ, որտեղ ճշմարտության դրսևորումը տեղի է ունենում նաև երդման միջոցով:

Դիտարկենք հատվածներ Բարաք Օբամայի երդմնակալության ելույթից:

“...We are true to our creed when a little girl born into the bleakest poverty knows that she has the same chance to succeed as anybody else, because she is an American; she is free, and she is equal, not just in the eyes of God but also in our own...”.

“...My fellow Americans, the oath I have sworn before you today, like the one recited by others who serve in this Capitol, was an oath to God and country, not party or faction...”.

“...Thank you. God bless you, and may He forever bless these United States of America.” (8).

Մարդկանց մեջ դաշված է այն միտքը, որ ճշմարտությունը չի կարող լինել առանց արդարության: «Եթե արդար է, ուրեմն ճշմարիտ է» սկզբունքը գործում է ոչ միայն իրավական, այլ նաև քաղաքական դաշտում: Արդարության ուղերձներն առկա են գործնականում բոլոր տեսակի քաղաքական դիսկուրսներում՝ օրենքի գերակայության, արդար ընտրությունների, իրավահասարակության, ռասսայական հավասարության, հասարակական և սոցիալական արդարության համատեքստում:

Մեջբերենք հատված Մ. Լյութեր Քինգի ելույթներից մեկից, որտեղ նա խոսում է սոցիալական արդարության մասին՝ ընդգծելով, որ այն հանդիսանում է ճիշտ սոցիալական հարաբերությունների գրավական:

“...Now our struggle is for genuine equality, which means economic equality. For we know now that it isn't enough to integrate lunch counters... What does it profit a man to be able to eat at an integrated lunch counter if he doesn't earn enough money to buy a hamburger and a cup of coffee? What does it profit one to be able to attend an integrated school when he doesn't earn enough money to buy his children school clothes?” (9).

Ճշմարտություն-կարգ հասկացական կաղապարը հաճախ կարող է հանդիպել հակազդեցության տեսքով, այսինքն՝ կարգը հաստատվում և ամրագրվում է անկարգության հերքմամբ, նրանից հրաժարվելով: Այս երևույթը դիտարկենք՝ մեջբերելով 2003թ. ԱՄՆ կոնգրեսականների հետ հանդիպման ժամանակ Թ. Բլեյերի ելույթից մեկ այլ հատված:

“Ours are not Western values. They are the universal values of the human spirit and anywhere, any time, ordinary people are given the chance to choose, the choice is the same. Freedom not tyranny. Democracy not dictatorship. The rule of law not the rule of the secret police.” (10).

Ընտանիքի և ներդաշնակության գաղափարը քաղաքական դիսկուրսում նույնպես առնչվում է ճշմարտություն հասկացույթի հետ: Շատ ազգերի մոտ այն հայրենիքին հավասարազոր կատեգորիա է: Պատահական չէ, որ սեփական ընտանիքին դավաճանելը կարող է հանգեցնել երկրի նախագահի իմպիչմենտի, այսինքն՝ անվտանգություն հայտնելու գործընթացին, հատկապես եթե նա հերքում է, իսկ հետագայում պարզվում է, որ ստել է: Բոլորս հիշում ենք՝ նմանատիպ դեպք տեղի ունեցավ ԱՄՆ Նախագահ Բիլ Կլինթոնի հետ:

Վերևում առանձնացված հասկացական կաղապարների տարատեսակներից թերևս առավել կարևորների թվին կարող ենք դասել ճշմարտություն-պետություն հասկացական կաղապարը: Բանն այն է, որ քաղաքական դիսկուրսում հաճախ պետությունը համարվում է գերագույն ճշմարտություն. այն, ինչ բխում է պետության շահերից, ճշմարիտ է և անքննելի: Նման հասկացական կաղապարի պրակտիկան կիրառելի է հատկապես արևմտյան երկրների քաղաքական դիսկուրսում, երբ պետությունը համարվում է գերակա շահ և պետական գիտակցությունը դրված է ամենաբարձր հարթության վրա, քանի որ յուրաքանչյուր քաղաքացի իր և իր ընտանիքի անվտանգության, ազատության և բարեկեցության երաշխավոր է համարում սեփական պետությունը: Նմանատիպ հասկացական կաղապարի կիրառությունը դառնում է ավելի արդիական, երբ պետությունը կանգնած է արտաքին վտանգի առջև կամ այն երկրներում, որտեղ ահաբեկչությունը հիմնական մարտահրավերներից մեկն է: Հարկ է նշել, որ ճշմարտություն-պետություն դիսկուրսը այդքան էլ տարածված չէ հայկական իրականությունում: Մեզ մոտ ավելի կիրառական է այն դիտարկել հայրենիքի համատեքստում: Օրինակ՝ քաղաքական գործիչների ելույթներում կարող ենք հանդիպել Լեռնային Ղարաբաղի խնդրին վերաբերող մարտահրավերների արժարձումը, սակայն ոչ թե պետության տեսանկյունից, այլ՝ հայրենիքի:

Բերված օրինակները ցույց են տալիս, որ քաղաքական դիսկուրսում դրանք իրացվում են բավականին հմտորեն և արդյունավետ կերպով: Կատարված վերլուծությունից պարզ դարձավ նաև, որ որոշակի հասկացական կաղապարներ լայն կիրառություն ունեն մի մշակույթում, սակայն պակաս ընդունելի են մեկ այլում, որը ենթադրում է, որ դրանց կիրառությունն ու

ընտրությունն ունի նաև որոշակի մշակութային առնձնահատկություն, ինչի մասին կխոսենք մեր աշխատանքի հետագա հատվածներում:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Телия В.Н.* Русская фразеология. Семантический, прагматический и лингвокультурологический аспекты. М.: Наука. 1996. 129 с.
2. *Филлмор Ч.* Фреймы и семантика понимания // Новое в зарубежной лингвистике, вып. 23. М.: Прогресс. 1988. с. 52–93.
3. *Минский М.* Фреймы для представления знаний. М.: Энергия, 1979. 152 с.
4. *Lakoff G., Johnson M.* Metaphors we live by. London: University of Chicago Press. 2003. 276 p.
5. <http://www.theguardian.com/politics/2007/apr/30/conservatives.uk>
6. <http://edition.cnn.com/2003/US/07/17/blair.transcript/>
7. [http://news.bbc.co.uk/2/hi/uk\\_news/politics/3076253.stm](http://news.bbc.co.uk/2/hi/uk_news/politics/3076253.stm)
8. <http://www.whitehouse.gov/the-press-office/2013/01/21/inaugural-address-president-barack-obama>
9. <http://rabble.ca/news/2013/01/remembering-martin-luther-king-and-his-fight-economic-justice>
10. [http://news.bbc.co.uk/2/hi/uk\\_news/politics/3076253.stm](http://news.bbc.co.uk/2/hi/uk_news/politics/3076253.stm)

#### КОНЦЕПТУАЛЬНЫЕ ФРЕЙМЫ КОНЦЕПТА «ПРАВДА» В ПОЛИТИЧЕСКОМ ДИСКУРСЕ

*Л. Макунт*

#### АННОТАЦИЯ

Концептуальные фреймы диктуют правила структуры дискурса, применяемые в тексте, определяют группу прилагательных и глаголов с позитивными или негативными коннотациями, а также соотношение утвердительных и отрицательных предложений и т.д. Проведенный анализ показывает, что некоторые фреймы могут иметь широкое применение в одной культуре, но быть менее приемлимыми для другой, из чего вытекает, что их выбор и употребление имеют определенную культурную особенность.

**Ключевые слова:** концептуальные фреймы, правда, дискурс анализ, концепт.

#### CONCEPTUAL FRAMES OF THE CONCEPT “TRUTH” IN POLITICAL DISCOURSE

*L. Makunts*

#### SUMMARY

Conceptual frames dictate rules of discourse structure and vocabulary, which has to be used in the text, define the groups of adjectives and verbs with positive or negative connotations as well as proportion of affirmative and negative sentences, etc. The conducted survey shows that certain frames can be widely used in one culture but be less acceptable in another one, which presupposes that their choice and usage have cultural peculiarities.

**Keywords:** conceptual frames, truth, discourse analysis, concept.

ՄՈՋԱՖԱՐ-ԱՂ-ՂԻՆ ՇԱՀ ՂԱԶԱՐԻ ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՕՐԱԳՐԵՐԸ  
ՈՐՊԵՍ ՊԱՐՄԻՑ ՀՈՒՇԱԳՐԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇ

*Ա. Ա. Մարտիրոսյան*

*Martar75@mail.ru*

**ԱՍՓՈՓՈՒՄ**

Մույն հոդվածը նվիրված է ղաջարական տոհմի վերջին շահի՝ Մոզաֆար-աղ-ղինի ճամփորդական օրագրի ուսումնասիրությանը: Այս ստեղծագործությունը օժտված է օրագրային ժանրի հիմնական հատկանիշներով և, ի թիվս այդ ժամանակաշրջանում ստեղծված այլ հուշագրային ստեղծագործությունների՝ նշանակալի դեր կատարեց ժամանակի պարսից գրականության զարգացման գործում: Այս ստեղծագործությունը դիտարկվում է թե՛ որպես տեղեկատվական արժեք և թե՛ որպես գեղարվեստական գրականության բաղկացուցիչ մաս:

**Հիմնաբառեր՝** Մոզաֆար-աղ-ղին շահ Ղաջար, ուղեգրություն, ճամփորդական օրագրեր, Պարսկաստան, հուշագրություն:

Պարսից գրականության մեջ հուշագրային ժանրն առավել ցայտուն արտահայտվել է ճամփորդական օրագրերի և ուղեգրության ենթաժանրերով, ընդ որում ճամփորդական օրագրերը՝ որպես ամենապարզ ձևերից մեկը, դարձել են ուղեգրական գրականության այն տարատեսակներից, որ ամբողջովին համապատասխանում էին դարաշրջանի գաղափարական, հասարակական ու գրական պահանջներին: Մակայն մինչ այժմ այս ստեղծագործությունները՝ այդ թվում և Մոզաֆար-աղ-ղին շահի ճամփորդական օրագիրը, չեն ենթարկվել հանգամանալից ու համակողմանի ուսումնասիրության:

Մոզաֆար-աղ-ղին շահ Ղաջարի «Մաֆար-նամե-յե մոբարաքե-յե շահն-շահի» («Շահնշահի օրհնյալ ճամփորդական օրագիրը») երկը XIX դարի ճամփորդական օրագրերից ժամանակագրորեն ամենաուշ ստեղծվածն է: Մոզաֆար-աղ-ղին շահի գահակալության տարիները բնութագրվում են մի կողմից տնտեսական անկման երևույթներով, մյուս կողմից՝ լուսավորչական բարեփոխումներ անցկացնելու միտումներով: Իր բարենորոգչական նախագծերը ճիշտ իրագործելու նկատառումներով Մոզաֆար-աղ-ղին շահը մեկնում է արտասահման՝ Ռուսաստան և եվրոպական մի քանի երկրներ՝ այնտեղի նորամուծություններին ծանոթանալու [4, 472–474], ինչի արդյունքում էլ գրի է առնում իր տպավորությունները ճանապարհորդական օրագրի տեսքով:

Ղաջարական տոհմի վերջին ներկայացուցչի առաջին ուղևորությունը դեպի Եվրոպա սկսվեց 1279թ. ֆարվարդինի 23-ին (1900թ. ապրիլի 12-ին) և տևեց յոթ ամիս: Այդ ընթացքում նա այցելեց Ռուսաստան, Ավստրիա, Բել-

գիա, Շվեյցարիա, Գերմանիա, Ֆրանսիա և հետդարձի ճանապարհին՝ Օսմանյան Թուրքիա: Երկու տարի անց, տաս միլիոն գումար հայթհայթելով, ձեռնարկեց երկրորդ ճանապարհորդությունը դեպի Եվրոպա, որը սկսվեց 1282թ. ֆարվարդինի 22-ին (1902թ. ապրիլի 12-ին) և տևեց վեց ամիս: Այս անգամ նա շրջագայեց Իտալիայով, Անգլիայով, Ֆրանսիայով, Բելգիայով, Ավստրիայով ու Գերմանիայով: Նրա երրորդ ճանապարհորդությունը Եվրոպա սկսվեց 1284թ. խորդադի 16-ին (1905թ. հունիսի 5-ին) և տևեց չորս ամիս: Հարկ է նշել, որ այս բոլոր ուղևորությունների ծախսերը հոգալու համար շահը մեծ վարկեր ստացավ, որոնք հետագայում ծանր բեռ դարձան պարսիկ ժողովրդի ուսին:

Մոզաֆար-ադ-դին շահի «Մաֆար-նամեն» օժտված է օրագրային ժանրի հիմնական հատկանիշներով: Այստեղ նյութը մատուցվում է ըստ գրառման օրերի՝ շաբաթվա օրերի նշումով: Հեղինակը ճամփորդություն յուրաքանչյուր օրը նկարագրում է ամենայն մանրամասնությամբ: Նկարագրություններն առնչվում են ոչ միայն օրվա անցուդարձին, այլև շրջակա բնությանը, բնակավայրերին, մարդկանց և կենցաղային պայմաններին: Նա պատմում է իրեն այցելած անձանց մասին, բնութագրում նրանց, նկարագրում արտաքինն ու բնավորությունը, գիտելիքները կամ սոսկ հիշատակում անունները: Նման մոտեցում է ցուցաբերում և բնակավայրերի դեպքում՝ կա՛մ ներկայացնում է դրանք հանգամանորեն, կա՛մ՝ սոսկ այցելած վայրերի ցուցակները, առանց մանրամասների: Շահը քանիցս նշում է, որ տեսածն անձամբ չի գրառում, այլ ամեն երեկո ամեն բան, ինչ ուզում է զետեղել օրագրի էջերում, թելադրում է քարտուղարին, որն անբաժան է իրենից [1, 251]: Այդ պատճառով օրագրի լեզուն հաճախ չոր ու պարզունակ է, իսկ ոճով՝ մոտ արձանագրայինին: Բարդ նախադասությունները, դերբայական դարձվածքները, արաբալեզու ու հին եզրերը համեմատաբար քիչ են:

Ուշագրավ է, որ ընդհանուր առմամբ այս օրագիրն օժտված է վավերական գրականության բնորոշ գծերով, սակայն հեղինակն առանձին դրվագներում անթաքույց արտահայտում է իր զգացմունքներն ու վերաբերմունքն այս կամ այն իրադարձության նկատմամբ, և օրագրում հազվադեպ չեն բուն շարադրանքից խոհազգացմունքային շեղումները: Օրինակ՝ կյանքի ու գոյության մասին խորհելիս շահը ասում է.

«گاهی درد و رنج برای انسان لازم است تا او را بیاد پروردگار خویش بیندازد... [1, 23]»

(«Երբեմն ցավն ու տառապանքը մարդուն անհրաժեշտ են, որպեսզի նրան հիշեցնեն Արարչի մասին...»)

Կամ՝ վերադարձի ճանապարհին, հասնելով Նախիջևան ու տեսնելով սահմանամերձ պարսկական սարերը, գրում է.

«این سفر تمام شده نزدیک بخاک ایران رسیده ایم خیلی خوشوقت بودیم... [1, 252]»

(«Այս ճանապարհորդությունն ավարտվեց, հասել ենք Իրանի հողին, շատ երջանիկ ենք...»)

Ըստ ռուս գրականագետ Ա. Շաչկովայի՝ ուղեգրության ժանրի արդի հետազոտողները շեշտը դնում են առաջին հերթին ժանրի հավաքականության, նրա մեջ տարբեր ժանրերի տարբերի համակցման, փաստագրական ու գեղարվեստական գրականությանը բնորոշ գծերի միահյուսման վրա [3, 278]:

XIX դարի պարսից ճանապարհորդական օրագրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք բաղկացած են թե՛ նկարագրական, թե՛ պատմողական մասերից, ինչը հուշագրական ժանրի ստեղծագործությունների բնութագրիչ հատկանիշներից մեկն է: Օրագրային «ես»-ի տեսանկյունից՝ հեղինակը նկարագրական տեքստերում դիտում, նկարագրում է երևույթները, մարդկանց, վայրերը և իրավիճակները: Այսպիսի տեքստեր կան բոլոր հուշագրային ստեղծագործություններում, այդ թվում նաև՝ Մոզաֆար-ադ-դին շահի օրագրում: Տեքստերում երբեմն պատմողական ու նկարագրական հատվածները զուգահեռվում են, հաճախ՝ միահյուսվում: Դրանք գրառումներ են հեղինակի հետ կատարված դեպքերի մասին: Մակայն միշտ չէ, որ այդ տեքստերում նկարագրվում են հեղինակին առնչվող իրադարձությունները: Երբեմն հեղինակի պատմողական տեքստերի նյութ են դառնում ոչ թե մեկերկու իրադարձություն, այլ թվարկվում է ամբողջ օրվա ընթացքում կատարվածը: Այս դեպքում տեքստի մեջ առկա են բազմաթիվ կրկնողություններ, քանի որ օրվա անցուդարձի մասին պատմելիս հեղինակն ակամա նկարագրում է ամենօրյա որոշակի արարողակարգով պարբերաբար կամ ժամանակ առ ժամանակ կատարվող գործողություններ: Դա նկատվում է Մոզաֆար-ադ-դին շահի բոլոր օրագրերում, որոնցում ամեն օրվա պատմություն սովորաբար սկսվում է հետևյալ կերպ.

«امروز باید به صوفیا برویم... [1, 42]»

(«Այսօր պետք է գնանք Մոֆիա...»)

Ընդ որում, ակնհայտ է, որ գրառումը կատարվել է ճամփորդության ընթացքում՝ անմիջապես իրադարձությունից հետո, դրան զուգահեռ կամ նույնիսկ դրանից առաջ:

Այդ ժամանակաշրջանի սաֆար-նամեների լեզուն բնականաբար նշանակալի չափով պայմանավորված էր ճանապարհորդելու և հուշագրություն ստեղծելու դրդապատճառներով ու նպատակներով, օտար երկրներում ձեռք բերած տեղեկություններով և տվյալ երկրում գործածվող լեզուներով: Ակնհայտ է, որ ամենատարբեր ոլորտներին առնչվող խոսքն ու նկարագրություններն անհամեմատ ավելի հարմար ու դյուրին էր շարադրել արձակով, իսկ, նկատի ունենալով պարսից գրականության արձակ ստեղծագործու-

թյունների սակավաթիվ ու զարգացած չլինելը, կարելի է ասել, որ դա նշանակալի քայլ էր արձակի լեզվի ու ոճի նորացման, պարզեցման հարցում: Մոզաֆար-ադ-դին շահի օրագրի լեզվաոճական առանձնահատկությունները հաստատում են վերը նշված հանգամանքը. օրագրի լեզուն համեմատաբար պարզ է, բարդ նախադասությունները՝ սակավ:

Գրական ոճի ձևավորման խնդրում կարևոր է նախադասությունների շարահյուսական կառուցվածքը, որը որքան ընդհանրական, նույնքան անհատական բնույթ ունի: Սաֆար-նամեներում հաճախ են հանդիպում շրջադասությունը (ինվերսիան)<sup>1</sup> [2, 494], կրկնություններն ու կրկնավոր բարդությունները, ինչպես նաև նախադասությունների ծավալայնությունը, դերբայական դարձվածքների առատ կիրառումը և այլն:

Պարսկական շարահյուսության մեջ շրջադասության ամենատարածված ձևը նախադասության մեջ բայի դիմային ձևից հետո որոշ լրացումների առկայությունն է կամ էզաֆեթային կառուցվածքի կանոնակարգված դասավորության խախտումը: Շրջադասությունը բնորոշ է բանաստեղծական կամ խոսակցական լեզվաոճերին: Այսպես, եթե բանաստեղծական լեզվում ինվերսիայի երևույթը կիրառվում է ավելի պատկերավոր ու բարձրաձև պատումի, ինչպես նաև հանգավորման կանոնները պահպանելու նպատակով, ապա արձակում, ընդհակառակը, դրա առկայությունն ավելի շուտ միտված է ոճի պարզեցմանն ու գրական լեզվի մեջ խոսակցական տարրերի ներթափանցմանը: Ահա այդպիսի մի օրինակ Մոզաֆար-ադ-դին շահի ուղեգրությունից.

[1, 14] «با جمله رانديم نرسيديم بمنزل»

(«Մի խոսքով՝ գնացինք, բայց չհասանք տուն»):

Պատումը տպավորիչ դարձնելու նպատակով հեղինակը հաճախ է կիրառում դերբայական դարձվածքներ, հիմնականում՝ առաջադաս: Օրինակ՝

[1, 17]. «بعد شام خورده استراحت كرديم»

(«Հետո ընթրելով՝ հանգստացանք»):

[2, 1]. «اول صبح از جواب برخاسته لباس پوشيديم».

(«Սկզբից քնից վեր կենալով՝ հագուստը հագանք»):

Գրողի լեզվաոճական առանձնահատկությունները դրսևորվում են նաև անհատի հանդեպ վերաբերմունքով, նրան արժևորելու խնդրով ու բնութագրականով, թե ինչ է տեսնում նա անձի մեջ և ինչպես է այն ներկայացնում:

<sup>1</sup> Ինվերսիան (լատ. *Inversion*՝ պեղափոխություն) նախադասության մեջ բառերի սովորական դասավորության խախտումն է:

Ուշագրավ է Մոզաֆար-ադ-դին շահի Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին տրված բնութագիրը՝

«اسم خليفه اعظم مگردیچ و مرد خوشروی محترمی است تقریباً هشتاد و پنج سال دارد بلند قامت و خوش بنیه و ریش بلند سفید و سیاه و لباسش با سایر کشیشان فرقی که دارد همان است که نوشتیم مال دیگران سیاه و از او رنگ بادنجانمی روشن است خیلی با متانت حرف می زند...» [2, 55]

«Կաթողիկոսի անունը Մկրտիչ է, և պատվարժան մարդ է, համարյա ութսունհինգ տարեկան, բարձրահասակ և բարեկազմ և երկար ալեխառն մորուք ունի և, ինչպես գրեցինք, իր հագուստի տարբերությունը մնացած քահանաների հագուստից այն էր, որ ուրիշներինը սև և նրանը բաց մանուշակագույն է, շատ պատկառանքով է խոսում:»

Ինչպես տեսնում ենք, նկարագրությունները պարունակում են գեղարվեստական գրականության տարրեր՝ բազմաթիվ մակդիրներ, բարդ դարձվածքներ, արաբական հիմք ունեցող բարձր ոճի բառապաշար, զանազան հոմանիշներ, փոխաբերություններ, համեմատություններ և այլն: Մա մի կողմից վկայում է դեռևս հին, պաճուճապատ, բարդ բանաստեղծական լեզվի ազդեցության, մյուս կողմից՝ հեղինակի կրթվածության մակարդակի մասին, քանի որ Պարսկաստանում այդ ժամանակ քչերն էին ստանում լավ կրթություն, և դա հիմնականում թագավորական ընտանիքի անդամների ու նրանց շրջապատի առավելությունն էր:

Այսպիսով, կարելի է եզրակացնել՝ չնայած, որ հիշյալ ժամանակահատվածում ստեղծված բոլոր ճամփորդական օրագրերն ու ուղեգրություններն ունեն ժանրային դրսևորումների որոշ ընդհանրություններ, այնուամենայնիվ դրանցից յուրաքանչյուրն օժտված է առանձնահատկություններով ու յուրահատկություններով, որոնք ժանրի զարգացման գործընթացում տվյալ ստեղծագործությանն ապահովում են առանձնակի տեղ ու դեր, հաղորդում՝ յուրահատուկ ոճ և նշանակություն:

Գործնական նպատակներ հետապնդելով՝ ուղեգրությունը, ի վերջո (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ) դարձավ զարգացած գրական ժանր և հաստատվեց ժամանակակից պարսից գրականության մեջ: Ուղեգրության գլխավոր նպատակը հայրենակիցներին հնարավորինս ստույգ տեղեկություններ հաղորդելն էր, ինչը հեղինակներին պարտադրում էր ձգտել օբյեկտիվ ու ճշգրիտ գրառել տեսածն ու լսածը: Օտար աշխարհներից սաֆար-նամենների բերած նորությունները անշուշտ ունեին ճանաչողական և ուսուցողական մեծ նշանակություն: Ըստ այդմ, ուղեգրությունները փաստագրական բնույթ ունեն, սակայն հենց փաստերի ընտրությունը և դրանց մոտեցման եղանակներն արդեն իսկ անհատական էին, իսկ դա անխուսափելիորեն հանգեցնում է փաստերի որոշակի գեղարվեստականացման, ինչն այնուհետև գեղարվեստական արձակի նոր ժանրի ստեղծման հիմք դարձավ: Հիմնականում հենց այս՝ փաստագեղարվեստական իրողությունն է պայմանավորում սաֆար-

նամեների լեզուն ու ոճային առանձնահատկությունները:

Պարսից ուղեգրությունների ճանաչողական ու պատմական աղբյուր լինելու հանգամանքը կարևոր է նաև հայագիտության համար՝ XIX դարի պատմական իրողությունը բացահայտելու ու ճշգրտելու առումով:

Հատկանշական է, որ Պարսկաստանից դուրս գալուն պես ճանապարհին ընկած առաջին շրջաններն ու բնակավայրերը հայկական էին, և պարսիկ ճանապարհորդների օտար երկրների նկարագրությունները փաստորեն սկսվում են հենց Հայաստանից: Հարկ է նշել, որ Հայաստանը նրանց համար բոլորովին անծանոթ չէր. դարեր շարունակ այս երկու երկրներն ու ժողովուրդները սերտ հարևանական կապեր ու շփումներ են ունեցել՝ առևտրական, տնտեսական, մշակութային փոխներձեցումներից մինչև պատերազմներ, տեղահանումներ ու վերաբնակեցում: Պարսկաստանը միշտ հետաքրքրված էր Հայաստանով: Սյո իսկ պատճառով պարսիկ հեղինակները, Հայաստանի մասին որոշ տեղեկություններ ունենալով, ձգտում էին ամեն ինչ տեսնել սեփական աչքերով և գրի առնել իրենց ուղեգրություններում: Լավատեղյակ լինելով, որ այստեղ բնակչության մեծամասնությունը քրիստոնյա է՝ նրանք առաջին հերթին երկիրը դիտում են որպես քրիստոնեության օրրաններից մեկը, այցելում Էջմիածին ու հետաքրքրվում քրիստոնեական պատմությունով:

Ավելորդ չէ նշել Մոզաֆար-ադ-դին շահի օրագրի տեղեկատվական նշանակալի արժեքը XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ իրականության լուսաբանման հարցում: Եվրոպա ուղևորվելու ճանապարհին նա բազմամարդ շքախմբի ուղեկցությամբ անցնում է Հայաստանի տարածքով՝ Իրանական ու Ռուսական Ջուլֆաներով, Նախիջևանով, Բաշ Նորաշենով, Երևանով, Սևանով, Դիլիջանով, հասնում Ախստաֆա, որտեղից էլ նստում է գնացք և մեկնում Թիֆլիս:

Հայաստանում պարսից շահի հետաքրքրությունների ոլորտը յուրահատուկ է. այստեղ նրան ավելի շատ անհանգստացնում ու մտահոգում է այն փաստը, որ տարածքը գտնվում է Ռուսական կայսրության տիրապետության տակ, հետո միայն այն, որ իր ճանապարհին անցնում է Արևելյան Հայաստանով: Քանիցս ավստասանք է հայտնում, որ Իրանը, քաղաքական մեծ հետաքրքրություն ունենալով այս տարածաշրջանում, կորցրել է իր ազդեցությունն ու գերիշխանությունն այս տարածքների հանդեպ [1, 44]: Օրագրում հեզնանքով նշում է.

[1, 47] «اطلاع از ورود خودمان به خاک روسیه داده بودیم»

(«Մենք տեղեկացրել էինք **ռուսական** հող մտնելու մասին...»):

Սակայն քիչ անց, կարծես տուրք տալով ինքնասիրությանը, հպարտորեն ավելացնում է.

«تشریفات ورود ما بایروان مثل داخله شهرهای خودمان خیلی مفصل بود» [1, 53]

(«Երևանում մեր մուտքի հանդիսակարգը մեր սեփական քաղաքների մուտքի [հանդիսակարգի] նման շատ շքեղ էր»):

Հատուկ նշում է, որ հայերը ռուսների նման քրիստոնյա են, սակայն կրկին շտապում է շեշտել, որ այստեղ ապրում են նաև մահմեդականներ: Օրագրի մի հատված նվիրված է Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի հետ հանդիպման նկարագրությանը: Կաթողիկոսը այդ հանդիպման ընթացքում հետաքրքրվում է Իրանում հայերի վիճակով և շնորհակալություն հայտնում շահին, որ «հայերն Իրանում ապրում են հանգստության ու բարեկեցության մեջ» [1, 55]:

Պարսից շահին Հայաստանում հրապուրում է ամեն ինչ (ընդունելությունները, բնությունը, ճանապարհները և այլն)՝ բացի խիստ կլիմայից: Օրագրում նշում է, թե այստեղ անընդհատ ուժգին անձրև է գալիս, և ամպրոպը, կարկուտն ու սելավը վնասել են Ախստաֆայի կամուրջը: Այդ պատճառով շահը Հայաստանում մնում է նախատեսվածից ավելի երկար, մինչև որ ստանում է կամուրջը վերականգնելու մասին հաղորդագրությունը: Երևանից նա շարժվում է դեպի Սևան: Սևանի ճանապարհի բարձունքից Երևանի համայնապատկերը ներկայացնելիս շահը հիանում է ձնապատ Արարատ լեռան գեղեցկությամբ: Հեղինակն այն անվանում է «Ադրի դաղ» և համեմատում Դեմավենո սարի հետ [1, 56]: Չնայած իր այցելության ժամանակ վաղ գարուն էր, և սարերում ու բարձունքներում՝ շատ ցուրտ, Սևանա լիճն ու Դիլիջանն այնպես են հիացնում ու գերում շահին, որ նա «պատրաստ է ընդմիջտ մնալ այստեղ» [1, 58]:

Ուշագրավ է Սևանա լճի (որը նա անվանում է Քոքջե) նրա պարկերավոր, գունեղ ու գեղարվեստական նկարագրությունը.

«دریاچه کوجه پیدا شد. آبی است در کمال پاکی و صفا در میانه کوههای کوتاه برفی واقع است»

که سر کوهها مثل یک دایره سفید برف دارد و از زیر برف شروع بسبز شده تا لب آب دریاچه تمام و منتهی بریگهای نرم ریزه میشود که در کنار آب واقع است و راه شوسه کمابیش از سی ذرع الی پنجاه ذرع فاصله بقدر چندین ورس از حوالی دریاچه میگردد. این دریاچه... هر قدر از صفای منظر و آثار حسن طبیعت که دست قدرت در این خاک و آب بروز داده و از لطایف صنع بودیعت نهاده است بنویسم

کم است» [1, 57]

(«Հայտնվեց Քոքջե լիճը՝ երկնագույն՝ ողջ մաքրությամբ ու թափանցիկությամբ, ընկած ոչ բարձր, ձյունոտ սարերի մեջտեղում, որոնց գագաթներին՝ որպես ձեւմակ օղակ, փոված է ձյունը, և ձյան տակից կանաչն է տարածվում մինչև ողջ լճի ափը, և ափը պատված է նուրբ ավազով, որ ջրի կողքին է, և խճուղին մոտավորապես երեսունից-հիսուն զար տարածությամբ լճից հեռու է: Այս լճում ... ինչքան էլ նկարագրեմ հիասքանչ բնության պատկերի մաքրությունն ու հուշարձանները, որոնցում զորեղ ձեռքը, բացահայտելով այս հողն ու ջուրը, ներդրել է արարման նրբագեղությունը, քիչ կլինի»):

Պատմատեղեկատվական առումով Մազաֆար-ադ-դին շահի ճամփորդական օրագիրը չի զիջում հուշագրային գրականության այլ երկերի և բովանդակում է բազմաթիվ ուշագրավ ու օգտական տեղեկություններ հայագիտության, հայ պատմագրության, քաղաքագիտության և ազգագրության համար:

Այսպիսով, Մոզաֆար-ադ-դին շահի օրագրերը՝ որպես պարսից մեմուարային գրականության նմուշներ, նշանակալի դեր կատարեցին ժամանակի պարսից գրականության զարգացման հարցում: Թերևս անգնահատելի է այս ժանրի դերը պարսից արձակի և ընդհանրապես գրական լեզվի պարզեցման գործում՝ հատկապես նկատի առնելով այն հանգամանքը, որ նոր ժամանակի պարսից արձակը բառացիորան խեղդվում էր պաճուճապատ և խրթնահնար ոճերի կարծրատիպերում:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. مظفرالدين شاه، سفرنامه مبارکه شاهنشاهی، تهران، 1943/1321، ص. 280.
2. Литературная энциклопедия в 11 т. Т.4. -М.: Изд-во Ком. Акад., 717 стб., 1930.
3. Шачкова В.А. “Путешествие” как жанр художественной литературы: вопросы теории. Вестник Нижегородского университета. № 3. Н.Новгород: ГОУ ВПО ННГУ им. Н.И. Лобачевского, СС. 277–281, 2008.
4. History of civilizations of Central Asia, Volume VI, Towards the contemporary period: from the mid-nineteenth to the end of the twentieth century, Coordinated by I. Iskender-Mochiri: UNESCO Publishing, 1033 p., 2005.

#### ДНЕВНИКИ ПУТЕШЕСТВИЙ МОЗАФАР-АД-ДИН ШАХА КАДЖАРА КАК ОБРАЗЕЦ ПЕРСИДСКОЙ МЕМУАРНОЙ ЛИТЕРАТУРЫ

*А.А. Мартиросян*

#### АННОТАЦИЯ

Статья посвящена исследованию путевого дневника Мозафар-ад-дина – последнего шаха Каджарской династии. Это произведение обладает всеми основными качествами жанра путевого дневника и на равне с созданными в тот же период другими произведениями мемуарного жанра сыграло знаменательную роль в деле развития современной персидской литературы. Это произведение рассматривается и как ценный источник информации, и как одна из составляющих художественной литературы.

**Ключевые слова:** Мозафар-ад-дин шах Каджар, дневник путешествий, мемуарная литература, Персия, путевые заметки.

**TRAVEL DIARIES OF MUZAFFAR AD-DIN QAJAR SHAH AS AN EXAMPLE  
OF PERSIAN MEMOIR LITERATURE**

*A. Martirosyan*

**SUMMARY**

The article investigates the travel diary Mozafari-al-Din, the last Shah of the Qajar dynasty. This product has all the essential qualities of the genre of a travel diary and, on par with the other works of memoir genre of the same period, played a great role in the development of modern Persian literature. This work is seen as a valuable source of information and as a component of fiction.

**Keywords:** Muzaffar ad-Din Shah Qajar, travel diaries, memoir literature, Persia, travel notes.

**ԳՈՅԱԿԱՆԻ ԱՐԺԵՔՈՎ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ  
ԱՐԴԻ ԹՈՒՐՔԵՐԵՆՈՒՄ**

***Ս. Մարտիրոսյան***

*martirosyansa@yandex.ru*

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Հոդվածում քննվում են արդի թուրքերենում լայնորեն գործառող գոյականի արժեքով բառակազմական երկու մասնակաղապարներ՝ վերջածանցման եղանակով՝ ըստ գործուն և ոչ գործուն ածանցների:

**Հիմնաբառեր**՝ գոյական, բայահիմք, ածանցման կաղապար, բայանուն, մասնակաղապար:

Թուրքերենը՝ որպես կցական լեզու, հարուստ է բառակազմական ածանցներով, ինչը թույլ է տալիս լինել անընդհատ զարգացման մեջ: Հատկապես առավել ճկուն և գործուն են անուն խոսքի մասեր կերտող բառակազմական ածանցները: Այս առումով կամենում ենք անդրադառնալ թուրքերենում ածանցամբ լայնորեն գործառող գոյականի բառակազմության միջոցներից<sup>1</sup> մեկին՝ ձևաբանական միջոցին:

Բառակազմության ձևաբանական միջոցը ենթադրում է բառակազմական հատուկ ձևայինների (ածանցների)՝ բառերի հետ համադրում, որի արդյունքում ստեղծվում են նոր բառեր (խոսքի մասեր):

Մենք քննելու ենք այս եղանակով **գոյական խոսքի մաս** կերտելու տարբեր իրողություններ, երբ ածանցման միջոցով ձևավորվում են գոյականի իմաստային չորս խմբեր՝

*ա) անձնանիշ գոյականներ,*

*բ) իրանիշ գոյականներ* (բացառությամբ՝ գործողության միջոցի և տեղանվան),

*գ) վերացական գոյականներ,*

*դ) սուբյեկտիվ գնահատման ձևեր*՝ գոյական անուններ՝ նվազական-փաղաքշական իմաստներով:

Գոյական ձևավորելու համար որպես սերող հիմք կարող են հանդես գալ անունը և բայը: Ըստ այդմ՝ դիտարկելու ենք **գոյականի արժեքով գոյական + ածանց և բայահիմք + ածանց** մասնակաղապարով ձևերը:

Ըստ հիմնական ձևային նկատմամբ ածանցի գրաված դիրքի՝ ածանցման կաղապարները բաժանվում են նախաածանցավորների և վերջածանցավորների: Ինչպես հայերենում, այնպես էլ թուրքերենում վերջածանցավոր

<sup>1</sup> Թուրքերենում գոյականի բառակազմության միջոցներն են *ձևաբանականը*, *շարահյուսա-ձևաբանականը* /բառաբարդման տարբեր տեսակներ/, *բառա-շարահյուսա-ձևաբանականը* /այլ խոսքի մասերի գոյականացումը/ և *պատճենումը*:

կադապարները զգալիորեն գերակշռում են նախածանցավորներին, ուստի մեր քննության համար ուշագրավ են վերջածանցավորները:

### ԳՈՅԱԿԱՆԻ ԱՐԺԵՔՈՎ ՎԵՐՋԱԾԱՆԳԱՎՈՐ ԿԱԴԱՊԱՐՆԵՐ

#### ա) Գոյական + վերջածանց մասնակադապարով

-ci, -ci, -cu, -cü (ձայնավոր և ձայնեղ բաղաձայնով ավարտվող հիմքերից հետո) և -ci, -ci, -cu, -cü (խույլ բաղաձայնով ավարտվող հիմքերից հետո): Այս ածանցը որպես կանոն կցվում է այն հիմքերին, որոնք մատնանշում են զբաղմունքի, գործելու, տեղի, նպատակի առարկա կամ օբյեկտ, ինչպես նաև զբաղմունքի անվանում: Ձևավորում են գոյական անուններ՝ հետևյալ իմաստներով՝

1. Որևէ արհեստով կամ արվեստով զբաղվող անձանց անուն, ինչպես **av**՝ «որս» + **ci=avci**՝ «որսորդ», **demir**՝ «երկաթ» + **ci=demirci**՝ «դարբին կամ երկաթագործ», **kuyum**՝ «ակնագործ, ոսկերիչ» + **cu=kuyumcu**՝ «ոսկերչական իրեր /ակնեղեն/»:

2. Որոշակի քաղաքական կամ հասարակական համոզմունքներ ունեցող, որևէ մեկի կամ որևէ ուղղության հետևորդը հանդիսացող անձանց, ինչպես **madde**՝ «նյութ, մատերիա» + **ci=maddecı**՝ «մատերիալիստ», **cumhuriyet**՝ «հանրապետություն» + **ci=cumhuriyetci**՝ «հանրապետական», **şaka**՝ «կատակ» + **ci=şakacı**՝ «զավեշտաբան», **inat**՝ «կամակորություն» + **ci=inatçı**՝ «կամակոր»:

3. Անձի անուն, որը ժամանակավորապես գտնվում է մի դրության մեջ՝ կապված սերող հիմքի իմաստի հետ, ինչպես **yol**՝ «ճանապարհ» + **cu=yolcu**՝ «ուղևոր», **dâva**՝ «հայց» + **ci=dâvacı**՝ «հայցորդ», **grev**՝ «գործադուլ» + **ci=grevci**՝ «գործադուլավոր»:

Եթե նախահիմքը իզաֆետի<sup>2</sup> երկրորդ ձևով կազմված բարդ բառ կամ բառակապակցություն է, ապա **-ci** ածանցի կցման դեպքում իզաֆետի պատկանելիության ածանցը, որպես կանոն, սղվում է, ինչպես **su yolu**՝ «ջրմուղ» + **cu=su yolcu**՝ «ջրմուղագործ»[1]:

-daş, -deş, -taş, -teş ածանցներով ձևավորվում են *անձանց անուններ*, որոնք որևէ տեղ համագործակցում են, ունեն կենսական կամ սոցիալական պայմանների ընդհանրություն, ինչպես **yol**՝ «ճանապարհ» + **daş=yoldaş**՝ «ուղեկից», **çağ**՝ «դար, ժամանակաշրջան» + **daş=çağdaş**՝ «ժամանակակից», **kol**՝ «ձեռք» + **daş=koldaş**՝ «օգնական»:

**-li, -li, -lu, -lü** ածանցային տարբերակներով ձևավորվում են հիմնականում ածական անուններ, սակայն այս ածանցով կազմվում են նաև գոյականներ՝ արտահայտելով հետևյալ իմաստները՝

– քաղաքացիության, ծննդավայրի, հիմնական բնակության վայրի,

<sup>2</sup> Իզաֆետը գոյականների կապակցությունն է, ինչը հատուկ է արևելյան լեզուներին: Թուրքերենում առկա է իզաֆետի՝ գոյականների կապակցության երեք տիպ:

երկրամասի, երկրի, քաղաքի, բնակավայրի և այլն,<sup>3</sup> ինչպես **Çin**՝ «Չինաստան»+**li=Çinli**՝ «չինացի», **Isveç**՝ «Շվեդիա»+**li=Isveçli**՝ «շվեդացի»:

– իրենց գործունեությամբ որևէ ուսումնական հաստատության, կազմակերպության, կուսակցության և այլնի հետ կապված, ինչպես **mektep, okul**՝ «դպրոց»+**li, lu= mektepli, okullu**՝ «դպրոցական», **parti**՝ «կուսակցություն»+**li=partili**՝ «կուսակցական»:

– կազմվում են էթնիկ անունների հետ կապված, ինչը, սակայն, ներկայումս գործուն չէ, ինչպես **Selçuk**՝ «սելջուկ»+**lu=Selçuklu**՝ «սելջուկ», **Osman**՝ «օսման»+**li=Osmanlı**՝ «օսմանցի»:

-**li** ածանցը լայնորեն կիրառվել և կիրառվում է մականուններ, կեղծանուններ ձևավորելիս, ինչպես նաև՝ ազգանունների կապված ծննդավայրի, բնակավայրի հետ, ինչպես **Edirneli Nazmi**՝ Նազմի **Էդիրնելի** (16-րդ դարի թուրք բանաստեղծ), **Uzunçarşılı İsmail Hakkı Özlü**՝ Իսմայիլ Հաքը (թուրք պատմիչ):

-**lık, -lik, -luk, -lük** գործուն ածանցային տարբերակներով կազմվում են՝

ա) բնության հետ կապված տեղանուններ, ինչպես **çam**՝ «սոճի»+**lık=çamlık**՝ «սոճուտ», **gül**՝ «վարդ»+ **lük=güllük**՝ «վարդանոց»,

բ) որևէ տարածք՝ նախատեսված առարկայի կամ կենդանու համար, ինչպես **saman**՝ «ծղոտ»+ **lık=samanlık**՝ «ծղոտի պահեստ», **tavuk**՝ «հավ»+**luk=tavukluk**՝ «հավանոց», **kitap**՝ «գիրք»+**lık=kitaplık**՝ «գրադարան»,

գ) առարկաների անուններ՝ ըստ սերող հիմքի իմաստի, ինչպես **göğüs**՝ «կուրծք» +**lük=göğüslük**՝ «զոզանոց» /երեխայի/, **göz**՝ «աչք»+ **lük=gözlük**՝ «ակնոց», **ağız**՝ «բերան»+ **lık=ağızlık**՝ «ծխամորձ»,

դ) հաստատությունների և պաշտոնների անվանումներ, ինչպես **elçi**՝ «ղեսպան»+**lık=elçilik**՝ «ղեսպանատուն», **direktör**՝ «տնօրեն»+ **lük=direktörlük**՝ «տնօրինություն»[2]:

-**cık, -cik, -cuk, -cük, -çık, -çik, -çuk, -çük** ածանցը, կցվելով գոյականներիին, հաղորդում է նվազական-փաղաքշական երանգներ,<sup>4</sup> ինչպես **kapı**՝ «դուռ»+**cık=kapıcık**՝ «դռնակ», **ev**՝ «տուն»+ **cık=evcık**՝ «տնակ», **kuş**՝ «թռչուն»+**cuk=kuşcuk**՝ «թռչնակ». կարող է կցվել նաև հատուկ անուններին, ինչպես **Alicik, Mehmetçik**:

<sup>3</sup> Ձևաբանական միջոցի հետ մեկտեղ օգտագործվում է նաև բառային միջոցը՝ ցույց տալու համար ազգային պատկանելիությունը, ինչպես՝ **Rus**՝ «ռուս», **Türk**՝ «թուրք», **Fransız**՝ «ֆրանսիացի», բայց՝ **Rusyalı**՝ «ռուսաստանցի/ռուսաստանաբնակ», **Türkiyeli**՝ «թուրքիացի/թուրքիայաբնակ», **Fransızlı**՝ «ֆրանսիացի/ֆրանսաբնակ» և այլն: Այլ օրինակներ՝ **şehirli**՝ «քաղաքաբնակ», **köylü**՝ «գյուղացի/ գյուղաբնակ», **dağlı**՝ «լեռնցի/լեռնաբնակ», **adalı**՝ «կղզեբնակ», **nereli?**՝ «որտեղացի...», **buralı, yerli**՝ «տեղացի/տեղաբնակ»:

<sup>4</sup> Ստանալով պատկանելիության ածանց՝ այս ածանցի փաղաքշական երանգներն ավելի են ընդգծվում, ինչպես **babacığım**՝ «սիրելի հայրիկ», **anneciğim**՝ «սիրելի մայրիկ»:

**-cağiz, -çağiz, -cağaz, -çağaz, -ceğiz, -çeğiz, -ciğiz, -ciğiz, -cuğuz, -cüğüz** գործուն ածանցային տարբերակները բաղկացած են **-cağ, -ciğ** (<cağ «չափ») փաղաքշական ածանցի ձևամասնիկից, ինչն էլ բաղադրվել է **-iz, -az** ձևամասնիկով, որը որոշ թյուրքական լեզուներում օգտագործվում է գոյականների փաղաքշական ձև կազմելու համար [6]: Այս ածանցը նման ձևով օգտագործվում է նաև թուրքերենում, ինչպես **adamcağiz, adam** «մարդ»+**cağaz=adamcağaz** «խեղճ մարդ խղճուկ», **kadıncağiz, kadın** «կին»+**cağaz=kadıncağaz** «խեղճ կին խղճուկ», **elceğiz, el** «ձեռք»+ **ciğiz=elciğiz** «թաթիկ»:

**բ) Բայահիմք + վերջածանց մասնակադասարով**

Այս մասնակադասարով բայահիմքերից վերջածանցմամբ ձևավորվում են բայանուն գոյականներ[2]:

**-ış-ış-üş-üş** ածանցը ժամանակակից թուրքերենի առավել գործուն ածանցներից է: Այս ածանցային տարբերակների միջոցով կազմվում են գոյականներ հետևյալ իմաստներով՝

– գործողության ձև, միջոց, միևնույն ժամանակ գործընթաց, ավելի սակավ՝ գործողության արդյունք, ինչպես **geliş**՝ «քայլվածք, ժամանում», **gölüş**՝ «ծիծաղ», **doğuş**՝ «ծնունդ», **Ay doğuşundan, insan yürüyüşünden belli olur** «Լուսինն իր ծնունդով, իսկ մարդն իր քայլվածքով է ճանաչվում»:

– գործողության առարկա, արդյունք, ավելի սակավ՝ գործողության ձև, միևնույն ժամանակ անվանում, ինչպես **giyiniş**՝ «հագնվելու ոճ, հագուստ», **alış**՝ գնում, նաև գոյական անունների զուգադրական ձևեր, ինչպես՝ **alış-veriş**՝ «առևտուր», նաև ժխտական բայահիմքերից, ինչպես՝ **bilmeyiş**՝ «չիմացություն»:

**-(i)m, -(i)m, -(u)m, -(ü)m** գործուն ածանցի միջոցով կազմվում են բայանուններ հետևյալ իմաստներով՝

– գործողության անվանում, արդյունք, ինչպես **bölüm**՝ «բաժանում, բաժին», **eğitim**՝ «կրթություն», **seçim**՝ «ընտրություն» և այլն,

– որևէ բանի չափ, քանակ, գործողության արդյունք կամ անվանում, ինչպես **atım**՝ «կրակոց» և այլն:

**-gi, -gi, -gu, -gü** (ձայնավոր և ձայնեղ բաղաձայնով ավարտվող հիմքերից հետո), **-ki, -ki, -ku, -kü** (խուլ բաղաձայնով ավարտվող հիմքերից հետո) ածանցային տարբերակներով կազմվում են բայանուններ, որոնք մատնանշում են գործողության միջոց, գործիք, գործողության անվանում նյութական և վերացական իմաստներով, ինչպես նաև գործողության արդյունք, ինչպես **keski**՝ «փոքրիկ կացին, կտրիչ», **silgi**՝ «ջնջոց», **uyku**՝ «քուն», **vurgu**՝ «շեշտ», **vergi**՝ «հարկ» և այլն:

**-(i)nti, -(i)nti, -(u)ntu, -(ü)ntü** ածանցային տարբերակներով կազմվում են բայանուններ, որոնք մատնանշում են գործողության անվանում կամ արդյունք, ինչպես **gezinti**՝ «գրեսանք», **aknti**՝ «հոսանք», **karnti**՝ «բեկոր» և այլն:

**-ma, -me** ածանցային տարբերակներով կազմված գոյականները մատ-

նանշում են գործողության անուն, ընթացք, արդյունք, առարկա, գործիք, երբեմն նույնիսկ այս իմաստներից մի քանիսը՝ միևնույն բառի մեջ: Այս ածանցի միջոցով, այսպիսով, կազմվում են ինչպես բայական, այնպես էլ բայաձանցյալ անուններ, ինչպես **basma**՝ «ճնշում, տպագրություն, տպագրված», **çikma**՝ «ելք, ելուստ, գյուտ, դուրս եկող», **bölmə**՝ «բաժանում, բաժանմունք, սեկցիա» և այլն: Հազվադեպ **ma-** ով կազմված անունները ձեռք են բերում միայն մեկ, քարացած իմաստ, ինչպես **donanma**՝ «նավատորմ», **döşeme**՝ «հատակ, կահույք» և այլն: Այս ձևությամբ բաղադրված բառերը նաև ուտեստների անվանումներ են, ինչպես **dondurma**՝ «պաղպաղակ», **kızartma**՝ «տապակա», **bulama**՝ «խաղողի հյութ» և այլն:

**-man, -men** ածանցը մինչև անցյալ դարի 30-ական թթ. գործուն չէր և պահպանվել է սահմանափակ թվով գոյական և ածական անուններում, ինչպես **kocaman**՝ «հսկա», **karaman**՝ «թուխ», **değirmen**՝ «ջրաղաց» և այլն:<sup>5</sup> Մակայն անցյալ դարի կեսերին իրականացված լեզվական բարեփոխումների արդյունքում այս ածանցը արհեստականորեն վերածնվեց և նրա միջոցով հիմնականում բայահիմքերից, ստեղծվեցին մի շարք գոյականներ, որոնք ամրագրվեցին գրավոր-գրական լեզվում՝ մատնանշելով գործողություն կատարող անձի անուն, ինչպես **öğretmen**՝ «ուսուցիչ», **seçmen**՝ «ընտրող», **uçman**՝ «օդաչու», **uzman**՝ «մասնագետ» և այլն:

Կան մի խումբ ածանցներ, որոնք այժմ նվազ արդյունավետ են նոր բառեր կերտելիս: Այսպես, **-mak, -mek** ձևամասնիկը՝ որպես անվանական բառակազմության ածանց, պահպանվել է քիչ թվով գոյական անուններում, որոնք մատնանշում են գործողության գործիք, առարկա կամ արդյունք, ինչպես **çomak**՝ «մահակ», **yumak**՝ «կծիկ», **ilmek**՝ «ժապավեն»: Մի շարք դեպքերում այս ածանցով բաղադրված ձևերն ունեն թե՛ գոյականական և թե՛ բայական (բայի անորոշ ձև) կիրառություն, ինչպես **ekmek**՝ «հաց» և «ցանել», **yemek**՝ «սնունդ, ճաշ» և «ճաշել» և այլն:<sup>6</sup>

**-mak**-ով ձևը, որը կիրառվում է որպես բայական սկզբնաձև, մյուս բայանուններից (**-ma, -me, -maklık, -meklik, -ış, -iş, -uş, -üş** և այլն) տարբերվում է նրանով, որ չի կապակցվում պատկանելիության ածանցների, ինչպես նաև հոգնակիակերտ ածանցների հետ և չունի սեռական հոլովաձև (ստացական): Առանձին բառերում պահպանվել է **-mak, -mek** ածանցային տարբերակների ոչ արդյունավետ հնչունական տարբերակը՝ **-mik, -mik, -muk, -mük** ձևերով,

<sup>5</sup> **-man** ածանցի հնչյունական տարբերակ է հանդիսանում **-ban (-pan)** ածանցը, ինչպես **şaklaban**՝ «խեղկատակ», **balaban**՝ «հսկա»: Բացառված չէ նաև այն, որ այս ածանցը հանդիսանում է թուրքական **-man** և պարսկական **-ban, -van** ածանցների բաղադրության (կոնտամինացիայի) արդյունք, ինչպես **bahçıvan**՝ «այգեպան», որը փոխառվել է պարսկերենից:

<sup>6</sup> Այս ածանցը թուրքերենում, ինչպես նաև թուրքական լեզուների օղուզական այլ խմբերում ավելի արդյունավետ օգտագործվում է որպես բայական սկզբնաձևի ցուցիչ, ինչպես **yazmak**՝ «գրել», **okumak**՝ «կարդալ», **gelmek**՝ «գալ» և այլն:

որոնցով կազմվում են գոյականներ, որոնք, որպես կանոն, մատնանշում են գործողության արդյունք կամ առարկա, ինչպես **yasmik**՝ «ոսպ», **karmuk**՝ «կարթաձող», **kiymik**՝ «տաշեղ» և այլն: Որոշ բայափիմքեր **-a**, **-e** և **-mak**, **-mek** ածանցների հետ ձևավորում են գոյականներ՝ տարբեր իմաստներով, սակայն սա այնքան էլ գործուն չէ ժամանակակից թուրքերենում, ինչպես **tut+a+mak**՝ «բռնակ», **kaç+a+mak**՝ «ապաստան», **bas+a+mak**՝ «սանդղիկ»[3]:

**-maca**, **-mece** ածանցային տարբերակներով կազմվում են գոյականներ, որոնք մատնանշում են գործողության անուն, արդյունք, առարկա, ինչպես **boyamaca**՝ «նկարագարդման գիրք», **bulmaca**՝ «խաչբառ», **düşünmece**՝ «գլուխկոտրուկ»:

**-maç**, **-meç** ձևերը **-maca**, **-mece** ածանցների կրճատ տարբերակներն են: Մրանք հիմնականում պահպանվել են այնպիսի գոյական անուններում, որոնք մատնանշում են գործողության առարկա կամ արդյունք, ոչ հաճախ գործողության անվանում, ինչպես **bulamaç**՝ «ալաղի», **yanılmaç**՝ «շուտասելուկ», **yirtmaç**՝ «կտրվածք»: Այս տարբերակները, կցվելով այնպիսի բայափիմքերի, որոնք ավարտվում են **n**-ով, հանդես են բերում այլ հնչյունական տարբերակ՝ **n>m / -maç>-baç**, ինչպես **saklamaç**՝ «պահմտոցի», **dolamaç**՝ «լաբիրինթոս»:

**-i**, **-i**, **-u**, **-ü** ածանցային տարբերակները հիմնականում ձևավորում են բայանուններ, որոնք մատնանշում են գործողության վիճակի անվանում, գործողության սուբյեկտ, առարկա, արդյունք, առարկայի անվանում, ավելի սակավ՝ աշխարհագրական ուղղություն, ինչպես **korku**՝ «վախ», **kazi**՝ «պեղում», **yazi**՝ «գիր, գրություն, հոդված», **sayı**՝ «թիվ, հաշիվ, համար», **yapı**՝ «շենք, կառույց», **bati**՝ «արևմուտք», **doğu**՝ «արևելք»[4]:

**-(i)k**, **-(i)k**, **-(u)k**, **-(ü)k** ածանցային տարբերակները ձևավորում են բայանուններ, որոնք մատնանշում են գործողության անվանում, արդյունք, գործընթաց, գործողության միջոց կամ առարկա, ինչպես **öksürük**՝ «հագ», **aksirik**՝ «փռշտոց», **ısirik**՝ «խայթոց»:

**-ak**, **-ek** ( **>-kak**, **-gak** ) ածանցային տարբերակներով կազմված բայանունները մատնանշում են տեղանուններ, գործողության միջոց, սուբյեկտ, ինչպես **konak**՝ «իջևանատուն», **batak**՝ «ճահճուտ», **durak**՝ «կանգառ», **biçak**՝ «դանակ», **korkak**՝ «վախկոտ»: Երբեմն տարբերակներով կազմվում են նաև այնպիսի բառեր, որոնք ունեն թե՛ ածականական, թե՛ գոյականական իմաստ, ինչպես **çatlak**՝ «ծակված, պայթած» (ած.) և «ճեղք, ճաք» (գոյ.), **buruşuk**՝ «ծալք, կնճիռ» (գոյ.) և «ծալված, կնճռոտված» (ած.)[5]:

**-ga**, **-ge**, **-ka**, **-ke** ածանցային տարբերակները պահպանվել են միայն որոշ գոյականներում, որոնք մատնանշում են գործողության արդյունք, միջոց, ինչպես նաև որոշ միջատների, թռչունների և կենդանիների անվանումներում, ինչպես **süprüge**՝ «ավել», **damga**՝ «կնիք», **yorga**՝ «լուսան», **çekirge**՝ «մորեխ», **karga**՝ «ագռավ»:

**-(i)n**, **-(i)n**, **-(u)n**, **-(ü)n** ածանցային տարբերակները ծագել են **-gin**

ածանցից, որոնք մատնանշում են գործողության անվանում, գործընթաց, ավելի սակավ՝ գործողության արդյունք, առարկա, ինչպես **akın**՝ «հարձակում», **yayın, basin**՝ «տպագրություն»:

**-(i)ncə, -(i)ncə, -(u)ncə, -(ü)ncə** ածանցային տարբերակներով հիմնականում ձևավորվում են բայանուններ, սակավ դեպքերում՝ ածականներ, որոնք մատնանշում են գործողության անվանում կամ արդյունք, ինչպես **ödünç**՝ «վարկ», **sevinc**՝ «ուրախություն», **övänc**՝ «պարծենկոտություն»:

**-ti, -ti, -tu, -tü** ածանցային տարբերակներով կազմված բայանունները, որպես կանոն, մատնանշում են գործողության անվանում: Բավականին շատ են բնաձայնական երևույթներին վերաբերող բառերը, ինչպես **bağır**՝ «կանչ», **fısıltı**՝ «շրշուն», **gürültü**՝ «աղմուկ»:

**-gaç, -geç; -gic, -gic, -guç, güç / -kaç, -keç; -kic, -kic, -kuç, -küç** ածանցային տարբերակներով կազմված բայանունները մատնանշում են գործողության միջոց կամ առարկա, գործողության անվանում կամ սուբյեկտ, ինչպես **süzgeç**՝ «ստիչ», **başlangıç**՝ «նախաբան», **dalgıç**՝ «ջրասույզ», **yargıç**՝ «դատավոր»:

**-malik, -melik**-ով կազմվում են գոյականներ՝ «գործողության ընթացք, հնարավորություն» իմաստներով, ինչպես **küçülmelik**՝ «փոքրացում», **okşamalık**՝ «քնքշանք» և այլն:

Որոշ վաղուց անարդյունավետ դարձած ածանցներ թուրք լեզվաբանների կողմից օգտագործվում են արհեստական կերպով նոր բառեր և տերմիններ կերտելու համար: Դրանց թվին են պատկանում, օրինակ, **-(i)t, -(i)t, -(u)t, -(ü)t** ածանցային տարբերակները, որոնք հանդիպում են շատ քիչ թվով բառերում, ինչպես **geçit**՝ «անցում», **bağıt**՝ «պայմանագրի կնքում», **kesit**՝ «կտրվածք», **-v; -av, -ev**-ով, որոնցով ստեղծվել են թուրքերենին ոչ այնքան էլ բնորոշ բառեր, ինչպես **söylev**՝ «ճառ», **ödev**՝ «պարտք», **görev**՝ «պարտականություն», **-i; -il, -il, -ul, -ül; -al, -el**-ով՝ մի քանի բառերում, ինչպես **çökül**՝ «նստվածք», **kurul**՝ «խորհուրդ, կազմակերպություն», **okul**՝ «դպրոց», **çoğul**՝ «հոգնակի թիվ», **-y; -ay, -ey**-ով՝ մի շարք նոր բառեր, ինչպես **toplay**՝ «հավաք», **olay**՝ «վիստ, իրողություն», **öney**՝ «ֆասադ»:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Nurettin Koç* Yeni Dilbilgisi, 1, 2, 3, Ankara 1998. sf.96–97.
2. *Hencirmen M.* Yeni dilbilgisi yabancılar için, Ankara, 1999. sf. 119–120
3. *Ergin M.* Türk dilbilgisi, Sofya, 1967, sf. 175–176.
4. *Кононов А.Н.* Грамматика современного турецкого литературного языка, М.-Л. 1956. ст. 102–105.
5. *Кононов А.Н.* Очерк истории изучения турецкого языка, Л., 1976. С. 117.
6. *Dilaçar A.* Dili, diller ve dilcilik, Ankara, 1968.
7. *Щербак А.М.* Очерки по сравнительной морфологии тюркских языков, Ленинград, 1977.
8. *Dilaçar A.* Ek dil kuramı, Ankara, 1964.
9. *Самойлович А.Н.* Краткая учебная грамматика османско- турецкого языка, Л., 1925.
10. *Гордлевский В.А.* Грамматика турецкого языка. Морфология и синтаксис, М., 1928.
11. *Emre A. C.* Türkçede isim temelleri, Istanbul, 1943.

**СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫЕ ФОРМЫ НА СОСТАВЛЕНИЯ  
СУЩЕСТВИТЕЛЬНОГО В СОВРЕМЕННОМ ТУРЕЦКОМ ЯЗЫКЕ**

*C. Мартиросян*

**АННОТАЦИЯ**

В данной статье рассматриваются две словообразовательные микроформы, со свойствами существительного и широко функционирующие в современном турецком языке, путем суффиксации по принципу активных и не активных суффиксов.

**Ключевые слова:** существительное, основа глагола, форма аффиксации, отглагольная имя, микроформа.

**WORD-FORMATION NOUN MODELS IN MODERN TURKISH**

*S. Martirosyan*

**SUMMARY**

The article discusses the word-formation of two models, with the noun's value that are widely functioning in Modern Turkey with the help of suffixation in accordance with active and inactive affixes.

**Keywords:** noun, verb stem, affixation model, verbal noun, micro form.

**ԿԱՐՈՏ ՀՈՒՅԶԻ ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

**Շ.Հ. Մելիք-Աղայան**

**ԱՍՓՈՓՈՒՄ**

Հոդվածը առնչվում է անգլերենում կարոտ հույզի իմաստային առանձնահատկություններին: Արծարծվում է հույզի միջուկը և իմաստային դաշտը՝ նաև պատկերավոր թեգատրուսի օգնությամբ: Փորձ է կատարվում վերհանել այս հույզի դրսևորման համընդհանրությունները, ինչպես նաև տարբերությունները:

**Հիմնաբառեր՝** կարոտ, ընկճվածություն, պատկերավոր թեգատրուս, բառիմաստ, ընդհանրություն, տարբերություն:

Իրականության լեզվաբանական մեկնումը անքակտելիորեն կապված է լեզվի մարդակենտրոն առանձնահատկության հետ: Լեզվի մարդակենտրոն մոտեցումը ենթադրում է մեզ շրջապատող այս կամ այն առարկային կամ երևույթին մարդու կողմից արժևորելու, առանձնացնելու, սեփական մոտեցումը դրսևորելու միտում: Հույզերի դրսևորմամբ էլ առավել ցայտուն է առանձնանում սույն մոտեցումը. տարբեր լեզուներում լեզվակիրները տարբեր հույզեր են առանձնացնում: Սա լեզվամտածողության ակնառու օրինակ է:


Մարդակենտրոն լեզվաբանության զարգացումը բնականոն կերպով զարգանում էր այն բոլոր գիտությունների հետ, որոնց խնդրո առարկան մարդն է: Այսպիսով, առաջացան բազմաթիվ միջգիտական ուղղություններ, որոնցից թերևս առանցնացնենք հոգելեզվաբանությունը [Шаховский, 1982]: Հույզերը, կարծում ենք, հավասարապես պատկանում են և՛ լեզվաբանության, և՛ հոգեբանության ոլորտներին. տարբեր են, սակայն, հետազոտման մոտեցումները: Մարդակենտրոն լեզվաբանության, ինչպես նաև հոգեբանության բուն զարգացումը առաջնային պլան մղեցին հույզերի ուսումնասիրությունը:

Այսպես, հույզերի ուսումնասիրվող հարացույցը դիտարկվում է որպես փակ բառիմաստային միկրոհամակարգ, որը բնորոշվում է բառիմաստային խմբի կազմակերպման սահմանմամբ, այն է բառերի մի խումբ, որոնք ունեն մոտ, նմանատիպ կամ հակադիր իմաստներ, որոնցով համալրվում են տվյալ բառիմաստային միավորի երանգները և տարբերակիչ հատկանիշները [Филин, 1982]:


Հույզերի հետազոտության շրջանակը լեզվաբանության մեջ ունի իր ուրույն խնդիրները և բարդ է այնքանով, որքան այն առարկայանացված չէ և արտահայտում է խոսողի սուբյեկտիվ զգացմունքային դաշտը: Հույզերը կարող են իրենց լեզվական արտահայտումը գտնել տարբեր խոսքի մասերով: Որպես հետազոտության առարկա դիտարկում ենք *կարոտ*

իմակը՝ տարբեր բառային միավորների կազմում՝ վեհանելով սույն հույզի իմաստային առանձնահատկությունները: Նախ և առաջ, բախվում ենք վերոնշյալ լեզվամտածողությանը առնչվող խնդիրների, երբ կախված լեզվից՝ տարբեր են *կարոտ* բառի իմակները: Ըստ Բարաթյանի խմբագրությամբ հայերեն-անգլերեն բառարանի՝ *կարոտ* հույզը անգլերենում ներկայացված է մի քանի բառով՝ melancholy, depression, yearning, anguish, indigence, homesickness, dolefulness, nostalgia և այլն: Սամանգուլյանի և Հովհաննիսյանի խմբագրությամբ անգլերեն-հայերեն բառարանը depression բառը թարգմանում է որպես *ընկճվածություն, ճնշված հոգեկան վիճակ*. այս հատկանիշները կհայտնաբերենք նաև ստորև՝ սույն իմակի բառիմաստային դասակարգման ժամանակ: Merriam-Webster բառարանը սահմանում է depression-ը որպես «1. տխուր լինելու վիճակ, 2. լուրջ բժշկական վիճակ, երբ անձն իրեն շատ տխուր, վիատված ու չարժևորված է զգում և հաճախ չի կարող ապրել նորմալ կյանքով»: Օքսֆորդի բառարանը որպես առաջնային իմաստ նշում է հետևյալը՝ «սուր վիատվածության և ընկճվածության զգացմունքներ»: Երկրորդ իմաստը, ինչպես և Merriam-Webster բառարանում, նշում է այս բառի՝ հոգեբուժության ոլորտին վերաբերող իմաստը: Տեսնում ենք, որ իմակները հայերենում և անգլերենում բավական հեռվացած են: Պարզելու համար, թե արդյոք depression-ը *կարոտ* հույզի միջուկային իմակն է, դիմենք պատկերավոր թեզաուրուսի օգնությանը:

Պատկերավոր թեզաուրուսը մի նորարարական առցանց հավելված է, որը ցույց է տալիս բառերի միջև եղած կապը: Այն իրենից ներկայացնում է ինտերակտիվ բառարան և թեզաուրուս, որը ստեղծում է բառի քարտեզը՝ ցույց տալով բառիմաստները և իմաստապես առնչվող բառերը: Պատկերավոր թեզաուրուսը պատկերում է ավելի քան 145000 անգլերեն բառ և 115000 իմաստ: Ստորև պատկերում ենք բառարանում որպես *կարոտ* բառի թրագմանություն նշված առաջին չորս բառերի պատկերավոր կապերը:




Նկար 1. Melancholy բառի կապերը




Նկար 2. Depression բառի կապերը

Այս երկու նկարներից երկուսն է, որ depression բառի, այսինքն՝ հույզի կապերը քանակապես գերազանցում են melancholy բառի կապերը: Սակայն դիտարկենք նաև բառարանում որպես *կարոտ* բառի երկրորդ իմաստ նշված բառերի՝ anguish-ի և yearning-ի կապերը:



Նկար 3. Anguish բառի կապերը



Նկար 4. Yearning բառի կապերը

Ինչպես տեսնում ենք, այս երկու բառերը իմաստային ավելի քիչ կապեր են հայտնաբերում՝ ի համեմատ melancholy-ի և depression-ի: Anguish-ը և yearning-ը ավելի նեղ իմաստային դաշտ ունեն և, այսպիսով, չեն կարող հանդես գալ որպես *կարոտ* հույզի միջուկ: Մա մեզ թույլ է տալիս որպես *կարոտ* իմակի միջուկ անգլերենում դիտարկել depression-ը: Անգլերենին բնորոշ է բարձր բազմիմաստությունը, և տարօրինակ չէ, որ depression բառն ունի բազում իմաստներ: Մենք կքննարկենք միայն այն իմաստները, որոնք կապված են հույզերի հետ՝ անտեսելով բառի երկրաբանական, տնտեսական և այլ իմաստները: Այսպես, ըստ [vocabulary.com](http://vocabulary.com) առցանց բառարանի՝ depression բառն ունի հետևյալ իմաստները՝ կապված հույզերի հետ:

1. Մտավոր իրավիճակ, որը բնութագրվում է ոչ ադեկվատ վարքագծով և գործունեության նվազմամբ՝ պայմանավորված ընկճվածությամբ:

Ենթատեսակները ութն են.

ա. սուր ճնշվածություն, որը բնութագրվում է լացակումած տխրությամբ և ոչ ռացիոնալ վախերով (melancholia),

բ. ընկճվածության վիճակ (blue devils, blues, megrims, vapors, vapours),

գ. ներվային ընկճվածության վիճակ (blue funk, funk),

դ. մռայլ և ընկճված լինելու բնորոշիչ հակվածություն (melancholy),

ե. (ֆորմալ) սուր ընկճվածություն (slough of despond),

զ. թեթև ընկճվածության վիճակ (low spirits),

է. թախճի ընկճված վիճակ (dejection),

ը. թեթև ընկճված վիճակի ոչ ֆորմալ արտահայտում (dumps, mopes):

2. Թախիճի և անվստահության տխուր զգացմունքներ՝

ա. մարդու բարոյական վիճակի թուլացումից բխող ընկճվածություն (demoralisation, demoralization),

բ. որևէ բան կառավարելու անկարող լինելու զգացում (helplessness),

զ. վիատված, հուսահատ և հուսալքված լինելու զգացում (despondence, despondency, disconsolateness, heartsickness),

դ. ճնշված լինելու զգացում (oppression, oppressiveness),

ե. ոչ նորմալ ընկճվածություն և դժգոհություն (dysphoria),

զ. ծանր ուժին ընդդիմանալու զգացում (weight).

3. ընկճվածության և անհեղոնիայի այնպիսի մի սուր զգացում, որ կլինիկական միջամտության կարիք զգացվի՝

ա. կլինիկական ընկճվածության վիճակ, երբ անձը դրսևորում է գրգռվածություն և անհանգստություն (agitated depression),

բ. սուր և առաջխաղացող ընկճվածություն փոքրահասակ երեխաների մոտ, ովքեր կորցնում են իրենց մորը և փոխարինող չունեն (anaclitic depression),

գ. մեղմ քրոնիկական ընկճվածություն (dysthymia, dysthymic depression),

դ. ընկճվածության մի վիճակ, երբ այն առաջացնող որևէ ակնհայտ պատճառ չկա (endogenous depression),

ե. ընկճվածության ոչ հարիր վիճակ, որը առաջ է գալիս անձի կյանքի իրադարձություններից ելնելով (տարբերակել սովորական վշտից) (exogenous depression, reactive depression),

զ. (հոգեբուժության մեջ) ընկճվածության վիճակ բոլոր դասական ախտանիշներով (անհեղոնիա և լիթարգիա և քնի խանգարում ու վիտավտվածություն և հիվանդահին մտքեր ու անպետք լինելու հույզեր և երբեմն ինքասպանության փորձ), սակայն առանց օրգանական դիսֆունկցիայի (major depressive episode),

է. եզրույթ, որն օգտագործվում է ոչ հոգեկան ցանկացած ընկճվածության վիճակի վերաբերյալ (neurotic depression),

ը. ընկճվածության այնպիսի մի սուր վիճակ, երբ անձը կորցնում է կապը իրականության հետ և տառապում է մի շարք ֆունկցիոնալ վնասվածքներից (psychotic depression),

թ. կլինիկական ընկճվածության մի վիճակ, երբ անձը լեթարգիական է և դանդաղ է գործում (retarded depression),

ժ. որևէ լուրջ ընկճվածային իրադարձություն, որը կապվում է կլինակտերիկ շրջանի հետ (involutional depression),

ի. որևէ լուրջ ընկճվածության վիճակ, որը տեղի է ունենում առանց մանյակային փուլի, որը տեղի է ունենում երկբևեռ խանգարման դասական դեպքում (unipolar depression):

Ինչպես տեսնում ենք վերոնշյալ դասակարգումից, անգլերենում depression բառի իմաստներից երեքը վերաբերում են հույզերին: Հատկանշական է, որ անգլերենում սա այն հույզերից է, որը կարող է բերել հիվանդությունների՝ ինչպես երրորդ իմաստում: Այսինքն, ի հակառակ մի շարք ևս ուժգին բացասական հույզերի, ինչպիսին է, օրինակ, գայրույթը, որի մասին խոսել ենք նախորդ հոդվածներից մեկում՝ կարոտ հույզը

անզվերենում կարող է բառացիորեն հիվանդագին լինել: Որպես եզրակացություն՝ հույզի ուժգնությունը անպայման չէ, որ որոշիչ դեր խաղա այն հարցում, թե արդյոք այն կարող է որևէ հիվանդության պատճառ հանդիսանալ: Սա մի տարբերակում է, որը կա այս հույզի և այլ հույզերի միջև:

Ինչ վերաբերում է ընդհանրություններին, ապա կարող ենք նկատել, որ կրկին՝ ինչպես և այլ հույզերի դեպքում, այստեղ գործ ունենք հույզի ուժգնության աստիճանի հետ՝ թեթևից մինչև սուր: Սա հետաքրքրական է այնքանով, որ մի հույզ, որը կարող է հոգեկան հիվանդություններ առաջացնել, միևնույն ժամանակ կարող է թեթև դրսևորվել, օրինակ՝ թեթև ընկճվածության վիճակ (low spirits): Այսինքն հույզի ուժգնության տեսակետից այն ավելի լայն սպեկտր ունի, քան այլ հույզերը, որոնք նույնպես առանձնանում են ուժգնությամբ, սակայն այդքան մեծ տատանում չունեն:

Depression իմակի սահմանումներում բազում են նաև առաջացման պատճառները. արդյոք ընկճվածությունը պաշտոնական բնույթ է կրում (օրինակ՝ slough of despond), այն կապված է բարոյականության հետ (demoralisation, demoralization), թե՛ պայմանավորված է հիվանդությամբ (major depressive episode): Պատճառահետևանքային կապը, սակայն, միշտ չէ, որ հասկանալի է: Արդյո՞ք լեզվական սահմանման տեսակետից ընկճվածությունը պատճառ է, թե՛ հետևանք: Նկատելի է և՛ առաջինը, և՛ երկրորդը: Օրինակ՝ մարդու բարոյական վիճակի թուլացումից բխող ընկճվածության (demoralisation, demoralization) դեպքում ակնհայտ է, որ կա ուղիղ պատճառ, իսկ սուր ճնշվածության դեպքում, որը բնութագրվում է լացակումամ տխրությամբ և ոչ ռացիոնալ վախերով (melancholia), տեսնում ենք հետևանքը: Երբեմն պատճառն ու հետևանքը փոխկապկցված են դժվար տարանջատելի, օրինակ՝ կլինիկական ընկճվածության մի վիճակ, երբ անձը լեթարգիական է և դանդաղ է գործում (retarded depression):

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Шаховский В.И. Лингвистическая теория эмоций. Изд-во «Гнозис», 2008.
2. Филин Ф.П. Очерки по теории языкознания. Институт русского языка АН СССР. М.: Наука, 1982.
3. Անզվերեն-հայերեն բառարան: Հ.Ա. Ասմանգուլյանի և Մ.Բ. Հովհաննիսյանի խմբագրությամբ, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1991թ.:
4. Հայերեն-անգլերեն բառարան: Ն Բարայանի խմբագրությամբ, Մակմիլան Արմենիա, 2006:
5. <http://www.visualthesaurus.com/>
6. <http://www.vocabulary.com/>
7. <http://www.merriam-webster.com/>
8. <http://www.oxforddictionaries.com/>

**КРАТКИЙ ОБЗОР СМЫСЛОВЫХ ОСОБЕННОСТЕЙ ЭМОТИВА  
ТОСКА В АНГЛИЙСКОМ**

*Յ.Գ. Մելիկ-Ադամյան*

**АННОТАЦИЯ**

В статье говорится о смысловых особенностях эмотива «тоски» в английском языке. Выявляется ядро эмотива и его семантическое поле, также при помощи визуального тезауруса. Делается попытка обнаружить как общности, так и различия проявления данного эмотива.

**Ключевые слова:** тоска, депрессия, визуальный тезаурус, смысловое обозначение слова, общность, различие.

**A BRIEF REVIEW OF THE PECULARITIES  
OF THE EMOTIVE DEPRESSION IN ENGLISH**

*Sh. Melik-Adamyan*

**SUMMARY**

The article touches upon the semantic peculiarities of the emotive depression in English. The core of the emotive and its semantic field is revealed also with the help of visual thesaurus. It is attempted to reveal both similarities and differences of the given emotive.

**Keywords:** depression, visual thesaurus, semantic meaning of the word, similarity, difference.

**ՄԻԶՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ  
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

*Ժ. Մինասյան*

**ԱՍՓՈՓՈՒՄ**

Սույն հոդվածը նվիրված է միջմշակութային իրազեկության զարգացմանը բուռնում ֆրանսերենի դասավանդման ժամանակ: Հոդվածում ներկայացված են միջմշակութային իրազեկության ուսուցման նպատակներն ու հիմնական բաղադրիչները և ուսումնական գործընթացում դրանց ընդգրկման առավելությունները:

**Հիմնաբառեր**՝ միջմշակութային հաղորդակցական իրազեկություն, թիրախային լեզու և լեզվակիրներ, մշակութային թյուրըմբռնում, կարծրատիպ:

Աշխարհի զարգացման արդի փուլին բնորոշ է աննախադեպ մեծ հետաքրքրությունը լեզվի և մշակույթի փոխազդեցության հարցերի նկատմամբ: Գիտությունն այսօր դարձել է գիտություն մարդու, նրա լեզվամտածողության, շրջապատող աշխարհի ու մարդկանց հետ նրա փոխհարաբերության մասին: Մարդակենտրոնությունը՝ որպես հետազոտության սկզբունք, որի էությունը մարդուն համընդհանուր ուշադրության կենտրոնում պահելն է, հնարավորություն է տալիս նորովի քննել մարդուն և նրա գործունեությունն ուսումնասիրող գիտություններում առաջացած հարցերն ու խնդիրները, բացահայտել դրանց համակարգայնությունն ու փոխկապակցվածությունը:

Միտքն այն մասին, որ տարբեր լեզու և մշակույթ ունեցող մարդիկ տարբեր կերպ են ընկալում աշխարհը, վաղուց գաղտնիք չէ և ապացույցի կարիք չունի: Մշակույթն արտացոլվում է մարդու գիտակցության մեջ. նրանով է պայմանավորված վերջինիս հաղորդակցական վարքը:

Վերջին տասնամյակներում աշխարհի պատկերն անդառնալիորեն փոխվել է: Շատ սահմաններ են անհետացել՝ խթանելով զբոսաշրջությունն ու արտագաղթը, որոնց արդյունքն էլ մշակույթների ու լեզուների այսօրվա խայտաբղետ բազմազանությունն է: Այդ բազմազանությամբ ընդգծվում է անցած տարիների փորձառության վրա հիմնված միջմշակութային հաղորդակցական իրազեկության ուսուցման անհրաժեշտությունը, երբ ամենուր միջազգային տարբեր ձեռնարկությունների և կազմակերպությունների միջև հաղորդակցությունների զարգացման աննախադեպ աճ է արձանագրվում: Հաջողությամբ հաղորդակցվելու հմտությունն ավելի ու ավելի պահանջված է դառնում ողջ աշխարհում:

Իսկապես, լեզվի և մշակույթի փոխհարաբերության հարցերը խիստ արդիական են վերջին տարիներին, երբ ակնհայտ է դարձել, որ մշակույթ-

ների չիմացությունը կարող է հանգեցնել տարբեր ազգերի ներկայացուցիչների միջև հաղորդակցության ձախողմանը: Այլ կերպ ասած՝ հաղորդակցության հաջողությունն ու արդյունավետությունը պայմանավորված են ոչ միայն տվյալ լեզվի, այլև դրանով խոսող ժողովրդի ազգային առանձնահատկությունների, խոսքային և ոչ խոսքային վարքի, սոցիալ-մշակութային նորմերի, ազգային քաղաքավարական ձևերի իմացությամբ: Ուստի, լեզու - էթնոս - մշակույթ ուղղությամբ կատարվող յուրաքանչյուր ուսումնասիրություն հնարավորություն է տալիս ոչ միայն վերհանել ազգային գիտակցության առանձնահատկություններն ու լեզվական, խոսքային, հաղորդակցական տարբերությունները, այլև գտնել դրանց պատճառների բացահայտման և հիմնավորման ուղիները:

Ընդունված է ասել, որ լեզուն հոգու հայելին է, որում արտացոլվում են ոչ միայն մարդուն շրջապատող իրական աշխարհը, նրա իրական կենսապայմանները, այլև տվյալ ազգի հասարակական գիտակցությունը, նրա աշխարհընկալումը, մտածողությունը, ազգային բնութագիրը, կենսակերպը, ավանդույթներն ու սովորույթները, բարոյականությունն ու հոգեբանությունը, կայուն արժեհամակարգը:

Լեզուն մշակույթի կրողն ու փոխանցողն է, այլ կերպ ասած՝ նրա գանձարանն է, մթերանոցը: Այն պահպանում է ազգի մշակութային գանձերը բառապաշարում, քերականության մեջ, առածներում և ասացվածքներում, գեղարվեստական և գիտական գրականության մեջ, գրավոր և բանավոր խոսքում:

Հատկանշական է, որ լեզուն մշակույթի հիմնական բաղադրիչն է: Այն նաև մշակույթն ընկալելու միջոց է, բանալի /Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ, 2005:7/: Ուստի, դասավանդման հիմնական առարկան պետք է լինի ոչ միայն օտար լեզվի գործնական յուրացումը, այլև միջմշակութային փոխըմբռնման զարգացումը, տվյալ ժողովրդի մշակույթի ճիշտ ընկալման կարողությունների ձևավորումը:

Ըստ Ժ. Նյուների, միջմշակութային մոտեցումը նպատակ ունի լեզուն սովորողին մոտեցնել ոչ միայն ուսուցանվող լեզվին, այլև միջմշակութային փորձառություններին, կարծրատիպերին, իմաստային կառույցներին և այլն (Neuner 2003:22):

Միջմշակութային իրազեկության զարգացման հիմնական պայմաններն են ինքնավստահությունը /հավատը սեփական անձի նկատմամբ/, զգացմունքայնությունը, ինչպես նաև ուրիշների վարքն ու մտածելակերպը հասկանալու, սեփական տեսակետը փոխանցելու, հնարավորինս ճկուն, հարգված, խորաթափանց, պարզ ու հասկանալի լինելու ունակությունները: Հաջող հաղորդակցմանը նպաստող այս բոլոր ունակությունները կարելի է կանոնավոր և նպատակաուղղված կերպով զարգացնել:

Առհասարակ, միջմշակութային իրազեկությունը ցանկացած շփման անհրաժեշտ պայմանն է, որում կարևորվում են ոչ միայն զգացմունքայնությունը, ուրիշի տեսակետը, կենսաձևն ու մտածելակերպը ընդունելու կարո-

դությունը, այլև սեփական արժեքները հասկանալի ու իրադրությանը համարժեք ձևով փոխանցելու ունակությունը: Այսպիսով, միջմշակութային իրազեկության զարգացումը նպաստում է ազատ փոխըմբռնմանը և հեշտացնում նախանշած նպատակների իրականացումը:

Մակայն նշյալ իրազեկությունը գնահատելիս պետք է հաշվի առնել՝ արդյո՞ք տվյալ անձն ունի դրա ունակությունը կամ պոտենցիալը: Յուրաքանչյուր անհատ ունի սեփական պատմություն, սեփական կյանք, հետևաբար և սեփական մշակույթ կամ մշակութային պատկանելիություն, ուր արտացոլվում է նրա աշխարհագրական, ազգային, բարոյական, կրոնական, քաղաքական, պատմական մշակույթը: Խոսքը տարբեր երկրներից կամ մայրցամաքներից, տարբեր ձեռնարկություններից, տարբեր սեռերի, կրոնների, ազգային փոքրամասնությունների պատկանող մարդկանց մասին է: Նույնիսկ միևնույն ընտանիքում կարող են գոյություն ունենալ տարբեր մշակութային արժեքներ:

Օտար լեզվի դասավանդման մեջ որքա՞ն են կարևորվում միջմշակութային հաղորդակցական իրազեկությունն ու նրա ուսուցումը լեզվի մյուս սուպեկտների /քերականություն, բառապաշար և այլն/ հետ համեմատած: Որոշ մասնագետներ գտնում են, որ միջմշակութային հաղորդակցության դասավանդումն ավելի կարևոր է, քան քերականությունը կամ մնացածը, մինչդեռ մյուսները դրան ավելի պակաս կարևորություն են տալիս՝ (Aleksandrowicz-Pedich, L. et al. 2005:17): Միջմշակութային հաղորդակցական իրազեկության կարևորությունն ակնհայտ է, սակայն մեզանում վերջինիս կանոնավոր ու հետևողական ուսուցում չի իրականացվում, թեպետ մասնագետների պատասխաններն էլ ցույց են տալիս, որ միջմշակութային հաղորդակցության հմտությունը թիրախային լեզվի կարևոր բաղադրիչն է: Առանց միջմշակութային հաղորդակցության իրազեկության ուսանողներն ունակ չեն ընդգրկվելու հաղորդակցության գործընթացում՝ (Aleksandrowicz-Pedich, L. et al. 2005:18):

Ինչո՞վ է կարևորվում միջմշակութային հաղորդակցական իրազեկությունը: Ըստ Լ. Ալեքսանդրովիչ-Պեդիչի, միջմշակութային հաղորդակցության ուսուցումը նպատակ ունի օգնել սովորողներին՝

1. հասկանալ ուսուցանվող լեզվի մշակութային համատեքստը,
2. խուսափել թյուրըմբռնումներից,
3. հաջողությամբ հաղորդակցվել,
4. ճիշտ օգտագործել ուսուցանվող լեզվի բառապաշարն ու քերականությունը,
5. դյուրացնել օտար լեզվի ուսուցումը,
6. խույս տալ ուղևորության ժամանակ արտասահմանում ծագող անհարմար իրադրություններից,
7. ապրել բազմամշակույթ շրջապատում (Aleksandrowicz-Pedich, L. et al. 2005:18):

Միջմշակութային հաղորդակցության ուսուցման կարևորությունը օտար լեզվի՝ մասնավորապես ֆրանսերենի դասերին պայմանավորված է հենց միջմշակութային հաղորդակցական իրազեկության կարևորությամբ, քանի որ քերականական ցանկացած սխալ կարելի է հեշտությամբ հանդուրժել, սակայն մշակույթի չիմացությունից ծագած որևէ թյուրըմբռնում հեշտությամբ չի հարթվում, և հետագայում շփման բնական ընթացքը դժվար է վերականգնել, քանզի հենց թյուրըմբռնումներն են հոգեբանական խիստ հարված հասցնում մարդուն և ոչ՝ արտասանական թերությունները կամ քերականական սխալները:

Որպեսզի ուսանողները կարողանան հստակ պատկերացում կազմել օտար լեզվակիրների մշակութային առանձնահատկությունների մասին, դասախոսներն օգտվում են մշակութային թեմաներ արծարծող գրքերից ու ձեռնարկներից: Նրանց նպատակն է տեքստային տեղեկատվության միջոցով ուսանողներին ցույց տալ, թե ինչպես է օտարերկրացին՝ ֆրանսախոսը, ընկալում շրջապատող աշխարհը:

Ժամանակակից հեղինակներն իրենց ձեռնարկներում զետեղում են այնպիսի տեքստեր, որոնք թիրախային լեզվի ու լեզվակիրների մասին անհրաժեշտ հասարակական և մշակութային տեղեկատվություն են պարունակում: Բացի այդ, կարելի է օգտվել բնագիր նյութերից */matrriels authentiques/*, որոնք այսօր լայն կիրառություն ունեն լեզվի դասավանդման մեթոդիկայում: Դրանք են տարբեր տեսանյութերը, հեռուստատեսային հաղորդումների ձայնագրությունները, մամուլից վերցված զանազան հոդվածներն ու գովազդները, ֆիլմերը և այլն: Անժխտելի է, որ մշակութային շփումը հեշտացնող լավագույն միջոցներն են ժամանակակից տեխնոլոգիաները, որոնցում անվերապահորեն մեծ է համացանցի դերը: Այսպիսի միջոցների կիրառումն օտար լեզվի ուսուցումը մոտեցնում է հաղորդակցական բնական պայմաններին, ինչը նպաստում է ուսուցանվող նյութի յուրացման արդյունավետությանը:

Միայն թե մեր որդեգրած հիմնական մոտեցումը պետք է լինի այն, որ լեզուն սովորողներն ու կիրառողները նախ և առաջ դիտարկվեն որպես սեփական ուսումնառության գործընթացի ակտիվ մասնակիցներ: Ուստի, օտար լեզուների ուսուցման՝ հատկապես բանավոր հաղորդակցման կարողությունների զարգացման համար, կարևորվում են ակտիվ հաղորդակցություն ենթադրող և ապահովող ուսուցման փոխներգործուն *Ինտերակտիվ/մեթոդները*: Այսպիսով, ուսուցման հիմնական սկզբունքներ են ընդունվում սովորողի ակտիվությունը, ինքնարտահայտման խրախուսումը, փոխազդեցությունն ու փոխուսուցումը, հետադարձ կապը և այլն: Ընդ որում, շեշտը դրվում է լեզվի ուսուցման հանրամշակութային կողմի վրա, քանի որ հասարակական, ազգային և մշակութային փորձի, արժեքների փոխանակումը մեկ ընդհանուր լեզվով հնարավորություն է տալիս վերջ տալ նախապաշարումներին և անհանդուրժողականությանը:

Դասախոսը պետք է բացատրի ուսանողներին, թե ինչպես կարելի է խուսափել միջմշակութային թյուրըմբռումներից: Այսուհանդերձ, ըստ որոշ մասնագետների, երբեմն անհնար է դրանք շրջանցել, հասկապես, երբ խոսքը ոչ մոտ, օրինակ՝ հայկական և ֆրանսիական մշակույթների մասին է:

Այնուամենայնիվ, որո՞նք են օտար լեզվի դասավանդման ժամանակ միջմշակութային իրազեկության ուսուցման հիմնական բաղադրիչները: Այս հարցին տարբեր մասնագետներ տարբեր պատասխաններ են տալիս (Aleksandrowicz-Pedich, L. et al. 2005:23): Մակայն, դրանք բոլորը կարելի է հակիրճ շարադրել մի քանի կետով.

- ա. օտար լեզվակիրների ավանդույթներն ու սովորույթները,
- բ. պատմությունն ու քաղաքակրթությունը,
- գ. ժողովրդական բանահյուսությունը, առասպելներն ու լեգենդները,
- դ. ազգային կարծրատիպերը,
- ե. կրոնական հավատալիքներն ու պատկերացումները,
- զ. թիրախային երկրում մարդու ազատությունների և ժողովրդավարության մակարդակը,
- է. արվեստի տարբեր ճյուղերը, երաժշտությունը, կինոն, գրականությունը, ազգային խոհանոցը,
- ը. հասարակական վարքն ու նորմերը, քաղաքավարական կանոնները,
- թ. ուսուցման համակարգը և այլն:

Օտար լեզու դասավանդելիս այս բաղադրիչների ընդգրկումը հմուտ դասախոսին թույլ կտա կոնկրետ լուծումներ առաջարկել ուսանողներին՝ դրանով իսկ առավելագույնս հեշտացնելով լեզվի յուրացումը: Դրանք կօգնեն սովորողներին խորհել ուրիշի մշակույթի և մշակութային արժեքների մասին, գիտակցել արժեքների համակարգում եղած մշակութային տարբերությունները, մշակել գննելու, հետազոտելու, մեկնաբանելու և քննադատական մտքեր արտահայտելու կարողություններ, զարգացնել հարգանքի, ապրումակցական զգացում այլոց նկատմամբ:

Միջմշակութային հաղորդակցության իրազեկության ուսուցման առավելությունները բազմաթիվ են: Դրանք չեն սահմանափակվում կարծրատիպերի ուսումնասիրությամբ: Լ. Ալեքսանդրովիչ-Պեդիչը դրանք դասակարգում է հետևյալ կերպ.

1. մշակութային տարբերությունների ընդունում և հանդուրժում, հարգանք ուրիշի նկատմամբ,
2. հանդուրժում և փոխըմբռնում բոլոր բնագավառներում, պայքար կարծրատիպերի և նախապաշարումների դեմ,
3. խաղաղության հույս աշխարհում<sup>a</sup> տարբեր երկրների միջև խաղաղ գոյակցության համար,
4. ազգամիջյան հավանական բախումների շրջանցում,
5. միջազգային համերաշխություն /ինտերնացիոնալիզմ/,
6. ուսանողների համար՝ բացահայտման փորձառություն,

7. բաց և հանդուրժող հասարակությունների ստեղծում, առանց նախապաշարումների երիտասարդության դաստիարակում,

8. միջմշակութային հաղորդակցության իրազեկության ընդգրկում գործարար օտար լեզվի և զբոսաշրջության դասավանդման ընթացքում,

9. սովորողների ուսուցանում՝ ապրել, աշխատել և ճամփորդել այլ երկրներում,

10. դեպի բազմամշակույթ համայնք տարբեր հասարակությունների զարգացման ընդունում,

11. առավել հետաքրքիր և զվարճալի դասերի կազմակերպում,

12. ուսանողների խթանում /մոտիվացում/ առաջարկելով իրական կյանքի տարբեր գործունեություններ (Aleksandrowicz-Pedich, L. et al. 2005:25):

Այսպիսով, միջմշակութային հաղորդակցության իրազեկության ընդգրկումն օտար լեզվի դասավանդման մեջ նպաստում է ուսանողների լեզվական և մշակութային իրազեկության զարգացմանը: Սակայն, անհրաժեշտ է զգուշանալ չափազանցումից: Այն կարող է բացասական հետևանքներ ունենալ՝ մեծացնելով մշակութային բացերը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Նորք գրատուն, Եր., էջ 7, 2005:
2. Aleksandrowicz-Pedich, L. et al. Opinions des enseignants d'anglais et de français sur la compétence en communication interculturelle dans l'enseignement des langues. In I. Lnznr (Ed). Intégrer la compétence en communication interculturelle dans la formation des enseignants. Kapfenberg : Conseil de l'Europe. PP. 9–44, 2005.
3. Neuner, G. Les mondes socioculturels intermndiaires dans l'enseignement et l'apprentissage des langues vivantes. In : M. Byram. (Ed.) La compétence interculturelle. Strasbourg : Conseil de l'Europe. PP. 15–66, 2003.

#### ПРЕИМУЩЕСТВА ПРЕПОДАВАНИЯ МЕЖКУЛЬТУРНОЙ КОМПЕТЕНЦИИ НА УРОКАХ ФРАНЦУЗСКОГО ЯЗЫКА

*Ж. Минасян*

#### АННОТАЦИЯ

Данная статья посвящена развитию межкультурной компетенции на уроках французского языка в вузе. В статье представлены цели, направленные на развитие межкультурной компетенции, базовые элементы и преимущества их внедрения в учебный процесс.

**Ключевые слова:** межкультурная компетенция, язык обучения и носители языка, недопонимание в культуре, стереотип.

**ADVANTAGES OF TEACHING INTERCULTURAL  
AWARENESS DURING FRENCH LESSONS**

*Zh. Minasyan*

**SUMMARY**

The given article is devoted to the development of intercultural awareness at higher educational institutions while teaching French. The article introduces the aims and basic particles of teaching intercultural awareness, as well as the advantages of their involvement in the teaching process.

**Keywords:** intercultural competence awareness, target language and native speakers, cultural misunderstanding, stereotype.

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԱՐԻԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐՄԿԵՐԵՆԻ  
ՀԱՄԱԴՐՈՒԹՅԱՄԲ**

**Վ. Փարսադանյան**

*vrezhpar @ freenet. am*

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Հոդվածում անդրադարձ է կատարվում ժամանակակից Աֆղանստանի երկու պետական լեզուներից մեկի՝ դարիի բառապաշարի վաղ շրջաններից ժառանգած պարսկական լեզվանյութին, որը լայն գործածություն է ունեցել նաև մի շարք իրանական ցեղերի լեզուներում: Անդրադարձ է կատարվում դարերի ընթացքում տարածաշրջան ներխուժած և բնակություն հաստատած մի շարք թուրքական ցեղերի լեզուներից դարիի բառապաշարի կրած աղդեցությանը, նրա ներքին կառուցվածքի ձևավորմանը, սեփական միջոցների ու օրինաչափությունների կայացմանը, ինչպես նաև արտաքին աղբյուրներից կրած աղդեցությանը: Նշվում է Հնդկական թերակղզում լայն տարածում գտած դարիի կապի հետզհետե ընդհատումը պարսկերենի հետ, նրա ինքնատիպ զարգացման ուղին, հնչյունական, բառային, ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները:

Ներկայացվում են դարիի և պարսկերենի միջև առկա փոխառնչությունները, ինչպես նաև այդ լեզուների բառային կազմերի միջև գոյացած զգալի տարբերությունները՝ բառային կազմերի զարգացման ներքին ու արտաքին միջոցները, որոնք հիմնականում վերաբերում են բառերի իմաստային կառուցվածքի ընթացքի զարգացմանը, բառաբարդման և ածանցման եղանակներին, բառերի կիրառության հաճախակիության աստիճանին, հնարանությունների պահպանմանը, նորաբանությունների քանակին ու բնույթին, վերջին շրջանում սակավ գործածությամբ բառերի գործառական ակտիվացմանը, հապավումների կիրառությանն ու դրանց կառուցվածքին, այլ լեզուներից փոխառություններին և այլն: Առանձին բաժիններով երկայացվում են վերը նշած երևույթների դրսևորումները դարի և պարսկերեն լեզուներում:

**Հիմնաբառեր**՝ դարի, պարսկերեն, Աֆղանստան, լեզու, բառային կազմ, բառակազմական հնարավորություններ, առանձնահատկություններ, փոխառություն, ներքին աղբյուր, արտաքին միջոցներ, հապավումներ:

Ժամանակակից Աֆղանստանի երկու պետական լեզուներից մեկի՝ դարիի բառապաշարի առանցքային ինքնատիպությունն է կազմում վաղ շրջաններից ժառանգված ընդհանուր պարսկական լեզվանյութը, որի տակ

գիտական գրականության մեջ ընդունված է հասկանալ առաջին հերթին վաղ միջնադարում Միջերկրական ծովից մինչև Սինդ և Մավերաննահրից մինչև Ամուդարյա և Սիրդարյա գետերի միջև ընկած տարածաշրջանում բնակություն հաստատած իրանական ցեղերի՝ սողդերի, խորեզմիների, բախթիարիների (բակտրիացիների), սակերի և այլ ցեղային միավորների մեջ լայն գործածություն ունեցող լեզվի բառապաշարը: Սակայն երկարատև զարգացման ընթացքում դարիի բառապաշարը՝ պայմանավորված հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի զարգացման տարբեր գործընթացներով, ենթարկվել է նշանակալի փոփոխության՝ մի կողմից պայմանավորված արտալեզվական պայմաններով՝ XI դ. (հիջրայի Վդ.) սկսած ընդհանուր պարսկական լեզվանյութի գործածության շրջանակների հետզհետե սահմանափակմամբ՝ այստեղ ներխուժած և բնակություն հաստատած մի շարք թուրքական ցեղերի և թյուրքալեզու ժողովուրդների հայտնվելու [1], հետագայում նաև՝ XV դ. Անգլիայի վարած գաղութատիրական քաղաքականության պայմաններում, մյուս կողմից՝ լեզվում կայացած նշանակալի փոփոխությունների արդյունքում նրա բուն ներքին կառուցվածքի ձևավորման, հաստատման, սեփական միջոցների ու օրինաչափությունների գոյացման, նրանց կիրառության ոլորտների ընդարձակման, ինչպես նաև հետագայում տարբեր նոր արտաքին աղբյուրներից լեզվանյութի ընդունման ու նյութապես հարստացման նոր հնարավորությունների առկայությամբ: Այս բոլորը նրա և պարսկերենի միջև զգալի տարբերությունների գոյացման հիմք են դարձել և շարունակում են մնալ այդպիսին:

Հնդկական թերակղզում լայն տարածում գտած Աֆղանստանի ֆարսին՝ դարին, որի կապը հետագայում հետզհետե ընդհատվել է Իրանի պարսկերենի հետ, կարողացել է պահպանել իր ինքնուրույնությունը և անցնել զարգացման ինքնատիպ ուղի: Ընդ որում, Աֆղանստանում պետականության ձևավորման պայմաններում այն սկսեց կոչվել ոչ թե ֆարսի-ե դարի, այլ դարի՝ այսօրվա իր իսկ իմաստով: Այդ նույն ֆարսին Տաջիկստանում կոչվել է թաջիքի, իսկ Իրանում՝ ֆարսի (փարսի), որն արագ տեմպերով շարունակում է անցնել զարգացման իր ուղին:

Դարին, պահպանելով վաղ շրջանի, ինչպես նաև դասական լեզվի շատ միավորներ, անցել է զարգացման անհամեմատ դանդաղ ուղի: Դարերի ընթացքում հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի առաջընթացին զուգահեռ, պահպանելով իր ինքնուրույնությունը բազմալեզու Աֆղանստանում, կրել է բազմաթիվ փոփոխություններ, ստեղծել է հատուկ բառակազմական կաղապարներ, հարստացրել է իր բառային կազմը՝ ներառելով նորանոր բառեր, նոր հասկացությունների անվանումներ և աստիճանաբար տարբերվել է իր մերձավոր ցեղակից պարսկերենից և տաջիկերենից:

Ժամանակակից դարին ունի իրեն բնորոշ հնչյունական, բառային, ձևաբանական, շարահյուսական և այլ կարգի առանձնահատկություններ: Իր

հիմքում ամբողջությամբ պահպանելով ընդհանուր լեզվի՝ պարսկերենի բառապաշարը՝ դարերի ընթացքում աստիճանաբար հեռացել է նրանից ինչպես ներքին զարգացման օրինաչափությունների գործունեության արդյունքում, այնպես էլ զարգացման բազմաթիվ արտաքին աղբյուրներից օգտվելու շնորհիվ:

Դարիի և պարսկերենի առկա փոխառնությունները բառային կազմերի զարգացման ներքին և արտաքին միջոցների ու ուղղությունների բնագավառում նշանակալի հիմք են ծառայել և շարունակում են ծառայել նրանց միջև բազմապիսի փոխհարաբերությունների և վերջինների արդյունքում զգալի տարբերությունների գոյացման համար: Այդ տարբերությունները վերաբերում են բառերի իմաստային կառուցվածքի տարբեր բնույթի զարգացման ընթացքին, բառակազմության, առաջին հերթին բառաբարդման և ածանցման տարբեր եղանակներին, այլ լեզուներից փոխառությունների ներմուծման բնույթին ու միջոցներին, նրանցում բառերի կիրառության հաճախականության աստիճանին, այդ թվում՝ սակավ գործածությամբ բառերի գործառական ակտիվացմանը, ինչպես նաև նորաբանությունների բնույթին ու քանակին, հնաբանությունների պահպանմանը կամ վերականգնմանը, հապավումների կազմին, նրանց կազմության միջոցներին և այլն:

Ստորև ներկայացվում են հիշյալ երևույթների համեմատաբար լայն տարածում ունեցող դրսևորումները երկու լեզուներում:

### **Բառային կազմերի զարգացման ներքին աղբյուրները**

Դարիի և պարսկերենի բառային կազմերի տարբերությունները պայմանավորված են զարգացման ներքին պայմաններով ու փոխազդեցությամբ: Այդ տարբերությունները հանդիպում են նրանց բառային կազմերի տարբեր ոլորտներում, որոնցից առավել մեծ տեղ են գրավում բառերի իմաստային կառուցվածքի տարբեր ուղղություններով փոփոխությունները, բառաբարդման և ածանցման արդյունքում առաջացած բառերը, գոյություն ունեցող բառերի կիրառության հաճախականության բարձրացումը, հնաբանությունների պահպանումը, հապավումների կազմությունը և այլն:

Ունենալով իրենց բնորոշ բառակազմական մեծ հնարավորություններ, բառակազմական օրինաչափություններ ու միջոցներ՝ դարին և պարսկերենը, ըստ անհրաժեշտության, ստեղծել են նորանոր բառեր, կատարելազործել ու հարստացրել սեփական բառային կազմերը:

### **Իմաստային կառուցվածքների զարգացման առանձնահատկությունները**

Երկու լեզուներում իմաստային կառուցվածքի փոփոխություններ ներկայացնող բառերը հանդիպում են բառակազմի ամենատարբեր շերտերում: Դրանց օրինակ են ծառայում տարբեր ուղղություններով փոփոխություններ

կրող իմաստաբանական կերտումները, որոնց տարբերությունները արտացոլվում են համապատասխան լեզվանյութով:

Պարսկերենում *լուլե* («խողովակ») բառը նույն գրությամբ, սակայն *լուլա* հնչյունակազմով ժամանակակից դարիում փոխվել և գործածվում է «ոլորած», «ոլորած թուղթ» իմաստներով: Իմաստային զարգացման նույն օրինակը նկատվում է նաև պարսկերենի *նուրբար* («ծառա») բառում, որը պարսկերենից անցել է փուշտու և ձեռք բերած նոր՝ «հերթապահ» իմաստով՝ *նավքարիվալ* հնչյունակազմով, անցել է դարի, որտեղ այն հանդիպում է նաև *նուրբարիվալ* հնչյունական կազմով: Մեկ այլ օրինակ. պարսկերենում արդեն հնացած *չաշթ* («նախաճաշ») բառը փուշտուում այսօր գործածվում է «ճաշ» նշանակությամբ և այդ նշանակությամբ էլ փոխանցվել է դարիին: Հավելենք, որ պարսկերենի *չորթ զադան* («ննջել») բայը, անցնելով փուշտու, ստացել է «մտածել» իմաստը և նույն նշանակությամբ փոխանցվել է դարի: Կամ պարսկերենի հնացած *բալափուշ* («գոգնոց», «խալաթ») բառը, անցնելով փուշտու, իմաստափոխվել է «վերարկու»-ի և *բալափուշ* հնչյունակազմով կիրառվում է դարիում:

Դարիում արաբական *ֆազա* բառը՝ «տիեզերք», «մթնոլորտ» նշանակություններով հիմք է հանդիսացել *ֆազանավարդ* («տիեզերագնաց»), *սաֆինայա ֆազաի* («տիեզերանավ») բառերի կազմության համար, որոնք պարսկերենում առավելապես գործածվում են *քեյհաննավարդ* և *սաֆինեյե քեյհանի* տարբերակներով: Կամ *փանջսալա*, *էնքեշաֆ*, *թավիլ*, *դասիր* բառերը, որոնք համապատասխանաբար արտահայտում են «հնգամյակ», «զարգացում», «երկար», «կարճ» հասկացությունները, ծառայել են որպես հիմք *փելանե փանջսալա*, *փելանե էնքեշաֆի*, *փելանե թավիլ ոլ մոդդաթ*, *փելանե դասիր ոլ մոդդաթ* նոր բառերի կազմության համար, որոնց համապատասխան համարժեքները պարսկերենում գործածվում են *բառնամեյե փանջսալե*, *բառնամեյե ոռշո*, *բառնամեյե դերազմոդդաթ*, *բառնամեյե քութահմոդդաթ* ձևերով:

Օդագնացության բնագավառի զարգացման հետ կապված դարիում ստեղծվել են հետևյալ բառերը՝ *թիքեթե թայյառա* («ավիատոմս»), *մայդանե հավայի* («օդանավակայան»), *ռիյասաթե հավայի մոլքի* («քաղաքացիական օդագնացության վարչություն»), որոնք պարսկերենում համապատասխանաբար գործածվում են *բեյիթե հավափեյմա*, *ֆորուդգահ*, *շերեքաթե հավափեյմաիյե քեշվարի* տարբերակներով:

### Բառերի գործառական ակտիվացումը

Պարսկերենի համեմատությամբ բառերի կիրառական ակտիվացումը դարիում հանդիսանում է նրա բառային կազմի ներուժային կարողությունները խթանող կարևոր գործոններից մեկը: Այս երևույթի առկայության պայմաններում դարիի բառապաշարը զգալիորեն համալրվել է սակավ

կիրառվող կամ կիրառությունից դուրս մնացած բառերով, որոնցից կարելի է նշել, օրինակ՝ *բա շոքուհ* («հանդիսավոր», «ճոխ»), *շորա* («խորհուրդ»), *գաֆարմանդ* («հաղթական»), *մահֆել* («հանդիսություն»), *մարքազի* («կենտրոնական»), *մոնջի* [2] («քարտուղար») և այլն:

Դարիում ակտիվ կիրառություն են ձեռք բերել զգալի քանակությամբ հնաբանություններ, որոնք պարսկերենում վաղուց դուրս են մղվել գործածությունից: Այս կարգի բառերի օրինակ են ծառայում *անգեշթ* [3] («ածուխ»), *բալադիյա* («քաղաքապետարան»), *փադա* («անասնահոտ»), *փադարան* և *փադավան* («հովիվ», «անասնապահ»), *փալիդան* («փնտրել»), *թարվիզ* («թալիսման»), *դաշ* («զագօջախ»), *դեն(թ)լաֆ* («սկզբնածախ», «սֆթա»), *ռեշմա* («հաստ բրդյա թել»), *գադնոլ* («քլունգ»), *շաֆախանա* («հիվանդանոց»), *քոլլալ* («խեցի»), *մոգա* («երկարաճիտ կոշիկ») բառերը, որոնք ժամանակակից պարսկերենում կիրառվում են համապատասխանաբար *գոդալ*, *շահրդարի*, *գալլե*, *շուփան*, *թելեան*, *ջոսթոջո քարդան*, *օջախ*, *դաշթե սովվալե հար քարի*, *ոխամանե փաշմի*, *քոլան*, *բիմարեսթան*, *սոֆալ*, *շաքմե* ձևերով:

Դարիում ակտիվ գործածություն ունեցող բառերի ցանկում հատկապես առանձնացվում են ազգակցական հարաբերություններ արտահայտող բառեր: Օրինակ՝ *էվար* («տագր», «տեգր»), *փեսարե էվար* («տեգոր տղա»), *դոխթարե էվար* («տեգոր աղջիկ»), *նանու* («ամուսնու քույրը՝ տալ»), *բաջա* («քենակալ»), որոնց փոխարեն պարսկերենում համապատասխանաբար գործածվում են *բարադառե շոուհար*, *փեսարե բարադարե շոուհար*, *դոխթարե բարադարե շոուհար*, *ջարի*, *բաջենադ* բառերը: Այս և նման բառերն իրենց քանակային կազմով թերևս քիչ են, սակայն ակտիվ գործածության շնորհիվ բարձր հաճախականություն են ձեռք բերել:

Դարիում հաճախական գործունեություն ունեցող բառերի մասին խոսելիս անհրաժեշտ է նշել նաև լայն կիրառություն ստացած պարսկերենի հնացած անդար ածանցով կազմվող բառերը [4]: Այդ ածանցի օգնությամբ դարիում կազմվում են ազգակցական հարաբերություններ ցույց տվող բառեր ևս, ինչպես *մադարե անդար* («խորթ մայր»), *փադարե անդար* («խորթ հայր»), *փեսարե անդար* («խորթ տղա»), *բարադարե անդար* («խորթ եղբայր») և այլն: Հիշյալ բառերի համարժեքները ժամանակակից պարսկերենում գործածվում են *մադարե նաթանի*, *փեդարե նաթանի*, *փեսարե նաթանի*, *բարադարե նաթանի* տարբերակներով:

Անդրադարձ կատարենք նաև Աֆղանստանի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած զարգացումներով պայմանավորված դարիի բառային կազմում դիտվող մեկ այլ փոփոխությանը՝ բառային միավորների անկմանը, նրանց անհրաժեշտ կիրառության պահանջի բացակայության հետևանքով: Այսպիսի բառ-միավորների օրինակ են հանդիսանում *էսթեբդադ* («բռնապետ»), *փադեշահ* («թագավոր»), *շահգադա* («արքայազն»), *սադրա՛զամ* («վարչապետ»), *սադարաթե օզմա* («վարչապետի նստավայր»),

*քաբինայե վոզարա* [5] («նախարարների խորհուրդ»), *մոդիրե դալամ մախսուս* («նախարարի օգնական»), *վազիրե մոշավեր* («պետնախարար») և այլն: Դարիում այս խմբին պատկանող բառերը կարող են հաճախակի գործածություն ունենալ և դառնալ կենսունակ:

### Հապավումների կիրառությունը

Դարիի և պարսկերենի բառային կազմերում որոշակի տեղ գրավող հապավումները, որոնք բնութագրվում են իրենց կառուցվածքով, բնույթով ու կիրառությամբ վերաբերող առանձին յուրահատկություններով, հիմնականում հասարակական, քաղաքական և ռազմական բնագավառների հասկացություններ արտացոլող միավորներ են: Դրանք գերազանցապես սեփական միջոցներով ձևավորված տառային նորակազմություններ են, որոնք գործածվում են պետական, հասարակական, քաղաքական, ռազմական, աշխարհագրական տարածքների, միջազգային ու դիվանագիտական կազմակերպությունների, հիմնարկ ձեռնարկությունների, վարչական տարբեր միավորների անվանումներ նշելու ժամանակ:

Ներկայացնենք Աֆղանստանում օգտագործվող բաղադրյալ անվանումների ու տերմինների կրճատված մասերի միավորումով մի շարք հապավումներ, մասնավորապես՝ *u. q. u. = սազեմանե զանանե աֆղանեսթան* (Աֆղանստանի կանանց միություն), *մ.մ. = մելալե մոթթահեդ* (Միավորված Ազգերի Կազմակերպություն), *մ.մ. = մելիմեթթ* (միլիմետր), *դ.հ. = դովայե հավայի* (օդային ուժեր) և այլն:

Հապավումներով են նշվում նաև աշխարհի կողմերն ու ուղղությունները: Օրինակ՝ հյուսիս-արևելքը նշելու համար գործածվում են *2.2* տառերը, հյուսիս-արևմուտքի համար՝ *2.7* տառերը, հարավ-արևմուտքի դեպքում՝ *2.7* տառերը, հարավ-արևելքի համար՝ *2.2* տառերը և այլն: Ժամանակակից պարսկերենում հապավումների այս համակարգը բացակայում է:

Դարիում և պարսկերենում կիրառվում են օտարերկրյա և միջազգային մի շարք կազմակերպությունների անվանումներ միասին գրվող հապավումներով, ինչպես *նայթոն* (North Atlantic Treaty Organisation՝ Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն), *յունեսքո* (United Nations Educational, Scientific and Cultural Organisation՝ Միավորված Ազգերի՝ լուսավորության, գիտության և մշակույթի կազմակերպություն) և այլն:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ դարին ու պարսկերենը՝ պատմական անցյալից ժառանգած ընդհանուր լեզվական երևույթներից բացի, ժամանակի ընթացքում ստեղծել են բառակազմական առանձնահատկություններ և զգալիորեն տարբերվել են միմյանցից: Դարին կրել է փուշտուի հնչյունական համակարգի առանձին տարրերի ազդեցությունը, պահպանել է մայր լեզվից ժառանգած մեծաթիվ հնաբանություններ, ստեղծել է ինքնատիպ հապավումների համակարգ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Kalbas Iran, Farsiye Iran va Tajikestan, Entesharate vezarate omure kharejeje Jomhuriye Eslamiye Iran, Tehran, 1374, s. 29–30.
2. Киселева Л.Н., Миколойчик В.И. Дари-русский словарь, Изд-во «Русский язык», М., 1978.
3. Персидско-русский словарь в двух томах под редакцией Ю.А. Рубинчика, Изд-во «Советская Энциклопедия», М., т.1, 1970.
4. Дорофеева Л.Н. Язык фарси-Кабули, Изд-во восточной литературы, М., 1960.
5. *Yamin Mohammad hoseyn*, Talaffoze loghat dar Dari, Entesharate Pohantune Kabol, 1349.

## ОСОБЕННОСТИ РАЗВИТИЯ СЛОВАРНОГО СОСТАВА СОВРЕМЕННОГО ДАРИ И ПЕРСИДСКОГО

*В. Парсаданян*

### АННОТАЦИЯ

Настоящая статья посвящена особенностям развития словарного состава современного дари в сопоставлении с персидским языком.

В статье рассматриваются исторически установленные связи и отношения современного дари с родственными и другими языками, бытующими в Афганистане. Освящается значимость языка дари после приобретения страной независимости, устанавливаются и интерпретируются его расхождения от родственных языков – персидского и таджикского.

В статье представляется характеристика словообразовательных особенностей языка дари, отличающих его от персидского. Здесь анализируются внутренние источники развития лексического состава языка дари.

Статья посвящена характеристике особенностей развития словарного состава языка дари, отражающая тенденцию его обогащения на основе внутренних материальных ресурсов и заимствований из разных родственных и неродственных языков.

В статье отражены различные виды аббревиатур, архаизмов и неологизмов словарного состава современного дари.

**Ключевые слова:** дари, персидский язык, Афганистан, словарный запас, словообразующие возможности, особенности, заимствования, внутренний источник, внешние средства, сокращения.

## THE PECULIARITIES OF MODERN DARI VOCABULARY DEVELOPMENT COMPARED TO PERSIAN

*V. Parsadanyan*

### SUMMARY

The article presents the main peculiarities of modern Dari vocabulary that have been inherited from the general Persian vocabulary of early ages. In scientific literature the general Persian vocabulary implies the vocabulary of the language widely spoken in the area from the Mediter-

ranean to Sind and from Maveralnahr to the Syr Darya in the Middle Ages.

It is mentioned that in the course of its long historical development the Dari vocabulary was subjected to significant changes and gradually became different from its cognate Farsi and Tajiki.

The article mentions that the Farsi of Afghanistan, i.e. Dari, which was widely used in Hindustan, lost its connection with the Persian of Iran and managed to develop independently. It has kept its independence in Afghanistan where many languages are spoken, has undergone many changes, has created special word formation models and has enriched its vocabulary due to both internal and external sources of development.

The author mentions that the current relationships between Persian and modern Dari in the field of internal and external sources of their vocabulary development have resulted in both various interrelation and significant differences.

The differences mentioned relate to various developing processes of word meaning structure of Dari, its word formation, the borrowings from other languages, the frequency of word usage, the practical activation of rarely used words, the introduction of neologisms, the preservation of archaisms, the formation of abbreviations and their forming methods.

**Keywords:** Dari, Persian, Afghanistan, word form, word formation possibilities, peculiarities, borrowing, inner source, outer means, abbreviations.

---

## КОГНИТИВНЫЕ МЕХАНИЗМЫ СТРУКТУРИРОВАНИЯ ПОЛИТИЧЕСКИХ ВЫСТУПЛЕНИЙ (НА МАТЕРИАЛЕ ИНАУГАУРАЦИОННЫХ ВЫСТУПЛЕНИЙ ПРЕЗИДЕНТОВ США)

*А.А. Симонян*

*sim-var@hotmail.com*

### АННОТАЦИЯ

Одним из главных условий успешной политической коммуникации в современном мире является грамотное моделирование сознания посредством языка. Исследование проводится в русле когнитивной лингвистики – одного из наиболее актуальных и активно развивающихся течений современных лингвистических исследований. В статье выявляется и обосновывается приоритетное значение концептов и фреймов, используемых для декодирования информации в инаугурационных речах президентов США.

**Ключевые слова:** политическая коммуникация, когнитивная лингвистика, когнитивные механизмы структурирования, концепт, фрейм.

XX век широко распахнул двери когнитивной парадигме научного знания. Имеющая в своей основе междисциплинарный характер, когнитивная наука включила в себя, во-первых, такие фундаментальные науки, как математику, философию, лингвистику; во-вторых, она подключила к себе новые развивающиеся науки и теории – теорию информации, методы математического моделирования и т.д.

В итоге слияния когнитологии с лингвистикой сформировалась новая область исследования – когнитивная лингвистика, позволяющая исследователям рассматривать языковые явления с точки зрения познавательных (когнитивных) механизмов, лежащих в основе мыслительной деятельности. У истоков когнитивной лингвистики стояли психологи Дж. Миллер и лингвист Н. Хомский. Когнитивная лингвистика – это направление, зародившееся в США, более известное как «когнитивная грамматика» (Лангакер 1992; Талми 1999 и др.). Кстати, термин «грамматика» в англоязычной лингвистике имеет более широкое значение, в трудах российских лингвистов, например, чаще используется термин «когнитивная семантика» (Баранов, Добровольский 1996; Селиверстова 2002; Рахилина 2000 и др.).

Отличительной особенностью новой научной парадигмы является «радикальное переключение внимания исследователей от объекта к субъекту, т.е. порождение и восприятие речи рассматривается как конструктивная деятельность субъекта, осуществляемая на основе имеющихся у него знаний» (Панкрац 1995, 403).

Итак, когнитивная лингвистика – это направление, в центре внимания которого находится язык как общий когнитивный механизм, как когнитивный инст-

румент – система знаков, играющих роль в репрезентации (кодировании) и в трансформировании информации (КСКТ 1997, 53).

Динамическое развитие когнитивной лингвистики обусловлено использованием когнитивного подхода, применяемого во многих областях лингвистики. Суть данного подхода заключается в исследованиях ментальных процессов и ментальной деятельности человека, анализ которого привел к заключению, что в основе человеческого мышления лежат операции над знаниями. Знания мы используем для декодирования информации, которую пытаемся понять в процессе коммуникации. В ходе декодирования коммуниканты используют изначально свои знания о языке, о мире, затем опираясь на собственные знания, извлекают информацию из памяти, таким образом, воспринимая и накапливая информацию, воспроизводят и используют ее в последующих коммуникативных актах.

Для представления ментальной деятельности человека учеными были разработаны специальные модели: схемы, концепты, фреймы, сценарии.

Само понятие «схема» было введено Бартлеттом в 1932 году, в рамках теории психологической памяти. Его исследования нашли отклик лишь в 70-е годы XX века. Теория схем представляет собой следующее: человек записывает в долгосрочную память представления о своей собственной личности и об окружающей действительности. С помощью записанных в нашей памяти когнитивных структур происходит отображение окружающего мира. Далее в процессе концептуализации полученной информации создаются схемы, представляющие собой концептуальные единства.

Схемы – это комплексные структуры знаний, которые отображают опыт, накопленный в течение жизни (Belezza, Bower 1982, 1).

Другим способом представления знаний является концепт. Концепты возникают в результате ментальных операций, которые абстрагируются от индивидуальных характеристик одного объекта, извлекая из него общие признаки.

Вот как описывает концепт Караулов: «На лингвокогнитивном (тезаурусном) уровне в качестве единиц следует выделять обобщенные (теоретические или обыденно-житейские) понятия, крупные концепты, идеи, выразителями которых оказываются те же как будто слова нулевого уровня, но облегченные теперь дескрипторным статусом. Отношения между этими единицами ... выстраиваются в достаточно строгую иерархическую систему, в какой-то степени отражающую структуру мира, и известным (хотя и отдаленным) аналогом этой системы может служить обыкновенный тезаурус. Стереотипам на этом уровне соответствуют устойчивые стандартные связи между дескрипторами, которые находят свое выражение в генерализованных высказываниях, дефинициях, афоризмах, крылатых выражениях, пословицах и поговорках, из всего многообразия которых каждая языковая личность выбирает именно те, что соответствуют устойчивым связям между понятиями в ее тезаурусе и выражают, тем самым, незблемые для нее истины, в значительной степени отражающие, а значит, и определяющие ее жизненное кредо, ее «жизненную доминанту» (Караулов 1981)

Разновидностью мыслительного структурирования, по ван Дейку, являются фреймы.

Фрейм как наиболее важное понятие когнитивной лингвистики было введено Н. Минским. Фрейм – это структура, репрезентирующая информацию высокого семантического уровня, это знание, накопленное человеком в течение жизни и хранящееся в памяти или же это новое знание в сочетании с отдельными компонентами, хранящихся в памяти знаний. Являясь лингвокогнитивным понятием, фрейм имеет свой языковой коррелят, он состоит из узлов и слотов. Слот – это тип информации, релевантный для описания объекта, это пустой узел, который заполняется данными из той или иной ситуации.

Если рассматривать концепт как единицу мышления, то фрейм – это разновидность его мыслительного структурирования.

«Фреймы являются единицами, организованными вокруг некоторого концепта. Но в противоположность простому набору ассоциаций эти единицы содержат основную, типическую и потенциально возможную информацию, которая ассоциирована с тем или иным концептом» (Дейк 1989, 16).

Когнитивная лингвистика отмечает, что в процессе интерпретации текста, а именно во время восприятия информации, в сознании адресата параллельно разворачиваются два процесса: 1) получение нового информационного потока и 2) активизация эмоций, оценок, мнений (Лакофф 1996).

Попытаемся выяснить, каким образом когнитивные механизмы используются политическими деятелями для создания образа политика и каким образом у аудитории вырабатывается определенное отношение к политическому деятелю.

Политический деятель как особое проявление языковой личности также обращается к определенным незыблемым истинам, которые, максимально ему содействуя, способны оказывать максимальное воздействие на аудиторию.

Рассматривая инаугурационные речи политических деятелей как образец единого и цельного текста, попытаемся провести разбивку речей на понятийные области, с целью выявления концептуальных стержней выступления. Для этого целесообразно использовать такие понятия когнитивной лингвистики как «концепт» и «фрейм».

Анализ инаугурационных речей позволил нам выделить тематические блоки, которые затрагивают практически все президенты. Композиционно выступление состоит из следующих направлений: приветственное обращение, настоящее США, прошлое США и будущее США.

Если вникнуть в такие понятийные области, как настоящее, прошлое и будущее США, то можно представить своеобразную систему координат, где осями координат являются время и пространство. В своих речах многие политические деятели часто апеллируют к этим категориям, ибо каждая страна не только имеет свою историю, но также имеет и свои территориальные границы. Политик в своей речи создает образ страны в определенное время и в определенном месте, этот пространственно-временной срез уникален для каждого деятеля. Чередуя-

щиеся пространственно-временные срезы в итоге создают историю данной страны. И если считать эту систему трехмерной, то третьей осью будет человек, а в данном случае языковая личность политика – ключевая фигура в определенной пространственно-временной ситуации.

Время и пространство как формы существования материи имеют объективный характер и неотделимы друг от друга. Концепт «история или прошлое страны» рассмотрим через фрейм «путь» на примере из первой инаугурационной речи Дж. Буша-младшего.

*And even after nearly 225 years, we have a long way yet to travel.*

(Буш 2001)

Сознание человека устроено так, что он может визуально – в образе дороги/пути – представить время, и тогда оно уже представляется как материальное. Для адекватного восприятия, декодирования информации, предложенной политическим деятелем, необходимы знания об истории, традициях, культуре данного лингвокультурного сообщества. В первой части высказывания посредством времени – прошедших 225 лет – дается образ пройденного пути, а во второй части посредством долгой дороги моделируется время, стремящееся в будущее. Это высказывание – явное свидетельство того, что время и пространство в человеческом сознании взаимосвязаны, практически переплетены, что отражается на познании мира.

Метафорическое восприятие времени посредством пространства наблюдается и на примере из выступления президента Клинтона.

*An idea infused with the conviction that America's long heroic journey must go forever upward.*

(Клинтон 1993)

Адресат осмысляет *время* как героическое путешествие, которое идет по направлению от прошлого к будущему. Эта мысль сопровождается убеждением, что долгое героическое путешествие Америки должно вечно идти вверх. Время в образе пространства ассоциируется с длительностью и поэтому имеет поступательный характер.

Фрейм «путь» в инаугурационных речах президентов США представлен *путь истории*, или *исторический путь*, в лексическом плане актуализированный такими единицами, как *(long) story, history (история)*.

*We have a place, all of us, in a long story – a story we continue, but whose end we will not see. It is the story of a new world that became a friend and liberator of the old, a story of a slave-holding society that became a servant of freedom, the story of a power that went into the world to protect but not to possess, to defend but not to conquer.*

(Буш 2001)

Президент Дж. Буш-младший говорит, что в этой долгой истории каждый гражданин США выполняет свою роль. Это история нового мира, ставшего другом и освободителем старого мира, это история рабовладельческого общества,

ставшего поборником идей свободы, это история походов в другие страны, однако не с целью нападения и захвата, а с целью защиты идеалов свободы и демократии.

Таким образом, президент Дж. Буш-младший, представляя определенные этапы истории США, формирует у адресата образ перемещения во времени, создает ощущение наглядного передвижения по истории страны, по пути, проделанному нацией.

Американцы гордятся своей историей, своими достижениями. К осмыслению концепта *время* через призму истории, пройденного пути в несколько ином аспекте обращается в своем инаугурационном выступлении президент Обама.

*Our journey has never been one of shortcuts or settling for less. It has not been the path for the faint-hearted, for those who prefer leisure over work, or seek only the pleasures of riches and fame. Rather, it has been the risk-takers, the doers, the makers of things – some celebrated, but more often men and women obscure in their labor – who have carried us up the long, rugged path towards prosperity and freedom.*

(Обама 2009)

Говоря об истории страны, о пройденном Америкой пути, Президент предпочитает останавливаться не на исторических событиях, а говорить о самих американцах. Президент Обама во временном пространстве выделяет качества американцев, благодаря неустанному труду которых Америка движется вперед. Для оказания сильного эмоционального воздействия он вводит в текст оппозиционные конструкции. Этот путь не для слабонервных, а для сильных, для тех, кто предпочитает работу отдыху. Этот путь прошли мужчины и женщины – рискующие, некоторые из них стали известными, а многие были просто тружениками. Длительный путь, пройденный поколениями американцев, привел страну к процветанию и свободе.

Метафорическое восприятие времени сквозь призму пространства, пройденного пути выводит на передний план образ движущегося, объемного времени, где осмысляется вклад рядовых американцев. В пространственной метафоре времени выделяется образ человека. Интересно, что в данном небольшом отрезке выступления встречаем целый ряд выражений, обозначающих людей – *the risk-takers, the doers, the makers of things*. Подобным акцентированием оратор выделяет в историческом ходе времени простого человека, преодолевающего трудности и созидающего несмотря ни на что. Тем самым еще раз подтверждается мысль о ценности каждого отдельно взятого человека в американской национальной культуре, о значимости его роли в истории нации.

Концепт «история, или прошлое страны» раскрывается президентом Р. Рейганом через фрейм «памятники».

*Directly in front of me, the monument to a monumental man: George Washington, Father of our country. A man of humility who came to greatness reluctantly. He led America out of revolutionary victory into infant nationhood. Off to one side the stately memorial to Thomas Jefferson. The Declaration of Independence flames with his eloquence.*

*And then beyond the Reflection Pool the dignified columns of the Lincoln Memorial. Whoever would understand in his heart the meaning of America will find it in the life of Abraham Lincoln.*

Образ Джорджа Вашингтона создается через контраст, Р. Рейган называет его отцом страны и одновременно скромнейшим человеком, которого тяготили величие и слава, но революционные победы которого привели к зарождению американской нации.

Эффект контраста способствует интенсивности оценки. Томаса Джефферсона характеризуют слова *flames with his eloquence*, лексические единицы с насыщенной положительной окраской. Величественный памятник Абрааму Линкольну – это дань любви всех американцев, образ которого глубоко запечатлен в сердцах всех граждан страны. Через фрейм «памятники» Р. Рейган заостряет внимание аудитории на легендарном прошлом страны, тем самым вынуждая своих современников испытать чувство гордости за страну.

